

ՆՈՐ ՇՐՋԱՆ

I ՏԱՐԻ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 11

ՆՈՅԵՄԲԵՐ

1901



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Типографія Груз. Издат. Т—ва. | Տպարան Պրադ Հրատ. Վնկերութեան.

1901

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ԴԱԼԱԹԻՈՑ «ԲԵՍԴ», պատմուածք, Լ. Բաշալեանի . 5
2. ԶԱՅՆՍ ՀՆՉՈՒՄ Է..., բան. Ա. Իսահակեանի . 17
3. ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅՅԵՐԸ, Իրանցու . 20
4. ՅԻՄԱՐԸ, նովելլա Ռանդօլֆ-Լիխտիլդի, թարգմ. Բ. Ի. 32
5. ԱՂՕԹՔ, բան. Լեւոնտաովի, թարգմ. Ալ. Մասուրեանի 44
6. ՏԻԵԶԵՐՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ ԶԱՐԴԱՅՈՒՄԸ, Էրնստ Հեկկէլի,
թարգմ. Ս. Տ.-Գաապարեանի . 45
7. ԳԻՒՂԱՅՈՒ «ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ» պատմուածք
Ս. Տեր-Աւետիսեանցի . 56
8. ՎԱՂԱՀԱՍ ԵՒ ՈՒՇԱՀԱՍ ՀԱՆՃԱՐՆԵՐ, Զ. Լոմբրոզօի, 74
9. ԶԵՅԹՈՒՆԸ XIX-ՐԴ ԳԱՐՈՒՄ, Հ. . 80
10. ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ X ԿՕՆԳՐԵՍԸ,
Հ. Առաքելեանի . 91
11. ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ, Ստեփան Ոսկան, Լեօի . 110
12. ԼԱԼՈՒՈՐԻ ՈՐՍԸ, պօէմա, Վահան Միրաբեանի . 133
13. ՖՐՕՄՕՆ ԿՐՏՍԵՐ, վէպ, Ալֆ. Դօդէի, թարգմ. Տ. Յ., 152
14. ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVIII ԳԱՐՈՒՄ, Լեօի, . 181
15. ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳԸ, բան. Ն. Դանչենկոյի, թարգմ.
Կ. Կրասիլնիկեանի . 218
16. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—49) Ա. Վինէի «Բերթուաներ»,
Վ. Ն.—50) Վ. Յէքէեան «Հոգեր», Լ. Ս.—51) «Գիրք
Թղթոց», Ս. Մ. . 220
17. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ, Անանյապահութիւնը և կաթ-
նատնտեսութիւնը մեր և ուրիշ երկրներում,
Գլ. Ա. Կովկասի աշխարհագրական դիրքը.—Հողի բա-
ժանումները Կովկասի դանադան շրջաններում.—Անա-
սունների քանակութիւնը և նրանց տեսակները.—Հա-
մեմատութիւն Ռուսաստանի և Եւրոպայի հետ.—Նկատ-
ուած տարբերութիւնների պատճառները.—Ինչ փոխո-
խութիւններ է կրում անասնապահութիւնը ժամանակի
ընթացքում, Ս. Զաւարեանի . 232
18. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Կովկասի կառավարչապետի շրջա-
բերականը Կովկասի նահանգապետներին. . 246

Նոր շրջան I տարի

Հրատ. XIII տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 11

ՆՈՅԵՄԲԵՐ

1901



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Типография Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Բնկերութեան.

1901

Дозволено цензурою Тифлиса, 26-го ноября 1901 г.

№ 11

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ՂԱԼԱԹԻՈՅ «ԲԷՍԴԸ», պատմուածք, Լ. Բաւալեանի . 5
2. ԶԱՅՆՍ ՀՆՁՈՒՄ Է... բան. Աւ. Իսահակեանի . 17
3. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅՆԲԸ, Իրանցու . 20
4. ՅԻՄԱՐԸ, նովելա Ռանդօլֆ-Լիխթիլդի, թարգմ. Բ. Ի. 32
5. ԱՂԹՔ, բան. Լերմոնսովի, թարգմ. Ալ. Մատուրեանի 44
6. ՏԻԵՋԵՐՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ, Էրնստ Հեկկէլի, թարգմ. Ս. Տ.-Գաւալեանի . 45
7. ԳԻՒՂԱՅՈՒ «ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ» պատմուածք Ս. Տեր-Աւետիսեանի . 56
8. ՎԱՂԱՀԱՍ ԵՒ ՈՒՇԱՀԱՍ ՀԱՆՃԱՐՆԵՐ, Զ. Լամբրոզօի, 74
9. ԶԷՅԹՈՒՆԸ XIX-ՐԴ ԴԱՐՈՒՄ, Հ. . 80
10. ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ X ԿՕՆԳՐԷՍԸ, Հ. Առաքելեանի . 91
11. ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ, Ստեփան Ոսկան, Լեօի . 110
12. ԼԱԼՈՒՐԻ ՈՐՍԸ, պօէմա, Վահան Միրաբեանի . 133
13. ՖՐՈՄՕՆ ԿՐՏՍԵՐ, վէպ, Ալֆ. Դոդէի, թարգմ. Տ. Յ., 152
14. ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ, Լեօի, . 181
15. ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳԸ, բան. Ն. Դանչենկոյի, թարգմ. Կ. Կրասիլնիկեանի . 218
16. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—49) Ա. Վինէի՝ «Քերթնածներ», Վ. Ն.—50) Վ. Քէքէեան՝ «Հոգեւր», Լ. Ս.—51) «Գիրք թղթոց», Ս. Մ. . 220
17. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ, Անանասպահութիւնը և կաթնաւորները մեր և ուրիշ երկրներում, Գլ. Ա. Կովկասի աշխարհագրական դիրքը.—Հողի բաժանումները Կովկասի զանազան շրջաններում.—Անասունների քանակութիւնը և նրանց տեսակները.—Համեմատութիւն Ռուսաստանի և Եւրոպայի հետ.—Նկատուած տարրերութիւնների պատճառները.—Ի՞նչ փոփոխութիւններ է կրում անանասպահութիւնը ժամանակի ընթացքում, Ս. Զաւարեանի . 232
18. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կովկասի կառավարչապետի շրջաբերականը Կովկասի նահանգապետներին. . 246

19.	ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսիան գոհացած սուլթանից. — Մեզ էլ, մեզ էլ. — Անգլիական զբահակիրներ Պարսից ծոցում. — Աֆղանիստանի նոր էմիրը. — Լի-Նուն-Ջանգի մահը. — Խնչ վերանորոգումներ աւելի մօտ են չինացիների սրտին. — Պաշարման դրութիւն Վապի գաղութում. — Կին գրող Օլիվա Շրէյների բանտարկութիւնը. — Վեհանձնութիւն և կեղծ ամօթ. — Մի օրինակ ազգայնական խաղաղ յարաբերութիւնների Աստուրիայում, Լ. Ս.	248
20.	† Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՅԱՆ	252
21.	ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ, ԵՐ. Ֆրանգեան	253
22.	ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	260
23.	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	266
24.	ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.	267
25.	ՅԱԻԵԼՈՒԱԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ», վէպ Լ. Տօլստոյի, թարգ. Տ. Յովհաննիսեանի	337—384

ՂԱԼԱԹԻՈՅ „ՐԵՍԴԵ“

Ամեն ինչ որ կ'ընէք՝ Տիրուք
փառքին համար է:

Գացեր էք Ղալաթիոյ Րէադը:

Ղալաթիոյ ամենէն աննշան ու միանգամայն ամենէն հետաքրքրաշարժ վայրերէն մէկն է ասիկա: Գաֆէ մըն է կերպով մը, ու միւս գաֆէներուն հետ ունեցած նմանութիւնը ան է մինակ, որ հոն ալ անգործ ու պարապ մարդիկ կը յաճախեն: Բայց մինչդեռ Կ. Պօլսի ծովեզերեայ այդ տարօրինապէս ինքնատիպ թաղին մէջ այլուր պիտի գտնէք միայն դէմքեր, որոնց վրայ մոլութիւնը դրած է իր ակներև դրոշմը և օղին ու ալքօօլը փորած են բարակ ակօսներ, ու աչքերու մէջ անյադ տենչանքներու ու ահուելի յուսահատութեան խօլ փողփողումները, վայելչազգեստ մարմիններու քով ծակծկած արմունդներ և տաբատներու ծըւիկ-ծըւիկ ըզանցքներ, ու անփութիւնն ու անպատկառութիւնը քով քովի,—ասդին, Րէսդէի մէջ, ամենքը մէկ գաղափարէ թափուած մարդիկ են, հանդարտ դէմքեր, խնամքով խոզանակուած հագուստներ, խորհրդակիւր զգուշաւորութիւն մը, և աչքերու մէջ միշտ յոյսի ցոլքը:

Անգլիացի միսիօնարուհի մը հաստատած է այս շէնքը Բէրշէմպէ-Բազար, իբր բողոքականութեան ծաւալման միջոց մը: Շէնքը երկու սենեակի կը բաժնուի,

սրճարան և ընթերցարան: Մուտքը և ընթերցանութիւնը ձրի են, ու պարտաւոր չես բան մը առնելու: Խահուէ, թէյ, կաթ և նմանօրինակ անվնաս ըմպելիք մը կը բերէ քեզի սպասաւորը՝ եթէ ուզես, թէ ոչ՝ կարող ես առաւօտէն մինչև իրիկուն նստիլ հոն առանց փարա մը վճարելու: Պատերուն վրայ գրուած են Ս. Գրքէն այլ և այլ հատուածներ, հայերէն, յունարէն, անգլիերէն, թուրքերէն: Ամբողջ մատենադարան մը կայ հոն կրօնական հանդէսներու, որոնք առանձին հատորներով կազմուած են, և բաւական ստուար կոյտ մը կրօնական տետրակներու, որոնք տեղին սպասաւորը անուշ ժպիտով մը կը նուիրէ ձեզի. յաւիտենական վերնագիրներն են ատոնք իրենց բողոքական ծագումին յատկանշական գրուածովը.—Ձղջալ եւ Յիսուսի երթալ.—Յիսուսի նայիմ.—Ամեն քրիստոնեայ Քրիստոսի գործաւոր.—Յանցանքն իմա չէ.—Ո՞րք են որ կ'ընդունին զնոզին Սուրբ ևայլն: Ժուժկալութեան ընկերութեան մը մասնաճիւղն է նաև Բէսզը. ընթերցատան մէջ, եռօտանի մը վրայ, որ ծանրաբեռնուած է լրագիրներով ու տետրակներով, կայ այն քարտերէն մին, զոր ստորագրողը ինքզինքը պարտաւոր կը համարի հրաժարելու ոգելից ըմպելիէ և ծխախոտէ, ու լամբակէն անցընելու կապոյտ ժապաւէնի կտոր մը: Այդ քարտին ճակատը գրուած է՝ Ամեն բան կ'ընամ ընել Քրիստոսով, որ զիս կը գորացնէ (Փիլիպ. Դ. 13), և «Ժուժկալութիւն կամ Քրիստոնէական շարժում մոլութեանց դէմ վերնագրին տակ սա բառերը. «Յիսուսի օգնութեամբ ոգելից ըմպելիքներէ և ծխելէ հրաժարելով՝ կ'ուխտեմ՝ այլևս չգործածել և օրինակ ըլլալ այլոց», որոնց ներքեւ պէտք է գնել ստորագրութիւնը: Մինչև հիմա Բէսզի հայ սպասաւորը միայն կարծեմ բաջութիւն ունեցած է իր անունը փայլեցնելու այդ քարտին ներքեւ իր լամբակը զարդարելու այն յուսածիծաղ ժապաւէնով:

Բողոքական տաճարի մը պարզութիւնը և մաքրու-

թիւնը կը տիրեն հոն: Սպասարկութիւնը կը լինի երկիւղած հանդարտութեամբ ու վայելուչ բարեկրթութեամբ. սրճարանին երկու ծառաները կարծես սրբավայրի մը մէջ կը քայլեն: Ու սովորութիւններ կան հոն, որոնք անվարժներու զարմանքն ու մերթ զայրոյթը կը չարժեն: Ընթերցանութեան յատկացած սրահին մէջ արգելուած է սիկառէթ մը ծխել, կամ սուրճդ հոն բերել տալ,—մինչ Րէսդի երկու կողմը, քիչ մը վեր կամ վար, կասկածելի դարեջրատներու խառնակեցիկ աղջիկներ—մըուրը մեծ քաղաքին ապականութեան անցորդին առջի կը պարզեն իրենց յօսնական նայուածքները, խենէշ ծիծաղները և լպիրշ կեցուածքը:

Հայեր ու յոյներ միայն կը յաճախեն Րէսդը, աւելի շատ լուսաւորչական և օրթոդոքս, քան բողոքական: Վարժարանէ նոր ելած երիտասարդներ են ասոնք մեծ մասամբ, անգործ դասատուներ, գործ փնտռող գրագիրներ, պաշտօնի հետամուտ բողոքական բարոյղիչներ: Հոն կը նստին ժամերով, պատուհանին մօտ, միշտ յուսալից և ակնկալու, ուշագիր՝ դռան իւրաքանչիւր բացուածքին և ներս մտնող մարդուն, որ գողցես իրեն հետ պիտի բերէ այնքան ատենէ ի վեր ըզձացուած դասերը կամ պաշտօնը: Ու մերթ, քիչ մը շարժում գնելու համար կարծես այդ խաղաղիկ միօրինակութեան մէջ, կրօնական վիճաբանութիւններ կը լինին, որոնց մէջ յոյները աչքի կը զարնեն միշտ իրենց շարժուածքին ուժգնութեամբ ու ձայներուն բարձրութեամբ: Եղած չէ սակայն վիճաբանութիւն մը, որ կը ռիւով վերջանայ. այդ մթնոլորտին մէջ չես գիտեր ինչ կայ իւրոտ ու թմրեցուցիչ, որ կ'ազդէ ամենէն աշխոյժ մարմիններուն ու ամենէն կրակոտ ուղեղներուն վրայ:

Ընթերցարանին մէջ, տախտակորմով բաժնուած մաս մը կայ, որ Րէսդի տեսչուհուն և անոր օգնականին յատկացուած է: «Աւետարանական» միսիօնարուհիներն են ադոնք: Իրենց մանկական ու միանգամայն վաղնջուց մագաղաթի պէս ճմրթկած գէմքը պատկա-

ուանք ու կարեկցութիւն կ'ազդէ բեզի: Այդ կապոյտ աչուլներուն խորը կեանքի ինչ աղելարչ տուամ կը յայտնուի գիտողին: Կը զգաս թէ հոգին որ աստիճան տիրապետած ըլլալու է մարմնին,—արդի ժամանակին մէջ, ուր երազէն աւելի գործը, անդորրաւէտ խաղաղութենէն աւելի մարմնատանջիկ կրքերն ու խանդանքը, վայելքէն աւելի հեշտախտութիւնը, սէրէն աւելի միսը կը տիրապետեն յաղթապանծ,—որպէս զի այդ հէգ անգլիացի աղջիկները, կեանքին ամեն հաճոյքները արհամարհելով, օտար երկիրներու մէջ գան օտար ու անտարբեր մարդերու նուիրել իրենց ամուլ ծոցին բոլոր խանդաղատանքը:

Երբեմն կ'երթայի ժամերով նստել այդ հանգստավայրը. Ղալաթիոյ անտանելի ժխորին ու եռացող ոգևորութեան մէջ, անշարժ արձանի մը տպաւորութիւնը կ'ընէ բեզի այդ տունը, ուր գլուխները՝ մարմարեայ սեղաններուն վրայ հակած լռելեայն՝ կը կարդան «Արեւել», «Աւեսաբեր», «Բիւրակն» և անգլիերէն թերթեր: Ընթերցարանին մէջ ալ մէկ-երկու հոգի կը գրեն մատենադարանին առջև: Յոգնած ուղեղներու համար յարմարագոյն տեղն է ատիկա Ղալաթիա: Հիմակ ալ առջի ախորժը չունիմ այդ վայրին համար: Օր մը սարսուռով դուրս ելած եմ անկից:

Անցեալ նոյեմբերին տեղի ունեցաւ ասիկա: Հինգշաբթի օր մըն էր, լաւ կը յիշեմ: Տրտում օդ մը կար. առջի իրիկուընէ ի վեր անձրև տեղացած էր, և Ղալաթիոյ սալայատակներուն ազտօտ կապարագոյն ցելը աչքի զարնող հակապատկեր մը կը կազմէր երկնքին պայծառ կապոյտին հետ, որ, թօնընկէց ամպերէն աղատած, անհունութեան մէջ կը պատժէր իր անծայրածիր մերկութիւնը: Կծու ցուրտ մը կը տիրէր, ու քամին բիւր սլաքներով կ'ասղնիկէր մարմնին հոլանի մասերը: Րէսդը մտայ յանկարծ, չեմ գիտեր ինչու: Մարմարեայ սեղանի մը առջև անցայ, ուր նստած էր բարեկամներէս մին, մշտնջենաւոր յաճախորդ այդ ներողամիտ

հաստատութեան, ու պատկերազարդ հաւաքածոյ մը առնելով սկսայ մերենաբար թղթատել: Նոյն բազմութիւնը հոն էր միշտ, անդոյր ու անշշուկ, մեղմաձայն խօսակցութեամբ զբաղած կամ ընթերցանութեան մէջ խորասոյզ:

Այդ միջոցին ճիշտ քովս եկաւ նստաւ տասնըինը քսան տարեկան երիտասարդ մը, ֆրանսերէն բարեկեց դիմացի բարեկամս, անդլիերէն թերթ մը քաշեց առջին, փորձեց կարդալ, և, երկու վայրկեան ետքը, արհամարհանքով մէկդի նետեց զայն և սկսաւ ձեղունը դիտել:

Ուշագրաւ դէմք մըն էր, բոլորովին տարբեր այն խաղաղ ու տարտամ դէմքերէն, որոնց վարժուած էր հոն նայուածքս: Մոլորուն ու խոր աչքեր ունէր, բայց խոր, այնչափ որ բիւրերուն ցոլքը այնպէս կը վառէր հոն, ինչպէս սիկարէթի մը ծայրը գիշերուան խաւարին մէջ: Այտերը այնչափ ներս քաշուած էին, ու վտիտ ճինքան, որ բերնին մէջէն զիրար կը համբուրէին կարծես: Պէտ ու մօրուք չունէր դեռ. ցից կզակին վրայ հազիւ կ'երկարէին քանի մը սև թելեր, որոնց հետ կը խաղար իր սուր և ոսկրոտ մատներով: Նիհար պարանոցը կը խրէր ուսերուն մէջտեղ, որոնք երկու կողմէն վեր կը բարձրանային պատուարներու նման: Գլուխը դրած էր եւրոպական կլոր գլխարկ մը տեղ-տեղ ճմրթկած ու այնչափ աղտոտ որ տարակոյս կ'ունենայիր սկզբնական գոյնին վրայ: Բարակ վերարկու մը հագած էր, որ հազիւ մինչև մէջքը կ'իջնէր, և արմուկին ծակերէն միսը կ'երևնար դժգոյն ու ողորմ, ուռուցիկ կապտորակ երակներու գալարումով մը: Օձիք ու փողպատ չունէր, և աղտոտ չապկի մը բացուածքէն կ'երևնային լանջուկըրներուն երկու խռոչները:

Ընթերցումս թողուցի ու այդ դէմքը դիտեցի: Այն հեզիկ մարդերուն մէջ հայհոյանք մըն էր այդ երիտասարդը: Իր վիճակը սքօղելու երևոյթ չունէր բնաւ, միւսներուն պէս, որոնք իրենց վերարկուն մինչև օձիքը

կոճկած են միշտ՝ ծածկելու համար փողպատին պակասը կամ շապկին փեթուտուրը։ Աչուրներուն մէջ ոչ յոյս կը կարգացուէր, ոչ յուսահատութիւն. անտարբերութիւն միայն։ Թշուառութեան վարժուած ըլլալու էր, և ադոր մէջ կ'ապրէր սիրայօժար։ Բոթանակ մը չէր թուեր այդ վիճակը իրեն համար, այլ պատմութեան մը։

Կ'երենար որ անգլիերէն ու ֆրանսերէն գիտէր, և սակայն անգործ ըլլալու էր՝ այդ խղճալի կացութեան մէջ գտնուելու համար։ Ու, մէկէն, սւգեցի գիտնալ իր պատմութիւնը։ Բնութենէն ու ընկերութենէն անժառանգ այդ պատեանին ներքի ինչ գաղտնիք կար ծածկուած։

Բարեկամիս հետ խօսակցութեան սկսած էի իր կարգացած մէկ յօգուածին վրայ, որուն նիւթը կը պատմէր ինձի, երբ երկտասարդն ալ խօսքի խառնուեցաւ, մեր բարձրուն յատուկ վստահալից ընտանութեամբ։ Մաքուր հայերէն կը խօսէր, ու կ'երենար որ քիչ-չատ խնամեալ կրթութիւն մը առած էր։

Բարեկամս վերստին իր ընթերցանութեան մէջ խորասուզուած էր, և խօսակցութիւնը վերջ գտած՝ հասկառակ կամքիս, երբ երկտասարդը, որ երկու-երեք վայրկեանէ ի վեր աչքերը սեղանին մտրմարին յառած էր անքթիթ սեւեռումով։

— Կը ներէ՞ր, ըսաւ յանկարծ, և առնելով ծխախոտի տուփս, որ սեղանին վրայ կը գտնուէր, սիկառէթ մը բոլորեց ընդփոյթ, վառեց, և դէմքը պահ մը կորսուեցաւ ծուխի յորդառատ յորձանքներու մէջ։ Ամենէն մոլեռանդ ծխողներու քով իսկ չէի տեսած այն անյագ ցանկութիւնը, որով ներս կը քաշէր մուխը և յետոյ դուրս կու տար քթէն, բերնէն, աչքերովը հետեւելով կապտորակ պարօյրներուն անճառ երանութեամբ։ Մոխիրը հետզհետէ կ'իյնար կտրծքին վրայ, շապկին բացուածքէն ներս, ու կը սահէր նորածիլ թելերուն վրայէն։ Ու սիկառէթը ծխեց մինչև ծայրը, մատներն ու շրթութունքը այրելու աստիճան, և երբ վերջապէս հարկա-

դրուեցաւ նետել, ըղձական նայուածք մը ունեցաւ աչուքներուն խորը:

— Ֆրանսերէնէն ու անգլիերէնէն զատ ուրիշ լեզու ալ գիտէր, հարցուցի խօսք մը ըրած ըլլալու համար:

— Այո, ըսաւ կերկերեալ ձայնով մը, որ կարծես կը բեղրթէր կոկորդին ձայնական լարերը, գերմաներէն ալ գիտեմ, քիչ մըն ալ տաճկերէն:

Նորէն նայեցայ իրեն. անհանգիստ կ'երևնար, կ'երերակար, գլուխը այս ու այն կողմ կը շարժէր, ու մերթնայուածքը կը յառէր ծխախոտիս տուփին:

— Սիկառէթ մըն ալ կը շինէր, ըսի:

Պատասխան չը տուաւ, արդէն իր երկար մատները կը խաղային ծխախոտի թերթերուն մէջ, ու յաջորդ վայրկեանին իր սիկառէթին ծուխը պահ մը դարձնալ իր գէմբը կը ծածկէր տեսութենէս:

— Կերևոյ որ շատ կ'ախորժիք ծխելէ, ըսի, առիթ մը ունենալու համար իրեն հետ խօսակցելու:

— Այո, ըսաւ, կեանքիս էն մեծ հաճոյքներէն մէկն է. թող որ թիւթիւնը ուրիշ աղէկութիւն ալ ունի, անօթութիւնը կ'անցընէ:

— Դեռ ճաշած չէր, ըսի անգիտակցաբար:

— Չէ, երէկ երեկուրնէ ի վեր բերանս բան մը դրած չեմ, պատասխանեց անփութօրէն:

Այս անգամ շեշտակի նայեցայ իր աչուքներուն մէջ: Չէ, կատակ չէր ընէր. իր թալկահար և պալարատանջ դիմագծերը ապացոյց էին ըսածին:

— Անուշնիդ չնորհ կ'ընէր, ըսի:

— Արմենակ Սիմանեան:

Սիմանեան անունը իմացեր էի, հայ-բողոքական հասարակութեան մեծահարուստ ու ազգեցիկ անդամներէն մէկուն անունն էր:

— Ազգականութիւն ունի՞ր Սիմանեան Յակոբ Էֆէնտիին հետ:

— Հօրեղբայրս է:

Ձարմանքէ զարմանք կը գլորէի: Չորս լեզու գիտէր, երիտասարդ էր, այնչափ հարուստ ազգական մը ունէր, և քսան ժամէ ի վեր բան մը կերած չէր: Այն անխորհուրդ եղայ:

— Ի՞նչպէս կ'ըլլայ ուրեմն... որ այս վիճակին մէջ կը գտնուիք:

— Է՛հ, ձգեցէք, չարժէր պատմել, կարևորութիւն չունի:

Նորէն սիկառէթ մը շինեց, և սկսաւ մեծ ճարտարութեամբ բերնովը օգին մէջ զրկել ծուխի բոլորակներ, որոնք նախ թանձր ու խիտ, երթալով կ'անօսրանային, մինչև որ ծիրը կը քայքայուէր ու աներևոյթ կ'ըլլար:

Երբ սիկառէթը սպառեց, ինձի դարձաւ, և, ժպտով մը, որ գերեզմանի մը եզրը բուսած ծաղկի մը տպաւորութիւնը ազդեց ինձի՝

— Հը՛, ըսաւ, կը տեսնեմ որ հետաքրքիր էք կեանքս գիտնալու: Կեցիք պատմեմ քանի մը խօսքով: Նախ և առաջ սա ըսեմ ձեզի որ ես բողոքական չեմ, չէ, բողոքական չեմ թէ որ բողոքական ըլլայի, ինձի այս վիճակին մէջ չէիք տեսնար, բայց չուզեցի, կամ չկրցայ, ձերքս չէր: Ամեն ատեն ալ այս վիճակին մէջ գտնուած չեմ: Ես ալ աղէկ օրեր ունեցած եմ, մաքուր հաղուած եմ, և խմած թիւթիւնս ուրիշէն մուրալու պէտք ունեցած չեմ... Չէ մի ըսէք, տեսակ մը մուրալ ալ աս է: Հիմակ ալ եթէ ուզեմ կրնամ աւելի մը կոթ ըլլալ, բայց անանկ զգուած եմ կեանքէն, անանկ զգուած, որ բոլորովին թող տուած եմ ինքզինքս: Քիչ մը առաջ հօրեղբօրս անունը տուի, զարմացաք հարկաւ որ անանկ հարուստ ազգական մը ունենալովս մէկտեղ աս վիճակին հասեր եմ: սա գիտցէք որ իմ դժբախտութեանս միակ պատճառը ինքն է: Հիմակ կը հասկնաք:

«Լուսահոգի հայրս ալ բողոքական չէր: Երբոր հօրեղբայրս բողոքականութիւնը ընդունած էր, հայրս, որ իր կրօնքին վրայ շատ հաստատ էր, եղբօրմէն բաժ-

նուած էր, ու անկից ի վեր քէնով էին իրարու հետ, բնաւ չէին տեսնուեր: Հօրեղբայրս բախտին բերմունքով առաջ գացած էր, խոշոր վաճառատներ հաստատած. հայրս առջի խանութպանը մնացած էր, հինգ վաստկելով, հարիւր փառք տալով Աստուծոյ: Գործը այնչափ աղէկ չէր, նեղ օրեր կ'ունենար, բայց ակռան կը սղմէր ու եղբօրը չէր դիմեր: Ինձի ալ այդպէս մեծցուց: «Պապերուդ լուս հաւատքին վրայ խալի կեցիր, օղլուն», կ'ըսէր երկու խօսքին մէկը: Մեռած ատենը, միտքէս չելլար բնաւ, տասուերկու տարու էի ան ատեն, անկողնին քովը կանչեց ինձի և շատ մը խրատներ տալէն ետքը վերջին խօսքը ասեցաւ. «Նստէ, Արմենակ, զաւակս, ես կը մեռնիմ կ'երթամ կտր, աշխարհքիս վրայ մենակ ես, ամուսնադ ճիշդէք քովը պիտի առնէ բեղի, պիտի լոլոզէ, պիտի անուշբերնէ, Քախաս չուրանսս հաւատքդ, հարըդ բեղի օրինակ, չէ նէ երկու ձեռքս եսխաս ըլլայ»:

«Հօրմէս բան մը չմնաց ինձի: Աս մեռելի ծախք է, սա պարտք է, սա չեմ գիտեր ինչ է, լմնցաւ գնաց: Տասներկու տարու էի, աշխարհքս ինչ էր, չէի գիտեր. մայրս արդէն մեռած էր, չըսի կարծեմ: Նոյն իրիկունը հօրեղբօրս կողմէն մարդ մը եկաւ առաւ զիս և իրենց տունը տարաւ: Չմոռնամ ըսել որ հօրեղբայրս հօրս մեռելին եկած էր: Դրացիներէն պատուական մարդ մը կարգադրած էր ամեն բան:

«Մինչև ան ատեն չէի տեսած հօրեղբայրս: Դըլխարկաւոր, երկու քովէն մօրուօք, անգլիացիի դէմքով ցուրտ մարդ մըն էր: Դիմացը նստեցուց ինձի, քիչ մը ատեն պտըտեցաւ սենեակին մէջ և ըսաւ որ պէտք էր հետևեալ օրուան համար պատրաստուէի Րօպէրդ Գօլէճը մտնելու, գիշերօթիկ:

«Չորս տարի կեցայ հոն. կեանքիս էն անուշ, էն խաղաղ ժամանակը ան ատեն եղած է: Դասերուս մէջ առաջիններէն չէի ալ նէ, վերջիններէն չէի: Կ'աշխատէի, դասատուներս և ընկերներս կը սիրէին զիս. հոն

սորված եմ, ինչ որ գիտեմ: Ամսագլխուն հօրեղբորս տունը կ'երթայի: Շատ չէի համակրեր իրեն, բայց չէի ալ առեր: Միշտ առջի ցուրտ վարմունքը կը բռնէր ինձի նկատմամբ, յառաջագիմուժեանս համար գոհունակութիւն կը յայտնէր ու կը յորդորէր ալ աւելի աշխատիլ: Այո՛, շատ հանգիստ էի այդ տանը մէջ, և սակայն երբ պէտք կ'ըլլար հոն երթալ՝ սիրտս կը սեղմուէր: Գլխաւոր պատճառը ան կիրակի օրերու աղօթքներն էին, որ կ'երգուէին հոն: Հօրեղբորս մեծ աղջկը բիանօյին առջև կ'անցնէր, ամենուն ձեռքը մէյմէկ երգարան, ու մեծ ու պստիկ, դուրսէն ալ հրաւիրուած մէկ քանի բողոքական ընտանիք միասին կը սկսէին երգել ժամերով: Գիրք մըն ալ իմ ձեռքս կու տային, երգուած կտորին տեղը կը ցուցնէին և կը ստիպէին որ ձայնակցիմ: Եւ սակայն, ինչ ընեմ, ներսէս չէր ի գար, օր մը ընկերացած չեմ իրենց երգերուն, հակառակ հօրեղբորս ինձի ազդած պատկառանքին: Լեզուս բերնիս փակած էր կարծես. բիշ-բիշ գիրքը վար կ'անէի, մէկգի կը դնէի, ու երեսս անդին կը դարձնէի:

«Տասնըվեց տարու եղայ այսպէս. թէև բաղդատաբար պղտիկ, սակայն վիճակիս կատարեալ գիտակցութիւնը ունէի. դժբաղդութիւնը կը հասունցնէ մարդս: Ամսագլխու մըն էր, դարձեալ տուն եկած էի: Կիրակի առտուն, հօրեղբայրս իր սենեակը կանչեց ինձի. իր դէմքին վրայ այնչափ ծանրութիւն ու խստութիւն տեսած չէի երբէք, մինչև իսկ ամենէն ջերմեռանդ աղօթքներուն ատեն: «Արմենակ,-- ըսաւ. յանկարծ խիստ ու շուտ ձայնով, տարիքդ ալ եկաւ լեցաւ, հիմակ չարը բարիէն կրնաս սրոշել: Մինչև հիմա ձայն հանած չէի, որովհետև կ'ուզէի որ նախ լաւ մը վարժուիս՝ ապա ընդունես մեր կրօնը: Կը հասկնաս անշուշտ ըսածներս. վայելուչ է որ դուն ալ բրիստոնեայ ըլլաս: Վաղը անունդ արձանագրել կու տամ մեր ազգապետարանը և մնացեալ գործողութիւններն ալ մէկ քանի օրէն կը կատարենք:

— Ես ատանկ բան չեմ կրնար ընել, պատասխանեցի հանդարտ բայց հաստատ ձայնով:

«Կարծեցի որ վրաս պիտի վազէր: Դէմքին ոչ մէկ գիծը փոխուեցաւ, տասը վայրկեանի մը չափ կեցաւ մտածեց, յետոյ.

— Դուն վաղը նորէն գօլէճ գնա, եկող ամսագըլխուն կը կարգադրենք, բայց գիտցած եղիր որ այս բանը պիտի ըլլայ:

Ան ամիսը, հաւատան, սուտ չզուրցեմ՝ ամեն գիշեր երազիս մէջ տեսայ հայրս, որ ինծի կը նայէր մերթ աղաչական, մերթ զայրացկոտ աչքերով: Ես բոլորակաւ ըլլայի, չէ, կարելի բան չէր ատիկա: Յաջորդ ամսագըլխուն երբ տուն դարձայ, հօրեղբայրս նորէն իր սենեակը տարաւ ինձի և այս անգամ անուշ ձայնով մը.

— Էհ, Արմենակ, հարկաւ մտածեցիր, ըսաւ: Կը նայիմ որ դեռ աղայ ես, աշխարհքիս վրայ յամառութենէն օգուտ մը չի կայ: Ես քու ապագայիդ համար աղէկ խորհուրդներ ունիմ: Տիրոջը շնորհիւ շնորհքով մարդ մը կ'ըլլաս: Քեզի Եւրոպա կը ղրկեմ իմ առևտրական գործերու համար:

«Ու կռնակս ծեծելով.

— Ե՞րբ երթանք ազգապետարան:

— Ներեցէք, հօրեղբայր, պատասխանեցի, արդէն ըսի ձեզի: Ես հաւատքս չեմ կրնար փոխել:

«Այս անգամ դեմ դեղին կտրեցաւ, կ'երևայ որ նայուածքէս ու շարժուածքէս հասկցաւ թէ չպիտի կրնար յաղթել ինծի, թեէս քաջեց ու դռնէն դուրս հրելով՝

— Անանկ է նէ ալ աս տունը գործ չունիս, պոռաց: Կորսուէ, մէյ մէն ալ երեսդ չտեսնամ: Նայենք ան քու սիրած մարդիկդ ինչպէս պիտի պահեն քեզի: Հայրդ ալ քեզի պէս էր, բայց վերջը անօթութենէն սատկեցաւ:

Ինքզինքս զսպեցի՝ հօրս յիշատակին դէմ եղած այս նախատինքին վրէժը չը լուծելու համար, սանդուղ-

ներէն վար վազեցի խենդի պէս, հազիւ խելք ըրի գլխարկս առնելու փողոցին դռանը բովէն և դուրս նետուեցայ»:

Երիտասարդը ընդհատեց պատմութիւնը, գլուխը աջ ձեռքին մէջ առաւ, բութամատովն ու ցուցամատովը սեղմելով քներքին երակները: Շատ դառն յիշատակներ արթնցած էին անշուշտ մտքին մէջ: Ձինքը ուրիշ բանով զբաղեցնելու համար, սեկառէթ մը շինեցի և ծխախոտին տուփը իրեն առջև բշեցի:

—Ձէ, ըսաւ, հերիք է, ալ չեմ ծխեր, սիրտս կը ճմլէ կոր: Գլուխ ցաւցուցի, շուտ մը պատմեմ լինցնեմ:

Պահ մը ամփոփեց մտածումները, ու շարունակեց, այս անգամ արագ ու հապճեպ, ձեռքը միշտ գլխուն տանելով ու ափովը մազերը քներքին վրայէն ուժով տրորելով դէպի ետ, կարծես իբր վանելու համար գէշ երազի մը տպաւորութիւնը:

—Ան օրէն մինչև հիմակ ան տունը ստը կոխած չեմ: Դուրս ելլալէս ետքը չեմ գիտեր ուր գացի, երկու երեք ժամ պտըտեցայ ասդին անդին: Գրպանս նայեցայ, երկու մէծխալէի չափ ստակ կար: Ո՛ւր պիտի երթայի, ինչ պիտի ընէի: Մտածեցի որ մօրս մէկ հեռաւոր ազգականը կար, շոգենաւով վար իջայ, և գիշերը անոնց տունը գացի: Արմտցած զարմացած մնացին երբ ըսի որ ալ հօրեղբօրս տունը չպիտի դառնայի, բայց պատճառը չզուրցեցի: Ըրածս չի պիտի հասկնային, խեղճ մարդիկ էին, պիտի մեղադրէին զիս կամ խրատ տալու պիտի ելլային:

«Հետեւեալ օրուրնէ Պօլսոյ սալայատակները իմ սիրական տեղուանքս եղան: Առաուրնէ մինչև իրիկուն կը պտըտէի, դիշերն ալ յոգնած դադրած անկողին կ'իյնայի: Գլխուս զարնուածի պէս բան մըն էի եղեր: Դեռ ինձի պատահածը չէի կրնար կոր հասկնալ, իմ պզտիկ գանդիս մէջ չէի կրնար կոր սեղմեցնել ատոր բացատրութիւնը: Դէշը ան եղաւ որ ատ տարիքիս մէջ, ուր դեռ ուրիշները իրենց բանդօրնը կը մաշեցնեն

գրասեղաններուն վրայ, ես ինք իր դժուու մնացի՝ կեանքին վրայ շատ գէշ գաղափարով։ Ամէն մը ետքը, ասդին անդին իյնալով, կրցի գործ մը գտնել կեսարացի վաճառականի մը բով. բայց չկրցայ հօն մնալ, մարդը իր ուսանիսն պէս գործածել կ'ուզէր զիս, վարժուած չէի ատ կեանքին, ձգեցի գացի։ Անկէ ետքը ուրիշ տեղ գտայ, բայց տեղ մըն ալ չկրցայ մնալ։ Սիրաս նեղցեր էր։ Երկու-երեք ամիս ետքը արդէն ելած էի այն ազգականներու տունէն, որոնց վրայ չէի ուզեր բեռ ըլլալ, ու հոս մօտերը պզտիկ սենեակ մը վարձած էի տան մը էն վերին յարկը, տանիքին տակ։

«Հինգ տարի անցած է անկից ի վեր, ու չեմ գիտեր թէ ինչպէս ապրած եմ։ Սոսկալի վայրկեաններ ունեցած եմ. զարմանք է որ մինչև հիմա չեմ մեռցուցած ինքզինքս։ Հետզհետէ ինկայ, ու գէշ ինկայ։ Առջի խղճահարութիւններս չմնացին, կամքիս հակառակ բաներ ալ ըրի, ասդինին-անդինին գիմեցի, բայց ուրիշ կերպ կարելի չէր։ Զմուրացի մենակ, թէև անօթի մնացի։ Միտքէս սակայն օր մը չանցուցի հօրեղբորս գիմել։ Ինք բանի մը անգամ գրեց ինձի որ եթէ ուզածը ընէի, կը ներէր ինձի ու նորէն քովը կ'առնէր։ Պատասխան անգամ չտուի։ Եթէ իրեն գիմելու աստիճանին ըլլամ, կը բռնեմ ծովը կը նետեմ ինքզինքս, կը լմնայ կ'երթայ։

«Հիմակ ահա այս կերպով կ'ապրիմ, թէ որ ասոր ապրիլ կ'ըսեն։ Մէկուն մէկալին գիրերը կը գրեմ երբեմն-երբեմն, ձեռքս քանի մը զուրուշ կ'անցնի. հոս մօտերը ճաշարանի մըն ալ լիսդաները կը գրեմ և իրիկուն երկու պնակ կերակուր կու տան ինձի։ Բան մըն է կ'երթայ կոր, թող կու տամ կոր որ երթայ։ Աղէկ կամ գէշ ըրած ըլլալս չեմ գիտեր, բայց խիղճս հանդարտ է»։

Ոտք ելաւ ընդոստ ու ձեռքս սեղմելով.

—Շատ խօսեցայ ու փորս անօթեցաւ, ըսաւ խընդալով։ Երթամ քիչ մը բան ուտեմ։ Մնաք բարով։

Ու դռնէն դուրս ելաւ, և տեսայ որ, կծու ցրտին դէմ պատսպարուելու համար վերարկուին օձիքները դարձուցած և ուսերը տնկած, դիմացի փողոցն ի վար սկսաւ քալել աճապարանքով:

Տակաւին հինգ վայրկեանի չափ մնացի Րէսդը, կարծես գամուած այդ սեղանին առջև: Վերջապէս ոտը ելայ: Դուրս ելած ատենս աչքիս զարկաւ դրան ճակատը դրոշմուած արձանադրութիւնը. «Աստուած սէր է», և անոր հանդիպակաց կողմը միւս վերտառութիւնը. «Ամեն ինչ որ կ'ընէ՛ք՝ Տիրոջը փառքին համար է»:

ԼԵՒՈՆ ԲԱՇԱԼԵԱՆ

ՉԱՅՆՍ ՀՆՉՈՒՄ Է...

Չայնս հնչում է խաւարի խորփց,—
Գթա՛, յայտնութի՛ր, վե՛հ նեմարտութիւն,
Ես քեզ եմ փնտռում իմ կեանքի շէմփց
Եւ տե՛ս, քարացայ անհուն սանջանփում:
Բիւր-բիւր նամբէփով ես դիմեցի քեզ.—
Քո հետքն ու շուքը նոյնիսկ չգայ.
Տե՛ս, ստութեան մէջ, մոլորութեան մէջ
Ջախջախուեց կեանքս, ու դու չե՛ս գրայ...
Յոգնած եմ հիմա, անոյժ ու հիւանդ,
Բայց կը հաւատամ, որ ունիս գոյութիւն.
Բայց էլ չմնաց մի նամբայ՝ անյայտ...
Ա՛խ, երեւցի՛ր, սո՛ւրբ նեմարտութիւն...
Եւ ես ոյժ կ'առնեմ, կը գօտեպնդուեմ,
Յուպս կը վերցնեմ ու նամբայ կ'երթամ.
Լոյսդ կ'առնեմ խաւար աշխարհին,
Մոլոր մարդկութեան վե՛հ կեանքդ կու տամ...

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆՆՑ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ՀԱՅԵՐԸ

Ամբողջ պարսկահայերի թիւը ուղիղ յայտնի չէ. մօտ 100 հազար են ասում: Պարզ է միայն որ Ատրպատականի թեմում աւելի շատ հայ ազգաբնակութիւն կայ և աւելի համախմբուած է, քան թէ Պարսկաստանի և Հնդկաստանի թեմում:

Պարս.-Հնդկաստանի թեմի հայերը զրուած են Կասպից ծովից սկսած մինչև Պարսից ծոցը, Էնզելիից, Մեշեդեսէրից մինչև Բուշիր: Հայերի թիւը այս թեմում մօտաւորապէս 35 հազար կը լինի: Ոչ մի փոքր ի շատէ վաճառաշահ քաղաք չը կայ, որտեղ մի քանի հայ չը լինի մշտապէս կամ գոնէ ժամանակաւորապէս: Էնզելիում՝ կայ 20 տուն հայ, Մեշեդեսէրում, Բալֆրուզում 7-ական տուն, Ռաշտ 98 տուն, Ղազուին 40 տ., Թեհրան 350 տ., Համադան (պատմական Եկրատան) 70 տ., Ն.-Ջուղայ (Սպահան) 570 տ., Շիրազ 10 տ., Բուշիր 8 տ. եւայլն:

Սակայն հայերի մեծամասնութիւնը բնակւում է գիւղերում և պարապում է երկրագործութեամբ: Այդպէս՝

Ղարաղան գաւառում, որ ընկած է Թեհրանի և Համադանի միջև, աւելի մօտ առաջինին, 7 հայաբնակ գիւղ կայ 300 տուն հայերով:

Մալայիք գաւառում, որ Համադանի հարաւ-արեւելեան կողմն է ընկած, կայ 3 հայաբնակ գիւղ 130 տ. բնակչով:

Համադանից նոյն (հարաւ-արեւելեան) ուղղութեամբ մինչև Սպահան (Ն.-Ջուղա) գտնւում են հայաբնակ գաւառներ միմեանց բոլորովին կից.

Քեաղազ գաւառ. 10 հայաբնակ գիւղ 450 տուն հայերով*).

Քեամարա գ. 9 հայաբնակ գիւղ 530 տնով.

Գեալիլա » 10 » » 460 »

Բուրվարի » 15 » » 630 »

Փերիա » 28 » » 1,500 տնով, ամենա-

հարուստ գաւառն է:

*) Ընդհանրապէս բնակիչների թիւը մօտաւորապէս է որոշուած:

Փերիա գաւառի գիւղերի անուններն են. Սանգիբարուն 165 տուն հայ, Վ.Սոյգեան—130 տ., Ներքին-Սոյգեան—30 տ., Դաջան—20 տ., Բոլորան—110 տ., Հագարջրիբ—40 տ., Խօջղալայ—10 տ., Ֆահրա—45 տ., Ազնաւուլ 25 տ., Հադան—90 տ., Խունկ—45 տ., Բժկերտ—20 տ., Շրդկան—50 տ., Միլակերտ—110 տ., Զիգան—30 տ., Ղաղամեկիբ—20 տ., Սնկերտ—45 տ., Ադիգան—40 տ., Բարդալա—40 տ., Սվարան—45 տ., Ղարդուն—100 տ., Նամակերտ—170 տ., Գուշխառատ—17 տ., Գրդեր—40 Շահրուլաղ—38 տ., Դովլաթարադ 40 տ.:

Փերիա գաւառի ամենամօտ գիւղը Զուղային՝ վերջինն է. Զուղայից մինչև Դովլաթարադ 16 փարսաղ (մղոն) է. իսկ միւս գիւղերը միմեանց շատ մօտ են:

Սպահանի հարաւարեմտեան կողմը գտնւում է.

Զհաւ-մնալ գաւառը, որտեղ 10 հայաբնակ գիւղ կայ մօտ 800 տնով:

Զհար-մհալ գաւառի հայաբնակ գիւղերն են. Մամուռան—75 տուն, Լիւսսեան 150 տ., Քունարք (ստորին)—40 տ., Քունարք (վերին)—100 տ., Սինադան—25 տ., Բօլդաշի—40 տ., Մամուրա—140 տ., Հաջիարադ—65 տ., Սիրաք—85 տ., Ահմադարադ—70 տ.: Վեջին գիւղը հեռաւորութիւն ունի Զուղայից 17—18 փարսալ: Զհար-մհալ գաւառի հայաբնակ գիւղերը ևս միմեանց շատ մօտ են գտնւում:

Բացի վերոյիշեալ գաւառների հայաբնակ գիւղերից Թեհրանի շուրջը կան 6 փոքրիկ հայաբնակ գիւղեր 60 տուն բնակչով և մի գիւղ ևս Համադանին (Եկրտանին) կից՝ Շաւարին—70 տնով: Այս թեմի հայերի մեծամասնութեան համար կենտրոն է Նոր-Զուղան:

Քաղաքներում հայերի գլխաւոր զբաղմունքը վաճառականութիւնն է. մի քանի նշանաւոր հայ վաճառատներ և ընկերութիւններ կան, որոնց գործում գտնւում են հարիւրաւոր հայեր: Առաջին և նշանաւոր տեղը բռնում է «Թումանեանց Եղբայրների» վաճառատունը, որ մեծ վստահութիւն է վայելում իբրեւ հարուստ և ապահով առևտրական տուն թէ՛ պարսից կառավարութեան, թէ՛ հայերի և թէ՛ օտարների կողմից: Մեծ վաճառականական շրջանառութիւն ունեն նաև «Արամեան» և «Սևան» ընկերութիւնները, որոնք, ուրախալի է ասել, վերջերս միացել են, ընդարձակելով իրանի գործառնութեան շրջանը: Անշուշտ դա մի խելայի և հեռատես քայլ է: Կան նաև «Արարատ», «Արաքս», «Թուրան», «Հայկազեան» և այլն ընկերութիւններ:

Ձախագանց ուրախալի մի երևոյթ է, որ Պարսկաստանում հայերի մէջ բաւականաչափ տարածուած է ընկերութիւններ կազմելու գաղափարը: Եւ եթէ հայ վաճառականները իսկապէս ցանկանում են Պարսկաստանի վաճառականական աշխարհում յարատե դիրք ունենալ, միակ նպատակայարմար և հիմնաւոր ճանապարհը կանոնաւոր վաճառականական ընկերութիւններ կազմելն է: Անհատական ձեռնարկութիւնները հետզհետէ տեղի պիտի տան հաւաքականութեան, ընկերականութեան: Այս անհրաժեշտ է մանաւանդ Պարսկաստանի այժմեան հանգամանքներում, երբ երկիրը հետզհետէ զօրեղ կերպով կապւում է եւրոպական շուկաների հետ չնորհիւ այն բանի, որ մի կողմից եւրոպական շուկայում Պարսկաստանի արդիւնաբերութեան պահանջը զօրեղանում է (գորգեր, բոժոժ, բամբակ, բրինձ, նուշ, սաւղի չամիչ և այլն) և փոխադարձաբար՝ Պարսկաստանում ևս տեղական պահանջները եւրոպական ապրանքների վերաբերմամբ օրէցօր շատանում են: Դրան աւելացրէք և այն որ Ռուսաստանն ու Անգլիան օրէցօր աւելի ու աւելի մեծ քաղաքական և առևտրական յարաբերութիւններ են կապում Պարսկաստանի հետ, իսկ վերջերս Գերմանիան ևս աչք է դրել այս կողմերի վրայ: Եթէ այժմ հայերի ձեռքում Պարսկաստանի մէջ բաւականաչափ մեծ վաճառականութիւն կայ և զբաղւած արտահանում են մեծ քանակութեամբ հում նիւթեր և ներմուծում եւրոպական ապրանքներ, ապագայում նոյնը չի լինի, երբ հանգամանքները մրցում առաջացնեն հայ և եւրոպացի վաճառականների մէջ: Ծիշտ է, եւրոպացին սկզբում, Պարսկաստան մտնելով և անձանթ լինելով տեղական պայմաններին, ժողովրդի վարք ու բարքին, որ եւրոպայի հակապատկերն է, և լեզուին, բաւական մեծ դժուարութիւնների է հանդիպում, բայց նա յուսահատուել չը դիտէ և դիմում է տեղական ոյժերի, այն է՝ հայերի օգնութեան և ապա, լուրջ ուսումնասիրութեան, յամառ աշխատութեան շնորհիւ, վերջապէս, զործը գնում է հաստատուն հիմքերի վրայ: Այնուհետև հայերի հետ մրցելը այնքան էլ դժուար բան չէ...

Հայերն արտահանում են Պարսկաստանից գլխաւորապէս հում նիւթեր. մի տեսակ միջնորդներ են տեղական ազգաբնակչութեան և եւրոպական գործարանատէրերի միջև: Հետզհետէ, կարծէք, այդ էլ է սահմանափակուելու, որովհետև վերջերս գործարանատէրերն աշխատում են ներկայացուցիչներ ուղարկել, գործակաւարներ ունենալ Պարսկաստանի այլ և այլ քաղաքներում՝ հում ապրանքներ ժողովելու ու պատրաստելու և մշակուածը ներմուծելու համար: Ունենալով մեծ դրամազուլս, նախա-

ձեռնութեան ոգի, ուսումնասիրելու և յաջող ընկնելու բազմակողմանի ջնորհք, եւրոպական ակցիօներական վաճառատները ունեն մի այլ առաւելութիւն ևս, որ Պարսկաստանի նման մի երկրում մեծ ոյժ է. այն է՝ պաշտպանութիւն, հովանաւորութիւն և որոշ արտօնութիւններ եւրոպական պետութիւններից, իրանց զենսւնասաններից, հիւպատոսարաններից: Ահա այս բոլորն այնպիսի նպաստաւոր պայմաններ են, որոնք պարսիկ ժողովրդի հաւատը զօրեղացնում են, որով նա աւելի հեշտութեամբ վստահանում է գործ ունենալ «սհաբների» (տէրերի)՝ եւրոպացիների հետ, քան թէ տեղացիների Անցեալի գործերից պէտք է օգտուել. յիշենք հնդկահայերի վաճառականութիւնը. 17, 18 դարերում հնդկահայերից շատերը վաճառականութեան անսահման յաջողութեան ջնորհիւ ղրղեցին առասպելական հարստութիւն, այդ ոյժը շարունակուեց քանի որ եւրոպացիները (գլխաւորաբար անգլիացիները) չէին հաստատուել Հնդկաստանում և չբացաւ այդ երկրում եւրոպական կապիտալիստերի զօրեղ հոսանքի առաջ:

Նոյն իսկ այսօր Թաւրիզում, Ռաշտում, Թեհրանում, Իսպահանում, Բուշիրում և այլ տեղերում կարելի է ցոյց տալ եւրոպական վաճառականների ճիւղեր և կամ անգլիացի, ֆրանսիացի, յոյն, հրէայ ագէնտներ, որոնք յաջողութեամբ արտահանում են հում նիւթ և ներմուծում պտորաստ ապրանք: Դոյանից շատերի գործերն աւելի հաստատուն հիմքերի վրայ են դրուած, քան թէ ընդհանրապէս հայերինը: Վերցնենք, օրինակի համար, Զիզլէր գերմանական վաճառ. ընկերութեան գորդագործութեան մեծ ձեռնարկութիւնը. այս ընկերութիւնը չը բաւականանալով երկրորդ և երրորդ ձեռքերից գորգեր գնելով, 25—30 տարի ուղարկում է առաջ ներկայացուցիչներ Պարսկաստան. սկսում է զբանց ձեռքով գնել պարսկական գորգեր և ճանապարհել Եւրոպա: Զիզլէր ընկերութիւնը դրանով ևս չի բաւականանում. լաւ ուսումնասիրում, ծանօթանում է տեղական պայմանների հետ և բանում է Քեաղազ գաւառի Սուլթանաբադ գիւղաքաղաքում մի գորգագործարան, որ այսօր առաջինն է ամբողջ Պարսկաստանում: Քեաղազ, Քեամարա գաւառների բազմաթիւ գիւղացի կանանց բաժանում են թել և գործել տալիս ահագին քանակութեամբ գորգեր. գործը շատ հիմնաւոր է և կազմակերպուած է լաւ: Ահա 20 տարի է, որ գոյութիւն ունի, հետզհետէ ընդարձակելով Պարսկաստանի արդիւնաբերութեան այս ճիւղը:

Եւրոպացի վակառականը ընդհանրապէս գիտէ ուսումնասիրել լուրջ և բազմակողմանի կերպով եւրոպական բոլոր շու-

կաները, նա լաւ ծանօթանում է թէ՛ հրտեղ ինչ ապրանքի և որչափի պահանջ կայ. եթէ կարելի է ասել, նրա վաճառականական աշխարհահայեացքը, հորիզոնը լայն է և ընդարձակ, բազմաթիւ համեմատութիւններ է կարողանում անել, ուստի և բնականաբար նրա քայլերն աւելի գիտակցական են լինում վաճառականական ասպարէզում: Բայց մի՞թէ մեր պարսկահայ վաճառականներն էլ այսպէս պատրաստուած են:

Ի հարկէ ոչ: Եւրոպացին ձգտումն ունի մի գործ կազմակերպել լաւ և ամբողջացնել. այսպէս հաճախ Պարսկաստանում ևս արդէն կան եւրոպացիներ, որոնք ժողովում են հում նիւթ, որ արտահանում են ոչ թէ այլ գործարանատէրերին ծախելու, այլ իրանց սեփական գործարաններում այդ հում նիւթը մշակում և ապա իբրեւ պատրաստ ապրանք կրկին ներմուծում Պարսկաստան: Սա մի մեծ առաւելութիւն է, որով ևս մասամբ պայմանաւորւում է յաջողութիւնը վաճառականական մրցման մէջ:

Մինչ եւրոպական գործարանատէրերի կողմից քայլեր են լինում իրանց ներկայացուցիչներն ունենալու Պարսկաստանում՝ անմիջապէս հում նիւթեր գնելու համար իրանց գործարաններում մշակելու, դժբախտաբար, մեր հայ վաճառականները, որոնք ահագին քանակութեամբ հում ապրանք են արտահանում Պարսկաստանից՝ միայն միջնորդ հանդիսանալով օտարների գործարանների համար, հանգիստ նստած են և դրանից հեռու, մի քայլ առաջ, կարծես, չեն ուզում գնալ:

Քիչ է այն հայ վաճառականների թիւը, որոնք համեմատաբար մեծ քանակութեամբ ապրանք են արտահանում Պարսկաստանից և ներմուծում. մեր վաճառականների մեծ մասը աւելի մանրավաճառներ են: Սրանք ևս պարսիկ մանրավաճառների հետ դժուարութեամբ են մրցում (վերջերս սկսել են և հրէաները), քան որ վերջինները շատ քիչ պահանջներ ունեն և քիչ տոկոս վաստակելով ևս բաւականանում են: Հեշտ հարստանալու ձգտումը, յաճախ անպատուաբեր միջոցներով, բաւականաչափ արտայայտւում է քաղաքների հայ գինեւաճառների և օղեւաճառների մէջ: Պարսկաստանում գլխաւորաբար հայերն են դրանով զբաղւում. կան և մի քանի տեղ հրէաներից, ինգլիիում Ռաշտում, Թեհրանում, Համադանում, Ջուղայում և այլ տեղերում բազմաթիւ հայ օղեւաճառներ և գինեւաճառներ կան. պատուաբեր գործ է, մանաւանդ ինչպէս այստեղ է դրուած: Առանձին ոգելից խմիչքների համար խանութներ չկան. մահմեդական երկրում այդ հասկանալի է. օրէնքով արգելուած է. ծախում են տներում. կան փոքր ինչ ապահովածներ, որոնք առանձին բաժանմունք ունեն տներում. սակայն մեծամասնութիւնը, հեշտ աշխա-

տանքի միջոց համարելով, առնում է մի քանի թումանի գինի, օղի և իրանց տունը դարձնում գինետուն, որոնք երբեմն ամբողջ գիշերներ բաց են (մանաւանդ Թեհրանում)։ Նոյն տանն ապրում է և ծախողի ընտանիքը, աղաւտ մտնում են արիւայ պարսիկներ, արբում, կուում, փողոցային հայհոյեանքներ թափում, լպիրշ ակնարկներ անում։ Խայտառակն այն է, որ երբեմն այդ փողոցային պարսիկներին գինի կամ օղի են վաճառում հայ կանայք (առ այժմ բաղառութիւններ են)։ Ահա այս անբարոյական միջավայրում զատիարակում են և դրանց մանուկները։ Արդեօք լաւ չի լինի, որ այդ հայերն օրական մշակութեամբ ղրաղուեն, քան թէ այդպիսի ձևի գինեվաճառութեամբ, որ մի տեսակ պատուաւաճառութիւն է։ Այս երևոյթը հայոց վարկը բաւականաչափ ձգում է։ Դրամ շատ վաստակելու տենչը ամեն կեղտոտութիւններ անել կը տայ ի բնէ խայտառակ գործերին տրամադիր մարդուն։

Այս թեմի քաղաղացի հայերի դրութիւնը հանդատութեան կողմից շատ աւելի լաւ է, քան թէ հայ գիւղացիների դրութիւնը, գիւղացիները դեռ ևս մատնուած են պարսիկ կալուածատէրերի (արքաւորների) քմահաճոյքներին և ենթարկուած նրանց հարստահարութիւններին, պակասը լրացնում են գաւառական պաշտօնեաները իրանց անարգար պահանջներով։ Այս պատճառով գիւղացիների տնտեսական կացութիւնը անմխիթար է։ Սակայն մի սահմանափակում պիտի աւելացնել, հայ գիւղացիների դրութիւնը, համեմատած պարսիկ «բայեաթի» հետ, փոքր ինչ աւելի լաւ կարելի է համարել՝ թէ՛ հանդատութեան և թէ՛ տնտեսականի կողմից, վերջին երևոյթի պատճառն այն է, որ նախ՝ կալուածատէրերը հայ գիւղացուն աւելի գերադասութիւն են տալիս երկրագործութեան մէջ, որ երբէք սխալ չէ, ուստի համեմատաբար զգոյշ են մնում և այնքան չեն նեղացնում ու հարստահարում, և երկրորդ՝ որոշ չափով ակնածում են և երկիւղ կրում Հայոց Առաջնորդի (խալիֆէից), որին գիւղացիները դիմում են դժգոհութեան, հարստահարութեան գէպընձ։ Առ այժմ գոնէ այդպէս է...

Պարսկաստանի թեմի հայաբնակ գիւղերը պատկանում են այժմ մասնաւոր կալուածատէրերին. 7—8 տարի առաջ կային և պետական գիւղեր (խալիս), սակայն Նասրէդդին Շահի ժամանակ ամբողջ Պարսկաստանի պետական գիւղերը ծախուեցին (մի քանի տասնեակ հազարներով)։ Թէ՛ պետական և թէ՛ ժողովրդական շահերի տեսակէտից այդ քայլը մի մեծ սխալ կարելի է համարել։ Այն, ծախելը մի խելացի, չափազանց հեռա-

տես և օգտակար գործ կը լինէր, եթէ այդ կարգադրութեան հետ միասին լինէր և հետեւեալ կարգադրութիւնը—պետական գիւղերը չը ծախել երբեք մասնաւոր անհասներին, կալուածատէրերին, այլ անպատճառ գիւղական համայնքին: Եթէ լինէր այս կարգադրութիւնը և կատարուէր, անշուշտ մեծ կալուածական ըարեշրջում կարելի էր համարարել այդ. դա կը լինէր մի մեծ տնտեսական-հասարակական օգտակար վերանորոգութիւն և այժմեան ստրուկ դարձած թշուառ երկրագործի (րայեաթ), տնտեսական դրութիւնը շուտով կը բարւոյցուէր, իր արեւն-քրտինքով աշխատածը կը պատկանէր իրան, ազատ կը լինէր մասնաւոր կալուածատէրերի հարստահարութիւններէ, ճնշումներէ և պետական գանձարանն էլ աւելի եկամուտ կը ստանար: Ամենամեծ ըարերար հետեւեալներէ մէկն ևս այն կը լինէր, որ խեղճ ճնշուած ժողովուրդը համեմատաբար ազատ կը լինէր շարունակ կրկնուող տնտեսական ճգնաժամերից սովի կամ թանգութեան պատճառով, քանի որ Պարսկաստանում այսպիսի դժբախտ երկոյթներն աւելի արհեստական կերպով են յառաջ բերուած չնորհիւ մեծամեծ կալուածատէրերի, որոնք շարունակ ամբարում են անչափ քանակութեամբ ցորեն և ինչ գնով ցանկանում են, ծախում են. սակայն որոշողներն իրանց քմահաճոյքն է: Շատ կալուածատէրեր կան մուշտէիգներէ և զօրեղ պաշտօնեաներից, որոնցից իւրաքանչիւրն ունի հարիւրաւոր գիւղեր *):

Ծախուած պետական գիւղերի մեծ մասը գտնուում է այժմ զօրեղ կալուածատէրերի, այլ և այլ ճարտիկ կեղեքիչ խաների ձեռքին: Այդ գիւղերը ծախուեցան շատ ցնիւն գնով. մի-երկու կամ երեք տարուայ ընթացքում ստացած եկամուտով կը ծածկուէր գինը. ահա այս էր պատճառը, որ երկրի ուժեղները—«բոռնեցիները», միմեանց ձեռքից խլելով գնեցին, իսկ խեղճ, անօգնական և միանգամայն ունեւոր գիւղացիներ ականատես էր թէ ինչպէս իր գլխի համար նոր մի մեծ ցաւ, նորանոր տանջանքներ են պատրաստուում:

Պետական գիւղերը կարելի էր երկու մասի բաժանել. մի

*) Անցեալ 1900 թուին Շահի բացակայութեան ժամանակ Քեհրանի քաղաքացիները, որ մի մեծ կալուածատէր է և ցորենով լի ամբարներ ունէր, որ գելում է գիւղերից ցորեն բերել քաղաք, որի պատճառով կարելի է ասել մի տեսակ սով առաջ եկաւ. հացը շատ թանկացաւ և շատ վատացրին: Սոված, կատաղի ամբար, գլխաւորաբար կանայք, յարձակուեցին քաղաքացիների ճոխ կերպով կահաւորուած տան վրայ. ամենայն ինչ ջարդեցին, կոտորեցին և յափշտակեցին: Շահը Եւրոպայից վերադարձաւ թէ չէ՝ աքսորեցին այդ առաջակ քաղաքացիներն: Եւ այդ պատահեց մայրաքաղաքում:

մասը երկար տարիներից ի վեր գտնուում էր ժողովրդի, հա--
մայնեցիի ձեռքին, որոնք տէրութեան վճարում էին որոշուած
տուրք, հարկ. հայաբնակ գիւղերից 10—15 դիւղ այդպէս էին.
Իսկ միւս մասը մէկ կամ մի քանի տարիներով տրուում էր կա-
պալով (Իջարով) մասնաւոր անհատներին կամ պաշտօնեաներին:
Վերջին տեսակի գիւղերը շատ աւելի թշուառացած, տնտեսա-
պէս քայքայուած են եղել, քան այն գիւղերը, որոնք յանձնուած
են եղել գիւղացոյ խնամքին: Պատճառը պարզ է. պետական
գիւղեր կապալով տրուելով մի պաշտօնէի կամ մի որեւէ խանի՝
պարսկական կառավարական և հարկային սխտեմների անորոշ,
խառնակ և չը կազմակերպուած դրութեան պատճառով՝ լռե-
լեայն ազատութիւն է տրուում իջարագարի (կապալաւորի) քմա-
հաճոյքներին և կեղեքումներին. վերջինը եթէ փորձուած «հին
գայլ» է և ինքը պաշտօնական անձն չէ, կարողանում է հեշ-
տութեամբ գաւառապետին (հաքիմին) և այլ պաշտօնեաներին
իր կողմը գրաւել և այնուհետեւ աներկիւղ կեղեքում է խեղճ
երկրագործին. նա ամենին չի մտածում ո՛չ գիւղի, ո՛չ ժողո-
վրդի բարկլաւութեան, տնտեսութեան բարեօքման մասին. նա
տէր է միայն ժամանակ աւուրալէս: Նա միայն մի միտք,
մի պատկեր ունի իր աչքի առաջ՝ որոշ տուրք է վճարել, սրան
նրան կաշառքներ է տուել (որ ամեն խանի էութիւնն ու բո-
վանդակութիւնն է), «օրէնք և արդարութիւն» գործադրող պաշ-
տօնեաների բերանները քաղցրացրել է, դառնացնելով իր սիրտը,
դատարկելով իր գրպանը, բնականաբար պիտի կաշուց դուրս
գայ՝ տուածի կրկնապատիկը, եռապատիկը վերցնելու համար:
Ի՞նչ անի խեղճ, անճար հողագործն այսպիսի դէպքերում.
հարստահարում է կապալաւորն, հեռանում է, գաղթում է օտար
գիւղ, ընկնում է անգութ կալուածատիրոջ կամ սրա կառավա-
րիչների ճանկը: Ո՛ր կողմ դնայ, փրկութիւն չը կայ. ամեն
տեղ արիւն ծծող տգրուկներ, ամեն կողմ յափշտակող գի-
շատող գայլեր. ում բողոքէ, ուր դիմէ և գանգատուէ հարստա-
հարութիւնների դէմ. մոլորուած, յուսահատ մնացած է. նա լաւ
գիտէ որ իր արդար գատին, բողոքին, հասնող չի լինի. յաջող,
պատահական արդարադատ երևոյթների վրայ յոյս դնելն ան-
հնարին է, քանի որ այդ կախում է եղել դատաւորի լաւ
տրամադրութիւնից: Իսկ եթէ յանդգնի դիմել մի որեւէ տեղ
արդարադատութեան համար, շատ դէպքերում իզուր աւելորդ
ծախքերի տակ կ'ընկնի, իր ձայնը կը խեղդուի հակառակորդ
զօրեղի (իջարագարի կամ կալուածատիրոջ) բարկութեամբ և
թոյնը կը կրկնապատկի:

Նա գիտէ որ առանց դրամի մուտք անգամ չի կարող ու-

նենալ որ և է պաշտօնէի կամ դատաւորի մօտ. իսկ եթէ սխալուեց, փոքր ինչ լաւատես եղաւ և զնայ «մուրաֆայ»՝ դիմեց դատի, մնաս բարեւ պիտի ասի թէ իր հանգստութեան և թէ իր ունեցած դրամին. քսակը պիտի բանայ և դռնապանից սկսած, բաղմաթիւ սոված ֆառաշներին ևս «անամ» տալով (կաշառքի մեղմացած, քաղաքավարի անուան է) պիտի «սեսնի» բոլորին (տեսնել և «անամ» տալ կամ կաշառել համանիչ բառեր են):

Անշուշտ յուսադրում է, ի հարկէ, կրկին նրանից դրամ, կորզելու դիտաւորութեամբ, եթէ հակառակորդը, մեղադրեալը, նախապէս «չի տեսել» դատաւորին: Ի վերջոյ կանչւում է մեղադրեալը, դատաւորը բարկանում է նրա վրայ խիստ կամ թոյլ. այս կախում է տրամադրութիւնից, վերջինն էլ ստացած դրամի շատութիւնից կամ քչութիւնից (բացառութիւններ քիչ կան): Սակայն միմեանց միտքը հասկանում են. մեղադրեալը հասկանում է բարկանալու գրգիչ պատճառը, նոյնպէս առաջնաւորն էլ միջոցը. բարկութիւնն ու հայհոյանքը տանում է, այդ նրա համար ոչինչ է. բոլորովին խաղաղ և անվրդով զուրս է դալիս և աչքերով վնասում է մարդոց. չըջապատած տաանեակ ֆառաշները կամ փիչ խղմաթները (աւագ սպասաւորողները) հասկանում են. մօտենում են, խօսում են, հարցութորձ են անում. ի վերջոյ մէկի միջոցով խոստանում է տալ դատաւորին այսչափ թուման. դատաւորը լաւ գիտէր իր խօսքերի ոյժն ու «հունարը»:

Երբեմն էլ սկսում է «աշխատանայ վարձի», «անամի» մասին կրկնակի բանակցութիւն. յայտնում են մեղադրողին, որ մեղադրեալը տալիս է այսչափ թուման, և «բարեկամական խորհուրդ» են տալիս աշխատել աւելի հատուցանել, որ գործը յաջողուի: Շնորհիւ այս ճարպիկ գործողութեան, որ կատարւում է, ինչպէս ասում են՝ sans cérémonie, յառաջ է դալիս կաշառատութեան մէջ մրցում: Եթէ յոյս կայ երկու կողմից շարունակ գումարներ ստանալու (այդ է շատերի ոտճիկը), դատաւարութիւնը ձգձգւում է անվերջ կերպով, միշտ թողնելով անորոշութեան մէջ, մինչև որ երկու կողմն էլ քանդւում են. մուրաֆայով (դատաւարութեամբ) քանդուելը աղքատանալը Պարսկաստանում սովորական երևոյթ է: Պարսկաստանի դժուար բժեկելի ցաւերից, փայլալով վեհերից մեկը եւս այսպիսի խայտառակ դատաւարութեան սխեսմն է: Ճնշւածներէից, հարստահարւածներէից շատերը ստիպուած լուծւում են, չեն բողբոջում շատ անարդարութիւնների դէմ, համոզուած լինելով, որ ձայն հանելն իրանց աւելի վնաս է: Եւ ովքեր են օգտուում ընդհանրապէս այսպիսի դրութիւնից, զօրեղներն են օգտուողները, այն

է՝ արբաքները, կապալառուներն ու պաշտօնեաները. տանջւում է խեղճ ժողովուրդը, որի մասին մտածող ամենին չը կայ: Եթէ երբեմն զօրեղները տուժում են, վրէժը հանում են խեղճ ժողովրդից՝ հարստահարելով նրան:

Պետական գիւղերը ծախուելով մասնաւոր կալուածատէրերին, ուղղակի ճնշող դրութեան շրջանն ընդլայնեցին *):

«Այն բազմաթիւ գիւղերը, որոնք նախ քան ծախելը գտնւում էին գիւղական հասարակութիւնների ձեռքում, տասնեակ տարիների ընթացքում կապալով այսօր գտնւում են այլ և այլ խաների, կեղեքիչների ձեռքին, և բնական է որ աւելի ևս վատթարացել է գիւղացոյ տնտեսական կացութիւնը:

Ասացի որ համայնքներին կապալով տրուող պետական գիւղերն աւելի լաւ վիճակի մէջ էին, քան թէ այն գիւղերը, որոնք մասնաւոր սնհատներին էին տրուում կապալով (խաներին, պաշտօնեաներին և այլն): Իսկ մասնաւոր կալուածատէրերի սեփական գիւղերը վերջիններից աւելի լաւ տնտեսական դրութեան մէջ են, բայց ոչ առաջիններից: Սրա պատճառը շատ պարզ է. գիւղի տէրը խնամքով է նայում իր եկամուտի աղբիւրին. աշխատում է իր սեփականութեան բարգաւաճման համար. եթէ պարապ հողեր ունի, հոգ է տանում գրաւել ուրիշ գիւղերից աշխատող ձեռքեր, սովի, երաշտի ժամանակ օգնում է իր ըայեաթին, իր գիւղացիներին՝ բաժանելով նրանց փոխարինաբար սերմացու ցորեն, գարի: Մօտ 95 հայաբնակ գիւղեր Պարսկաստանի թեմում պատկանում են պարսիկ կալուածատէրերին. դրանց մէջ կան թէ՛ բարձրաստիճան ազդեցիկ մարզիկ, ինչպէս՝ Զիլլի սուլթան, Նաիր սուլթանէ (թագաւորի եղբայր-

*) Զի կարելի ասել թէ ծախելու միտք չղացող պետական անձինք ցանկութիւն ունէին մի ալսպիսի անտանելի դրութիւն ստեղծելու. այլ միայն շատ նեղ, սխալ և անհեռատես մտածողութեան արդիւնք էր ալդ: Պետական զանձարանը դատարկ էր (այստեղի սովորական դրութիւնն է դժբախտաբար). շատ հարկաւոր էր գրամ. 10 հազարաւոր գիւղերի հարկեր ժողովելը լանձնում էր պաշտօնեաներին. դրանք կեղեքելով ժողովրդին, չափից, որոշածից շատ աւելի էին ստանում: Պետական հարկերը մի քանի զօրեղների ձեռքով էին անցնում. մինչև զանձարան հասնելը ուժեղ ձեռքերում հալւում էր մի մասը. զանձարան շատ քիչ էր մտնում: Պատճառաբանութիւններ շատ կային. միշտ սով էր, թանգութիւն էր կամ սերմացու տուեցին ևայլն ևայլն: Այդ խալտառակ աւաղակային դրութիւնից ազատուելու համար որոշեցին ծախել բոլոր գիւղերն ու ազատուել, որով ստեղծուեց ժողովրդի համար դժոխային կացութիւն:

ներն են), լռուրի ցեղապետ Սարգարը և այլն և թէ՛ աննշան խաներ: Սովորաբար գիտուած էր որ այն կալուածատէրերը, որոնք հարուստ են և բազմաթիւ գիւղեր ունեն, համեմատաբար իրանց հողագործներին (րայեալթին) լաւ են նայում, այնքան հարստահարութիւն չեն անում և յաճախ պաշտպանում են օտարներից հասցրած վնասների դէմ: Բայց Աստուած չանէ, եթէ այդպիսի ազդեցիկ կալուածատէրերը մի որեւէ բանի համար վատանան գիւղացոյ հետ. անօգնական գիւղացոյ դրութիւնը միանգամայն անտանելի և ողբալի է դառնում. ոչ մի արգարադատութեան վրայ յոյս դնել չի կարելի. հարստահարութիւնները, հարկերը աճում, բազմանում են, մանաւանդ երբ տեսնում են, որ գիւղացիք գնալու, գաղթելու տեղ չունեն: Այս բոլորը խորթ, անբնական երեոյթներ չեն մի երկրում, որտեղ գոնէ փոքր ինչ բարձր սկզբունքները չեն, որ ղեկավարում են իշխանութիւն ունեցող մարդոց, կամ ժողովրդի բարօրութիւնը չէ, որ աչքի առաջ ունեն, այլ աւելի անձնական շահ, քմահաճոյք, բոպէական տրամադրութիւն:

Փոքրիկ կալուածատէրերը, որոնք մի գիւղ կամ գիւղի մի որ և է մասն ունեն, թէ երկրիւն են կրում իրանցից աւել զօրեղներից և թէ ամեն կերպ աշխատում են հարստահարել ժողովրդին ճարպիկ կերպով: Օրինակ, Բուրվարի գաւառի Ղարաքահրիդի գիւղատէրը Հէյդար-խան սնուհով ոմն է. հարուստ և ազդեցիկ չէ. միայն մի գիւղ ունի, ուր 100—110 տուն հայ կայ: Բաւական է որ անունը կալուածատէր է ընդհանրապէս, կալուածատէր դասակարգին յատուկ ձգտումներն ու բնազդները պիտի ունենայ, որոնք Պարսկաստանում մեծ մասամբ բացասական են.—կեղեքել, հարստահարել, ճնշել անօգնական երկրագործին: Սակայն Հէյդար-խանը փոքրիկ կալուածատէր լինելով այնքան ոյժ չունի, որ բերքի աւանդական հարկն աւելացնի, ուստի գիմում է այլ միջոցների՝ իր եկամուտը շատացնելու համար. աշխատում է խռովութիւն ձգել, կռուայնել հայերին միմեանց հետ շատ անգամ իր ծառաների ձեռքով. և ի հարկէ, դժբախտաբար, նպատակին հասնում է հեշտութեամբ. իր գիւղում դատաւորը, ռոսիկանն ինքն է. գիմում են նրան. նրա նպատակն էլ հէնց այդ էր. վարում է իր մշակած օրէնքների, այն է՝ իր քմահաճոյքի և արամադրութեան համեմատ մէկից տուգանք է առնում, միւսին բանտարկում, երրորդին ծեծել է տալիս, չորրորդից կաշառք է վերցնում հայլն հայլն: Խեղճ և տգէտ հայ գիւղացիներն էլ աշխատում են կալուածատիրոջ սիրտը շոհել: Չատկին ամեն մի տուն տանում է Հէյդար-խանին մի-մի գլուխ չաքար,

պարսից էյղին (մեծ տօնին) ևս նոյնպէս. (ի դէպ. այստեղ մի անգամ տարած նուէրը մշտական, պարտադիր հարկի կերպարանք ստանալու ձգտումն ունի): Ամեն մի հարսանիքատէր տանում է մի-մի ոչխար և այլն և այլն: Ի հարկէ, կաշառքներն ու տուղանքներն էլ իր կարգին:

Պարսկաստանում Հէյդար-խաների թիւը լեզիօն է, որոնք ամենեւին չեն մտածում խեղճ րայեակթի, երկրագործի դրութեան մասին, այլ աշխատում են որչափ կարելի է շատ պոկել, շատ խլել, շատ յափշտակել ժողովրդից, ինչ միջոցով ուզում է թող լինի...

ԻՐԱՆՑԻ

Յ Ի Մ Ա Ր Ը

Փոքրիկ ևովկա և. Ռանդօլֆ-Լիսֆիլդի

—Կանգնիր, Ռեզինալդ: Ի՞նչպէս ես. ինչո՞ւ այդպէս արագ վազում ես,—Լոնդոնից հեռանալու մտադրութեամբ կայարանում երկաթուղային գնացքին սպասող օտարականը դարձաւ իր մօտով հապճեպ անցնող մէկին և խփեց նրա ուսին:

—Քիչ էր մնացել քեզ առանց միրուքի չճանաչէի—չարունակեց նա,—ինչպէս է ընտանիքդ, ինչպէս է քո կնոջ առողջութիւնը:

—Ցաւում եմ, յարգելի պարոն, որ ես ձեզ չեմ ճանաչում,—պատասխանեց միւսը—դարձեալ չեմ կարող իմ կնոջ առողջութեան մասին դժբախտաբար ոչինչ ասել, որովհետեւ ես դեռ ամուսնացած չեմ: Բացի դրանից պիտի նկատեմ, որ իմ անունը Ռեզինալդ չէ:

—Ի՞նչ էք ասում, ներքեք, այդ անկարելի է հաւատալ:

—Դո՛ւք, պարոն, սխալացնում էք ինձ իմ եղբօր հետ. իմ անունը Ռոբերտ Մաքեֆիլդ է: Ես ու եղբայրս շատ նման ենք իրար:

—Այդ շատ հետաքրքիր է: Եթէ դուք միրուք ունենայիք, այդ ժամանակ խիստ դժուար կը լինէր ձեզ միմեանցից տարբերել: Ես բոլորովին չը գիտէի թէ Ռեզինալդը եղբայր ունի:

—Շատ ճիշտ է: Նա իմ մասին ոչ մի ակնարկութիւն արած չի լինիլ: Ես՝ այսպէս ասած, «յիմարն» եմ մեր ընտանիքի:

—Ուրեմն թոյլ տուէք ինձ ձեզ ներկայանալու. Պաուլ Գասսէն՝ «ատելին» մեր ընտանիքի մէջ, բայց այս էլ ասեմ, որ ես չեմ կորցրել իմ յոյսերը ժամանակով այս յատկութիւնը ինձնից վերացնելու:

—Ահա, ուրեմն վիճակաւից ընկեր ունեմ, այդ լաւ է,—ասաց Մաքեֆիլդը և սեղմեց ծանօթի ձեռքը:—Բայց ասացէք

խնդրեմ, կարող էք յայտնել ինձ եղբորս հասցէն: Ես հէնց այս րոպէին եմ Նոր-Ջելանդիայից կամ աւել ճիշտն ասած Պարիզից այստեղ հասել, տեղիս մի քանի ծանօթներիս այցելութիւններ անելու նպատակով:

—Ա՛հ, եթէ չեմ սխալուում, մի անգամ Ռեզինալդը պատահամբ յիշել է, որ մի եղբայր ունի Նոր-Ջելանդիայում, բայց չը գիտէր իսկապէս ձեր բնակութեան ճիշտ տեղը:

—Կարող է պատահել. ես ինձ դիտմամբ եմ ծածուկ պահել, որպէս զի ցոյց տայի ժամանակով, թէ «ընտանիքի յիմարն» էլ կարող է մի բան ձեռք բերել:

—Սակայն թոյլ տուէք ինձ հարցնել, ինչո՞ւ ձեզ «յիմար» են կոչում, կամ ուրիշ խօսքով՝ ինչո՞ւ դուք ընդունում էք ձեզ վրայ այդ անականը:

—Աւելի շուտ էի սպասում այդ հարցը ձեզինց լսելու: Ես չեմ հասկանում, ես բացարձակապէս չեմ հասկանում, թէ ինչո՞ւ ինձ «յիմար» են կոչում: Եթէ մարդիկ կարողանային ինձ պարզ ցոյց տալ «յիմար» խօսքը իր իսկական իմաստով, և «յիմար» գործողութիւնները իրանց բովանդակ նշանակութեամբ, այն ժամանակ հեշտ էր, ես կը համամատէի այդ բոլորը իմ անձնաւորութեան, իմ ամբողջ էութեան, գործունէութեան հետ, և ի մեծ միտքարութիւն իմ, կ'իմանայի բանի բուն պատճառը: Սակաւ չեմ լսել եղբորիցս և չըջապատ մարդկանցից, թէ ես «յիմար» եմ հէնց այն պատճառով, որ չեմ մտածում ու գործում միւս մարդկանց պէս: Օրինակ՝ ինձ նախատում են թէ ինչո՞ւ համբերատար, աւելի քան ներողամիտ, խաղաղասէր, գրեթէ միշտ զիջանող եմ անկարողներին, տկարներին. ինչո՞ւ յաճախ այցելում եմ Լոնդոնի խուլ անկիւնները, խօսակցում աղքատների, օրուայ հացի կարօտ չքաւորների, հիւանդ, ուժասպառ բանուորների հետ և աշխատանքիս մեծ մասը բաժանում նրանց մէջ:—«Յիմար» ես, այո՛ «յիմար» բառի բուն նշանակութեամբ, երբ չեմ հասկանում դարու ոգին, անձնական ապահովութեան և հանգիստ ապրելու մեծ խնդիրը:—Այս խօսքերով պարսաւում էին բոլոր իմ քայլեր դիտողները, երբ ես Լոնդոնում, իմ հայրենի քաղաքումն էի ծառայում, և լուռ ու մունջ, առանց մէկին, միւսին ուշադրութիւն դարձնելու, շարունակում այդ նօրմալ, այդ ինձ համար խիստ բնական գործը՝ աղքատ ու արհամարհուած դասակարգի հետ սերտ կապեր հաստատելով:

—Այո՛, այո՛, հիմա հասկացայ թէ բանն ինչու՞ն է, շնորհակալ եմ,—պատասխանեց Գասէն:

—Եւ գիտէ՞ք, յարգելի պարոն,—վրայ բերեց Ռոբերտ Մաքեֆիլդը,—ես երբեմն արտոնջում եմ բնութեան դէմ, որ եթէ

չէ չնորհել ինձ հանճարեղ միտք, վերաստեղծելու գերմարդկային ոյժ, զօրութիւն, գոնէ տար ինձ ճարպիկութիւն, ստախօսելու, խորամանկելու, խարդախելու, նենգամանելու կարողութիւն, ընդունակութիւն, հէնց միմիայն այն պատճառով, որ իմանայի թէ այն ժամանակ ինչ յատուկ անուն կը ստանայի շրջապատիցս: Կարծում եմ այն ժամանակ աւելի յարգուած կը լինէի, քան այժմ:

—Ո՛հ, անշուշտ, անկասկած: Այն ժամանակ դուք կը ստանայիք քաղաքագէտի փայլուն կոչումը: Այժմ, ներկայ շրջանում, գնահատուող ամենամեծ քաղաքագէտը պէտք է ամենայն անհրաժեշտութեամբ օժտուած լինի բացի ձեր թուած յատկութիւններէ, նաև անդթութեամբ, արիւնածարաւ և վրիժառու տենչանքով: Ո՛հ, տիրել այս բոլոր յատկութիւններին և քաղաքական կամ զինուորական ծառայութեան մտնել, այն ժամանակ կարելի է վաղը գնեցրալ, իսկ միւս օրը ամենամեծ պալատականը դառնալ. այն ժամանակ կարելի է տէրութեան հաւաստիքը, հայրենասէր ժողովրդի խորին յարգանքը, պաշտօնական մամուլի փառաբանութիւնը վայելիլ: Այժմ, ներկայ բուպէում, մեր հայրենիք Անգլիան բնաւ չի ուղենալ մի երկրորդ Գլադստոն ունենալ, ո՛հ, ամենևին. նա ամենայն վաւիագով կ'ուղենայ ունենալ մի միջնադարեան արիւնառու Ներոս, զինուած քաղաքագիտութեան նորագոյն ղէնքերով, որպէս զի կարողանար տէրութեան պատճառած ներկայ մեծ հանդոյցը լուծել, և ամբողջ աշխարհի առաջ ի փառս Անգլիայի մի նոր, ծաղկափունջ պսակ հիւսէր, ցօղուած բուրբերի արիւնով: Եւ այն ժամանակ, պարոն Մաքեֆիլդ, կը մոռացուի Գլադստոնի անունը ժողովրդական աշխարհից և լոկ պատմական մի անուն կը դառնայ:

Հէնց այդ բուպէին նայեց նա դէպի ներքև և տեսաւ, որ դալիս է արդէն այն գնացքը, որով ինքը պիտի գնար, այդ պատճառով նա պատրաստուեց հեռանալ իր ծանօթից:

—Ա՛խ, ներեցէք, պարոն, տաք խօսակցութիւնը մոռացրեց ձեզ եղբօրս հասցէն յայտնելու: Բացի այդ, կարծեմ ես ևս հետաքրքրուելու բարոյական պարտք ունեմ հարցնելու՝ արդեօք ինչո՞ւ ձեզ «ատելի» են կոչում, կամ ուրիշ խօսքով՝ ինչո՞ւ դուք ընդունում էք ձեզ վրայ այդ անվանումը:

—Շատ լաւ, այս բուպէիս, — ասաց ճանապարհորդը և գրեց հասցէն մի թղթիկի վրայ, ու տուաւ Մաքեֆիլդին: Իսկ ինչ վերաբերում է ձեր հետաքրքրութեան բաւարարութիւն տալուն, — շարունակեց նա — այդ, ներեցէք ինձ ասելու, մի երկար և խիստ հետաքրքիր պատմութիւն է, և անկարելի է այս սուղ

ժամանակամիջոցում ձեզ հաղորդել, թողնենք մի ուրիշ անգամ, ես շտապում եմ այժմ:

—Ներեցէք, մի հարց եւ: Ձեր սկզբում արած ակնարկու-թիւնից երեսայ որ եղբայրս արդէն կին ունի, արդեօք ճիշտ է այդ:

—Ի հարկէ, մինչև անգամ մի քանի ամիս սրանից առաջ նա մի որդի ունեցաւ:

—Այո, և դիտէք արդեօք ում հետ է ամուսնացել:

—Եթէ չեմ սխալւում նա պէտք է ֆինսկուրի, կամ ֆին-կուրի գուստրը լինի:

—Այսինքն ֆարկուրի,—չուտով ուղղեց Մաքեֆիլդը:

—Ճիշտ այդպէս, ֆարկուր, Դօրա ֆարկուր:

—Դօրա ֆարկուր, այո,—կրկնեց Մաքեֆիլդը չեշտակի եղանակով և իսկոյն գունատուեց: Մի անորոշ արտայայտութիւն ստացան նրա աչքերը:

—Ճանաչում էք նրան, մի սքանչելի, վերին աստիճանի գրաւիչ կին է,—աւելացրեց Գասսէն,—և մի անբացատրելի սէր է տածում դէպի Ռեզինալդը: Այժմ ներեցէք ինձ, ես գնում եմ, ահաւասիկ այն գնացքը, որով ես պիտի հեռանամ այստեղից: Չափազանց ուրախ եմ, որ բախտ ունեցայ ձեզ հետ ծանօթա-նալու, անշուշտ կը տեսնուենք, մնաք բարեւ:

Ռոբերտ Մաքեֆիլդը ոչինչ չը պատասխանեց: Նա ան-շարժ ու անզգայ սենեկի իր աչքերը մի կէտի և խորասուզուեց մի սրտամաշ մտածմունքի մէջ: Նոր եկած գնացքից դուրս թա-փառող խուռն բաղմութիւնը, որ նրա աջ ու ձախ կողմից հըր-հրելով անցնում էր, չը կարողացաւ ոչ մի բանով նրա միտքն ու ուշադրութիւնը գրաւել, մինչև որ բռնակիր ծառաներից մէկը մօտենալով նրան, բարձր ձայնով գոչեց. «Պարոն, ինչ ու-նիք տանելու»:

Այն ժամանակ դարձաւ նա դէպի ծառան, և ոչինչ չը պատասխանելով, անզգալի կերպով ուղղեց իր ծանր ու դան-դաղ քայլերը կրկին դէպի կայարանի չինութիւնը:

—Այս բոլորն առաջանում է նրանից, որ մարդ ընտանիքի մէջ «յիմար» կոչման արժանանալով, կորցնում է իր ինքնավըս-տահոլութիւնը և չի համարձակւում իր սիրած օրիորդին ինդրե-լու, որ փոքր ինչ սպասել կարողանայ,—մտածեց նա դառնու-թեամբ:—Եւ արդեօք այս իսկապէս մի անհասկանալի «յիմա-րութիւն» է: Այժմ, այսպիսի պայմաններում, ես չեմ ուղում այլևս քաղաք մտնել, ես պէտք է իսկոյն յետ դառնամ այնտեղ, որտեղից եկել եմ. ես այլևս ոչինչ չունեմ այս քաղաքում: Ու-

րեմն նա կին է և մայր. Ռեզինալդի կինը... Ո՛հ, հեռանալ, հեռանալ իսկոյն այստեղից:

*
* *

«Մովէ» շրափը, ուր գնալու համար հարկաւոր էր ամբողջ քսան ռուպէ, լիքն էր խուռն բազմութեամբ:

Մի բարձրահասակ, ածիլած հարթ երեսով, կնճռոտ դէմքով մարդ, հագած պաշտօնական համազգեստ, մի ձեռքին վերարկուն, միւսով բռնած մի փոքրիկ արկղ, ծանր ու մտախոհ քայլում էր ափի վրայ: Հէնց որ նա տեսաւ իր մօտով անցնող մարդուն, մի քննական հայեացք ձգեց նրա վրայ և իսկոյն մօտեցաւ նրան:

—Ներեցէք ինձ յարգելի պարոն, կարող եմ մի ռուպէ ձեզ հետ խօսել:

Ճանապարհորդը նայեց օտարականին ապշալից հայեացքով, և գլուխը շարժելով մի ինչ-որ բան մըմնջաց:

—Ոչ այստեղ, պարոն, սա մի մասնաւոր գործ է, ուրեմն արժէ մի քանի քայլ հեռանալ աստեղից:

Մի փոքր անցած, ճանապարհորդը տեսաւ որ արդէն այն շողենաւը, որով ինքը պիտի գնար, տեղից շարժուեց և ճանապարհ ընկաւ:

—Ռեզինալդ Մաքեֆիլդ,—չեչտեց օտարականը պաշտօնական տոնով—ես՝ խուզարկող ոստիկան Մորիցս, ձերբակալում եմ ձեզ, որպէս հայրենիքի դաւաճանի, որպէս պատերազմի դաշտից փախած երկչոտ ստրկի:

—Դուք սխալուում էք, ես նա չեմ, որին դուք որոնում էք:

—Պահ, խնայեցէք ձեր ջանքը, և ի դուր մի ուրանաք: Ես չատ լաւ եմ ճանաչում ձեր դէմքը, և չը նայելով որ ածիլած է ձեր միրուքը և փոխած ձեր պաշտօնական համազգեստը, այնուամենայնիւ ես իսկոյն ճանաչեցի:

Ճանապարհորդը պահ մի կանգ առաւ և ռուպէական լոռութեամբ կարծես ականջ դրեց իր խղճի ձայնին:

—Թերևս ի դուր կը լինէր բանը երկար ձգձգել. դուք, ինչպէս երևում է, ոչ մի կերպ չէք ուզում հաւատալ իմ բացատրութեան,—ասաց նա—բայց այնուամենայնիւ այստեղ մի ինչ որ սխալ բան կայ:

—Շատ գեղեցիկ, յարգելի պարոն, ձեր տուած ցուցմունքներից կը պարզուի ամեն բան. սակայն պարտք եմ համարում ձեր ուշադրութիւնը այն բանի վրայ դարձնել, որ ձեր ուրա-

ցութիւնը խիստ կը դժուարացնէ գործը: Խոստովանեցէք անկեղծօրէն, որ ձեր անունը Մաքեֆիլդ է:

— Իմ անունը Մաքեֆիլդ է, — ասաց ճանապարհորդը ժըպտախառն դէմքով:

*
* *

— Ասացէք տեսնեմ, ինչպէս եղաւ այդ. նա բացարձակ խոստովանում է իր ուլ լինելը, — հարցրեց ոստիկանապետ Սկոտլանդ-Հարդը ոստիկան Մօրիցին:

— Սկզբում նա չէր ուզում խոստովանել, ինչ որ ուզում էի ես նրանից իմանալ: Սակայն երբ խնդիրը պնդեցի, այն ժամանակ նա գոհնատուեց, լուռ խորասուզուեց մտքի մէջ և պարզ խոստովանելով իր անունը, հետեց ինձ առանց մի բառ արտասանելու, դիմադրութեան մի ամենափոքրիկ նշան չոյց տալու: Ամբողջ կեանքումս առաջին անգամն է, որ տեսնում եմ մի այսպիսի համեստ, հեզ, խոնարհ յանցապարտ, այն աստիճան, որ ակամայ մարդու գութ է չարժուած: Եւ միւս կողմից հասկանալի է, որ այդ տեսակ երկչոտները կարող են միայն զինուորականի անունը արատաւորել և ուրիշ ոչինչ: Ի՞նչ օգուտ Անգլիային այդպիսի թուլամորթ օֆիցէրներից:

Ապա փոքր ժամանակ անցնելուց յետոյ, դատի է կանչւում Մաքեֆիլդը և եռակի յանցանք բարդւում նրա վրայ այն մեծ պատասխանատուութեան առաջ, որ ինքը իր փոքրիկ վաշտով, կռուի ամենակրիտիկական բուպէին, փախուստի է դիմել: Նա հանգիստ ու անխռով էր, առանց մազաչափ շփոթուելու, և բոլոր հարցումներին նա ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ մեղմ տոնով արտասանում էր. «Ես մեղաւոր չեմ»: Քննութիւնից յետոյ, անմեղ զոհ Ռոբերտ Մաքեֆիլդը, դատապարտուած ծանր յանցանքի, կրկին լուռ ու մունջ, առանց որ և է արտունջի, ներս խոթուեց բանտի խուցը:

Բանտարկուելուց երեք օր անցած, յանկարծ բանտապահ ծառաներից մէկը յայտնում է Մաքեֆիլդին, թէ մի ինչ-որ կին ցանկանում է իր հետ քիչ խօսել: Փոքր անցած, նրա առաջ կանգնում է իր եղբայր Ռեգինալդի կինը: Նա հագել էր ոտից մինչև գլուխ սև շորեր, վարդագոյն դէմքը ծածկել սև քօղով, որի մասնը ծակոտիներից կարելի էր նշմարել երիտասարդ կնոջ դէմքի վրայ հեզահամրոյր պարկեշտութիւն, ամբողջ հոգին վառող, հուրհրատող սէր, բայց միևնոյն ժամանակ վրդովուած, կակծալի վիճակ:

Նրանք մի բոպէ լուռ ու մունջ նայեցին միմեանց:

Նոյեմբեր, 1901.

—Դուք չէիք սպասում ինձ այստեղ և այս վիճակում գտնել,—նկատեց Ռոբերտ Մաքեֆիլդը.—հաւանորէն մեր ընտանիքը ինձ բոլորովին մոռացած կը լինի:

—Ո՛հ, ո՛չ,—յարեց երիտասարդ կինը—լուրը ինձ հասնելուց անմիջապէս հասկացայ, որ այդ անակնկալ վտանգին ենթարկուողը դուք էք, որովհետև Ռեզինալդը արդէն հետացած է քաղաքից:

—Հետացած:

—Այո, հէնց որ լսեց թէ ձերբակալութեան հրաման է արձակուած իր դէմ, անյապաղ թողեց Լոնդոնը:

Վերջին խօսքերը արտասանեց նա խիստ ցածր ձայնով:

—Այդ դէպքում ուրեմն նա չի կարող իր վրայ բարդուած մեղադրանքը մաքրել, հնարաւորութիւն չի ունենալ իր պաշտպանութեան մասին հոգալ:

—Ոչ,—փոփոսաց կինը,—նա հաղորդել է ինձ ամեն բան, նախ քան հետանալը. ազատութեան ոչ մի միջոց չը կայ:

—Բայց ինչպէս է պատահել այդ դժբախտութիւնը: Ո՞ր տեղից և ինչ պատճառով է նա փախուստի դիմել: Արդե՞ք իրաւացի է կառավարութեան վարմունքը:

—Ա՛խ, այդ նկարագիրը սարսափելի է,—ասաց երիտասարդ կինը:—Ես այստեղ ամբողջ անցքը ձեզ հաղորդել անկարող եմ, միայն ասեմ որ Ռեզինալդի, որպէս օֆիցէրի ցոյց տուած աններելի պարտազանցութեան մէջ մեղաւոր եմ ես ինքս այնքան, որքան և ինքը Ռեզինալդը: Այո, Ռեզինալդը քաջ է, անգամ ահարկու և խիստ հայրենասէր, քիչ չեմ կարդացել լրագրներում նրա տարած յաղթութիւնների մասին գովասանքներ: Սակայն այն սէրը, այն անզուգական, աննման սէրը, որ փոխադարձաբար տածում ենք իրար, մատնեց Ռեզինալդին տխուր և անփառունակ վիճակի, երբ Կալքենֆէլդ արիւնահեղ ճակատամարտում, ուր մեր հայրենիքը անասելի կորուստ ունեցաւ, նա մահուան երկիւղից ստիպուած, որ բոպէ առ բոպէ սպառնում էր նրան անդունդ գըլորել, կամ աւելի ճիշտն ասած՝ իմ սիրոյ պատճառով փախուստի դիմեց, որի հետևանքը եղաւ մեր գնդերի շիւթութիւնը և բուրերի սարսափելի կոտորածը: Ա՛խ, Ռեզինալդին չի կարելի մեղադրել, զեռ երկու ամիս հազիւ էր անցել մեր ամուսնութիւնից, երբ մեզ բաժանեցին միմեանցից: Երանի թէ ես ևս այնտեղ լինէի և երկուսս միասին զէնքերը ձեռքներիս գոհուէինք հայրենիքի պատուին, որով գոնէ այսօր այս անտանելի նախատինքին չէինք արժանանալ, և միւս կողմից մենք կատարած կը լինէինք մեր բարոյական պարտքը:

—Ուրեմն, յարգելի դուստրդ Ֆարկուրի,—յարեց Ռոբերտ Մաքեֆիլդը երգիծարանական տոնով,—եթէ ձեր սէրը մէջտեղ չը լինէր, եղբայրս՝ չնորհիւ իր քաջագործութեան և հայրենասիրական վառ խանդին, անգթօրէն, ներեցէք ինձ այսպէս ասելու, անմեղ արիւն կը թափէր, և վաղը միւս օրը կ'արժանանար զինուորական մեծ կոչման, փառքի ու պատուի։ Դուք ևս, ինչպէս ասացիք, հակառակ կանացի սեռի թուլութեան, հրաշքներ կը գործէիք բուրերի դէմ, զոյգով կը զոհուէիք հայրենիքի պատուին։ Յարգելի դուստրդ Ֆարկուրի,—շարունակեց նա հեղինակաւոր և ինքնաւստահ ոճով,—ասացէք ինչդեմ, ո՞վ չէ հայրենասէր այս դարում, ո՞վ ուրիշին բարձր կը դասէ իր հայրենիքից, ազգից և եթէ ուզում էք տէրութիւնից, ում երախներում չի եռալ հայրենասիրական վառ զգացում, կռուելու, զոհուելու տենչանք, եթէ ինչիւրը յայտարարուած լինի «յանուն ազատութեան», եթէ անակնկալ զէպքերը վտանգ, կորուստ սպառնային ազգի, ազատ հայրենիքի գոյութեան։ Այն ժամանակ, հաւատացած եղէք, որ Ռեզինալդները երբէք չէին փախչիլ պատերազմի դաշտից, ուր նրանք քշւում են այժմ ակամայ, այն ժամանակ ամուսնական սէրերը տեղի կը տային սուելի բարձր՝ հայրենիքի փրկութեան սուրբ սիրոյ, և վերջապէս այն ժամանակ նոյն իսկ ինձ նման «յիմարները» մի-մի հերոս կը դառնային և կրակ կը տեղային թշնամու բանակի վրայ։ Իսկ այժմ, ներկայ զէպքում, մեր հայրենիքի կռիւը այդ տեսակին չէ պատկանում։ Անդլիան չի ուզում ազատուել, այլ ազատութիւն խորտակել։ Նրան ոչ ոք վտանգ չի սպառնում, այլ ինքն է վրտանգում, կորստի մատնում ուրիշին։ Եւ այս բոլորից յետոյ, թո՛ղ զարմանալի չը թուայ, եթէ ասեմ, որ Անգլիայի զինուորը զոհւում է ներկայ պարագայում ոչ թէ յանուն հայրենիքի պատուի ու փառքի, այլ Անգլիայի աշխարհ գրաւող ընչաքաղցութեան, նրա հրէական շահասիրութեան։ Մենք մահկանայուններս յարգելի դուստրդ Ֆարկուրի, պէտք է նաև մարդասիրական զգացումներ ունենանք։ Մենք չը պէտք է բնաւ ուրանանք արդարութիւնը, ճշմարտութիւնը, եթէ նոյն իսկ դա ըստ երևութին ընդդէմ է մեր հայրենիքի շահերին։ Մենք, ինչպէս և ամբողջ աշխարհը, երբէք չենք կարող չը խոստովանել բուրերի արդար վարմունքը, չը ծափահարել նրանց ակնյայտնի քաջագործութիւնը և չը մաղթել յաղթութիւն նրանց զէնքին։—Ինչո՞ւ—կը հարցնէք։—Մի վախենաք, ևս հայրենիքի դաւաճան չեմ.—հէնց այն պատճառով, որ նրանց զբօշակը փողփողում է յանուն սուրբ անկախութեան, ազատութեան, հասարակական-քաղաքացիական ինքնուրոյնութեան, ահա թէ ինչու։ Եւ հէնց այդ ինքնա-

բուղիս շարժառիթն է միակ պատճառը որ ահով ու սարսափով յետ են նահանջում անգլիական լեզեօնները բուրերի փոքրիկ արիասիրտ խմբերից, այդ սուրբ զգացումն է պատճառը, որ բուրերի կինն ու օրիորդը գէնքը ձեռքներին անխնայ գետինն են տապալում մեր եղբայրակիցներին: Մաղթենք, յարգելի դուստրդ Ֆարկուրի, բուրերին յաջողութիւն մինչև վերջ, եթէ ճշմարտասէր ու արդարադատ ենք, եթէ բարեկամ ենք ընկճուածին ու հալածուածին: Իսկ մեր հայրենիքը, հսկայ Անգլիան, մի վախենաք, նա չի կորչիլ, միայն բարոյական ապտակ ուտելուց և ահագին կորուստ ունենալուց յետոյ, վերջապէս յուսահատուած դաշնագիր կ'առաջարկէ: Եւ այն ժամանակ «կեցցեն բուրերը, կեցցէ հասարակապետութիւնը», կը գոչէ համայն աշխարհը:

Ռոբերտ Մաքեֆիլդի այս ձիգ մենախօսութիւնից յետոյ բաւական ժամանակ լռութիւն տիրեց նրանց մէջ: Վերջապէս երիտասարդ կինը խօսքը փոխելով հարցրեց նրան.

— Իսկ դուք, ասացէք խնդրեմ, այդ ինչ պատահեց: Ես լսել եմ ձեր մասին, որ դուք գտնուում էք աշխարհի միւս ծայրում, այդ ինչպէս եղաւ որ ձեր եղբոր փոխարէն դուք կալանաւորուեցիք:— Կարցրեց երիտասարդ կինը յաւակցական եղանակով:— Ես բացառապէս դրա համար եմ եկել, խնդրում եմ բացատրեցէք ինձ:

— Ինչպէս կեանքում շատ շատերը, որոնք մեզ ճանաչում են, ինձ և եղբորս գրեթէ միշտ իրար հետ սխալեցնում են՝ մէկին տեսնելուց միւսն են կարծում, նոյն կերպ խաբուեց և ոստիկանութիւնը, ինձ՝ Ռոբերտ Մաքեֆիլդիս Ռեդինալդ Մաքեֆիլդ կարծելով: Ես վերջին ժամանակ գործով Պարիզ էի, եկայ Լոնդոն մի քանի այցելութիւններ անելու. սակայն հազիւ Լոնդոնի կայարանը հասած, ինչ-ինչ պարագաներ փոխեցին մտադրութիւնս և ես վճռեցի իսկոյն յետ դառնալ: Հապճեպ քայլերով «Մովէ» ջրափը հասնելով, շտապեցի շոգենաւ նստել, բայց յանկարծ մի բարձրահասակ ոստիկան առանձնացնելով ինձ, իսկոյն կալանաւորեց:

— Բայց ինչո՞ւ տեղի տուիք, ինչո՞ւ չը հասկացրիք նրան ձեր ով լինելը:

— Առաջին՝ որովհետեւ նա չէր հաւատալ ինձ, երկրորդ՝ որովհետեւ այդ միջոցով իմ եղբայր Ռեգինալդին վտանգի կ'ենթարկէի և երրորդ՝ ով գիտէ, գուցէ առաջացել է այս անտարբերութիւնից:

— Ուրեմն դուք յօժարակամ բանտ էք նստել, որպէս զի ձեր եղբորը վտանգից ազատէք:

—Այո՛, բայց մի՛ մոռանաք, որ իմ եղբայրը միևնոյն ժամանակ ձեր ամուսինն է։

Այս խօսքերի վրայ երիտասարդ կինը յնչյուեց ամբողջ մարմնով։ Նա դարձրեց իր հայեացքը դէպի բանտարկեալը և կարդաց նրա աչքերում անյաճ կեանքի, ուրախ ժամերի մի լիարուսն հիւսուածք, ծածկուած մթադին շղարշով։

—Սակայն ի՞նչ էք ուզում անել,—հարցրեց կինը տխուր ձայնով, ընկճուած սրտով։

—Այդ ձեզնից է կախուած, Դօրա,—թոյլ տուէք ինձ ձեզ այսպէս կոչելու, որպէս իմ եղբօր կին, կարծեմ իրաւունք կը տաք ինձ։

—Օ՛, ոչ միայն իբրեւ իմ ամուսնու եղբայր... Ձեր արած բարութիւնը Ռեզինալդի և ինձ համար ոչ ոք, բացարձակապէս ոչ ոք չէր անի։

—Ես սիրով պատրաստ եմ ամեն բան անել, միայն թէ ձեզ փորձանքից ազատ պահել, և կարծում եմ ոյժ ունեմ իմ մէջ այդ անելու։ Ոստիկանական վարչութիւնը համոզուած է առ այժմ, որ ես իրանց որոնածն եմ՝ Ռեզինալդ Մաքեֆիլդը, մինչդեռ նա այժմ Լոնդոնից հեռու է և ապահով. սակայն ի՞նչ էք կարծում, այդ երկար չի տևի։ Մանրամասն քննութիւնից յետոյ կարող է բոլորովին ինձնից անկախ պատճառներով ճշմարտութիւնը յայտնուել, ուրեմն և կարող են նրան հետեւել և բռնել։

—Ես գիտեմ, օ, ես այդ գիտեմ։

—Նրա ձերբակալութիւնը, Դօրա, անշուշտ ձեզ և ձեր որդուն վտանգի կ'ենթարկէ։ Իսկ ինձ ոչ մի բան չի խանգարում. ես մեն-մենակ եմ, և իմ բանտարկութիւնը ո՛չ կ'նոջ, ո՛չ որդու, ո՛չ ընկերոջ և ոչ այլ մէկին վեհա չի պատճառում։

—Ի՞նչ էք ուզում ասել դրանով,—հարցրեց Դօրա ֆարկուրը, արտասուալից աչքերը նրան ուղղելով։

—Որ ես ձեզ դարձեալ սիրում եմ, և անգամ աւելի, քան առաջ։

—Ինչպէս, դուք ինձ... Ինչպէս...

—Որ ես Անգլիան թողել եմ, որպէս զի մի ուրիշ երկրում պաշտօն ու կարողութիւն վաստակելով, ձեզ ձեռք բերել կարողանամ։ Եւ այժմ, թէև իմ կարողութիւնը դեռ ես չառ մեծ չէ, սակայն բոլորովին ապահովուած են իմ պաշտօնական բոլոր յարաբերութիւնները։ Իսկ այժմ, ինչպէս տեսնում էք, ես արդէն բանտի մէջ եմ, իմ եղբօր փոխարէն, նրա պատիժը ըստ երևութին ես պիտի կրեմ։ Սակայն, կրկնում եմ, Դօրա, նրա ծպտեալ զրոյթիւնը կարող է յայտնուել, որքան էլ հեռու պահէ

իրան չըջաններից: Այժմ գնացէք դուք ձեր որդու հետ նրա մօտ և այս բոլորը հասկայրէք: Ապա բոլորդ միասին գնացէք Նոր-Ջելանդիա, այնտեղ կարող է եղբայրս իմ պաշտօնը վարել, ինչպէս ես այստեղ իրանն եմ վարում: Պաշտօնակիցներս և այլ բոլոր ծանօթներս նոյն կերպ և դեռ աւելի հեշտ կարող են եղբօրս ինձ տեղ կարծել, ինչպէս խաբուեց տեղիս ոստիկանութեան խուզարկող աչքը: Նրան ոչ մէկը ոչինչ դժուարութիւն չի կարող պատճառել և այդպիսով գոնէ կը վայելէք իմ աշխատանքի պտուղները. իսկ իմ բոլոր ձգտումները, իմ Դօրա, բոլոր իմ ոսկի, հոգեմաշ երազները, որ ունենում էի միայն և միմիայն ձեր պատճառով, չեն կորչիլ լիովին—մասամբ կ'իրականանան:

—Անկարելի է, այդ ես չեմ կարող: Խիստ ծանր և անտանելի է այդ պատասխանատուութիւնը՝ ուրիշի վաստակ վայելելը:

—Դուք հրաժարուում էք ձեր թանկագին ամուսնուն, ձեր սիրելի որդու հօրն ազատել: Ուրեմն դուք ուզում էք թէ՛ նրան և թէ՛ ձեզ ընդմիշտ կորստեան մատնել:

—Ա՛խ, ինչպէս կարող եմ ձեզ—ձեզ, որ այս րոպէին պատկերացաւ ինձ որպէս ամենաազնիւր բոլոր մարդկանցից, թոյլ տալ մի այդօրինակ զոհաբերութիւն անելու: Ո՛հ, պարոն Մաքեֆիլդ, իմ կանաչի թոյլ ու քնքոյշ սիրտը լողողում է դրա դէմ:

—Հաւատում եք դուք, որ այս զոհաբերութիւնը—եթէ թոյլ տանք մի րոպէ այդպէս անուանելու—կարող է ինձ իսպառ դժբախտացնել: Թէ՛ն այս ինքն ըստ ինքեան ինձ համար երազած սիրոյ վարձատրութիւն չէ, սակայն և այնպէս այս կատարում է ի պատիւ ձեր—բացառապէս ձեզ համար, իմ Դօրա. ձեզ համար, ձեր ապահովութեան և բարօր կեանքի համար ես պատրաստ եմ ամեն ինչ անել: Այդ պատճառով հոգու ամենայն հանգստութեամբ համաձայնուեցէք ասածիս հետ և հէնց վաղը հեռացէք Անգլիայից: Այլ ես աւելորդ է ձեզ երկար մնալ այստեղ, ուր երկինքը խռովել է ձեզնից:

—Օ՛, իմ Ռոբերտ, ինչպէս կարող էք մի այդ օրինակ անլուր ու հազուագիւտ փրկանք առաջարկել իմ «եսասիրութեան» բաւականութիւն տալու համար: Եւ արդեօք ինչպէս կարող եմ ես այդ ազնիւ, անգնահատելի ընծան ընդունել և դրանով իմ ամուսնու և որդու համար պատասխանատուութեան տակ ձգել դժբախտիս: Ո՛հ, սարսափելի իրականութիւն:

—Համաձայնուեցէք, իմ Դօրա, և գնացէք առանց որ և է այլևայլութեան: Հանգամանքները արգելում են ձեզ հայրենի

երկրում մնալ, ձեր սիրած վայրերում ապրել, կամայ-ակամայ պէտք է հնազանդուէք: Գնացէ՛ք մի նոր հայրենիք, կարողութիւն և հիմնովին ապահովուած ապագան սպասում են ձեզ ով-կիանոսի միւս կողմում: Հայրենիք ու կարողութիւն, որ բա-ռիս իսկական նշանակութեամբ ձեր ստացուածքը, ձեր սեփա-կանութիւնը կը դառնան, առանց որեւէ դժուարութեան, ուրովհետեւ այդ բոլորը ձեզ, Դօրա, միայն ձեզ համար են ձեռք բերուած ամենայն խնայողութեամբ: Մնացէ՛ք այնտեղ, մինչև որ իմ մասին որեւէ բան կը լսէք: Աստուած օրհնէ ձեզ:

—Թող Աստուծոյ օրհնութիւնն ու կարող ձեռքը ընդմիշտ հովանի լինի ձեզ, ազնիւ, անկեղծ Ռոբերտ,—ասաց երիտասարդ կինը և արտասուաթոր աչքերով համբուրեց ազատակամ բան-տարկեալի ձեռքը:

Դանդաղ քայլերով մօտեցաւ Դօրան դէպի դուռը, և ապա իսկոյն և արագ յետ դառնալով մրմնջաց հետեալ խօսքերը.

«Այս էլ Ռեզինալդի և իմ որդու փոխարէն», ասաց և ա-մենայն արագութեամբ քաշելով երեսի սև քօղը, ի նշան բուռն երախտագիտութեան, մի խանդավառ համբոյր դրոշմեց Ռոբեր-տի փայլուն ճակատին:—Իսկ ինչ վերաբերում է ինձ, միմիայն ինձ, իմ շնորհակալութիւնը միայն կեանքիս վախճանով կ'ար-տայայտուի»,—ասաց նա հեկեկալով, և լալահառաչ դուրս գնաց:

Գերմ. *) Թարգմ. Բ. ԻՇԽԱՆԵԱՆ

*) Բնագիրը անգլիերէն է:

Ա Ղ Օ Թ Ք

(Լեռնօրհովի)

Ով՛ Տիրամայր, այսօր մի ջերմ աղօթքով
Քո լուսագարդ սուրբ պատկերիդ յանդիման
Ես կանգնած եմ ո՛չ փրկութեան փափագով,
Ո՛չ գոհ սրտով, ո՛չ աղետով փառութեան:

Ձե՛մ աղօթում ես իմ անէր, ամայի
Կեանքիս համար՝ վրտառանդի, վրժառաս.
Ձերմ պաշտպանիդ այս ցրտունի աշխարհի
Ես ուզում եմ յանձնել մի կոյս անարաս:

Պահի՛ր նորան՝ շրջապատած լի՛ բախտով,
Տո՛ւր կեանքի մէջ ուղեկիցներ ուշադիր.
Ե՛ւ յոյս գարուն, ե՛ւ ծերութիւն անվրդով,
Ե՛ւ խաղաղ յոյս անչար սրտին պարգեւի՛ր:

Եւ երբ լինի նա թողնելու այս երկիր—
Լուռ գիւտերին, թէ լիազմուկ առաւօտ,
Սիրուն հոգին ընդունելու առաքիր
Դու լաւագոյն հրեւտակիդ նորա մօտ...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՏԻԵԶԵՐՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ *)

(ԷՐԵՐԱՏ 4ԵԿԿԵԼԻ)

Օրգանիզմների և անօրգանների համեմատութիւնը.—Օրգանական և անօրգանական նիւթը.—Խտութեան աստիճանները կամ ազդրեղատ-դրութիւնները.—Սպիտակուցային ածխածնի բաղադրութիւնները.—Պլաստ-մարմինները.—Օրգանական և անօրգանական ձևեր.—Բիւրեղներ և մօնէրներ (կազմադուրկ էակներ առանց զործարանների).—Բիւրեղների և օրգանիզմների ստերէօմետրիական հիմնաձևերը.—Օրգանական և անօրգանական ոչժեր.—Կեանքի ոչժը.—Բիւրեղների և օրգանիզմների աճումն ու չարմարացումը.—Բիւրեղներ կազմող ոչժեր.—Օրգանական և անօրգանական բնութեան միութիւնը:

Երբ երկրի կեղևը բաւականաչափ սառել էր և ջուրը հեղուկ ձև ստացել, երբ երկրի չոր մակերևոյթն առաջին անգամ ծածկուել էր հոսուն ջրով, միայն այդ ժամանակ արդէն կարող էին առաջ գալ օրգանիզմները, քանի որ բոլոր կենդանիներն ու բոյսերը բաղկանում են մեծ կամ մեծագոյն մասսամբ ծորհեղուկ ջրից, որ միւս նիւթերի հետ ինքնայատուկ եղանակով խառնուելով, փոխում է դրանց կարծրհեղուկ ազդրեղատ-դրութեան: Անօրգանական երկրի պատմութեան այս ընդհանուր գծերից կարող ենք ուրեմն այն կարևոր իրողութեանը հասնել, որ մի որոշ ժամանակում է օրգանական կեանք երկրիս վրայ իր սկիզբն առել, որ երկրային էակներն ի սկզբանէ անտի գոյութիւն չեն ունեցել, այլ մի որոշ ժամանակակէտում են առաջ եկել:

Ուրեմն ինչպէս պիտի ներկայացնենք մեզ առաջին օրգանիզմների առաջ գալը: Այդ այն կէտն է, որի նկատմամբ բնախոյզների մեծամասնութիւնը տակաւին այսօր հակուած է բնագիտական բացատրութիւնից հրաժարուել և ստեղծագործութեան անընթանելի հրաշքի մէջ իր ապաստանը որոնել: Այդ

*) Տես «Մուրճ» № 10:

քայլով, ինչպէս արդէն նկատել եմ, դուրս են գալիս նրանք բնագիտական խմայողութեան սահմանից և հրաժարւում են ընապատմութեան սնհրաժեշտ կապակցութեան ընդունումից: Նախ քան վհատած այդ վերջին քայլն անելը, նախ քան կասկածելու այդ կարևոր երևոյթի ըմբռնման հնարաւորութեան վրայ, գէթ փորձենք այն հասկանալ: Տեսնենք արդեօք առաջին օրգանիզմի առաջ գալն անօրգանական նիւթից, կամ մի կենդանի մարմնի առաջ գալը՝ այսպէս կոչուած անկենդան նիւթից իրօք մի ինչ-որ բոլորովին աներևակայելի, բոլոր ծանօթ փորձերից դուրս բան է: Մի խօսքով քննենք ճախածնուցի կամ սրխիգօցիայի հարցը: Ամենից առաջ պարզենք մեզ բնական մարմինների երկու գլխաւոր մասերի, այսպէս կոչուած անկենդան կամ անօրգանական և կենդան կամ օրգանական մարմինների, ամենագլխաւոր յատկութիւնները, և որոշենք թէ զբաղւոյ միջև ինչ ընդհանուր ու տարբերուող կողմեր կան: Օրգանիզմների եւ անօրգանների համեմատութեամբ այստեղ և՛ս աւելի պիտի դրաղուենք, քանի որ սովորաբար այդ սնտես է առնւում, և որ ամբողջ բնութեան միական ընդունան համար սնհրաժեշտ է: Ամենանպատակայարմարը կը լինի քննել իւրաքանչիւր բնական մարմնի երեք հիմնական յատկութիւնները՝ նիւթը, ձևը, ոյժը՝ առանձնակի: Նախ և առաջ սկսենք նիւթից *):

Քիմիայի միջոցով մենք հասել ենք այնտեղ, որ մեզ յայտնի բոլոր մարմինները բաժանել ենք տարրերի կամ հիմնական նիւթերի մի փոքր քանակութեան. այդ տարրական մարմիններից են զ. օր. ածխածին, թթուածին, բորակածին, ծծումբ, ապա զանազան մետաղներ՝ կալի, նատր, երկաթ, ոսկի և այլն: Ներկայումս հաշւում են 70 այդպիսի տարրեր կամ հիմնական նիւթեր: Դրանցից շատերը հազուադիւր են և այնքան էլ կարևոր չեն, միայն քիչ մասն է խիստ տարածուած և զբաղւոյ բաղադրուած է ոչ միայն անօրգանների մեծ մասը, այլ և բոլոր օրգանիզմները: Եթէ համեմատենք այն տարրերը, որոնցից կազմուած են օրգանիզմները, անօրգանների մէջ գտնուող տարրերի հետ, նախ և առաջ այն կարևոր իրողութիւնը կը հանենք, որ կենդանական ու բուսական մարմինները չեն պարունակում իւրանց մէջ ոչ մի հիմնական նիւթ, որ նոյնպէս չը գտնուէր անկենդան բնութեան մէջ: Ուրեմն չը կան առանձին օրգանական տարրեր կամ հիմնական նիւթեր:

Անյոդակի նկատենք, թէ խիստ հաւանական է, որ բոլոր

*) Տարրական տեղեկութիւններ քիմիայից հայ ընթերցողը կարող է ստանալ՝ Բօսկօ—Քիմիա գրքից, Հրատ. Թ. Հրատ. Ընկ. Խմբ.

այդ այսպէս կոչուած «տարրեր» մի հասարակ նախանիւթի հաւասարամասն անդամների բաղադրութեան զանազան ձեւեր են միայն, զանգուածներ: Այդ «տարրերի» տարբերութիւնը հաւանականօրէն այն է, որ այդ զանգուած-ատոմները բաղադրուած են տարբեր թուով ու կարգաւորութեամբ: Այդ ատոմների խմբերը կամ մօլեկիւլները տարբեր յարաբերութեան մէջ են գտնուում համաշխարհային երկրի հետ, որ լքցնում է տիեզերային տարածութիւնը: Տարրերի խմբային ազգակցութիւնը շատ հաւանական է թւում, թէև անկասար քիմիան մինչև այժմ հնարաւորութիւն չէ ունեցել այդ փորձառական եղանակով հաստատել:

Քիմիական ու ֆիզիկային տարբերութիւնները, որ գոյութիւն ունեն օրգանիզմների ու անօրգանների միջև, նրանց կազմող նիւթերի նիւթերի տարբեր բնութեան մէջ չեն, այլ այդ նիւթերի տարբեր եղանակով ու ձևով քիմիապէս բաղադրուելու մէջ: Բաղադրութեան այդ տարբեր եղանակը պայմանաւորուած է նախ և առաջ ֆիզիկային յայտնի առանձնայատկութիւններով, մանաւանդ նիւթի խտութեամբ, որոնք առաջին հայեացքից ըստ երևոյթին խոր անդունդ են բաց անում մարմինների այդ երկու խմբերի միջև: Ձևակերպուած անօրգանական կամ անկենդան բնամարմինները՝ բիւրեղներն ու անձև հանքերը՝ խտութեան այն դրութեան մէջ են գտնուում, որ և անուանում ենք կարծր դրութիւն, հակառակ ջրի՝ հեղուկ, և օդի՝ գազանման դրութեան: Ձեզ յայտնի է որ խտութեան այդ երկը զանազան աստիճանները կամ անօրգանների ազդեցաւորութիւնները ամենևին յատկանիշներ չեն զանազան տարրերի, այլ հետևանք տեմպերատուրի մի որոշ աստիճանի: Իւրաքանչիւր անօրգանական կարծր մարմին, զ. օր. արծիճ, կարելի է փոխել հեղուկ կամ հալուած դրութեան, աւելացնելով նրա տեմպերատուրի աստիճանը, իսկ տաքութիւնը չարունակելով բարձրացնել, նա կ'ընդունի գազանման դրութիւն: Նմանապէս իւրաքանչիւր գազանման մարմին, զ. օր. ածխածնի թու, տեմպերատուրի անհրաժեշտ նուազեցմամբ և զօրեղ ճնշմամբ կարելի է նախ հեղուկ, յետոյ էլ կարծր դրութեան վերածել:

Հակառակ անօրգանների խտութեան այդ երեք դրութեան, կենդանական ու բուսական բոլոր օրգանիզմների կենդանի մարմինը գտնուում է չորրորդ տեսակի՝ բոլորովին ինքնայատուկ ազդրեցատ-դրութեան մէջ: Դա ոչ կարծր է, ինչպէս հանքերը, ոչ էլ հեղուկ, ինչպէս ջուրը, այլ բռնում է այդ երկու դրութիւնների միջին տեղը, և զրա համար էլ կարելի է կարծրեցողի ազդեցաւորութիւն անուանել: Բոլոր կենդանի մարմինների

մէջ առանց բացառութեան կայ մի յայտնի քանակութիւն ջուր և կարծր նիւթ, ինքնայատուկ ձևով ու եղանակով բաղադրուած: Զրի և օրգանական նիւթի այդ ինքնայատուկ բաղադրութիւնից է որ առաջ է գալիս այն կակուղ, ոչ կարծր, ոչ էլ հեղուկ. ազդրեգատ-դրութիւնը, որ կեանքի երևոյթիւնների առաջ գալու և մեքենայօրէն բացատրելու համար ահագին նշանակութիւն ունի: Դրա էական պատճառն այն է, որ ամփածնի, այդ միակ հիմնական նիւթի, ֆիզիկային ու քիմիական յատկութիւններն ուրիշ են:

Բոլոր տարրերից ամփածնը մեզ համար կարևորագոյնը և հետաքրքիրն է, որովհետև մեզ յայտնի կենդանական ու բուսական բոլոր մարմինների մէջ այդ հիմնական նիւթն ահագին դեր է կատարում: Այդ այն տարրն է, որ շնորհիւ իր ինքնայատուկ հակմանը՝ միւս տարրերի հետ բարդ բաղադրութիւններ կազմելով՝ ամենամեծ պէսպիսութիւն է առաջ բերում քիմիական միաւորումների և այդպիսով կենդանական ու բուսական մարմինների ձևերի և կեանքի յատկութիւնների մէջ: Ամփածնն աւելի ևս նշանաւոր է նրանով, որ միւս տարրերի հետ կարող է միանալ խիստ զանազան թուական ու կշռական յարաբերութիւններով: Ամփածնի և ուրիշ երեք տարրերի՝ թթուածնի, ջրածնի և բորակածնի (որոնց միանում է մասամբ նաև ծծումբ և յաճախ էլ ֆոսֆոր) բաղադրութիւնները, որոնք կեանքի բոլոր երևութիւնների առաջին ու ամենաանհրաժեշտ սուբստրատը՝ սպիտակուցային բաղադրութիւններ կամ ալբումին-մարմիններ են կազմում: Դրանցից կարևորագոյններն են պլասոն-մարմիններ կամ «պլազմային բաղադրութիւններ» (կարիօպլազմա և ցիտօպլազմա): Մենք գիտենք արդէն, որ ամենահասարակ օրգանիզմը մօնէրն *) է, որի ամբողջ մարմինը ամենազարգացած դրութեան

*) Մինչև այժմ մեզ յայտնի ամենահասարակ օրգանիզմներն են ջրաբնակ մօնէրները: Դրանք շատ փոքրիկ կենդանի մարմիններ են, որոնք իսկապէս օրգանիզմ անունը բոլորովին չպիտի կրեն, որովհետև կենդանի էակներն այն հիման վրայ են «օրգանիզմ» անունը կրում, որ նրանցից իւրաքանչիւրը կազմուած է օրգաններից (գործարաններից), զանազան աեսակ մասերից, որոնք իրար հետ խառնում և միասին գործում են՝ ամբողջութեան գործունէութիւնն առաջ բերելու համար, ճիշտ այնպէս, ինչպէս արհեստական մեքենայի մասերը: Բայց և այնպէս՝ արանից 30 տարի առաջ մօնէրների մէջ նկատեցին օրգանիզմներ, որոնք իրօք ոչ թէ օրգաններից, այլ ամբողջապէս կազմազուրկ և միատեսակ նիւթից, համադրի պլազմայից էին բաղկացած: Այդ մօնէրների ամբողջ մարմինն իրանց կեանքի ընթացքում ուրիշ ոչինչ է, բայց եթէ լորձունքի մի փոքրիկ շարժում զնդակ առանց մի որոշ ձևի, սպիտակուցային ամփածնի բաղադրութեան մի փոքրիկ կենդանի կտոր: Ենթադրում ենք որ այդ

մէջ ուրիշ ոչնչից է կազմուած, եթէ ոչ պլաստիկ մի կտորից կամ կարծրանշուկ սպիտակուցային պլազմային հասիկից: Այդ ամենահասարակ օրգանիզմներն ահագին նշանակութիւն ունեն կեանքի առաջին ծագման ուսմունքի համար: Սակայն միւս օրգանիզմներից շատերը նոյնպէս իրանց գոյութեան մի որոշ ժամանակում, զոնէ իրանց կեանքի առաջին շրջանում, ներկայանում են իբրեւ մի բջիջ կամ սաղմնաբջիջ ձուրկ, որ էապէս ուրիշ ոչինչ է, բայց եթէ սպիտակուցային նիւթի կամ պրօ-սօպլազմայի մի փոքրիկ զնդակաձև կոյտ: Դրանք տարբերում են մօնէրներից նրանով, որ սպիտակուց (պրօնովին) կոյտի մէջ աւելի կարծր կարիօպլազման կամ բջջակորիզը (Nucleus) զատուած է իրան պատող կակուղ ցիօպլազմից:

Սկզբնապէս բոլոր բջիջները կազմում են ինքնուրոյն առանձին էակներ, ինչպէս մօրֆօլօգիական (ըստ մարմնակազմութեան), այնպէս էլ ֆիզիօլօգիական (ըստ կեանքի արտայայտութեան) տեսակէտից: Բայց և այնպէս ահագին տարբերութիւն կայ միաբջիջ (պրօտիստների) և բազմաբջիջ օրգանիզմների (հիստօնների) միջև: Պրօֆուսների կամ միաբջիջ էակների (նախարոյսեր ու նախակենդանիներ) օրգանիզմն ամբողջ կեանքի ընթացքում բաղկացած է միայն մէկ բջջից, այն ինչ հիսօնների կամ բազմաբջիջ կենդանիների ու բոյսերի օրգանիզմն ընդհակառակը միայն գոյութեան սկզբումն է մէկ բջջից բաղկացած. հէնց որ նա սկսում է զարգանալ, բջիջը բազմանում է կրկնուող բաժանմամբ, և այդպիսով առաջ եկած բազմաթիւ բջիջներ կազմում են հիւսուածքներ ու անդամներ: Այդ ընկերապէս կապուած բջիջները կախուած են ինչպէս իրարից, այնպէս էլ ամբողջութիւնից, և այնչափ աւելի, որչափ ամբողջութիւնն աւելի է զարգացած, որչափ զօրեղ է նա կենտրոնացած: Ուրեմն միաբջիջ պրօտիստը գտնւում է բազմաբջիջ և հիւսուածակազմ հիստօնի հետ այն յարաբերութեան մէջ, ինչպէս անհատը պետութեան հետ: Բազմաբջիջ օրգանիզմը բջիջների մի պետութիւն է, որի առանձին բջիջներն այդ պետութեան քաղաքացիներն են: («Բնական ստեղծագործութեան պատմութիւնը» էջ 256. I):

Նոր կենսաբանութեան, նամանաւանդ հիւսուածաբանութեան ամենամեծ յաղթանակն է, որ մենք այժմ հնարաւորու-

միատեսակ զանգուածն ունի մի շատ զարգացած նուրբ մօլեկուլային կազմութիւն, թակայն խոշորացոյցն այդ ցոյց չէ տալիս: Ուրիշ աւելի հասարակ, անկատար օրգանիզմներ անկարելի է երևակայել: («Բնական ստեղծագործութեան պատմութիւնը» I, էջ 164):

թիւն ունենք կեանքի երևոյթները մասին եղած հրաշքը այդ նիւթին վերադրելու, և ապացուցելու, որ օրգանական կամ գեանքի երևոյթների իսկական պատճառները սպիտակացուցային պլաստոն-մարմնի անսահման պէս-պէս ու խառնիքադանն ֆիզիկային ու քիմիական յատկութիւններն են: Օրգանիզմների բոլոր տարրերը ձեռքը նախ և առաջ անմիջական արդիւնք են զանազան ըջիջների միաւորման:

Ինչպէս որ անօրգանական մարմինների ֆիզիկային յատկութիւնների բացատրութիւնը դժուարութիւն չի ներկայացնում, այնպէս էլ սկզբունքով՝ ներկայումս օրգանական կեանքի ընդհանուր բացատրութիւնը: Օրգանիզմների կեանքի բոլոր երևոյթներն ու կերպաւորութեան պրօցէաները պայմանաւորուած են անմիջապէս օրգանական նիւթի քիմիական միաւորման ու ֆիզիկային ոյժերով, ինչպէս անօրգանական բիւրեղների կեանքի երևոյթները, այսինքն նրանց աճեցման ու տեսակարար ձևակազմութեան երևոյթներն անմիջական հետեանք են նրանց քիմիական միաւորման ու ֆիզիկային դրութեան: Երբ ոսկին ու պղինձը՝ քառանկիւնի, բիսմութն ու անտիմոնը՝ վեցանկիւնի, եօդն ու ծծումբը՝ ութնյան բիւրեղային կազմութիւն են ընդունում, դա մեզ համար ոչ աւելի և ոչ էլ պակաս առեղծոքաժային է, քան օրգանական ձևակազմութեան իւրաքանչիւր տարրական երևոյթ, ըջի իւրաքանչիւր ինքնակերպարանաւորումն: Դրա նկատմամբ այժմ էլ չենք կարող օրգանական և անօրգանական մարմինների միջև հիմնական տարբերութիւն գնել, որ առաջ ընդունուած էր:

Հիմա էլ քննենք օրգանական բնամարմինների ձևակազմութեան նմանութիւնն ու տարբերութիւնը: Գլխաւոր տարբերութիւնն առաջ գտնում էին անօրգանների յօրինուածքի պարզութեան և օրգանական մարմինների շինուածքի բարդութեան մէջ: Բոլոր օրգանիզմների մարմինը պիտի բաղկացած լինի անհաւասար կամ այլազգի (հետերօգէն) մասերից՝ գործարաններից կամ օրգաններից, որոնք միասին գործում են կեանք առաջ բերելու համար: Իսկ ամենակատարեալ անօրգանները՝ բիւրեղներն ընդհակառակը պիտի բաղկանան ամբողջապէս միատեսակ կամ համազգի (հոմօգէն) նիւթից: Սկզբունքով անշուշտ այդ տարբերութիւնը շատ էական է: Սակայն դա կորցրեց իր ամբողջ նշանակութիւնը, երբ 30 տարի առաջ մեզ յայտնի դարձան վերին աստիճանի զարմանալի ու նշանաւոր մօնէրները: Այդ ամենապարզ օրգանիզմի կենդանի մարմինը միայն մի փոքրիկ կարծրահղուկ, անձն ու կազմազուրկ պլաստիկ կոյտ է, համեմատած բիւրեղի հետ, որ բաղկացած է միայն մէկ ան-

օրգանական բաղադրությունից, զ. օր. մետաղից, կամ մի խիստ բարդ խճողային բաղադրությունից: Ի հարկէ ենթադրու-
ւում է, որ ամենապարզ մօնէրի համազգի պարզման բաղկացած է նոյնպէս մի շատ բարդ մօլեկիւլային կազմութիւնից, թէև մանրադիտակն անկարող է այդ ցոյց տալ. միևնոյնը պէտք է ենթադրել և բիւրեղների նկատմամբ:

Ինչպէս օրգանների և անօրգանների ներքին կազմուածքի կամ միաւորման, նոյնպէս էլ նրանց արտաքին ձևի մէջ ու-
ղում էին խոշոր տարբերութիւն գտնել, մանաւանդ վերջիննե-
րի մաթեմատիկորէն որոշելի բիւրեղային ձևում: Բիւրեղա-
ցումն անշուշտ գլխաւորապէս անօրգանների յատկութիւնն է: Բիւրեղները սահմանափակուած են հարթ մակերևոյթներով, որոնք իրար կտրոււմ են ուղիղ գծերով և որոշ ու չափերի ան-
կիւններով. իսկ կենդանիների ու բոյսերի ձևն ընդհակառակը առաջին հայեացքից թուում է որ չի կարող նման երկրաչա-
փական կարգաւորութիւն ունենալ: Նա սահմանափակուած է մեծ մասամբ կոր մակերևոյթներով և ծուռ գծերով, որոնք ի-
րար կտրոււմ են զանազան անկիւններով: Սակայն նորերս գրո-
նուեցին ահագին քանակութեամբ ստորին օրգանիզմներ բա-
ղիօլարիաներից և ուրիշ շատ պրօտիստներից, որոնց մարմինը, ինչպէս և բիւրեղները, մաթեմատիկորէն որոշելի հիմնաձև ու-
նեն. դրանց կերպարանքը ամբողջապէս և մասամբ նոյնպէս սահմանափակուած է երկրաչափորէն որոշելի մակերևոյթներով, եզրներով ու սնկիւններով: Իմ հիմնաձևերի ընդհանուր ուս-
մունքում կամ պրօմօթօլօգիայում դրա համար մանրամասն ապացոյցներ եմ բերել և միևնոյն ժամանակ կազմել ձևերի մի ընդհանուր համակարգութիւն, որի իդէալ ստէօրօմետրական հիմնաձևերին կարելի է վերածել ինչպէս անօրգանական բիւ-
րեղների, այնպէս էլ օրգանական անհատների իրական ձևերը *) Բացի դրանից կան նաև այնպիսի անձեւ օրգանիզմներ, օրինակ, մօնէրները, ամեօբները և այլն, որոնք իւրաքանչիւր վայրկեան փոխում են իրանց կերպարանքը: Դրանց վրայ մի որոշ հիմնաձև ցոյց տալը նոյնպէս անկարելի է, ինչպէս անձև անօրգանների, օրինակ, բիւրեղացնող հանքերի, նստուածքների և այլն վրայ: Ուրեմն անկարող ենք որևէ պրիցիպալ տարբերութիւն գնել ան-
օրգանների և օրգանիզմների արտաքին ձևի կամ ներքին կազ-
մութեան մէջ:

Դառնանք հիմա այդ երկու զանազան մարմինների խմբե-
րի ոյժերին կամ շարժման երևոյթներին: Այստեղ մենք ահագին

*) «Generelle Morphologie der Organismen» I, 375—474.

դժուարութիւնների ենք հանդիպում: Կեանքի այն երևոյթները, որ շատ մարդիկ միմիայն զարգացած օրգանիզմների՝ կատարելագործուած կենդանիների ու բոյւերի մէջ են տեսնում, այնքան առեղծուածային, այնքան հրաշազան, այնքան ինքնայատուկ են թւում, որ շատերն այն կարծիքի են, թէ անօրգանական բնութեան մէջ երբէք տեղի չէ ունենում նմանը, կամ գէթ ամենահեռաւոր համեմատութիւնը: Հէնց դրա համար է որ օրգանիզմներին անուանում են կենդանի, իսկ անօրգաններին՝ անկենդան բնամարմիններ: Այդ պատճառով էլ ֆիզիօլօգիայի մէջ, որ զբաղուած է կեանքի երևոյթների ուսումնասիրութեամբ, մինչև XIX դարը պահուել էր այն սխալ կարծիքը, թէ նիւթի ֆիզիկային ու քիմիական յատկութիւնները բաւական չեն կեանքի երևոյթները բացատրելու համար: Այսօր այդ կարծիքը, չնորհիւ բիօլօգիայի առաջադիմութեան, պիտի բոլորովին հերքուած համարուի. գոնէ ճշգրիտ ֆիզիօլօգիայի մէջ նա այլևս տեղ չունի: Այսօր ոչ մի ֆիզիօլօգի մտքով չի անցնի կեանքի երևոյթները մի հրաշալից կեանքի ուժի, մի որոշ նպատակի համեմատ գործող ոյժի արդիւնք ընդունել, որ նիւթից դուրս է գտնւում և որ վերջինիս ֆիզիկո-քիմիական ոյժերն երբեմն միայն իրան ծառայութեան է հրաւիրում: Ժամանակակից ֆիզիօլօգիան կամ բնախօսութիւնը այն խիստ մօնիսական (միական) համոզման է հասել, որ կեանքի բոլոր երևոյթները, և ամենից առաջ աննշառութիւնն ու բազմացումը, սոսկ ֆիզիկո-քիմիական երևոյթներ են. դրանք անմիջապէս կախուած են օրգանիզմի կազմուածքից: Ինչպէս իւրաքանչիւր բիւրեղի ֆիզիկային ու քիմիական յատկութիւնները պայմանաւորուած են միմիայն նրանց նիւթական միաւորմամբ: Որովհետև օրգանիզմների ինքնայատուկ բաղադրութիւնը պայմանաւորուող նիւթը անխառն է, ուստի կեանքի բոլոր երևոյթները, և ամենից առաջ աննշառութիւնն ու բազմացումը, պէտք է կապել անխառնի յատկութեան հետ: Այդ ինքնայատուկ շարժման երեւոյթների, որոնցով օրգանիզմները տարբերոււմ են, եւ որ նեղ իմաստով «կեանք» է կոչոււմ, մեքենական պատճառներն են անխառնի ինքնայատուկ ֆիզիկո-քիմիական յատկութիւնները, եւ նախաւանդ խիստ բարդ սպիտակուցային անխառնի բաղադրութեան կարծրանելու ազդեցութեան ու դիւրալուծումը:

«Անխառնի քեմիան», որ ես իմ «Generelle Morphologie» երկրորդ գրքում մանրամասնօրէն հաստատել եմ, լաւ ըմբռնելու համար նախ անհրաժեշտ է այն շարժման երևոյթներն աչքի առնել, որոնք բնամարմինների երկու խմբին էլ յատուկ են:

Դրանց մէջ առաջին տեղը բռնում է անումն: Երբ մի որ և է անօրգանական աղալում թողնենք կամաց-կամաց զոլորչիանալու, տակը կը մնան աղային բիւրեղներ, որոնք, շարունակելով ջուրը գոլորչիացնել, կամաց-կամաց կը մեծանան: Այդ անման պատճառն այն է որ հեղուկ ազդրեգատ-գրութիւնից միշտ նոր մասնիկներ կարծրանալով, յայտնի օրէնքների հիման վրայ խմբւում են արդէն կազմակերպուած կարծր բիւրեղի միջուկի շուրջը: Բիւրեղի մաթեմատիկօրէն որոշ ձևերն առաջ են գալիս մասնիկների նստմամբ (Anlagerung) կամ չնորհիւ ապաօդիցիօնի: Օրգանիզմները նոյնպէս անում են, նոր մասնիկներ (անունդ) ընդունելով: Տարբերութիւնն այն է, որ նոր ընդունուած մասնիկները թափանցում են օրգանիզմների մէջ (ինցուսուցեպցիօն), չնորհիւ վերջիններիս կաւծրեղուկ ազդրեգատ-գրութեան, այն ինչ անօրգաններն անում են միայն ապաօդիցիօնով, նոր, միատեսակ նիւթի արտաքին դարձմամբ: Անման այդ տարբերութիւնը սակայն պարզապէս անհրաժեշտ ու անմիջական հետևանք է օրգանիզմների ու անօրգանների տարբեր խտացման գրութեան:

Ախտոս որ չեմ կարող այստեղ աւելի մօտ զբաղուել մի քանի խիստ հետաքրքիր համեմատութիւններով ու նմանութիւններով, որոնք գտնւում են կատարելագործուած անօրգանների՝ բիւրեղների և ամենահասարակ օրգանիզմների՝ մօներների ու սրանց մերձաւոր ազդակից պրօտիստների կազմութեան միջև: Ես մատնացոյց կ'անեմ միայն իմ «Generelle Morphologie der Organismen» գրքի հինգերորդ գլխում արած «Օրգանների եւ անօրգանների բաղադրութեան» վրայ *): Այդտեղ ես մանրամասն ապացուցել եմ, որ օրգանական ու անօրգանական բնամարմինների միջև ոչ ձևի և յօրինուածքի, ոչ էլ նիւթի և ուժի նկատմամբ աչքառու տարբերութիւններ կան. եղած տարբերութիւնները կախուած են անխաճնի ինքնայատուկ ընդլայնմանից. իսկ որ և է անանց անդունդ բոլորովին գոյութիւն չունի օրգանական աշխարհի և անօրգանական ընդլայնման միջև:

Աւելի պարզ կարելի է հասկանալ այս խիստ կարևոր իրողութիւնը, եթէ համեմատելով քննենք բիւրեղների և ամենահասարակ օրգան անհատների ձեւերի ծագումը: Բիւրեղ-անհատների կազմութեան ժամանակ գործում են նոյնպէս երկու տարբեր, իրար հակադէպիկ կազմիչ ոյժեր: Բիւրեղի ներքին կերպաւորող ոյժը կամ ներքին «կազմիչ մղումը», որ համապա-

*) Gener. Morph. I, 111 մինչև 166:

տասխանում է օրգանիզմների ժառանգականութեան, անմիջական հետեանք է իր նիւթական կօնստիտուցիօնի կամ քիմիական բաղադրութեան: Բիւրեղի ձևը, քանի որ նա այդ ներքին սկզբնական կազմիչ մղմամբ է որոշւում, արդիւնք է տեսակարար որոշ կղանակի, որ բիւրեղացող նիւթի փոքրիկ մասնիկները խմբւում են օրինաւոր կերպով զանազան ուղղութեամբ: Այդ ինքնուրոյն ներքին կազմիչ ուժի վրայ, որ անմիջապէս կցուած է նիւթին, հակադրում է մի երկրորդ ձևակերպող ոյժ: Բիւրեղների այդ արտաքին կերպաւորող ոյժը կամ արտաքին «կազմիչ մղումը» նոյնչափ ուղիղ կարելի է անուանել յարմարացում, ինչպէս օրգանիզմների մէջ: Իւրաքանչիւր բիւրեղ-անհատ ճիշտ այնպէս, ինչպէս իւրաքանչիւր օրգանական անհատ, պէտք է իր ծագման ժամանակ ենթարկուի ու յարմարուի չրջապատող ազդեցութիւններին ու արտաքին աշխարհի գոյութեան պայմաններին: Իրօք իւրաքանչիւր բիւրեղի մեծութիւնն ու ձևը կախուած է իր ամրողջ չրջապատից, զ. օր. անօթից, ուր տեղի է ունենում բիւրեղացումը, տեմպերատուրից և օդի ճնշումից, որի ազդեցութեան տակ է կազմւում բիւրեղը, անհաւասար մարմինների ներկայութիւնից կամ բացակայութիւնից և այլն: Իւրաքանչիւր օրգանիզմի ձևն արդիւնք է երկու իրար հակադիր գործօնների հակադրեցութեան, ներքին կազմիչ ուժի, որ սեփական նիւթի քիմիական կօնստիտուցիօնի հետեանքն է, և արտաքին կազմիչ ուժի, որ պայմանաւորուած է օրջապատող նիւթի ազդեցութեամբ: Ինչպէս օրգանիզմներում, այնպէս էլ բիւրեղներում գործող այդ հակադրեցիկ կերպաւորող ոյժերը սոսկ մեկնակալն բնաւորութիւն ունեն: Եթէ օրգանիզմների աճումն ու կերպաւորումը անուանում ենք «կեանքի պրօցես», համարձակ կարելի է միևնոյնն ասել աճամբ ու կերպաւորմամբ կազմուող բիւրեղների մասին: Թելէօլօգիական (նպատակայարմարական) բնահայեցողութիւնը, որ օրգանական ձևերի մէջ նպատակի համեմատ գործող մեքենաներ է նկատում, պէտք է հետեաբար միևնոյնը տեսնէ և՛ բիւրեղ ձևերի մէջ: Ամենահասարակ օրգանական անհատների և անօրգանական բիւրեղների միջև եղող տարբերութիւնները պայմանաւորուած են վերջինիս կարծր ազդրեգատ-դրութեամբ և առաջինի կարծրեղուկ դրութեամբ: Միւս կողմերով երկուսի մէջ էլ ձև առաջացող պատճառները կատարելապէս միևնոյնն են: Աւելի ևս կը համոզուենք, եթէ համեմատենք ծագող բիւրեղների աճման, յարմարացման ու «մասերի հալյարարերութեան կամ կօրրելայիօնի» վերին աստիճանի զարմանալի երևոյթները՝ ամենահասարակ օրգանական անհատների (մօնէրների ու բջիջների) ծագման համապատաս-

խան երևոյթների հետ իմ «Generelle Morphologie» գրքում
ևս բերել եմ բազմաթիւ համոզեցուցիչ անալոգիաներ:

Եթէ այդ «օրգանական եւ անօրգանական բնութեան միութիւնը», օրգանիզմների ու անօրգանների այդ էական ներդաշնակութիւնը նիւթի ձևի եւ ուժի նկատմամբ, կենդանի կերպով աչքի առաջ ունենանք, եթէ յիշենք, որ մենք հնարաւորութիւն չունենք որևէ հիմնական տարրերութիւն դնելու մարմինների այդ երկու խմբերի միջև (ինչպէս առաջ ընդհանրապէս ենթադրուած էր), այն ժամանակ նախածնութեան հարցը կը կորցնէ իր դժուարութիւնը, որ առաջին անգամից թւում է թէ ունի: Առաջին օրգանիզմի ծագումն անօրգանական նիւթից կ'երևայ մեզ հեշտ եւ շատ հասկանալի, քան այդ մինչև այժմ էր, որովհետև օրգանական եւ անօրգանական բնութեան կամ կենդանի եւ անկենդան ընամարմինների միջև թուացող բացարձակ արհեստական պատը հեռացած է:

Գերմ. թարգմ. Ս. Տ.-ԳԱՍՊԱՐԵԱՆ

(Կը շարունակուի)

ԳԻՒՂԱՑՈՒ „ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ“

(Պատկեր իրական կեանքից)

I

N N գաւառի գիւղական ժողովուրդը երբէք չի մոռանալ 18... թուականը. մի տարի առաջ մուկն ու կարկուտը աւերեցին նրա ոսկեշող, հացառատ արտերը, իսկ այդ տարին մորեխը եկաւ, տալին ու վրայ արաւ խեղճի տունն ու տեղը ու խապառ քանդեց նրան: Գիւղացու թշուառութեան էլ չափ ու սահման չը կար. մեծ, հասակաւոր մարդիկ լալիս էին փոքրիկ երեխաների պէս ու երանի տալիս դրանց, որ ոչինչ չէին հասկանում ու անհոգ խաղում ու վաղվղում էին դէս ու դէն:

Ահաբեկուած ու յուսահատուած ժողովուրդը դիմեց իր սե օրերի ապաւէն սրբերի օգնութեան. մաղթանքներն ու թափօրները էլ վերջ չունէին. ամեն գիւղ խաչով ու աւետարանով դաշտ էր դուրս գալիս ու ծնկաչոք, արտասուախառն աչքերով աղօթում այնտեղ: Մորեխին Աստուծուց ուղարկած պատիժ համարելով իրանց մեղքերի համար, շատ տեղերում նրան զլիաբաց ու ծնկաչոք էին հանդիպում:

Միամիտ շինականները կարծում էին, թէ այդպիսով մորեխի սիրտը կը շահեն, նրա գութը կը շարժեն, և նա՝ այդ սիրալիր ընդունելութիւնից զգացուած, սուս ու փուս կը վերադառնայ այնտեղ, որտեղից եկել է:

Կաթնաչէնցի Տէր-Հանէսը բանն այնտեղ էր հաս-
ցնում, որ խաչ ու աւետարանը երկու ձեռքով ամուր
գրկած, ոտաբոբիկ ու գլխաբաց, աչքերը դէպի երկինք
դարձրած, ամբողջ գիւղը յետեից գցած, մորեխի ա-
ռաջն էր դուրս գալիս, չոքում ժողովրդի հետ միասին
ու ասում:

«Այ դուք բարով էք եկել, հազար բարով էք
եկել, բարի համբաւով էք եկել. էդ ո՞ր սարում էիք,
ո՞ր դաշտում էիք. ինչո՞ւ էիք մինչև օրս մեզ մոռացել.
մեր աչքերը ջուր կտրեցին ձեզ սպասելով. դաշտ ու
արտ, հանդ ու հանդաստան ձեզ նուէր, մեծ ու փոքր
ձեզ խոնարհ ծառանք»:

Այդ դեռ ոչինչ ձգնաւորանց անապատի վանա-
հայր Յովհաննէս հայր սուրբը ժողովրդի սառուար բազ-
մութիւն ետեից գցած դուրս է գալիս Խաչի-հողի ար-
տերին կից թափօր անելու, մորեխի սիրտը շահելու,
որ նա իր ճանապարհը փոխի, ուրիշ երկրի վրայ գնայ:
Աւետարանը վեր է բարձրացնում բարեկրօն հայրը սուր-
բը, պահպանիչ է կարդում մորեխին ու ասում:

«Բազմացէք ինչպէս աւաղ ծովի, ճոխացէք ինչպէս
աստղեր երկնքի. մեր դռները ձեր առաջին բաց են,
մեր լիքը սուփրան ձեզ համար միշտ պատրաստ է»:

Բայց մորեխը այդ միջոցներից և ոչ մէկից չը պա-
կասեց: Մի-երկու շաբթուայ ընթացքում հացառատ
արտերը անհետացան, կանաչադարձ դաշտերը ամայի
անապատ դարձան: Ինչ կար, չը կար,—թէ հասկ, թէ
խոտ և թէ ծաղիկ,—բոլորը վիշապային ագահութեամբ
կլանեց, կերաւ անյագ մորեխը: Նախիրը գնում էր
դաշտ, ու խոտի տեղ չոր գետինն էր միայն լիզում ու
երեկոյեան սոված վերադառնում տուն: Նրա աղիողորմ
բառանչը կրակ էր թափում նրան տեսնողի ու լսողի
գլխին: Հասաւ հնձի ժամանակը, իսկ դաշտում հնձող
մի հատ անգամ չէր երևում: Ամառուայ արեգակի
պսպղուն ճաճանչների տակ ոչ մանգաղ էր փայլում, ոչ
գերանդի. նրանք տների պուճախներում վայր ընկած

Ժանգոտում էին: Գիւղացու սրտից արիւն էր կաթում: Ինչ էր քաշում նա, ծնկներին տալիս ու, իր անդորութեան ծանրութեան տակ ճնշուած, կախում գլուխը. նրա ծովը ցամաքել էր:

«Օ՛, էսհէնց էլ անբախտութիւն կը լինի,—ասում էր նա ինքն իրան,—այսօր ո՞ր օրն ա. ես ինչո՞ւ եմ պարապ տանը նստել. բա հարամ չի՞ իմ գլխին այս փափախը: Ինչո՞ւ չի այսօր իմ կալ ու կալապանը խըրձնով լիբը, իմ արտը ինչո՞ւ չի սարի նման այնտեղ կանգնած»: Փափախը աչքերը գցած, ձեռքը ծոցումը դրած սրահնրա դուռն էր ընկնում խեղճը, որ բարի մարդիկ իրան մի ճար անեն, օգնութիւն հասցնեն նրան:

Իսկ կաթնաչէնցի Կէշունց Քիբին, որ փողատիրօջ հուշակ էր վայելում ամբողջ գաւառում, ուրախութիւնից ջահէլացել ու զուարթացել էր, այնպէս որ տեսնողը նրան վաթսուն տարեկան ծերունի չէր համարիլ: Եւ ինչպէս չերիտասարդանար Քիբի ամին. իր ամբողջ կեանքում նա այնքան կարողութիւն չէր ձեռք բերած, ինչքան հիմա մորեխի շնորհիւ մի-երկու օրումն է ձեռք բերում...

Ո՞վ է հիմա նրան հաւասար մարդ. ո՞վ կը համարձակուի նրա առաջին բայլել, ո՞վ չի հիմա վիզը ծռած նրա դուռը կտրում, ո՞վ չի տեղից վեր թռչում, երբ նա անից դուրս է գալիս: Փողատէր է, ուրեմն գիւղի տէր է: Ո՞վ կարող է նրան ասել, թէ ինչո՞ւ ես այդպէս անում. տանուտէր, դատաւոր, խիւղի իշխանը, մինչեւ անգամ ինքը աղէն, պրիստաւ Գրիգոր բէգը, նրան յարգում ու պատուում են այժմ: Դեռ մի երեք-չորս ամիս առաջ, երբ դեռ մորեխի ձայն չէր լսում, ո՞վ էր նրա «բարի լոյսին» պատասխանում, ո՞վ էր նրան մարդատեղ դնում:

II

Մորեխը շարունակում էր բազմանալ. էլ ոչ թիւ

կար նրան, ոչ համար, ոչ վերջ, ոչ սկիզբ: Սար ու ձոր ծածկել էր նա: Արօտատեղիների ու ծով-ծմակ արտերի տեղ մերկ, պլոկուած գետինն էր երևում միայն. ամեն տեղ մորեխի տիրապետութեան տխուր հետքերն էին երևում: Կաթնաչէնցի Տէր-Հանէսը էլ չէր իմանում իր գլուխը որ պատռւի ու քարովը ապ, որ գետն ընկնի որ իրան տանի, որպէս զի կատաղած ամբոխի ձեռքից ազատուի: Առանց քաշուելու ուղղակի խեղճ տէր-հօր երեսին ասում էին, որ նա պատճառ դարձաւ մորեխի բազմանալուն. եթէ նա խաչն ու աւետարանը ձեռքին չորած չը լինէր նրա առաջին ու նրան հրաւիրած, նրա դալուստը ողջունած, նա այնքան երես չէր առնիլ ու շատանալ, այլ մինչև մի-երկու շաբաթը կը բաշուէր ու կը կորչէր:

«Ա՛ որդիք,—ասում էր անբաւականներին արժանապատիւ տէր-հայրը,—ասենք ես մեղաւոր եմ, քաւ լիցի ինձ, չը կարողացայ մորեխի սիրտը շահել ու ետ դարձնել նրան. բա ձգնաւորանց անապատի վանահայր Յովհաննէս վարդապետի պէս սուրբ մարդն էլ ա մեղաւոր, որ նրան էլ անիծուած մորեխը մի բանի տեղ չը դրեց»:

Բայց Յովհաննէս հայր սուրբի հեղինակութիւնն էլ էր բաւականին ընկել. տէր-հօրը այդ սուրբ մարդու անունն տնգամ չէր օգնում: Ամեն կողմից մեղադրում էին նրան. նա ոչ մի պաշտպան չունէր բացի ժամկոչ Վիրաբ պապից, որին, ի հարկէ, ոչ ոք չէր լսում:

Այդ նեղ միջոցին վրայ հասաւ նահանգապետի հրամանը՝ մորեխը կոտորել ու հորել: Թէև բաւականին ուշ էր, բայց այդ էլի մեծ բարերարութիւն էր ժողովրդի համար: Գիւղացիները ոչ այնքան ուրախ էին այդ կարգադրութեան, ինչքան նրան, որ մորեխ կոտորելիս պէտք է գանձարանից հաց ու օրավարձ ստանային: Ինչ օգնութիւն չէր այդ ընդհանուր չքաւորութեան ու սովի ժամանակ: Մռայլ ու յուսահատ երեսները բիչ-բիչ պարզոււմ էին:

Իսկ գիւղացիները մի այլ շրջանում կատարեալ բարեկենդան էր տիրում: տանուտէրները, գիւղի իշխաններն ու Գրիգոր-բէգը ուրախ-զուարթ քաղաքից դէպի գիւղերը, գիւղերից դէպի քաղաք էին թռչկոտում: Կարծես այդ մարդկանց համար յոգնել ասած բանը գոյութիւն չունէր. ոչ լոյսի էին նայում, ոչ մթնի. բոլոր ժամանակ գիւղերն ընկած մարդիկ էին դուրս առնում դաշտերը՝ մտքի կոտորելու համար:

«Այս մարդկանց հետ ինչ ա պատահել, որ այսպէս արիւն-քրթինք են թափում մեզ համար,—հարցնում էին երբեմն գիւղացիները միմեանց ու միամտաբար իրանք իրանց պատասխանում:—Ատա էլի դրանք մեր գլխներից վերը հաստատ կենան. դրանք են մեր կապ բռնողները *), մեզ սովի ու աղքատութեան դռներից ազատողները, մեր ցաւերը դարմանողները: Եթէ դրանք չաշխատէին, նահանգապետից այդպիսի հրաման միթէ դուրս կը դար. քեզ ինչ ասեմ. առանց մեծաւոր, առանց իշխան գիւղը յաւիտեան բանդուած լաւ ա, քան թէ տեղը կանդնած»:

Այդ հաստատում էր և Գրիգոր-բէգը, որ ամբողջ գիւղը հրապարակ հաւաքած առում էր.

—Ձեր դռը ցաւերն ու աղի արտասուքը, ինչպէս տեսնում էք, մեզ բոլորիս ոտի վրայ են դրել: Շաբաթներով ոչ լոյսի ենք նայել, ոչ մթնի. նահանգապետի ու գաւառապետի դռները մաշել ենք, այս ու այն մեծաւորի առաջին չորջոք ենք արել, որ ձեզ մի օգնութիւն անեն, ձեր ցաւերը դարմանեն, ձեր սև օրերին աչք դարձնեն: Մեր աշխատանքը իզուր չը կորաւ: Հիմա դուք ձեզ համար բան կ'անէք, կ'աշխատէք, ձեր վերքերին փալաս կը փաթաթէք, բայց ոչ թէ ձրի, ոչ թէ սոված փորով, այլ թագաւորական հաց և օրավարձ ստանալով: Թագաւորն սպրած կենայ. Աստուած նրան իր ժողովրդի գլխից վերը միշտ հաստատ պահի.

*) Մեր ղեկավարները:

ողորմած է նա ու գլխասիրտ. նրա գանձարանի դռները այսուհետև ձեր առաջին բաց են լինելու: Դուք միայն ցոյց տուէք, որ ձեր օգուտն ու վնասը ճանաչում էք, ձեզ վրայ կարգած մարդկանց խօսքը լսում էք. նրանց ասածը տալիք չէք գցում, նրանց յարգն ու պատիւը ճանաչում էք: Ես և ինձ հետ միասին ձեր տանուտէրները, երբէք ձեր խաթրը չենք կոտրել, ոչ մի բանի համար մինչև օրս ձեզ չէ չենք ասել, ձեր ցանկութիւնները միշտ կատարել ենք: Դուք էլ ձեզանից կախուածն էք միշտ արել. մեզ սևերես չէք արել, մեր անունները ցեխոտել չէք մեր մեծաւորների առաջ: Իսկ հիմա, մանաւանդ էս սև օրերին, մենք պէտք է իրար փէշից աւելի ամուր բռնենք, իրար ետևում պէտք է աւելի արթուն ու զգաստ կանգնենք: Դուք միայն մեզ լսեցէք, մեր ցոյց տուած ճանապարհով գնացէք, այն ժամանակ մեր մեծերի մօտ ոչ մենք սևերես կը մնանք, ոչ դուք, ոչ մեր բեռը տալին կը մնայ: Դուք համարձակ ձեր պարտքը կատարեցէք, սուս կացած ձեր բանի տուտը բռնեցէք, իսկ մենք ձեր ետևում պահապան հրեշտակի պէս կանգնած թող չենք անիլ որ ձեր դիմերից մի մազ անգամ պակասի:

Մեծ էր Գրիգոր-բէգի ճառի տպաւորութիւնը: Շատերի աչքերում արտասուք էր երևում: «Տեսէք, տեսէք, ձեզ մատաղ,—ասում էին նրանք միմեանց,—մեր աղէն այսպիսի լեզու ա ունեցել, նոր ա մեզ ցոյց տալիս»:

Եւ ճշմարիտ Գրիգոր-բէգը առաջի անգամն էր այդպիսի քաղցր ու ժողովրդասէր լեզու բանեցնում գիւղացիների հետ խօսելիս: Մինչ այդ ժամանակ նա կը հաւաքէր նրանց և ուղղակի հայհոյանքներով կը սկսէր և հայհոյանքներով էլ կը վերջացնէր իր ասելիքները, իսկ հիմա չը տեսնուած ու չը լսուած լեզու էր բանեցնում: Իշխաններին ու տանուտէրներին էլ ամեն խօսքի տակի ու գլխի «ամի» կամ «ապէր» էր ասում,—բա դա տեսնուած բան է միթէ:

«Ատո՛ւ, մեր աղէն ա՛, —ասում էին գիւղացիները, այս ու այն կողմը ցրուելով, —մի անգամ ապտակ կը տայ, միւս անգամ էլ ձեռը կը տայ, ապէր կ'ասի, ամի կ'ասի, —դրանում ի՞նչ զարմանալի բան կայ: —Բա՛, —աւելացնում էին ուրիշները, —աղա մարդ ա, չի լինիլ, որ ուշունչ չը տայ մեզ պէս հասարակ մարդկանց, չի լինիլ, որ միեւրեւ անգամ ճիպոտով ու մտրակով չը տայ, թէեւ շատ ժամանակ առանց պատճառի, էնհէնց քէֆի լաւ ժամանակը, հանաքի համար: Ամա նեղն ընկած տեղն էլ սիրտ ա տալիս մեզ, խրախուսում ա, հասարակութեան, ժողովրդի օգտի համար անքուն գիշերներ ա լուսացնում ձիւ վրայ: Հիմա էլ տեսնում էք մեզ համար ոնց ա աշխատում ու չարչարում մեր աղէն:

—Ախպեր ջան, ճշմարիտ էք ասում, —մէջ է մտնում դարբին Սային, —գա ուղղակի ոսկի մարդ ա եղել, իսկ ես նոր եմ միայն ճանաչում:

—Ինչո՛ւ, պատճառն ի՞նչ է, մինչև հիմա օրտեղ էիր, որ նոր ես մեր աղին ճանաչում, —հարցնում են այս ու այն կողմից:

—Մի բան կար, որ խանդարում էր ինձ դրան լաւ ճանաչել:

—Ի՞նչ կար:

—Այ ինչ, —պատասխանում է Սային, —անցեալ տարուայ ամառը, ինչպէս ձեզ լաւ յայտնի ա, —մեր կողմ ու չորին անհետացան Արմովի հանգից: Վարդավառի գիշերն այդ պատահեց, երբ տաւարածները գիւլում ասելու են գալիս գիւղը: Հէնց որ լսեցի այդ, իսկոյն բանս թողեցի, դուքանս խափանեցի ու ոտով մինչև բազաք մին վազեցի, որ պրիստաւին յայտնեմ իմ կորուստի մասին: Հէնց բազաք մտայ թէ չէ, բազարի կամըրջով անցկենալիս, տեսայ մեր պրիստաւ Գրիգոր-բէգին կամրջում կանգնած մի շլապկաւոր, երես, ճակատ, բերան-մերանր բաց մեծաւորի կնկայ հետ զրոյց անելիս: Նրանք իրար հետ ուռսեփար խօսում էին ու ծիծաղում:

գետին մտիկ էին տալիս, մի բան ասում ու էլի ծիծաղում: Այն մեծաւորի խանումի խոտին մի փոքրիկ, շատ փոքրիկ, սղիղ կատուի չափ շուն կար: Հէնց խոտել էր հէր օրհնուածը, կ'ասես թէ այն տէրամեռ շունը իր ազիղ զաւակը լինէր: Խանումը պաշում էր շանը, «Պօպի, Պօպի» էր ասում նրան,—հէնց եմ գիտում Պօպին էն անտէր շան անունն էր, —յետոյ մի բան էր ասում մեր աղին ու ծիծաղում: Աղէն էլ իր ձեռքերը շան գլուխն ու մէջքն էր քսում, մեծաւորի կնկայ պէս «Պօպի, Պօպի» ասում, շան հետ ռուսեվար խօսում ու բարձրաձայն ծիծաղում: Այդ որ տեսայ, ես ու ես մտքումս ասացի. «Ախ, աղա, եանի որ մեղ էլ շան չափ էլա սիրես, ի՞նչ կը լինի, ո՞ր ես դրա տէրը թաղեմ, թա շուն ո՞ր, շանն էդքան կը սիրե՞ն: Հէնց որ մօտդ գանգատի ենք դալիս, իսկոյն ուշուցներն սկսում ես ու մտրակդ առնում ջաններիս ըլում, խփում ես, խփում այնքան, որ յոգնում ես ու այն ժամանակ միայն մտրակը դէն դցում: Հիմա դու այդ շանը փայփայում ես ու ասում՝ Պօպի, Պօպի. եանի որ մեղ էլ չը հայհոյես, գոնէ դրա պէս էլ ա անուններս տաս, ասես՝ ո՞ր Սայ, ո՞ր Մակ, ո՞ր Թիւն, ո՞ր Չատ, ո՞ր Քիւր,—ի՞նչ կը լինի, ո՞ր հէր օրհնուած, կարծում ես, թէ մի վատ բան արած կը լինե՞ս»...

«Փափախս վերցրի, գլխաբաց կամրջի էն կողմին կանգնեցի, ասացի՝ սպասեմ, աղէն խանումի հետ իր զրոյցը վերջացնի, նոր մօտենամ: Սպասեցի, սպասեցի, տեսայ, որ չէ, սրանց զրոյցը վերջ չունի, ճարս կտրեց, դողդողալով մօտեցայ: Պէտք է ասած, որ լաւ շորեր չը կային հագիս. տրեխներս մաշած էին, շորերս պատռոտուած, երեսս թոզում մտած: Ի՞նչ անէի, գլուխս հէնց կորցրել էի, որ ամեն բան մտիցս ընկել էր: Հո՞ր, դողդողալով մի կերպ մօտեցայ նրանց: Մեծաւորի կնիկը ինձ որ տեսաւ աղին մօտենալիս, ռուսեվար մի բան ասեց, երեսը շան մէջքին կոխեց ու դէպի գետը դարձաւ: Մօտեցայ, գլուխ տուի, հէնց սկսեցի թէ չէ՝ «Աղա, գլխիդ-արեւիդ մատաղ», մին էլ տեսայ ապտակը

չրախկ երեսիս տրաքեց: Լոյս ու մթինը մոռացայ. գլուխս պտուտ եկաւ. մինչեւ հանգ ու հունգը ապտաւ կը մին էլ տրաքեց: «Յիմար անասուն,—գոռաց աղէն,—գանգաւոր ժամանակ ես գտե՛լ»: Այս ու այն կողմից թամաշաւոր հաւաքուեց. մեծ ու փոքր թուփ ելան կամրջի վրայ: Կէսս մաշուեց ամաչելուց. մտքումս ասացի՝ «ո՛ տա՛փ, դու պատուիր, ես մէջդ ընկնեմ»: Ահր ագաթ ա, ընդունուած բան ա հասարակ մարդուն ծեծելը, ամա ոչ թէ հրապարակով, քաղաքի մէջին, օրը կէսօրին, էն էլ կամրջի վրայ: Ճար չի կար. պռօշս կծեցի ու սուս կացայ. սրտիցս արիւն էր կաթում, ամա ինչ կարող էի անել. եթէ համարձակուէի մի խօսք անգամ ծպտալ, այն ժամանակ ոչ թէ մի, այլ ամենաքիչը մի տասն ապտակ իրար ետեւից կը տրաքէր երեսիս: «Ջան, շան, ո՛ Սայ,—ասացի ես ու ես մտքումս,—էդ ո՞ր օրին հասար, որ քաղաքի իրան միջումը օրը կէսօրին ծեծ ուտես. գլուխդ մեռնի, դարբին Սայի, էստեղ դու ինչ ես անում, որ ծեծուես ու չարդուես»:

—Ա՛ Սայ,—կտրում է նրա խօսքը գիւղացիներից մինը,—լաւ օյին ա դրել քո գլխին մեծաւորի խանութը. ահր դու ինչո՞ւ էիր այն «թեփուռին» *) մօտենում, ո՛ գլխամեռ, երբ աղէն նրա հետ խօսում էր:

—Աստուծով դու էլ էնհէնց մի «թեփուռի» պատահես, որ ինձ պէս դու էլ խրատուես,—պատասխանում է Սային,—«թեփուռի» քէֆին դիպչելը կարծում ես թէ քիչ բան ա՞: Աղէն ինձ լաւ գաս տուեց, շատ լաւ դաս: Խեղճ ես, «թեփուռներից» հեռու ման արի. իմ թշնամին անգամ թող նրանց ճանկը չընկնի: Աստուած օրհնի մեր անխօս, անլեզու կանանց. ո՞ր աղօթարանի ծունդրն են դնում, ուշներն իսկոյն այն կողմն են դարձնում: Եթէ կինդ բեղ հակառակ բան ա ասում, խօսքդ չի լսում, ուզում ա անպատճառ իր առածն անել,

*) «Թեփուռ» գիւղացիները ասում են հեգնօրէն եւրոպական զգեստ հանգող ու փետրաւոր շինապա ծածկող կանանց:

դադանակը վերցնում ես ու ականջակոթին ածոց անում, խփում, քանի կռնումդ ուժ կայ, խեղճը իսկոյն խոնարհւում ա, ձայն ու ծպտուն կտրում ու մի բերան գոնէ չի ասում թէ՛ «Բէյմուրվաթ *), ինչո՞ւ ես այդպէս անում, ինչո՞ւ ես ինձ դադանակի ըռելք տալիս»։ «Թեփուռը» դէ այդպիսի բանը սուս ու փուս կը տանի։ Դեռ մեր պարօն վարժապետը միշտ քարոզում ա, որ ու գիշեր ականջներիս զուռնա ա փչում, թէ՛ աղջկերանց էլ ուսումնարան ուղարկեցէք։ Ինչո՞ւ համար. ուսումնարան ուղարկենք, որ գնան խանութներ դառնան ու գան մեր ջանին ըլնեն ու միսներս ուտեն, չլապկաներ գնեն գլխներին, գրաբար-գրաբար խօսան, մեր ասածը չը հասկանան, մեր ունեցած-չունեցածը ծախել տան, խշխշան շորերի ու չլապկունց թեփուռների վրայ մսխեն ու մեր տները քանդեն, մեզ աղքատացնեն։ Քաղաքում քանի-քանի տներ են քանդուել, քարուքանդ եղել խշխշան շորերի ու թեփուռների շնորհով։ Ձէ, վարժապետ ջան, արևիդ մատաղ, մենք լսութիւն անասուն չենք, մենք էլ ենք բան հասկանում. թէև դրի սեն ու սպիտակը իրարից կարող չենք ջոկել, ամա դու մեզ խաբել չես կարող. էդ բաները գնո՞ւ դու. քաղաքներում քարողիր. քո զուռնի առաջին այնտեղ պար եկողներ շատ կը լինեն։ Էն «Թեփուռը» եթէ ուղի հետ ուղսեփար չը խօսէր, երբ ինձ տեսաւ, մեր աղէն ինձ մատով անգամ չէր դիպչիլ, իմ գանգատին ուշ կը դարձնէր։

—Հա, — հարցնում են գիւղացիները, — յետոյ աղէն քեզ ո՞նց ճանապարհ դրաւ։

—Ոնց ճանապարհ գնելն էն էր, որ թակեց, կտուրատեց, ջարդեց. էլ ոչ կարողացայ խօսք ծպտալ, ոչ գանգատուել։

«Նրանից յետոյ, ոնց ձեզ էլ լաւ յայտնի ա, ինչքան էլ աշխատեցի, դէս ու դէն ընկայ, փող մսխեցի,

*) Անգուլթ.

բան չը կարողացայ շինել. կոմի ու ջորին անհետ կորան: Յետոյ, մի վեց ամիս դեռ չանցած, լսեցի, որ նրանց գողացել է Մեհտին, մեր աղի ձիաւորների գլխաւորը... Բայց ի՞նչ կարող էի անել, շատ էլ լսեցի»:

III

Կաթնաչէնն իր չրջակայ գիւղերով ոտքի էր կանգնել: Դաշտերում ասեղ գցելու տեղ չը կար, այնքան մեծ էր մորեխսպանների թիւը. էլ փափախաւոր չէր մնացել, որ հանգ չը դուրս գար: Դիւղերում ճախերի կապուկներն անհետացել էին. նրանցով սպառազինուել էին մորեխսպանները: Ոչ թէ միայն ճախ, այլ թիւեր ու բահեր էլ չէին մնացել տներում: ամեն ինչ տղամարդիկ տարել էին հետները մարելը հորելու համար: Շատ տեղեր կանայք էլ էին տղամարդկանց նման դաշտ դուրս գալիս մորեխ կոտորելու համար: Նրանց առաջնորդում էին գիւղի ծերերը կամ քահանաները, որոնք ամեն կերպ աշխատում էին վառ պահել նրանց եռանդը: Տէր-Հանէսը կատարեալ նախընտրու էր նմանում այդ ժամանակ: Ամեն օր վաղ առաւօտեան արթնանում էր արժանապատիւ տէր-հայրը ու դաւազանը ձեռքին գիւղի տակից մտնում գլխովը դուրս գալիս. էլ կինարմատ չէր թողնում տներում, բոլորին դուրս էր անում դաշտ, բարձրաձայն աղաղակելով ամեն մի կտրի վրայ՝ «Ձեզ եմ ասում, իմ քոյրեր ու դուստրներ, լսեցէք զառամեալ ծերունուս. թողէք ձեր բան ու գործը, ձեր իլիկն ու ճախարակը. Աստուծու օրհնութիւնը լինի ձեզ վրայ, եկէք ետևիցս ամենքդ մի ճախ, մի աւել առած, չարչարուեցէք, քրտինք թափեցէք այսօր, որ վաղը ձեր երեխաները չը սովեն ու ուրիշի դռների մտիկ տան»:

Այգալիսով քահանան չէր յոգնում, միևնոյնը օրը հարիւր, երկուհարիւր անգամ կրկնելով, երբ դուրս էր անում իր «նախիրը» դաշտ: Պատահում էր որ գիւղի մի որ և է անկիւնում տէրտէրը և նախընտր Օհանը վաղ

առաւօտեան հանդիպում էին միմեանց։ Զուարճախօս Օհանը չէր կարողանում տէրտէրին առանց մի բան ասելու բաց թողնել։

—Հը՛, ա՛ տէր, այսօր նախիրդ դէպի ո՞ր կողմն ես քշելու,—հարցնում էր նա, լրջութեամբ նայելով տէր-հօր երեսին։

—Ատա՛, Օհան, իսկի գիտում եմ,—պատասխանում էր Տէր-Հանէսը նոյնպէս լրջութեամբ,—երէկ Արմովի ձորը քշեցի. էլ զատ չը թողեցին օրհնուածները, բոլորը թամուզ արին։ Այսօր չեմ իմանում դէպի որ կողմը քշեմ, որ երեկոյեան սոված չը վերադառնան տուն. Արմովի ձորում էլ մօրեխ չը կայ։

—Դէպի որ կողմն ուղում ես քշի՛ր, ա՛ տէր,—պատասխանում էր Օհանը,—ամա հէնց արա՛, որ քո նախիրն ու իմը չը խառնուեն իրար հետ. իմը...

—Է՛, հա՛ դէ դու էլ բան ես ասում էլի, տնաչէն, —պատասխանում է ժպտալով տէր-Հանէսը,—թէեւ ես երէց եմ, ինչ ա, կարծում ես, թէ տաւարածութիւն չեմ արել։ Շատախի գոմերում մեր տաւարը պահում էի, երբ իմ ձեռնադրութեան հրամանը դուրս եկաւ։ Թէեւ տաւարած էի, ամա մեր գիւղի տիրացուների մէջ ինձ պէս հմուտը չը կար. առանց այիբ-բէն և կարգալ սովորելու ժամագիրք, սաղմոսներ ու աւետարան անդիր գիտէի։ Տէր-Մխիթարը երբ մեռաւ, մի օր Ստեփան քեօխուան *) կանչեց ինձ իր մօտ ու հարցրեց՝ «Ադա Հանէս, կարող ես մեռել թաղել»։—«Կարող եմ, քեօխուա»,—պատասխանեցի ես։—«Կարող ես պսակ ու կնունք անել»։—«Կարող եմ»։—«Դէ գնա՛, գնա՛ տաւարդ պահի, տեսները»։—ասաց քեօխուան ու ճանապարհեց ինձ։ Մի չորս-հինգ ամիս հազիւ էր անցել այդ խօսակցութիւնից, մին էլ տեսնեմ քեօխուան ետեւիցս մարդ ա ուղարկել Շատախի գոմերը, թէ՛ տաւարդ թո՛ղ ու եկ գնա՛ երէց ձեռնադրուի, ա՛ գլխամեռ։

*) Տանուտէրը։

հրամանն եկել ա: Գնացի և ձեռնադրուեցի: Ողորմի
բեզ Աստուած, Ստեփան բեօխուա, լոյս դառնաս դու.
առանց բեզ ես հրեշտակաց կարգին չէի արժանանալ:
Հա, հէր օրհնուած Օհան, կարծում ես թէ տաւարա-
ծութիւնը ինձ համար մի դժուար բան ա, որ ասում
ես՝ ա տէր, այսպէս արա, ա տէր, այնպէս արա:

Այդ նեղ ժամանակին միմիայն կաթնաչէնցի կա-
նայք էին ազատ մորեխ սպանելու պարտաւորութիւնից:
Կէշունց Քիբին մի այնպիսի օյին էր դրել խեղճերի
գլխներին, այնքան բան ու գործ էր բարձել նրանց
չինքին, որ նրանց մնում էր միայն երանի տալ հա-
րեան գիւղի կանանց, որոնք իրանց տղամարդկանց
նման անխօս, անլեզու տաւար դարձած ամեն օր
գնում էին դաշտ մորեխ կոտորելու: Բանը նրա-
նում էր որ Քիբի ամին թագաւորական ալիւրի «փօղ-
րաթը» իր վրայ էր վերցրել: Մորեխսպաններին ձրի,
այսինքն թագաւորական հաց էր բաժանում: այդ
բանը Քիբու ամու ձեռքովն էր անցկենում: Պատմում
էին, որ փօղրաթը ու թէ միայն Կէշունց Քիբունն է,
այլ նրա մէջ խառն է տանուտէրի, գիւղի իշխանների,
անգամ Գրիգոր-բէգի մատր:

Բայց դրանց մատ էլ խառը լինէր, խառը չը լի-
նէր այդ «փօղրաթում», բանը նրանում էր որ Քիբի
ամին խեղճ կաթնաչէնցի կանանց անվարձ հացթուխ-
ներ էր շինել. էլ ոչ ցերեկը հանգստութիւն ունէին խեղ-
ճերը, ոչ գիշերը: Բեռը բեռան ետևից գիւղն էր մըտ-
նում: ալիւրակիր քարաւանին վերջ չը կար: Քիբի ա-
մին թեւեր առած մին քաղաքն էր թռչում, մին մորեխ-
սպանների մօտ, մին էլ կրկին գիւղը. վախենում էր,
թէ կանայք հարամութիւն անեն ու ալիւրից իրանց հա-
մար վերցնեն: Բայց բոլորովին իզուր էր նրա ահը. կաթ-
նաչէնցի կանայք միաբերան ասում էին, թէ աւելի լաւ
է անլեզու անասունի պէս խօս արածել, քան թէ այս
ալիւրից թխած հացից ուտել, և նրանք ոչ թէ միայն
ալիւր չէին թագցնում իրանց համար, այլ մինչև ան-

գամ թխած հացից մի կտոր գոնե չէին կտրում՝ իրանց հաց աղերսող երեխաներին բաւականութիւն տալու համար: «Ձան, ջան, ա խեղճ դաշտաւորներ, ա գետը տանի ձեզ,—ասում էին նրանք մորեխսպանների մասին,— ձեր ո՞ր մեղքերի համար են այսպիսի հաց տալիս ձեզ»: Միայն Քիբի ամուսնու մօտ ոչինչ չէին ծպտում: այնպիսի մի դաս էր տուել նա խեղճ հացթուխներին, որ ոչ մէկը նրանցից չէր համարձակում Քիբի ամուսնու մօտ շունչ անգամ քաշել: Ահա նրա տուած դասը. առաջի օրը, երբ ալիւրը եկաւ, ու Քիբի ամին փափախը կռան տակին դրած կանգնեց գիւղի հրապարակում, հրաւէր կարդաց կանանց, որ այս սուրբ գործից չը խնայեն իրանց հալալ աշխատանքը, նրանցից շատերը չը քաշուեցին բարձրաձայն բողոքել, թէ «ձեզ մատաղ, սա լինչ տեսակ ալիւր ա, տեղովը հող ա, քար ու քօլ ա, սրանից հաց կը թխուի, կամ թխած հացը կ'ուտուի»: Նրանց զարմանքն ու զայրոյթը եւս առաւել մեծացաւ, երբ Քիբի ամին հրամայեց, որ ալիւրը չը մաղեն, այլ ուղղակի քսակից դուրս առանց մաղելու խմոր հունցեն: Շատերը կանանցից անխօսութիւնը մոռացութեան տուած ու երեխանց ականջներին բարձրաձայն փափսալով, Քիբի ամուն պարզ լսելի ձայնով, բացարձակ յայտնեցին նրան, որ այս ալիւրից խմոր անել չի կարելի, մինչև որ լաւ չը մաղուի, գոնե քարերի ու փալասների մի մասն էլ ա չը հեռացնուի. բայց Քիբի ամին այնպէս գոռաց ու բղաւեց կանանց վրայ, որ նրանք միանգամից լալկուեցին: Քիբի ամին բարկացաւ ոչ այնքան նրանց բողոքների, որքան նրանց լեզուաբացութեան պատճառով, որ համարձակուեցին կնիկարմատ տեղներովը իր մօտ բարձրաձայն խօսել. «Ահր երկիր աշխարհում դա տեսնուած ու լսուած բան ա, որ կինարմատը տղամարդու մօտ լեզու բանեցնի»: Անամօթներ, անամօթներ,—կատաղած գոռում էր նա,—այդ քանի գլխանի էք, որ համարձակուում էք տղամարդի մօտ ձայն բարձրացնել: Մեր

Հայոց սուրբ օրէնքը դուք ինչո՞ւ էք մոռանում ու ոտի տակ տալիս, ա՛ն խրատներ: Ինչ որ ձեզ հրամայում են, դուք սուս ու փուս կատարեցէք. եթէ ասեն ձեզ, թէ մածունը սև ա, դուք պէտք ա պատասխանէք, թէ հա՛, սև ա. եթէ ասեն՝ գնացէք, կամուրջից վայր ընկէք ցած, պռօշ-պռօշի վրայ դրած պէտք ա գնաք ու վայր ընկնէք այնտեղից. լեզուն խօսալու համար չի տուած ձեզ: Ո՞նց ալիւր ա, որ դուք ուզում էք մաղել,—շարունակում է նա,—մարդիկ սոված քիչ ա մնում թէ ա՛նասունի պէս խոտ արածեն, իսկ դուք դեռ ուզում էք ալիւրն էլ մաղել: Ինչ ա, փորներդ հացոտ ա եղբէ՛ր, հացի համ էք տեսել ու գոգել, չէ՞. դեռ որ ճշմարիտը հարցնէք, պէտք ա մի քսակ ալիւրի հետ մի քսակ էլ հող խառնել ու յետոյ հաց թխել. հիմա ինչպիսի ժամանակներն են, գիտէք»...

IV

Թխած հացի բեռը բեռան ետեից դուրս էր գալիս Կաթնաշէնից դէպի շրջակայ դաշտերը, ուր բազմաթիւ մարդիկ զբաղուած էին իրանց համար մի բոլորովին օտարոտի պարապմունքով—մօրեխսպանութեամբ: Սոված փորով արիւն քրտինք էին թափում խեղճ մօրեխսպանները, բայց բոլորովին չէին յուսահատուում: Նրանց ետեում Գրիգոր-բէգի պէս խրախուսողներ կային կանգնած: Թէ պրիտաւ, թէ տանուտէր և թէ գիւղի իշխաններ նրանց միաբերան ջան էին ասում: «Տնաշէնի մարդիկ,—ասում էին նրանք,—ի՛նչ էք բոլոր ժամանակ ախ ու օխ անում. մի՞թէ ուրիշի համար էք աշխատում: Թագաւորն ապրած կենայ. նրա հացն ուտիլ պտէք, նրա փողն ստանալ. էլ ի՛նչ էք ուզում, հէր օրհնուածներ»: Վերջապէս թագաւորական հացի բեռները նկան դաշտը: Քիբի ամուն երկնային արբայութիւն լինի. նա իր խօսքը տափը չը գցեց. նշանակած օրէն հացը վրայ հասցրեց. այն էլ ո՞նց հաց. տանայ, կնիկարմատի ձեռ-

բերով, թոնրում թխած հաց, այլ ոչ թէ սալդաթի ոտներով հունցած ու փռնում թխած հաց: Աստուած Քիբի ամուն մեր գլխից ու վերը հաստատ պահի, ատուն, —ասում էին ուրախ-ուրախ մորեխսպանները, նկատելով հեռուից հաց բեռնած ձիաների ու ջորիների քարաւանները, —նա Գրիգոր-բէգի ու իշխանների կողքը մտած փողբաթը իր ձեռքը գցելու համար այնքան չարչարուէց, որ մենք ոչ թէ սալդաթի ոտներով հունցած, այլ մեր կանանց ձեռքերով թոնրում թխած հաց ուտենք»: Հասաւ ցանկացած բոպէս:

«Եկէք, հաց ստացէք», — ձայն տուեց գլխի թանէսը: Գիւղացիները սկսեցին խումբ-խումբ մօտենալ հացաբեռներին: Վերջիններիս մօտ խմբուած էին մորեխսպանների պահապան հրեշտակները, այսինքը գիւղական տանուտէրներն ու իշխանները: Գրիգոր-բէգը բացակայ էր. նրան գաւառապետը պահանջել էր. այդպէս էին յայտնել հետաքրքրուողներին տանուտէրները: Կէշունց Քիբին նոյնպէս չը կար: Բայց քանի կէս լինէր խեղճ Քիբի ամին. նա գիւղում հազիւ էր կարողանում կանանց բանեցնել ու պատրաստի հաց վրայ հասցնել: Եւ պէտք է իմանալ, ինչ գթուարութիւնների էր հանդիպում Քիբի ամին: «Իմ թշնամին անգամ կանանց ճանկը չընկնի, նրանց հետ բան չը բռնի», — յաճախ ասում էր նա: Մորեխսպաններին հացաբեռների մօտ ժողովեցին: Միաբերան ան առին խեղճերը, երբ հացի կոյտերը տեսան: Նրանց զարմացրեց հացերի անճոռնի, միանգամայն զզուելի գոյնը: «Սա էս հաց ա, ձեզ մատաղ, — ասում էին նրանք միմեանց, — թէ դա մեր կանանց ձեռքով թխած հաց ա, ինչո՞ւ պէտք ա այդպէս անճոռնի լինի. դա միթէ կ'ուտուի»:

— Յիմար անասուններ, — չը կարողացաւ զսպել իր բարկութիւնը Կաթնաշէնի տանուտէր Առաքելը, — հացի հոտը թերի գիւպաւ ու դեռ հաւան էլ չէք կենսում: Որ ուղիղը հարցնէք, պէտք ա ձեզ թող անել այնքան սովէք, որ սկսէք անասունի պէս խոտ արածել ու յե-

տոյ ձեզ հաց ցոյց տալ։ Այն ժամանակ դուք չէք համարձակուիլ այդպիսի լեզու բանեցնիլ։

Այս ու այն կողմից իշխանները սկսեցին մեղադրել տանուտէր Առաքելին, թէ ինչո՞ւ է նա իզուր տեղը խեղճ մարդկանց քէֆին դիպչում։ «Մարդիկ են,—ասում էին նրանք,—սովոր են տանայ ցորենի կարմրաթշիկ հացին, այդ պատճառով են այդպէս խօսում։ հիմա էլ դրանից կը սկսեն ուտել ու քիչ-քիչ կը սովորեն,—էլ ինչո՞ւ ա հարկաւոր բարկանալ»։

—Ճշմարիտ էք ասում,—դառնում է նրանց տանուտէր Առաքելը,—ամա ինչ արած, որ սիրտս տրտւում ա, երբ տեսնում եմ, որ մի սոված անասունի մինը մեծ-մեծ կոտրատում ա, երբ նրան ձրի հաց ես տալիս ուտելու։

Վերջապէս հացի կշիռն սկսեց իր գործունէութիւնը։ Մօրեխսպաններին մի-մի բաժին հաց տուին, բայց ինչպիսի հաց. ատամ պէտք էր, որ դիմանար, այնքան բար ու քօլ կար նրա մէջ։ Իւրաքանչիւրի բերնում հէնց միանուագ «ճրթ-ճրթ» էր լսւում, ու «թու-թու» անողների թիւը գնալով ստուարանում էր։ Շատերը այնքան խելացի էին գտնւում, որ նախ և առաջ մաքրում էին իրանց բաժին հացը այդ համեմներից ու յետոյ ուտում։ «Կէշունց ֆիքիի ու իշխանների ձեռքերով անց կացած հացը այսպէս կը լինի»։ «Ի՞նչպիսի խոստումներ էին անում այդ պահապան հրեշտակները, իսկ հիմա ի՞նչպէս են կատարում իրանց խոստումները,—ասում էին նրանք.—հիմա որ մեզ հետ այսպէս են վարւում, ի՞նչ կը լինի թագաւորական վարձը ստանալու օրը, ի՞նչպէս են արդեօք վարուելու մեզ հետ այն ժամանակ»։

Միայն անճարներն էին այնուհետեւ մօտենում հացաբեռներին, իսկ մնացածները մի կերպ եօլա էին գընում՝ որը խաշած լօբիով, որը հասարակ բանջարեղէնով մի կտոր գարու կամ կորեկի հացի հետ։

Իսկ պահապան հրեշտակների ուրախութիւնը մեծ էր մանուկանդ այն պատճառով, որ այդպիսի անբաւար-

կաններից հացի մնացորդը աւելի էր լինում, իսկ այդ մնացորդներից նրանք մեծ օգուտ էին ստանում:

Գիւղացիները խոտի պակասութեան պատճառով չէին կարողանում պահպանել իրանց տաւարն ու ոչ խարը: «Աման, աղա, քեզ ղուրբան գնամ,—ասում էր թուրք գիւղացին,—սչխար ունեմ, եկ, տար, տաւար ունեմ, եկ, տար, իւղ ու պանիր ունեմ, եկ, տար, միայն իմ օղլուշաղին սովի դռնից աղատիր»:

Եւ աղան, շտապում էր օգտուել այդ դէպքից: Կաթնաչէնի տանուտէր Առաքելն էլ, ուրիշների օրինակին հետեւելով, ոչ միայն պանրի ու իւղի պաշար էր հաւաքում հացի մնացորդով, այլ և առատութեամբ կերակրում էր նրանով իր սիրելի Ջէյրան ձիուն, որ, նրա ասելով, ամենալնտիւր գարուց աւելի էր սիրում Քիքի ամու ուղարկած հացը: Ինչ օրհնանքներ ու գովասանքներ ասես, որ չը շռայլէր այդ պատճառով Կէշունց Քիքիի հասցէին տանուտէր Առաքելը: «Տեսէք, տեսէք,—ասում էր նա, ինքնաբաւականութեան ժպիտը երեսին, ձեռքերը քսելով ձիու մէջքը,—Ջէյրանս ոնց ա լցուել, դղուել ու կատաղել. թող էլ չանում, թէ ձեռքդ մէջքին դնես, մինչև որ մի քաղցր խօսք չասես»:

Մորեխի տուած փնամները այսպէս էին բուժւում «պահապան հրեշտակներից»...

ՎԱՂԱՀԱՍ ԵՒ ՈՒՇԱՀԱՍ ՀԱՆՃԱՐՆԵՐ

(Ձեզարէ Լամբրոզոյի)

Հանճարի և խելագարութեան, մանաւանդ բարոյական խելագարութեան սովորական մի հանգամանքն էլ մտքի կանխահասութիւնն է: Կօնտ և Պասկալ 13 տարեկան հասակում նշանաւոր խորհողներ էին: Ռաֆայէլ 14 տարեկան հասակում մի մեծ արուեստագէտ էր: Ռէստիֆ դը Լա Բրետօն 4 տարեկան հասակում արդէն շատ գրքեր էր կարդայել, 11 տարիքում ջանէլ աղջիկներին հրապուրել էր, 14-ում իր առաջին 12 սիրուհիների մասին մի պօէմա գրեց: Այսօրն, Մօցարտ, Էյպլէր, Փ. Կրօյ 6 տարեկան հասակում կօնյէրաներ էին տալիս: Բալօն 15 տարիքում հեղինակել էր «Novum Organum»-ը: Պասկալ 10 տարիքում մի պնակի հանած աղմուկից ներշնչուած, ձայնաբանութեան թէօրիան ստեղծեց, 15 տարիքում կոնաձիների վրայ իր հռչակաւոր գիրքը գրեց:

Ռամօ խօսել սկսած միջոցում սովորեց երաժշտութիւնը, 7 տարիքում հիանալի կերպով ածում էր. դպրոցում իր տեսրակները երաժշտական յօրինումներով էր լցնում, սրա համար պատժուեց, բայց բնաւ չը ուղղուեց: Երբ որ ծնծ էր ուտում, նուազաւոր շարժումով լաց էր լինում, ժպտալով պատմում էր ինքը:

Լըբրօն 3 տարիքում ածուխի կտորով նկարում էր, 12 տարիքում շատ գեղեցիկ կերպով գէմքեր էր նկարում: Բէրնինի 10 տարիքում մարմարիոնից մի պոլսի քանդակեց, որ շատ հիացում պատճառեց:¹³

Տիւրէն 10 տարիքում պատերազմական պատմութեան գրքի միայն հաճոյք էր զգում և մի օֆիցէրի հետ ուղեց կռուել, որ Ալեքսանդրի գործերը առասպելական էր համարում:

Պիկ դը Լա Միլանդօլ 10 տարիքում արդէն ընդունուած էր իբրեւ մի մեծ բանասէր և ճարտարախօս:

Դ՝ Օբինեէ 6 տարիքում աջող կերպով կարդում էր լատիներէնը, յունարէնը, եբրայեցերէնը, և նոյն տարիքում Մօնտէներ լատիներէն շատ լաւ իմանում էր:

Բըրա շատ յարգելի մի լաւ գրուածքում ցոյց է տալիս, որ մտքի կանխահասութիւնը՝ ճշմարիտ հանճարի ամենահաստատ հանգամանքն է:

Դասէնդի, փոքրիկ դօկտօր, 4 տարիքում քարոզներ էր արտասանում և 10 տարիքում մի կարեսր ճառ գրեց. գրեթէ 10 տարեկանից առաջ շատ լեզուներով էր գրում: Մէյէրբէր 5 տարիքում հրաշալի կերպով դաշնամուր էր ածում. Նիէբուհր 7 տարիքում մի հրաշալիք էր, 12 տարիքում արդէն շատ լաւ գիտէր 18 լեզուներ. Միքէլ-Անժ 19 տարիքում արդէն հռչակաւոր էր. Կալվին 20 տարիքում մի մեծ բարենորոգիչ էր:

Ջօնաթան Էդվարդս 12 տարիքում մտքի այնպիսի կանխահասութիւն ունէր, որ մի քանի անձեր նրան մի նոր Արիստօ էլ էին համարում:

Էդիսըն, իր հնարիչի երեք հարիւր արտօնագրերով միակ երիտասարդ հնարիչը չէ:—Բոլոր հնարիչները շատ վաղուց սկսել են յղանալ:

Ֆիւլտըն 28 տարիքում սկսել էր ուսումնասիրել շոգիով նաւագնացութիւնը, և իր առաջին յաղթանակը տարաւ 42 տարիքում, Հիւդսընի վրայ:

Բիշայի անունը գիտութեան մէջ ամենասիրուն անուններից մէկն է, և նա մեռաւ 32 տարիքում:

Դրաէփ, արդի ամենամեծ ակնաբոյժը, 25 տարիքում արդէն նշանաւոր էր:

Տըրըր 15 տարիքում իր նկարները Կայսերական Ակադեմիայում ցուցադրեց, 27 տարիքում ակադեմական էր:

Հաէնդէլ 19 տարիքում Համբուրգի երաժշտական թատրոնի տեսուչն էր. 20 տարիքում իր առաջին օպերան գրեց և 25-ում իր «Մեսիան»:

Վիլհէնդ 7 տարիքում իմանում էր լատիներէնը, և 16 տարիքում հրատարակում էր «Ամենակատարեալ Աշխարհը» (Le Monde le plus parfait): Բօցէբու 7 տարիքում կօմէդիաներ գրել փորձեց, և 18 տարիքում իր առաջին ողբերգութիւնը ներկայացրեց: Վիկտօր Հիւգօ 15 տարիքում «Itamène»-ը գրեց: Կազիմիր Դէլավիններ 14 տարիքում ոտանաւորներ էր գրում, և 16-ում «Հաւատացեալի խօսքեր» (Paroles d'un croyant) գրեց: Պօպ 12 տարիքում «Ode on solitude» ը և 16-ում «Pastorales»-ները գրեց: Բայրըն 12 տարիքում ոտանաւորներ էր գրում, և 18 տարիքում «Hours of Idleness»-ը հրատարակեց:

Տասն և Մէտաստաս 10 տարիքում բանաստեղծներ էին: Տաս 6 ամսուայ հասակում խօսում էր, 7 տարիքում լատիներէն իմանում էր: Պիկ դը լա Միրանդօլ, երեսայ հասակում լատիներէն, յունարէն, եբրայեցերէն, քաղդիերէն, արաբերէն իմանում էր: Կլօդ Ժօղէֆ Վէրնէ 4 տարիքում արդէն շատ լաւ նկարում էր և 20 տարիքում հռչակաւոր նկարիչ էր: Վրէն 13 տարիքում հնարեց աստղաբաշխական մի գործիք և այն նուիրեց իր հօր՝ լատիներէն մի ձօնով: Ասկօլի 15 տարիքում Վալաքիայի և Ֆրիուլի դաւաճաբարբառներին միջև գտնուած յարաբերութեան վրայ մի ուսումնասիրութիւն հրատարակեց: Ֆէնէլօն 15 տարիքում Պարիզում խիստ ընտրովի մի բազմութեան առաջ մի քարոզ խօսեց: Վիլէմէն հազիւ 19 տարեկան էր, երբ որ Կօլէժ Շարլըմանէի ճարտասանութեան պրօֆէսօր նշանակուեց: Գիյօմ Վօտօն 5 տարիքում լատիներէն, յունարէն և եբրայերէն կարդալ և թարգմանել իմանում էր, 10 տարիքում գիտէր քաղդիերէն և արաբերէն: Բէթօվէն 13 տարիքում արդէն 3 սօնասներ գրել էր. Վէրբեր 14 տարեկան էր, երբ որ իր առաջին օպերան՝ «Das Waldmädchen» ներկայացրեց: Չէրիւբինի 13 տարիքում մի «Mussurau» (Messo) և մի «Léonore» (Molet) գրեց, որոնք իր քաղաքացիներին հիացում պատճառեցին:

Բաղադիկ տաղանդը յայտնուեց Ֆուրնհի մօտ 15 տարիքում, Նիէքհուրի մօտ 7-ում, Ջանաթան Էդվարդսի մօտ 12-ում, Վօլտէրի մօտ 13-ում, Բօսիւհի մօտ 12-ում, Գէօթէ 10 տարիքում բազմաթիւ լեզուներ իմանում էր: Մէյէլբէր 10 տարիքում շատ լաւ դաշնամուր էր ածում: Էննիուս Քիրինիւս Վիսկօնտի 16 տարիքում հիացում էր պատճառում և 6 տարիքում քարոզներ էր կրկնում: Միրաբօ 3 տարիքում ճառեր էր խօսում և 10 տարիքում գրքեր հրատարակում:

Պօպ բանաստեղծը, փափկակազմ և հիւանդոտ փղբրիկ արարածը, գրքերը միայն սիրում էր: Նամակներ ընդօրինակելով սովորեց գրելը, իր մանկութիւնը ընթերցանութեամբ անցկացրեց և գրելէ երբոր խօսելը սովորեց, արդէն բանաստեղծ էր դարձել. 12 տարիքում Նդիականի (Հոմերոսի) վրայ մի ողբերգութիւն էր գրած և 13—15 տարիքում 4,000 ոտանաւորներէից բաղկացած մի մեծ գիւցազներգութիւն (Aleandre) գրեց:

Մեծ երաժշտագէտների նման, գրում է Դը Կանդօլ, մտքի կանխահասութեան սքանչելիքները գտնւում են հաշուագէտների մէջ: Պասկալի պատմութիւնից աշխարհ իմանում է, որ 12 տարեկան հասակում, Եւկլիտէսի երեսուներկու խնդիրները լուծել էր: Ալեքսիս Կլէրան 12 տարեկան և 8 ամսական հասա-

կում Պարիզի գիտութեանց Ակադէմիային նշանաւոր յատկութիւններով զանազան կոր գծերի վրայ մի ինքնագիւտ յիշատակագիր ներկայացնելու վիճակում գտնուեց: 18 տարիքում Ակադէմիայի սնդամ ընտրուելու արժանի դատուեց: Ակադեմական սնդամ լինելու համար առնուազն 20 տարեկան լինելը օրէնքով որոշուած լինելով, թագաւորից մասնաւոր թոյլտուութիւն խնդրելու պէտքն զգաց: Նրա եղբայրներից մինը, իր նման միևնոյն պատուին արժանանալուց յետոյ, ծաղիկ հասակում վախճանուել էր:

Բէրնուլլի եղբայրները 18 և 20 տարեկան հասակում նշանաւոր մաթեմատիկոսներ էին: Նրանցից մէկը Ժան Բ.-ի զաւակը՝ Ժան Գ. 13 տարեկան հասակում փիլիսոփայութեան դոկտօրութեան աստիճան ստացաւ:

Գօգանքը դը լա Պլաս, իր ժամանակի ամենազօրեղ հաշուադէտը, թուաբանութեան համար երկիւայութիւնից մի հաշուադիւտ ընդունակութիւն էր ցոյց տալիս: Ինքն իր վրայ կատակաբանելով ասում էր որ խօսել իմանալուց առաջ հաշուել իմացաւ: 10 տարիքում բարձրագոյն լուծման (analyse supérieure) հասաւ:

Բոլորովին երիտասարդ գիւղացիներ, պարզ հովիւներ են տեսնուած, որոնք մտքով զարմանալի հաշիւներ են լուծել:

Մեծ մաթեմատիկոսները, որոնց մասին խօսեցի, իրանց մաթեմատիկական հակումների մէջ իրանց հայրերի կողմից յաճախ արգելքի են հանդիպել: Ժաք և Ժան Բէրնուլլի երբոր հաշիւներով էին զբաղուում, յանդիմանում էին, նոյնպէս նրանցից առաջինը, աստղաբաշխութեամբ զբաղուած լինելուն համար պատժուեց, Invito patre udere verso նիչը ստացաւ: Ժան Ա.-ի որդին՝ Դանիէլ Բէրնուլլի գաղտնապէս մի մաթեմատիկական մրցման մասնակցեց և իր հօր հետ մրցելով, մրցանակը շահեց, հայրը այդ բանը իրան բնաւ չը ներեց, այս գէպը ցոյց է տալիս, որ կրթութիւնը այս բանում որ և է դեր չէ ունեցած:

Լընօ յանպատրաստից սրայոյզ քարոզներ էր յօրինում և պանչելի կերպով ջութակ և սրինգ ածում: Կարդան 8 տարիքում իր հանճարի յայտնութիւններն ու երևումները ցոյց էր տալիս: Ամպէր 13 տարիքում մաթեմատիկոս էր: Հալլէր 4 տարիքում քարոզ էր խօսում, 5 տարիքում գրքեր լափւիւմ:

*
**

Ուշահաս հանճարների գոյութիւնը, ըստ Բիրտի, բացատրւում է նրանց զարգացման նպաստաւոր պայմանների բացա-

կայութիւնով և ծնողների և ուսուցիչների աղիտութեամբ, որոնք մի սահմանափակ միտք և յաճախ նոյնիսկ ապշութիւն են տեսնում այնտեղ, որտեղ միայն հանճարի թարթափանք կամ լաւ ևս ուշաթափութիւն կայ, և աշխատում են հանճարի փթթումը յապաղել կամ խափանել, և այդ մասամբ իրանց յաջողում է: Բոլոր մեր դպրոցները ad hoc են կազմակերպուած:

Իսկապէս չատ երեխաներ, որոնք յետոյ հանճարներ եղած են, դպրոցում իբրև ստահակ կամ ապուշներ էին նկատուած. բայց իրանց իմացական բարձրութիւնը լաւ ճանաչուեց, երբոր պարագաները իրանց նպաստաւոր եղան, կամ դրանով միասին, երբոր իրանց ուղին գտան, որին սպասում էր իրանց յատուկ հանճարը:

Այս այսպէս էր Թիէրի, Պետալոյցիի, Բըրնսի, Ուէլլինգտընի, Դիւ-Գէսկլէնի, Ալֆրէդի, Ֆրէմսէլի, Դիւմա-Նօր, հումբօլդի, Շէրիտանի, Բօկասի, Պիէր Թուարի, Լինհի, Վօլտայի համար:

Հռչակաւոր արեւլագէտ Քլապրօթ, Բէրլինի համալսարանում ուսած ժամանակ ապուշի տեղ էր ընդունուած: Քննութեան ժամանակ մի անգամ մի պրօֆէսօր նրան տաւ—«Բայց դո՛ւք ոչինչ գիտէք»:—«Ներողութիւն, պատասխանեց, չինարէն գիտեմ»: Յայտնի եղաւ և իմացուեց, որ բոլորովին առանձին և զրեթէ ծածուկ սովորել էր այդ շատ զփուարին լեզուն:

Գիւստավ Ֆրօբէր մի հրաշալի երեխայի բոլորովին հակառակն էր, մեծ զփուարութեամբ միայն կարգաւ սովորեց, սակայն իր միտքը զործում էր, նա արդէն երկակայում էր զրամատիկական գրաւածքներ, երբ դեռ զրել չէր իմանում, բայց ինքը բոլորովին մենակ ներկայացումներ էր տալիս, զրամախօսութիւններ անելով և կարգով զանազան անճշտօրութիւնների դերը կատարելով:

Նոյնպէս Նէլսոն Քէպլէրի խնդիրները լուծելու համար իր մօր արած յանճարարութիւնները յաճախ մոռանում էր, և իր զասընկերների ամենայնոք լինելով հանդերձ, շատ լաւ իմանում էր մեքենական խաղալիքներ շինել: Վօլտըր Սկօտ, որ դպրոցում անմիտի տեղ էր դրուել, սակայն արդէն պատմութիւնների մի հրաշալի ասող էր:

Լը Դօմինիքէնը դպրոցում ափսոսանք թանձրամիտ էր, որ իր ընկերները նրան մեծ եզ էին կոչում. սա ինքնիրան արդարացնում էր ասելով—«Ինչ որ ես նոյնիսկ իմ ներսն եմ նկարում»:

Շատ անգամ հանճարեղ երեխաները, մի անգամ ընդ միշտ իրանց սեփական ներշնչման թողնուելով յայտնուում են. այս-

պէս Կաբանին, զպրոցում իբրեւ մի յամառ ծոյլ նկատուելով, զպրոցից արտաքսուեց, այն ժամանակ նրա հայրը, որոշեց մի փորձ անել, 14 տարիքում նրան արտօնեց իր հակումների համեմատ ուսանիլ, և զբանից առաջ եկաւ Կաբանին:

Ուրեմն, հաւանական է, որ տալաւին մատղաշ հանճարների առերևոյթ ապշութեան զրեթէ բոլոր պարագաները բացատրւում են նրանց մասնաւոր կարողութիւնների զարգացման նպաստաւոր պայմանների բացակայութեամբ, նրանց չըջապատողների զնահատման և ընտրողութեան սխալով: Դժուար է գտնել մի հանճարեղ մարդ, որ իր ուսման ընթացքում որ և է կերպով իր տաղանդի սերմերը յայտնուած չը լինի. բայց կան շատերը, որ պաշտօնական ուսումների ունակութեան և գրականական մրցումների նախանձաւորութեան մէջ իրանց գտած սակաւ յաջողութեան հակառակ, կարճ ժամանակամիջոցում մի որ և է ճիւղի մէջ հռչակաւոր են դառնում:

Միքէլ Անժի և Սըր Գրիստօֆ Վրէն Հոմմի ս. Պետրոս և Լոնսդոնի ս. Պօղոս եկեղեցիներում իրանց ճարտարապետական հանճարը յոյց տալէ առաջ, մի քառորդ դար և գուցէ աւելի սպասեցին. բայց այն շրջանը, որի մէջ այս գլուխ գործողները յղացել էին, շատ յառաջագոյն էր: Թւում է թէ նոյն բանը կարելի է ասել Ջօնսընի, Ռուսօյի, Վօլտէրի համար:

Գալով Կարլայլի, Դիկէնսի, Ջօրջ էլիըտի և Տէսիսընի նման արտիստների կողմից իրանց ծերութեան ժամանակ զըրուած գրական գործերի թուին, կարելի է շատ պրանչելի լինի, սակայն աւելի յաճախ, ինչ որ արդէն առաջ ասած և նոյնիսկ կրկնած էին, մի նոր ձևի տակ նրանց կրկնողութիւնն է:

Թարգմ. Կօկտ. Կ. Յ. ՓԱՇԱՅԵԱՆ,

ԶԵՅԹՈՒՆԸ XIX-ԻՂ ԴԱՐՈՒՄ

19-րդ դարի հետ Զէյթունի առաջ բացւում է մի դարա-
դուրս՝ պարբերական արիւնալից պատերազմների։ Նրա պատ-
մութիւնն սկսւում է ներքին երկարատե կռիւներով և թշնա-
մութիւններով, որոնք տեւեցին ամբողջ 7 տարի։ Բօզ-Բայիրի
և Կարկալարի բնակիչները լարուած էին հին Վերի և Միջին
թաղեցիների դէմ և նրանց յարաբերութիւնները ընդունել էին
ամենախիստ կերպարանք։ Այդ երկար տարիների ընթացքում
Զէյթունի փողոցներով ձգուած էր առժամանակեայ մի պատ,
որ երկու մասի էր բաժանում հակառակորդ թաղերը։ Ազգա-
բնակութիւնը չէր համարձակւում զուրս գալ ցերեկով կամ
անցնել սահմանը՝ երկիւղ կրելով զոհ լինել հակառակորդ թա-
ղեցու գնտալիներին։ Տանիքների վրայ կանգնեցրել էին զու-
լաներ։ Թշնամութեան վերջին տարիները ժողովուրդը մատ-
նուել էր ծայրայեղ թշնամութեան և հետզհետէ սով և զանա-
զան հիւանդութիւններ բոյն էին դրել այնտեղ։

1800 թուին թիւրք կառավարութիւնը ի նկատի առած
զէյթունցիների սոյն երկարատե ներքին երկպառակութիւննե-
րը, յարմարագոյն ժամանակը համարեց Զէյթունը գրաւելու կամ
բնակիչներին հպատակեցնելու։ Այդ թուականին մեծ բանակով
Կիլիկիա էր անցել Գալենդէր փաշան, որ միանալով Աֆշարների
և Զիւլգադիրների հետ՝ ուղղուեց Զէյթուն։ Առաջին անգամն
էր որ զէյթունցիները դաժնում են թիւրք կառավարութեան և
կանոնաւոր բանակի դէմ։ Վերի և Միջին թաղի իշխանները
նախապէս հնազանդուեցին Գալենդէրին և խոստացան աջակ-
ցել նրան ընդդէմ միւս երկու հակառակորդ թաղերի։ Թիւրք
փաշան բանակը զեռեղեց քաղաքի արեւելեան կողմը երկու մը-
ղոն հեռու մի զառիվայրի վրայ, ուր մնաց ամբողջ ինն ամիս։
Վերջին ամիսը ցուրտը սաստկացել էր և յուսահատուած Գա-
լենդէրը ձեռնարկեց իր վերջին վճռական յարձակման, որի
համար արդէն մեծ պատրաստութիւններ էր տեսնում մի քանի
չաբաթից ի վեր։

Վերի և Միջին թաղի բնակիչները տեսնելով թշնամու այդ պատրաստութիւնները, որ ուղղուելու էր ընդհանուրի դէմ, զգային իրանց սխալ վարմունքը: Վստանգն ընդհանուր էր, և նրանք մոռացած ներքին կռիւները, միացան միւս երկու թաղեցիներին հետ՝ դիմադրելու և պաշտպանելու համար ընդհանուր թշնամու դէմ: Զորս թաղի իշխանները, գիւղապետներն ու կրօնականները նոյն օրը ժողովուեցին Միջին-թաղի եկեղեցում և կայացրին պատերազմական այլևայլ որոշումներ: Այդ ժամանակ Զէյթունը ունէր ոչ աւելի քան 1000 տուն բնակիչ և չրջակայ գիւղերն էլ միասին կարող եղան զինուորել 3—4 հազար տղամարդ միայն: Իշխանները յրուեցին ժողովրդին պահեստի վառօդից, գնդակ և երկու մասի բաժանուած դիմաւորեցին Գալենդէրի բանակին: Վերջին օրուայ կոբւր եղաւ արեւալի և տեկ 5—6 ժամ, որի ընթացքում թշնամին անհամեստ աւելի մեծ կորուստ տուեց և անկարող լինելով երկար դիմադրել, նահանջեց Մարաշ: Զէյթունցիները հետամուտ եղան պարտուողներին մինչև Զիհանի եզերքը և զրաւեցին զէնքեր, ռազմամթերք և պաշար:

Լեոնականների այս յաղթութիւնը խորր ասպաւորութիւն առաջ բերաւ հարևան թիւրք ցեղերի վրայ: Այդ միջոցներում Մարաշի Զիւլգադիր և Բայազէտ գերդաստանների յարաբերութիւնները նորից խորուել էին խիստ կերպով և վերսկսել ցեղական կռիւները: Օսման փաշան, որ վերջինների ցեղապետն էր, քաջալերուած զէյթունցիների պատերազմական աջողութիւններից, գլուխ բարձրացրեց թիւրք կառավարութեան դէմ և աշխատեց ձեռք գցել Մարաշի կառավարական ղեկը, որ վարում էր Զիւլգադիր ցեղապետ Ահմէդ փաշան: Առաջինը անկարող լինելով մենակ կռուել օսմանցիների և Զիւլգադիրների միացած զօրութեան դէմ՝ օգնութեան հրաւեր կարգաց իր հին դաշնակիցներին՝ Զէյթունի իշխաններին՝ պայման դնելով որ վերջինների բաժինը աւարառութեան մէջ լինի անհամեստ աւելի շատ և որ այնուհետև որ և է տուրք չը պիտի պահանջուի նրանցից: Զէյթունցիները ընդունեցին այդ հրաւերը և մի քանի հազար հոգով արշաւեցին Մարաշ: Այդ զէպքը տեղի ունեցաւ Գալենդէրի պարտութիւնից չուրջ տաս տարի յետոյ: Այդ ժամանակամիջոցում սուլթան Մահմուդ II-ը պատերազմներ ունենալով Ռուսաստանի դէմ, յետ էր կանչել Մարաշ և չրջակաները գտնուած փաշաներն ու զինուորական ոյժը, և այդպիսով նրան անհնար եղաւ ճնշելու տեղական ապստամբական շարժումները: Զիւլգադիրներից շատերը շտապեցին խոյս տալ և ապաստանել Բազարշըզի դաշտը կամ Գեաւիւր

դադի՝ իմանալով սալմալի զէյթունցիների արչաւանքը՝ Վերջիններս մտան Մարաշ առանց ընդդիմութեան և վնդելով Ահմէդ փաշայի կուսակիցներին՝ տեղական կառավարութիւնը յանձնեցին Օսման փաշային։ Զէյթունցիները մնացին Մարաշում երկու շաբաթ՝ թալանելով խանութներ և տներ։ Ազգաբնակչութիւնը հպարտ կերպով պատմում է սոյն արչաւանքի պարագաների և յաղթական մուտքի մասին Մարաշում, որոնց յիշատակն ու մանրամասնութիւնները երգւում են ժողովրդական տաղերի և բանաստեղծութիւնների մէջ։

Ռուս-թրքական պատերազմը աւարտելուց յետոյ Կիլիկիայում նորից յայտնուեցին սուլթանական բանակները։ Կառավարութիւնը նկատում էր Զէյթունը որպէս մի վտանգաւոր ոյժ, այնտեղ գոյութիւն ունեցող կիսանկախ և անհանգիստ ցեղերի թւում, ինչպէս նաև աչքի առաջ ունէր երկրի կարևոր ու անմատչելի դիրքը, նրա մի բուռ բնակիչների քաջութիւնը, և այդ պատճառներով մասնաւոր ուշադրութիւն էր դարձրել՝ նուաճելու կամ կոտորելու։

1810 թուին Բազարջըզի և Ամըզի դաշտերում երևան եկաւ Չաբան-օղլի անուն նշանաւոր աւազակապետը, ինչպէս և Զիւլգադիրների տոհմային կռիւներից, շուրջը հաւաքեց հարիւրաւոր դժգոհ մարդիկ և իրան յայտնեց ապստամբ։ Կարճ ժամանակի ընթացքում նա գրաւեց հարիւրաւոր գիւղեր, աւազակախմբերի թիւը ստուարացրեց և ստացաւ մեծ հեղինակութիւն։

Սուլթան Մահմուդի կառավարութիւնը երկիւղ կրելով Չաբան-օղլու աւելի ու աւելի մեծանալուց, աշխատեց նրան հովանաւորել, ի հարկէ, օգտուելու նպատակով։ Այդ մտադրութիւնը աջողուեց, և քիչ յետոյ Չաբան-օղլին միացած կանոնաւոր զօրքերի հետ՝ արչաւանք կազմեց զէպի Զէյթուն։ 1815 թուին Չաբան-օղլին Մարաշի ճանապարհով անցաւ Զէյթունի սահմանները. իսկ Հանի-աղա անուն յայտնի գէրէբէկին*) միաժամանակ, հազարաւոր մարդկանցով բանակ դրաւ գետակի միւս կողմը՝ Կարկալարի դիմաց։

Այս անգամ զէյթունցիներին առաջնորդում է կռուի դաշտը յայտնի Դէլի-Բէշիշը (գիժ-տէրտէրը), որի համբաւը տարածուել էր ամբողջ Կիլիկիայում։ Նրա անունը լսուած էր

*) Յիշատակարանում սոյն զէրէբէկի մասին գրուած է միայն Հանի-աղա անուն առանց բացատրութիւնների։ Հաւանական է որ սա եղած լինի Գարալա տոհմից Հանի-Ալի-բէկը, Սիոուանի 404 երեսում գրուած։

Բաղդատ, մինչև սուլթանների մայրաքաղաքը և դարձել առասպելների նիւթ: Դէլի-Քէշիշը միակ կղերականն է, որ կարողացաւ գրաւել լեռնականների սէրն ու համակրանքը և աւելի քան մի քառորդ դար առաջնորդեց նրանց բազմաթիւ պատերազմների կամ արշաւանքների մէջ:

Պատերազմն սկսուեց առաւօտը գետակի երկու կողմը միաժամանակ: Չաբան-օղլին փորձեց յանդուգն կերպով մի յարձակումով գրաւել քաղաքը, սակայն բաղխելով ուժգին դիմադրութեան՝ ստիպուեց նահանջել ու ամրանալ մօտակայ բլուրները: Պատերազմը եղաւ արիւնալի և տեւեց մինչև երեկոյ: Այդ օրը կռուի հետևանքը մնաց անորոշ:

Թիւրք զինուորները բազմաթիւ խարոյկներ վառած գիշերը ապաստանել էին քաղաքի հանդէպ՝ երեք մղոն հեռի զտնուած բլուրների վրայ, մինչդեռ զէյթունցիները հանգիստ չունէին. նրանք հաւաքուել էին եկեղեցիների բակը կամ անձուկ ու քարքարոտ փողոյները: Իշխանները ժողովուեցին սովորական տեղը՝ Միշին-թաղի եկեղեցում և կայացրին որոշումներ գիշերային մի յարձակում գործելու: Լեռնականները երկու մասի բաժանուած, նեղ, զփուար ձորերի միջով և առանց աղմուկի, դիմեցին, — մէկը արևելեան, միւսը արևմտեան կողմը դէպի այն բլուրները, որոնց շուրջը գիշերած էին Չաբան-օղլու և Հաճի-աղայի բանակները: Կէս գիշերին, բոլորովին գաղտնի, հայերը յարձակուեցին բարձր գիւղերից թշնամիների վրայ իրանց սովորական գոռում-գոչումով ու ժայռեր գլորելով, որոնց հետևանքը այն եղաւ, որ զինուորները, չփոթուած ու ահաբեկ, անկանոն կերպով փախուստի դիմեցին դէպի Մարաշ:

Արժէ այստեղ մի քիչ աւելի կանգ առնել Դէլի-Քէշիշի անձնաւորութեան վրայ:

Դէլի-Քէշիշի կեանքը, նրա պատմութիւնը լիքն են հետաքրքիր դէպքերով: Նա մի ինքնուրոյն և հազուագիւտ տիպ է: Նրա ֆիզիկական ընդհանուր նկարագիրն է՝ բարձրահասակ, յաղթանդամ, երկար մօրուսաւոր, գլխին կրում է եղել փաթաթուած, գունաւոր մի մեծ գլխարկ, որին անուանում էր ղալլուխ: Նա ունէր եռանդուն, անհանգիստ և պատերազմասէր բնավորութիւն, միանգամայն փափկասիրտ ու բարի էր: Որպէս քաջ և որպէս խելացի մի մարդ, նա մեծ հեղինակութիւնն էր վայելում և՛ զէյթունցիների, և՛ թիւրքերի ու նրանց յեղապետների կողմից: Նա շատ անգամ ջոյց էր տալիս հրացանի կամ սուրի ծայրը որ և է թիւրք կամ հայ բարձր պաշտօնեայի և արհամարհական կերպով ասում՝ «այստեղ են թէ՛ փաղիշահը, թէ՛ հիւքմէթը և թէ՛ պատրիարքը»:

Դէլի-Քէշիշը Կարկալար թաղից յայտնի ընտանիքի անդամ էր։ Նրա իսկական անունն է Օհան Տէր-Յակոբեան։ Նրա ծննդեան և մահուան ստոյգ թուականները յայտնի չեն, բայց ծնուել է մօտաւորապէս 1760—70 թուի միջոցները։ 25 տարեկան հասակում նա նշանակուել է քահանայ, սակայն երբ սուր կերպարանք են ստանում ներքին կռիւները, նա թողնում է Ձէյթունը և վշտացած սրտով հեռանում։ Մօրուն ածելած և բոլորովին ծպտուած ինչպէս մի թիւրք, Եուսուֆ անուն, նա ուղևորում է Դամասկոս և դառնում է կամաւոր զինուոր անգլական զօրաբաժնում։ Շնորհիւ իր քաջութեան և ռազմական ընդունակութիւնների, կարճ ժամանակի ընթացքում նա բարձրանում է հետզհետէ հազարապետի աստիճանը։ Նա մասնակցել է բազմաթիւ պատերազմների. Բաղդատի շուրջը տեղի ունեցած մի կռուում իր յանդուգն ընթացքով ձեռք է բերում մի կարևոր յաղթութիւն, որի վարձատրութեան համար ստանում է հազարապետի աստիճանը։ 4—5 տարի վերջը նրա համբաւը տարածուել էր կառավարական բարձրագոյն շրջանները և Դամասկոսի բանակում նա հռչակուել էր Եուսուֆ Բին-Բաշը անունով։ Փաշաների և հրամանատարների կողմից նա վայելում էր սաստիկ համակրանք որպէս քաջ և ռազմապէտ մի սպայ։ Անցեալ դարու սկիզբները արշաւող բանակի հետ նա մեկնում է Ադանայի և Գոնեայի վիլայէթները՝ նուաճելու մէկ ապստամբ ղէրէբէկի։ Վերադառնալիս բանակը անցնում է Ձէյթունի գաւառից և մի օր հանգիստ առնում Դաշ-Օլուզ հայկական գիւղի մօտ։ Ծպտուած, Եուսուֆ Բին-Բաշին գալիս է գիւղ և իր գաղտնիքը յայտնում հին բարեկամներից մէկին։ Յաջորդ առաւօտը, որպէս օտար մի քահանայ, որ ճանապարհորդում է, պատարագ և ժամերգութիւն է կատարում Դաշ-Օլուզի հայոց եկեղեցում։

Սուրիական և արաբական հեռաւոր երկիրները ամբողջ 18 տարի թափառելուց յետոյ, ընտրում է մի յարմար ժամանակ, և էլի ծպտուած, վերադառնում է Ձէյթուն, իր ծննդավայրը և վերսկսում քահանայական պաշտօնը։ Թիւրքմէն և քիւրդ ազգաբնակութիւնները նրան անուանում են Դէլի-Քէշիշ, իսկ հայերը Օգլոյ-Երէց։ Մի քանի տարուայ ընթացքում նա դառնում է ժողովրդական հերոսը չնորհիւ մի քանի արշաւանքների ու յաղթութիւնների և ղէյթունցիների կողմից նշանակուում է զինուորական պարագլուխ։

Չարան-օղլու պարտութիւնից յետոյ կառավարութիւնը ջանք է անում գրաւել ղէյթունցիների բարեկամութիւնը։ Երեսնական թուականներին Մարաշի վալիի միջնորդութեամբ Դէլի-

Քէշիչը մեկնում է Կ. Պօլիս և ներկայանում սուլթան Մահմուդին, որից և ստանում է մի շքանշան:

1830 թուին Եգիպտոսի խզիվ Մէհմէդ Ալին ապստամբում է Նրա որդին՝ Իբրահիմը արշաւում և հետզհետէ տիրում է Դամասկոսի, Հալէքի և Ատանայի նահանգները և 35 թուին հաստատում է Մարաշում եգիպտական առ ժամանակեայ կառավարութիւն: Տեղացի թուրքերը թելադրում են Իբրահիմին արշաւելու Ջէյթուն: Այդ իմանալով՝ Դէլի-Քէշիչը մի խումբ ձիաւորներով գնում է Մարաշ և տեսակցում նրա հետ, ինչ ժամանակ նա յայտնում է, թէ «Ջէյթունը դարերից ի վեր անվերջ կռիւ է մղել իր անկախութեան համար և այժմ էլ ինչպէս ինքը՝ Իբրահիմը, նոյնպէս և՛ ղէյթունցիները ապստամբ ժողովուրդ են ընդդէմ սուլթանի անարդարութիւններին», Իբրահիմը համոզւում է և բարեկամութեան խոստումներով ճապարհ է դնում Դէլի-Քէշիչին:

Սակայն հազիւ մի քանի շաբաթ անցած, ղէյթունցիները տեղեկանում են, որ Մէհմէդ Ալիի որդին մի զօրաբաժնով արշաւում է Ջէյթունի վրայ: Դէլի-Քէշիչի և իշխանների առաջնորդութեամբ հայերը դիմաւորում են եգիպտական բանակին Ջիհան գետի մօտ: Նրանք ամբողջութեամբ են կանգնում գետի արեւմտեան եղերքի վրայ և արգելում են թշնամուն գետից անցնել: Երկու օրուայ անհետեանք և արիւնալի կռիւներից յետոյ, Իբրահիմը, զայրացած, հրամայում է ղինուորներին գետը անցնել՝ հայերին չըջապատելու համար, սակայն այդ անհնար լինելով գլուխ բերել, պարտւում են և երեկոյեան դէմ անկարգ կերպով նահանջում: Բացի կռուի գաշտում հարիւրաւոր ընկածներից, բազմաթիւ եգիպտացի ղինուորներ զոհ գնացին Ջիհանի յորձանուտ ալիքներին, երբ, չիոթուած, յուսահատ, աճապարում էին անցնել գետը:

Սոյն յաղթութիւնից յետոյ Դէլի-Քէշիչը զանազան արշաւանքներ կատարեց պարբերաբար 4—5 տարի: Ջիհանի մեծ կամրջի վրայ նա հաստատեց մի պահականոց և տուրք էր առնում անցորդներից կամ կտրաւաններից: Կամրջից անցնել թոյլատրւում էր այն մահմեդական ցեղերին, որոնք հպատակութիւն էին յայտնում և խոնարհւում Դէլի-Քէշիչի օրի առաջ: Թուրքերը կամ հայերը յօրինել են զանազան տոասպեղներ նրա քաջագործութիւնների մասին: Աֆշար և ուրիշ թուրքմէն ցեղերը զադարեցրել էին իրանց սովորական լեռնագնացութիւնները դէպի Ուզուն-Եայլա կամ Բին-Բուզայի լեռները: Դէլի-

Քէշիչի սարսափը հալածել էր մահմեդականներին Ջէյթունի սահմաններից, Եգիպտացիները այնուհետեւ զգուշանում էին հայերի հետ որ և է ընդհարում ունենալուց, մինչդեռ օսմանցիների զօրութիւնը, յաղթահարուած, համարեա զաղարել էր գոյութիւն ունենալուց Կիլիկիայում մինչև 1841 թուականը, երբ Եւրոպայի միջնորդութեամբ կնքուեց հաշտութիւն։ Հէնց այդ ժամանակաշրջանում Կօկիսօնի չուրջը և Անդրունի գաւառում հետզհետէ բազմացաւ հայ զաղթականութիւնը և կրկնապատկուեցին հայկական զիւղերն ու նրանց բնակիչների թիւը։ Մինչև 50-ական թուականները Ջէյթունը մնում էր յաղթական և նրա համբաւն ու առաջացրած սարսափը տարածւում էին Կիլիկիայում և Սիւրիայում։

Եգիպտական արշաւանքների ժամանակ և յետոյ Աղջէ-Դաղին ապստամբ յայտարարեց և քրդական հրոսակները աւարում էին հեռաւոր գաւառները։ 1840—41 թ. եգիպտական բանակը և Մէհմէդ Ալին հեռացան Կիլիկիայից, ինչպէս և գրաւած միւս նահանգներից։ Վերադառնալով Մարաշ, սուլթան Մէջիտը հաստատեց նոր կառավարութիւն և ջանաց բարեկամական յարաբերութիւն պահպանել ղէյթունցիների հետ։

1840—44 թուին թիւրք փաշաները զանազան յարձակումներ գործեցին Աղջէ-Դաղի քրդերի վրայ, բայց ամեն անգամ յաղթուեցին։ 45 թուին Մարաշի վալի Սուլէյմանը պատրաստուում էր վճռական արշաւանք մղելու և այդ առիթով օգնութիւն խնդրեց Ջէյթունի իշխաններից։ Դէլի-Քէշիչի առաջնորդութեամբ 500 հայեր ճանապարհ ընկան՝ Սուլէյմանի բանակին միանալու համար։ Սալմալիների բարխանան *) ճանապարհին գնում էր առանձին, մի կարմրագոյն դրօշակ իրան առաջնորդելով։ Իւրաքանչիւր ղէյթունցու զլխարկի վրայ հաստատուած էր մի կանաչ ոտտ՝ մինչև ուսերը ձգուած մետաքսէ ծոպերի հետ։ Թիւրք զինուորներից հայերը զանազանուում էին իրանց արագ ու թեթեւ շարժումներով։ Ամբողջ ճանապարհի ընթացքում, նրանց երկար ու գիւլ-ւոյ-ները, ինչպէս հաղորդում է յիշատակարանը **), անընդհատ հնչում էին մինչև Աղջէ-Դաղի սարերը։

*) Սալմալի անուանում էին ղէյթունցիներին իրանց երկայն թեւերով սիպտակ հագուստների համար, որ կրում են առհասարակ կամ կախ ընկած և կամ մէջքի կողմից կապուած։ Բարխանա թիւրքերէն բոտ է և նշանակում է խուսի։

**) Ցանկալի էր այդ յիշատակարաններից կտորներ բերուէին, իսկ տեղի լաւ կը լինէր հրատարակել այդ ձեռագիր յիշատակարանները։ Խմբ.

Ամբողջ մի շարաթ թիւերը չըջապատում են ապստամբ քիւրդերի ամբողթիւնները, ուր համախմբուել էին չըջակայ օբստների բնակիչները: Ամեն օր կատարուած յարձակումներին մասնակցում էին հայերը: Ութերորդ օրը Դէլի-Քէշիչը կարգադրում է՝ վճռական յարձակում գործելու: Զէյթունցիները և մի ջոկատ թիւքը զինուորսներ Դէլի-Քէշիչի առաջնորդութեամբ զիմում են կռուի այն կողմը, ուր պէտք էր տեղի ունենային վտանգաւոր գործողութիւնները: Հայերը յանդուգն կերպով մագլցում են բերդի քարքարոտ կողմերից վեր և գրաւում ամբողթիւնները, որի ընթացքում սպանւում է Դէլի-Քէշիչի միակ որդին: Փաշան հիասթափ էր զէյթունցիների կոխ մղելու և յարձակուելու բացառիկ եղանակի վրայ և աւարի մեծ բաժինով ու պարգևներով ճանապարհ դրեց նրանց:

Աղջէ-Դադի արչաւանքից քիչ ժամանակ յետոյ Դէլի-Քէշիչը յանկարծամահ է լինում 75 տարեկան հասակում: Նրա մարմինը թաղուած է ս. Սարգիս անուն եկեղեցու մէջ, որ իր ջոնքերով վերանորոգուեց: Տեղացի աշուղները նրա մասին յօրինել են տաղեր, որոնք մինչև այժմ երգւում են ժողովրդի կողմից *):

Մարազում ապրում էր մի լիբանացի վաճառական, Քիրմանի անուն, որ միաժամանակ տնդլիական կառավարութեան ներկայացուցիչն էր այստեղ: Տեղացիները նրան անուանում էին ինկիլիզ համաջաւուր: Ինչ-որ պատճառներով Քիրմանին քննադատում է թիւքը պաշտօնեաների և մօլլաների արարքները և յարաբերութիւնները այնքան լարւում են, որ մահմեդական պետերը նրան մահուան են դատապարտում Ղուրանի օրէնքների համաձայն: Այդ վճիռը վաւերացնում է քաղաքի դատաւորը: 1852 թուին զեկտեմբերի ամսին, հարիւրաւոր մոլեռանդ թիւքեր, սպիտակ փաթաթած գլուխներին, պաշարում են հիւպատոսի տունը՝ գործադրելու համար միւլֆիի հրամանները: Քիրմանին լաւ հրացանածիգ լինելով, պաշտպանւում է, բայց ի վերջոյ մորեղնած ամբոխը, յուսահատուած դռնից ներս մտնելուց, հրգեհում է տունը, որի բոցերի մէջ վառւում են Քիրմանին, նրա կինը և երկու երեխաները: Միայն մեծ որդուն, հազիւ տաս տարեկան, կարողանում են ազատել զիւղալի հայերը: Հայ աշուղները երգում են նաև այդ զոհերի դժբախտ մահը:

Տեղեկանալով Քիրմանիի հետ պատահած դէպքը, մի քա-

*) Ինչո՞ւ նմուշի համար չը բերել զոհի մի քանիսը:

նի հարիւր զինուած զէյթունցիներ արշաւում են Մարաշ՝ որպէս քրիստոնեաներ վրէժխնդիր լինելու համար։ Չմրան մութը գիշերով նրանք ճանապարհ են ընկնում, և հազիւ Ախլըր-Դաղի ստորոտը հասած, ձիւնն ու սաստիկ փոթորիկը սպառնում են խանգարել նրանց ձեռնարկը. սակայն այդու հանգերձ, արշաւանքի մի մասը հրադանաձգութեամբ հետևեալ օրը մտնում է Մարաշ և փոխարինաբար սպանում ոճրագործներից մի քանիսին և թալանում նրանց գոյքերը։ Նախապէս խմանալով արշաւանքը, ոճրի հեղինակներից շատերը գիշերանց խոյս են տալիս քաղաքից, իսկ թիւրք բնակիչները պաշտպանութիւն են խնդրում զրապի հայերից։

Դէլի-Քէշիշի մահից յետոյ Չէյթունում յայտնուած է Յովակիմ-աղա անունով մէկ անձնաւորութիւն, որ կտրիճներից կազմում է մի խումբ և երկար ժամանակ կռիւ մղում թիւրքերի դէմ։ Նրա կենսագրութիւնը անծանօթ է ժողովրդին. նա իր կեանքից շատ սակաւ դէպքեր է պատմել միայն այն մարդկանց, որոնք երկար տարիներ միասին են ապրել և հաւատարիմ ու անձնուէր են եղել ամենավտանգաւոր դէպքերում։

Յովակիմ-աղան ծնուել է Կեսարիայի Կէրմէր գիւղում, բայց այնտեղ նա անց է կացրել մանկութեան առաջին տարիները միայն։ Իր հարստութիւնը հնչիւն զրամի վերածած, մի քանի հազար ոսկիներով, մենակ նա գալիս է Չէյթուն և առաջին դործը լինում է հրադանաձիգ և քաջ լեւնականներից կազմել մի տասնեակ, որպէս իր սեփական ու անբաժան խումբը։ Ռոճիկներ է յատկացնում չորս թաղի իշխաններին, գիւղապետներին և ազգեցիկ մարդկանց, որով իրաւ միացրած է պահում ամբողջ Չէյթունն ու գիւղերը։ Դրանից յետոյ հաստատում է վարչական կարգեր և իր ձեռքն է գցում ընդհանուր գործերի ղեկը։ Չորս-հինգ տարուայ ընթացքում նա մղում է զանազան կռիւներ և վռնդում է գուլառից թիւրք կամ օտար տարրերին, բայց թանքը և Դեօնկէլ գիւղերը, որոնք հնազանդւում են և խզում բոլոր յարաբերութիւնները հարեան թիւրք գաւառների հետ։ Աֆշարներն ու թիւրքմէշները բոլորովին դադարում են բարձրանալ Կօկիսօնի և Բերիդի լեռնադաշտերը։

Երկիւղ կրելով Յովակիմ-աղայից, թէ նա կարող է ստուարացնել ապստամբ խմբերի թիւը, գրաւել Չէյթունն ու հեռաւոր հայաշատ գաւառները և Կիլիկիայում մարմնացնել հայկական մի իշխանութեան գաղափարը, սուլթան Մէջիդի կառավարութիւնը ամեն ճիգ դործ է դնում նրան ոչնչացնելու զէնքի ոյժով կամ պառակտումն առաջացնելով Չէյթունի իշ-

խանները մէջ: Վերջին տարիները գրութիւնը անապահով գտնելով, Յովակիմը խմբով միասին ապաստանում է Բարձր Դղեակը (Կիւրէտինի բերդը) և Գավայի ամրութիւնները, կառուցանում մի տուն բերդի սարահարթի վրայ և մաքրել տալիս Ռուբինեան ժամանակները փորում չորս խորը ջրհորները, ապստամբների մէջ, որոնք չորս-հինգ դարերից ի վեր անգործածելի էին և լքուել էին քարերով ու զանազան նիւթերով: Աշխատութիւնը տաժանելի էր, բայց նա, շարաթների քրտնաթոր յոգնութեամբ, գլուխ է բերում, որպէս զի ջրի պակասութեան չենթարկուեն երկարատև պաշարումների ընթացքում: Նա բռնակուել է մի քանի տարի այդ բերդի վրայ, որի հետքերը տակաւին նկատելի են և՛ այսօր: Յովակիմ-աղան ունեցել է անխորտակելի կամք և գիւղարութիւնների զիմապրաւող, չը վըհատուող մի հոգի, ինչպէս և ցոյց է տուել հրամանատարի յատուկ ընդունակութիւններ:

ՅՍ-ական թուականների վերջերը թիւքը զինուորները պաշարում են բերդը: Սակաւաթիւ մարդկանցով Յովակիմ-աղան պաշտպանուել է երկար շարաթներ, հերոսական կերպով անհամեմատ աւելի ստուար թշնամու գէմ: Վերջիններս տեսնելով որ անկարող են ձերբակալել կամ սպանել նրան, ձմեռն էլ վրայ հասած լինելով, հեռանում են: Այդ ձմեռ նա վճռում է ծալտուած անցնել Ռուսաստան առնուազն մի տարուց վերանադառնալու նպատակով, սակայն ճանապարհին, էրզրումի մէջ, թիւքը կատաղարութիւնը ձերբակալում է և նոյն քաղաքի հրապարակում գլխատում նրան:

Յովակիմ-աղայի Ռուսաստան գնալու պատճառը և նրա մտադրութիւնը անձանթ են զէյթունցիներին: Նրա գործունէութիւնը ընդհատեցաւ այդ ախուր վախճանով: Նրա յիշակալը Զէյթունի բնակիչների մէջ կենդանի է և թիւքերն իսկ առասպելներ են կազմել նրա մասին:

Մինչև 1858 թուականը Զէյթունի շուրջը տեղի չունեցաւ նշանակութեան արժանի որ և է դէպք: Նոյն տարուայ աշնան Խուրչիդ անուն փաշան մի տասնեակ հազար զինուորներով գալիս է Զէյթունի վրայ. սակայն այս անգամ հայերը թոյլ չը տուեցին թշնամու բանակին անցնել մինչև իսկ Զիհանը: Գետի երկու եղերքները հաստատուեցին երկու հակառակորդ տարրերը և կռիւ մղեցին ամբողջ ութ օր: Այդ ժամանակի ընթացքում փաշան երկու անաջող յարձակում գործեց և փորձ արաւ Զիհանը անցնել: Ինքերորդ օրը վճռական յարձակում գործեց, ինչ ժամանակ պարտուած, թիւքական բանակը նահանջեց Մարաշ:

Խուրչիդի պարտութիւնը ծանր տպաւորութիւն առաջ

բերեց կառավարական շրջաններում: Սուլթանը, շատ հաւանական է, մտադիր էր եկամուտ ոյժերով պատժել ապստամբ սարմալիներին, սակայն երկրի զանազան կողմերը կատարուած ապըստամբական շարժումները, իր ժամանակի քաղաքական տագնապը և մանաւանդ 60 թուին Լիբանանի կոտորածի պատճառով Նապօլէօն III-ի սպառնալիքը և ֆրանսիական մի վաշտ զինուորների սիւրէական դամաք հանելը: Բ. Դրանն ստիպեցին մի առժամանակ Զէյթունը մոռանալ՝ սպասելով մէկ ուրիշ յարմար առիթի:

Իշխանների պատմածների համաձայն, 50-ական թուականներին զէյթունցիները երկու պատգամաւոր են ուղարկել Էջմիածին Ներսէս V կաթողիկոսի մօտ, որին տեղեկադրելով իրանց սոսկալի դրութիւնը, առաջարկել են ինչ-որ խնդիրներ և հրաւիրել օգնութեան: Զէյթունցիների ձեռնարկը մնացել է անհետեւանք:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ X ԿՕՆԳՐԵՍՈՂ

Ոչ թէ յաղթել պէտք է, այլ համոզել:
Վիկտոր Հիլգո

Տասնեփններորդ դարի վերջին բառորդի գլխաւոր յատկանիշներից մինն այն մեծ շարժումն է, կամ այն մեծ պայքարն է ի նպաստ խաղաղութեան և կամ այն «կռիւն է կռուի դէմ», որ արծարծուեց արևմտեան Եւրոպայում, ծաւալուեց Ամերիկայում և նոյն իսկ Աֆրիկայում ու Ասիայում և այսօր կազմում է մի զօրեղ հոսանք, որի առաջ այլևս չեն կարողանում կանգնել հին աշխարհի դաւանած սկզբունքները, գաղափարները, նախապաշարմունքները և աւանդութիւնները: Այդ նշանաւոր շարժումն յեղաշրջեց նոյն իսկ այնպիսի գաղափարներ, որոնք դեռ այսօր ևս մարդկութեան ստուարագոյն մեծամասնութեան կողմից համարւում են ամենանուիրական և ամենաիրիշխական, օրինակ, պատերազմի գաղափարը, որ հազարաւոր տարիների ընթացքում նկատուել է մարկութեան կողմից իբրև ազատական գրադունք, իբրև միակ միջոց հայրենիքի և կրօնի պաշտպանութեան, որ սրբազործուել է նոյն իսկ քրիստոնէական եկեղեցու ներկայացուցիչների կողմից: Իսկ այսօր, չնորհիւ խաղաղասիրական շարժման (mouvement pacifique) պատերազմը նկատուում է լոկ իբրև մի կալմահերպուած մարդասպանութիւն: Դրանից հետևում է և այն միտքը, որ բոլոր նշանաւոր աշխարհականները, զօրապետները, թագաւորները, որոնք ճանաչուած են ամեն մի ազգի պատմութեան և մարդկութեան տարեգրութիւնների մէջ իբրև հերոսներ, հայրենիքի, կրօնի պաշտպաններ, օրինակ, Յուլիոս Կեսար, Պոմպէյ, Միհրդատ, Տիպրան, Դաւիթ Մարգարէ, Մեծն Կոստանդինոս, Նապոլէօն, համարւում են այժմ պարզապէս իբրև մարդկանց կոտորողներ, մարդասպաններ, մարդկութեան թշնամիներ: Եւ գաղափարների այդպիսի արմատական յեղաշրջումն առաջ է եկել համեմատաբար շատ կարճ ժամանակում, որովհետև խա-

ղաղափրական շարժման սկիզբն համարւում է 1814 թիւը, երբ զօկտօր Նոյ Վօրչէստէր հրատարակեց Ամերիկայի Միացեալ-Նահանգներում մի գրուածք, որով քննադատում էր պատերազմական սխտեմը. այդ գրքի մի քանի ընթերցողներ, այն ըստ էին, երբ Վատերլօի դաշտի վրայ որոտում էին թնդանօթները, հիմնեցին առաջին ինքաղափրական ընկերութիւնը՝ «The New-York peace Society», որ գոյութիւն ունի մինչև այժմ հա:

Սկզբում ինքաղափրական շարժումն էականապէս կրօնական բնաւորութիւն ունէր և հիմնուած էր լոկ քրիստոնէական բարոյականութեան տեսակէտի վրայ. այդ բնաւորութիւնը նա պաշտպանել է և մինչև այժմ Անգլիայում ու Ամերիկայում, բայց եւրոպայում ինքաղափրական շարժման գործունէութեան շրջանը ընդլայնուեց այն նոր տարրերով, որ մտցրին նրա մէջ ազատամիտները, ազատ մասնագէտները և սօցիալիստները և դրանով շարժումն ստացաւ համամարդկային, հումանիտարական բնաւորութիւն: Հետզհետէ հիմնուեցին նոր ընկերութիւններ, որոնք, իբրև ծառեր, արձակեցին բազմաթիւ ճիւղեր. այդ ընկերութիւնները սկսեցին կազմակերպել հրապարակական դասախօսութիւններ, ընդհանուր փողովներ, միջազգային և, վերջապէս, համաշխարհային կօնգրէսներ և պրօպագանդան հսկայական ծաւալ ստանալով, այն արդիւնքն արտադրեց, որ այսօր, XX-րդ դարի սկզբին, 400 ինքաղութեան ընկերութիւն կայ, մօտ 1,200,000 անդամներով, եւրոպայում և Ամերիկայում, ուրեմն մի ամբողջ զօրք, որ կուռւմ է կռուի դէմ, կուռւմ է միայն ոչ թէ սրով, հրով, այլ համոզելով, յորդորելով:

Ինքաղափրական շարժման կամ ինքաղութեան բարեկամների հիմնական նպատակն է այն ծրագիրը, որ դեռ 1848-ին Բրիտանիայում կայացած կօնգրէսը զօգրեց, այն է.

1) Պատերազմի դասապարտութիւնը.

2) Մի գերագոյն իրաւագիտական ասեանի կամ միջազգային իրաւաբանական դասարանի հաստատութիւնը ազգերի համար.

3) Մի միջազգային օրէնսգրքի հաստատութիւնը.

4) Ընդհանուր զինաքափութիւնը:

Այս ծրագրին ապագայում աւելացրել են և մի այլ էական կէտ, այն է՝

5) Ճնշուած, հարստահարուած ազգերի դատի պաշտպանութիւնը:

Այս ծրագիրն իրագործելու հետամուտ են եղել խա-

դադասէրները (les pacifiques) իրանց ընկերութիւնների, ժողովների, կօնգրէսների, պարբերական հրատարակութիւնների, լրագրների և դասախօսութիւնների միջոցով և որքան էլ, սկզբում, այդ ծրագիրը համարուել է ցնորք, ուտօպիա, մանաւանդ զինաթափութիւնը և միջազգային իրաւարարական դատարանի գաղափարները համարուել են անիրագործելի, բայց խաղաղասէրները, ֆանատիկոսի յամառութեամբ տառջ են տարել իրանց քարոզութիւնը, մի վայրկեան անգամ չը յուսահատուելով, չը հիասթափուելով և հաւատալով Վիկտօր Հիւգօի այն նշանաւոր մարգարէական խօսքերին, որ նա արտասանեց 1849-ին Պարիզում գումարուած կօնգրէսի բացման. «Կը դայ մի օր, ու՛մ Թրանսիա, Անգլիա, Պրուսիա, Աւստրիա, Սպանիա, Իտալիա և Ռուսաստան, երբ զէնքերը կ'ընկնեն ձեր ձեռքիդ, կը դայ մի օր, երբ պատերազմը նոյնչափ անհեթեթ և նոյնչափ անհնարին կը նկատուի Պարիզի և Լօնդօնի, Պետերբուրգի և Բերլինի մէջ, ինչպէս անհնարին և անհեթեթ կը նկատուի նա այսօր Պարիզի և Մարսէյի, Բոստօնի և Ֆիլադելֆիայի, Մոսկուայի և Պետերբուրգի մէջ, Կը գայ մի օր, երբ դժ Թրանսիա, դժ Ռուսաստան, դժ Իտալիա, դժ Անգլիա, դժ Գերմանիա, դժ Երկրագնաի բոլոր ազգերդ, առանց կորցնելու ձեր առանձնայատկութիւնները, ձեր փառաւոր անհատականութիւնը, կը միանաք սերտ և եղբայրական միութեամբ և կը կազմէք եւրոպական եղբայրակցութիւն. կը գայ մի օր, երբ պատերազմի դաշտերի տեղ կը լինեն միայն դաշտեր՝ վաճառականութեան համար և դաշտեր՝ մօքերի համար. կը գայ մի օր, երբ գնդակների և ռումբների տեղ կը գործեն քուէները, աղբերի համալսարհային քուէարկութիւնները, իրաւարարութեամբ մի գերագոյն սենատի, որ նոյնը կը լինի Եւրոպայի համար, ինչ որ պարլամէնտը Անգլիայի համար, սէյմը՝ Գերմանիայի և պատգամաւորների ժողովը՝ Թրանսիայի համար. կը գայ մի օր, երբ թնդանօթները ի ջոյն կը տրուեն միայն թանգարաններում, ինչպէս այսօր ի ջոյն են տրուած տանջանքի գործիքները և մարդիկ կը դարմանան, թէ այդպիսի մի բան կարող էր գոյութիւն ունենալ»:

Ծիշտ է, Վիկտօր Հիւգօի մարգարէութիւնը դեռ մնում է մարգարէութիւն, որովհետեւ թնդանօթները դեռ ամենապատուաւոր տեղն են գրաւում, դեռ նրանք նոյն իսկ այս րոպէիս թնդում են պատերազմի դաշտերի վրայ, դեռ նրանք այսօր վըճռում են ազգերի բախտը, որովհետեւ զինուորականները դեռ այսօր ամենայարգուած դասակարգն են կազմում, որովհետեւ, ի մեծ ամօթ մարդկութեան, դեռ այսօր կատարուում են Եւրո-

պայի աչքի առաջ ամենաքոտինների գաղանձութիւններ, ինչպէս հայկական կոտորածները, բայց միւս կողմից՝ մենք տեսնում ենք, որ երկրաշնտիս ամենահզօր միլիտարիստ երկրների մինի Պետը, ռուսաց Նիկոլայ II Կայսը, հրաւեր է կարգում մարդկութեան, զինաւորեալ մարդկութեան զինաթափ լինել, գոնէ կրճատել սպառազինութիւնները և միջազգային վէճերը կարգաւորել, լուծել իրաւարարական, խաղաղ միջոցով, արբիտրաժով: Ուրեմն, խաղաղասէրների ուսօպիս համարուած ծրագրի մի քանի էական կէտերը մենք այսօր տեսնում ենք իրագործման շաւղի վրայ և այն, ինչ որ երէկ ցնորք էր, այսօր յոյս է, բայց յոյս, որ վաղը կարող է իրականանալ:

Այդ պատճառով, առանձին կարեւորութիւն են ստանում մեզ համար Խաղաղութեան Համաշխարհային կօնգրէսները (Congrei Universel de la Paix), իբրև համաշխարհային խղճմբտանքի արտայայտիչներ և նրանց կատարած գործը, նրանց գործունէութիւնը սկսած 1889 թուից, երբ Պարիզում կայացաւ խաղաղութեան I Համաշխարհային կօնգրէս, այնքան բեղուն է, որ մենք կամենում ենք հայ հասարակութեան մի ամփոփ գաղափար տալու համար խաղաղասիրական շարժման մասին, նկարագրել այդ կօնգրէսներից մէկի, այս տարուայ սեպտեմբերին, Գլազկով քաղաքում գումարուած կօնգրէսի պարագմունքները:

II

Ինչպէս յայտնի է, անցեալ 1900 թուին, հոկտեմբեր ամսին կայացաւ Պարիզում, Համաշխարհային դուցահանդէսի առիթով, Խաղաղութեան IX Համաշխարհային կօնգրէսը, որ մինչև այդ օր կայացած համաշխարհային ութ կօնգրէսների մէջ ամենաբազմամարդն էր պատգամաւորների և անգամների թուով և ամենանշանաւորը արժարժուած հրատապ կամ այժմէական խնդիրների պատճառով: Դա և առաջին համաշխարհային կօնգրէսն է, որ զրազուեց Հայոց հարցով ի հետեւումն մի յիշատակագրի, որ ներկայացրել էին կօնգրէսին մի քանի ռուս, ֆրանսիացի և հայ գրողներ ու հրապարակաւոսներ, ինչպէս պրօֆէսոր Մարիլիէ, պրօֆէսոր Կովալեւսկի, պրօֆէսոր Ղամբարեան, պրօֆէսոր Եւզենի Դը-Բօքերտի, սոյիօլօգ Նօվիկով, սենատոր Լաֆօնտէն, Լուսիէն-Լը-Ֆօյէ, խմբագիր Սօբօլէւսկի, Մ. Չէրազ, Հ. Առաքելեան, Ա. Չօբանեան, Կ. Բասմաջեան, Բժ. Ջալեան, Բժ. Յ. Լօրիս-Մելիքեան և ուրիշներ:

Համաձայն այդ կօնգրէսի վճռին, Խաղաղութեան X Հա-

մաշխարհային կոնգրէսը պէտք է կայանար 1901 թ. սեպտեմբերին, Սիփոտիայի Գլազկով քաղաքում, որ Անդլիայի երկրորդ վաճառաչան քաղաքն է համարւում Լոնդոնից յետոյ, թէ՛ բազմամարդութեան և թէ՛ առևարի կողմից և ուր պէտք է բացուէր Միջազգային յուլյահանգէս: Կոնգրէսի կազմակերպութեան գործը յանձն էր առել գիտութիւնների, գեղարուեստի և կըրթութեան անդլիական Միջազգային Ընկերութիւնը, որի կենտրոնատեղին Լոնդոնումն է:

Այդ հիման վրայ, խաղաղութեան միջազգային միայուն Յանձնաժողովը, որի կենտրոնատեղին Շվեյցարիայի Բէրն քաղաքն է և որ խաղաղութեան բոլոր կոնգրէսների կատարողական օրդանն է, դեռ 1901 թ. յունիսի 1-ին չբջարեալանով յայտնեց երկրագնտի վրայ յրուած խաղաղութեան բոլոր ընկերութիւններին, մասնաժողովներին և խաղաղասիրութեան համակրող ուսումնական, կրթական և բարեգործական հաստատութիւններին կոնգրէսի գումարման օրը և ուսաջարկեց ուղարկել պատգամաւորներ կոնգրէսին մասնակցելու:

Կոնգրէսների կազմակերպութեան մասին դադափար տալու համար, պէտք է ասենք, որ կայ որոշ կանոնադրութիւն խաղաղութեան համաշխարհային կոնգրէսների գումարման, կազմակերպութեան և օրակարգի հարցերի համար, որ խմբագրուած է 1897 թուին և որի էական տրամագրութիւնները հետեւեալներն են.

1. Խաղաղութեան Համաշխարհային կոնգրէսները բաղկանում են.

ա) Խաղաղութեան ընկերութիւնների պատգամաւորներից.

բ) Հասարակական այն հաստատութիւնների կամ իշխանութիւնների պատգամաւորներից, որոնք կը յայտնեն խաղաղութեան միջազգային թիւրօյին իրանց ցանկութիւնը՝ աջակցել նրա ջանքերին.

գ) Այն ընկերութիւնների պատգամաւորներից, որոնց էական նպատակը, թէ՛ և խաղաղութիւնը է՛, բայց չարել են խաղաղութեան միջազգային թիւրօյին և հաղորդել են նրան իրանց կանոնադրութիւնը կոնգրէսի գումարմանից զոնէ վեց շաբաթ առաջ.

դ) Խաղաղութեան ընկերութիւնների խական անդամներից, որոնք ունեն միայն խորհրդակցական ձայն, մինչ վճռողական ձայն ունեն միայն պատգամաւորները.

2. Խաղաղութեան ամեն մի ընկերութիւն կամ ամեն մի հասարակական հաստատութիւն, որ չարել է միայն խաղաղութեան գործին, իրաւունք ունի ուղարկել մի ներկայացուցիչ-պատգամաւոր խորհրդակցական ձայնով, պալմանով՝ որ կոնգրէսի բացմանից առաջ ծանուցած լինի ալդ մասին կարգադիր յանձնաժողովին.

3. Բացի դրանից, խաղաղութեան ամեն մի ընկերութիւն այնքան ձայնի իրաւունք ունի, որքան անգամ 100 անգամ ունի և

այդ ևս մինչև 10 ձայնի մրցումով, այսինքն ամեն մի ընկերություն 10 ձայնից աւելի չէ կարող ունենալ:

4. Ամեն մի ընկերութեան տուրքը կօնգրէսի ծախքերի համար 10 ֆրանկ է առաջին պատգամաւոր ձայնի համար, այնուհետև ամեն մի աւելորդ ձայնի համար 5 ֆրանկ:

5. Ամեն մի անհատ, որ անդամ է որևէ խաղաղութեան ընկերութեան, իրատեւք ունի գրուել անդամ կօնգրէսի, բայց միայն խորհրդակցական ձայնով, վճարելով անդամակցական տուրք 5 ֆրանկ:

6. Ոչ ոք չէ կարող 10 ձայնից աւելի ունենալ կօնգրէսում:

7. Հասարակութիւնը կարող է ընդունուել կօնգրէսներում որքան հնարաւոր է, բայց առանց որ նա իրատեւք ունենայ մասնակցելու վիճարանութիւններին:

8. Լիսագորութիւնների ստուգումն կատարւում է կօնգրէսի բացմանից առաջ. ամեն մի պատգամաւոր ստանում է մուտքի տոմս և մի նշան:

Գալով օրակարգին նա որոշւում է Բերնի բիւրօի կողմից, կանխապէս խորհրդակցելով խաղաղութեան ընկերութիւնների հետ, որոնք իրաւունք ունեն ոչ ուշ քան վեց շաբաթ առաջ կօնգրէսի բացմանից, առաջարկել այս և այն հարցը կօնգրէսի քննութեան: Բիւրօն պարտաւոր է հրատարակել վերջնական օրակարգը գոնէ վեց շաբաթ առաջ, բայց կանոնադրութեան 21-րդ յօդուածի համաձայն, կօնգրէսը ինքն ևս իրաւունք ունի օրակարգից դուրս մի որևէ նոր հարց քննութեան առարկայ դարձնել, եթէ անհրաժեշտ համարի: Հէնց այդ յօդուածի զօրութեամբ, 1900 թուին IX կօնգրէսը մոյցրել էր, օրակարգից դուրս, Հայոց հարցի քննութիւնը:

Իբրև կանոն ընդունուած է նոյնպէս և այն, որ Բերնի մնայուն բիւրօն պատրաստում է մի ամփոփ տեղեկագիր տարուայ ընթացքում տեղի ունեցած այն դէպքերի և միջազգային հարցերի մասին, որոնք կապ ունեն խաղաղասիրական շարժման հետ և ներկայացնում է կօնգրէսին, որ ընդունում է այդ տեղեկագիրը հիմն իր գործունէութեան: Կանոնադրութեան համաձայն, խաղաղութեան համաշխարհային կօնգրէսները իրաւունք ունեն քննել միայն միջազգային հարցեր, չը միջամտելով ամենեին այս կամ այն երկրի ներքին քաղաքականութեան վերաբերեալ հարցերին: Այդ հիման վրայ Պարիզի IX կօնգրէսում երիտասարդ թիւրքերի ներկայացրած առաջարկը՝ զբաղուել թիւրքիայի ընդհանուր բէֆօրմների խնդրով, մերժուեց, իբրև ներքին քաղաքականութեան վերաբերեալ մի հարց, մինչ Հ. Առաքելանի առաջարկը՝ քննել Հայոց հարցը՝ ընդունուեց, ի նկատի ունենալով, որ Հայոց հարցը մտել է

միջազգային հարցերի շարքը Ս.-Ստեֆանոսի, Բերլինի, Կիպրոսի դաշնագրերով և 1895-ին խմբագրուած րէֆորմների ծրագրով:

Կանոն է նոյնպէս, որ կօնգրէսը նախապէս, իր բացման օրը, ընտրում է երեք յանձնաժողով, որոնց պաշտօնն է քննել կանխապէս օրակարգի և նոր առաջարկուած բոլոր հարցերը և քննութեան արդիւնքը ներկայացնել կօնգրէսին, եզրակացութեամբ հանդերձ: Այդ յանձնաժողովների մէջ մտնում են կօնգրէսին մասնակցող ազգութիւններից մի-մի ներկայացուցիչներ և կոչւում են. 1) Այժմեական հարցերի յանձնաժողով (Commission des Actualités) կամ կրճատուած՝ A Յանձնաժողով, որի քննութեան ենթարկւում են այժմէական կամ հրատապ միջազգային հարցերը, որոնք այդ ժամանակ յուզում են քաղաքական աշխարհը, վրդովում են հասարակաց խղճմտանքը. 2) Միջազգային իրաւունքի յանձնաժողով (Commission de droit international) կամ B Յանձնաժողով, որի քննութեան ենթարկւում են միջազգային իրաւունքի, արբիտրաժի վերաբերեալ հարցեր. 3) Պրօպագանդի յանձնաժողով (Commission de la Propagande) կամ C յանձնաժողով, որի քննութեան ենթարկւում են խաղաղութեան ընկերութիւնների միութեան, տարածման, խաղաղասիրական գաղափարի, հաստատութիւնների զարգացման և առհասարակ տեսական հարցեր:

Ինչպէս ասացինք, Բերնի մնայուն բիւրօն (Bureau International permanent de la Paix à Berne) պարտաւոր է կանոնադրութեան համաձայն կօնգրէսի բացմանից զոնէ վեց շաբաթ առաջ հրատարակել վերջնական օրակարգը: Այդ օրակարգը բիւրօն հրատարակեց և տարածեց աշխարհի զանազան կողմեր 1901 թ. յուլիսի 27-ին:

Վերջնական օրակարգ խաղաղութեան X Համաշխարհային կօնգրէսի:

A. Այժմէականութիւններ.

1) Միջազգային մնայուն բիւրօի սեղեկագիրը տարւայ ընթացում սեղի ունեցած դեպքերի մասին, որոնք վերաբերում են խաղաղասիրական շարժման.—Հարաւ-աֆրիկական պատերազմը, Հայոց հարցը, Չինաստանի հարցը ևայլն:—(Այս տեղեկագիրը կը կարդացուի կօնգրէսի բացման օրը և կը յանձնուի A Յանձնաժողովի քննութեան):

2) Միսիօնարների դերը եւ ցրանից ծագող վսանգները.—Առաջարկութիւն, ներկայացրուած 1900-ի կօնգրէսին A Յանձնաժողովի կողմից, բայց չը քննուած ժամանակի սղութեան

պատճառով և այժմ նորից ենթարկուած հեղինակ Գաստօն Մօխի կողմից X կօնգրէսի քննութեան:

3) Իիպլումասիական հովանաւորութիւնը շնորհուած ոչ-ֆրիսոնեայ երկրներում այդ երկրների ֆրիսոնեայ հպատակներին:

B. Մ ի ջ ա զ գ ա յ ի ն ի ր աւ ու ն ք.

4) Իրաւագիտական ենթա-յանձնաժողովի զեկուցումն իր աշխատութիւնների մասին: (Միջազգային օրէնքների, մնայուն իրաւարարութեան դաւնագրեր, իրաւարարական վճիռների գործադրութեան եղանակ):

5) Պետութիւնների մէջ արբիսրաժի պարտաւորիչ դաւնագրեր կնքել սպառնալիցութիւններ:

6) Ուսումնասիրել, կօնգրէսի ձեռնով, այն եղանակը, որով կարելի է գործել՝ համոզելու պետութիւններին կնքել իրար մէջ մնայուն արբիսրաժի (իրաւարարութեան) դաւնագրեր: (Առաջարկութիւն Մ. Ֆուշէի, յանուն համաշխարհային զաւնակցութեան):

7) Առեւտրական բոլոր դաւնագրերի մէջ արբիսրաժի պայման մտցնելը: (Առաջարկութիւն Շվէյցարական խաղաղութեան ընկերութեան):

8) Ազատ-փոխանակութեան սկզբունքի ընդունումը զաղթականութիւնների մէջ:

9) Չեզոքների մէջ դաւնակցութիւնը pacigérance-ի համար: (Առաջարկութիւն Ֆրեդերիկ Բայէրի):

C. Պ ր օ ս յ ա գ ա ն դ ա.

10) Բոլոր ընկերութիւնների միութիւնը, թէ Բերնի բիւրօի և թէ ուղղակի յարաբերութիւնների միջոցով: (Առաջարկութիւն Ֆելիք Մօչէի, նախագահի Անգլիական Միջազգային իրաւարարութեան և խաղաղութեան ընկերութեան):

11) Խաղաղասիրական պրօպագանդան աւելի ազդեցիկ անելու միջոցները: (Առաջարկութիւն Նովիկօվի):

12) Անհրաժեշտութիւն միւլնոյն երկրի խաղաղութեան ընկերութիւնների համար համախմբուել ի մի, իբեւ կենտրոն եւ ճիւղեր:

13) Պատերազմների ճնշեալական պատճառների մասին բնութիւն կատարելու կարեւորութիւնը. — Գործակցութիւնը (coopération) նկատուած իբեւ միջազգային խաղաղացման գործօն:

14) Պատերազմի վերաբերմամբ Քրիստոսի վարդապետութեան ուսումնասիրութիւնը: (Առաջարկութիւն անգլիացի Society of Friends ընկերութեան):

15) Առակներէն ի նպաստ խաղաղութեան կատարած աշխատութիւններէ համար վարձատրութիւն:

16) Ծրագիր Մ. Կեմենէի, վերաբերեալ մի միջազգային գիտնական հետազոտման հաստատութեան:

17) Մի միջազգային օժանդակ լեզուի ուսումնասիրութեան առաջարկը:

18) Մայիսի 18-ին միջազգային օտերկան սօցիալմեթոտեան հաստատութեան առաջարկը:

19) Միութեան մի նշան ընդունելը, խաղաղութեան միջազգային դրօշակի ձեւով: (Առաջարկութիւն Շվեյցարական խաղ. ընկերութեան):

20) Կօնգրէսներէ կանոնադրութեան վերաբերելը:

21) XI Կօնգրէսի ժամանակի եւ հեղի օրոշումն:

22) Կոչումն՝ ազգերին:

Մենք հարկաւոր համարեցիք առաջ բերել այս օրակարգը, ցոյց տալու համար, թէ ինչ բազմակողմանի հարցեր—քաղաքական, քաղաքատնտեսական, բարոյական, կրօնական, սօցիալական մասնով են խաղաղութեան կօնգրէս. ի դործունէութեան մէջ:

Բոլոր նշանաւոր խաղաղասէրները (pacifiques)—ծերունի Ֆրեդերիկ Պասսի, Գաստօն Մօիս, Էմիլ Արնօ, բարօնուհի Սիստոնէր, Սթէք, Մօշըլէ, Նօվիկօվ այդանց էին: Չը մոռանանք, որ խաղաղութեան ընկերութեաններէ անդամներ են և շատ նշանաւոր պետական, քաղաքական գործիչներ, միլիտորներ, պարլամենտներէ անդամներ, իսկ այդ ընկերութիւններէ և կօնգրէսներէ հովանաւոր ու համակրող է համարուում ոռոսաց Կայսր Նիկօլայ II այն օրից, երբ Նա հրատարակեց իր նշանաւոր շրջաբերականը: Մենք տեսանք, որ զեռ քառասունական թուականներին զինաթափութեան և միջազգային իրաւարարական գերազոյն տունն հարցերը դրել էր հրապարակի վրայ խաղաղութեան կօնգրէսը, հետեաբար, Նիկօլայ II Կայսրի առաջարկը 50 տարի առաջ խաղաղասէրներէ կողմից արժարժած իգէալական հարցի մարմնացումն էր:

Այժմ անցնենք կօնգրէսի պարապմունքներին:

III

Գումարել խաղաղութեան կօնգրէս Անգլիայում մի այնպիսի ժամանակ, երբ ամբողջ անգլիական ազգը պատերազմասէր և չօվինիստ-ջինգօական տրամադրութեամբ է համակուած, այդ թուում էր շատերին հեգնութիւն, ծաղր, սակայն միւս կողմից չէ կարելի չը սքանչանալ, որ Անգլիայում գտնուեցին մարդիկ, որոնք քաղաքացիական քաջութիւն ունեցան հրաւիրել իրանց մէջ այն խաղաղասէրներին, որոնք, դեռ մի տարի առաջ, 1900 թ. հոկտեմբերին, Պարիզում (IX կօնգրէսում) կայացրին Անգլիայի և անգլիական ինքնասիրութեան համար խիստ վիրաւորական վճիռ, որով խաղաղութեան IX համաշխարհային կօնգրէսը, իբրև համաշխարհային խղճմտանքի արտայայտիչ, դատապարտեց հանդիսաւորապէս Անգլիայի վարմունքը, իբրև բարբարոս և հակա-քաղաքակրթական: Սկզբից հիւրընկալելով Անգլիայի վարմունքն այդպէս խստօրէն դատապարտող դատաւորներին, միայնում էր դրանով իր բողոքի ձայնը նրանց ձայնի հետ և իր բարոյական համերաշխութիւնն էր արտայայտում նրանց, որոնք կայացրել էին 1900 թ. այս վճիռը:

«Խաղաղութեան IX Համաշխարհային կօնգրէսը, առանց յաւակնութիւն ունենալու միջամտել մի բարեկամ ազգի գործերի մէջ, ստիպուած լինելով սակայն բարձրաձայն հատառել միջազգային արդարութեան անխախտելի սկզբունքները,

«Յայտարարում է.

1) «Պատասխանատուութիւնը այն պատերազմի, որ ներկայումս աւերում է հարաւային Աֆրիկան՝ ընկնում է այն կողմի վրայ, որ, մի քանի անգամ մերժել է արբիտրաժը, այն է՝ բրիտանական կառավարութեան վրայ:

2) «Բրիտանական կառավարութիւնը չը ճանաչելով իրաւունքի և արդարութեան սկզբունքները, որոնք կաղմել են բրիտանական մեծ ազգի փառքը, այն է՝ մերժելով որևէ միջնորդ դատարան և դիմելով այնպիսի սպառնալիքների, որոնք ձախող կերպով պէտք է պատերազմ գրգռէին այնպիսի մի վէճի մէջ, որ կարելի էր լուծել իրաւագիտական միջոցներով, կատարեց ոճրագործութիւն աղգերի իրաւունքների դէմ և դրանով յետաձգեց մարդկութեան խաղաղասիրական էվօլուցիան:

3) «Կօնգրէսը ոչ սակաւ յաւ է յայտնում, որ Հաագի

կօնֆերէնցիային մասնակցող կառավարութիւններից շատերը ոչ մի ջանք չարեցին տալ ընդ աշխարհի համաձայնութիւն, որ նրանց համար պատուի պարտաւորութիւն էր:

Եւ ահա նոյն մարդիկ ստիպուած էին գալ և նորից նոյն դատաւիճիքը կարգաւ, քանի որ անարդար պատերազմը դեռ չարունակուեալ էր. այդ հանգամանքը մի քիչ անյարմար դրութիւն էր ստեղծում օտարազգի պատգամաւորների համար. աւելի հեշտ է դառն ճշմարտութիւնը մէկի երեսին խփել դուրսը, քան նրա տանը, երբ նա քեզ հիւրասիրում է:

Մտքերի այդպիսի տրամադրութեան մէջ բացուեց խաղաղութեան X կօնգրէսը 1901 թ. սեպտեմբերի 10-ին, Գլազկօյում, Ս. Անգրէյի ընդարձակ Հալլում: Սակայն դեռ սեպտեմբերի 7-ից սկսուել էր կօնգրէսի նախերգանքը կամ նաւակատիքը. սեպտեմբերի 7, 8 և 9-ին Գլազկօյի բոլոր եկեղեցիներում, աղօթատներում տեղի ունեցան քարոզներ, երգեցողութիւններ խաղաղութեան համար, իսկ հրապարակների վրայ, փողոցներում, ժողովարաններում դասախօսութիւններ՝ խաղաղութեան վերաբերեալ Ո'րտեղից, որ փողոցից, որ եկեղեցում, մօտից, որ տան առաջից անցնէիք այդ օրերը, որ ժողովարան, ահումբ մտնէիք, ամեն տեղ դուք կը լսէիք peace, peace (պիս, պիս) աղաղակը, այն է՝ խաղաղութիւն, խաղաղութիւն: Մանաւանդ նշանաւոր էր մայր-եկեղեցում պատուօր դօկտօր Հիւստէրի արտասանած քարոզը «Գաղաքակրթութիւն, քրիստոնէութիւն և պատերազմ» վերնագրով: Ի նկատի ունենալով, որ վաղուց խաղաղասիրական մամուլի մէջ մեղադրանքներ են կարգադրուած քրիստոնէական եկեղեցու հասցէին, թէ նա շարունակ խրախուսել է պատերազմական ոգին, պաշտպանել է պատերազմի զաղափարը, մինչ քրիստոս իր վարդապետութեամբ ամբողջովին խաղաղասիրութիւն էր և անդառնալի կերպով դատապարտել է պատերազմը, քարոզիչը աշխատեց ապացուցանել, որ ոչ միայն Աւետարանը, այլ նոյն իսկ Հին-Գիրքը դատապարտել է պատերազմը:

Ոչ թէ քրիստոնէական եկեղեցին է մեղաւոր, որ պատերազմական ոգին արմատախիլ չէ եղել, այլ որովհետեւ քրիստոնէական վարդապետութեան ներքին էութիւնը լաւ չէ ըմբռնել մարդկութիւնը:

Քարոզների հետ միասին, Գլազկօյի փողոցներում տղամարդ, կին խումբ-խումբ հաւաքուելով, երգեհոններով և երգերով փառաբանում էին «խաղաղութիւնը»: Նրանցից մի քսան քայլ հեռու, մի այլ խումբ լսում էր մի այլ ճառախօսի, որ ա-

նէձք էր թափում Չեմբըրլէնի, Սօլսբըրիի գլխին եղբայրասպան պատերազմի համար:

Երկուշաբթի, սեպտ. 10-ին (ն. տ.), առաւօտեան ժամը 10-ին, Ս. Անդրէյ Հալլի մեծ դահլիճում մի առանձին ոգևորութիւն էր տիրում: Նոյն դահլիճի կողքին, մի այլ սրահում, նոյն ժամին կատարւում էր մի այլ հանդէս: Գլաղկով քաղաքը պատուաւոր քաղաքացիութեան տիտղոսն էր մատուցանում Ամերիկայից եկած միլիարդատէր Կօրնէճիին, որ ահագին գումարներ էր նուիրել իր մայրենի քաղաքին: Այդ պատճառով, քաղաքագլուխ կամ լօրդ-մէյր Չեսօլմ անկարող լինելով նախագահել X կօնգրէսի հանդիսաւոր բացման, նախագահի պաշտօնը ստանձնեց դօկտօր Սպինս Վատսօն: Բեմի վրայ, սեղանի առաջ, նրա երկու կողմին տեղ էին բռնել կօնգրէսի պատուաւոր փոխ-նախագահներ—Ֆրեդերիկ Պասսի (ներկայացուցիչ Ֆրանսիայի), դօկտօր Թրուբլուզ (Ամերիկայի), դօկտօր Ադօլֆ Բիխտէր (Գերմանիայի), Ֆելիքս Մօչլէ (Անգլիայի), էմիլ Արնօ, Գասսօն Մօլս (Ֆրանսիայի), Բօվէ (Շվեյցարիայի), Գրին, տիկին Վասկլէվիչ (Հօլանդիայի), Նօվիկօվ (Ռուսաստանի), սինեօր Մարքոտտի (Ապանիայի), օրիորդ Բայէր (Դանիայի):

Յայտարարելով խաղաղութեան X Համաշխարհային կօնգրէսը բացուած՝ նախագահը մի երկար ճառ արտասանեց, որի միտքը այն էր, որ եթէ աշխարհի զանազան ծայրերից մարդիկ, անցնելով ընդ ծով և ընդ ցամաք, եկել են մասնակցելու կօնգրէսին, դա ապացոյց է թէ խաղաղասիրական շարժումն ինչ ահագին ծաւալ է ստանում. ճիշտ է, Հաագի կօնֆերենցիայից յետոյ ծագած սոսկալի պատերազմը Հարաւային-Աֆրիկայում և քրիստոնեայ պետութիւնների արշաւանքը Չինաստանում կարծես թէ ապարդիւն են դարձնում այդ կօնֆերենցիայի ջանքերը և անօգուտ նրա որոշումները, բայց դարձեալ նա մի մեծ յաղթանակ էր, որ խաղաղասիրական ոգին տարաւ պատերազմասիրական ոգու դէմ:

Ապա նախագահը հրաւիրեց զանազան ազգութիւնների ներկայացուցիչներին ողջոյնի խօսք ասել, ըստ ընդունուած սովորութեան:

Գերմանիայի կողմից խօսեց դօկտօր Բիխտէր: Շնորհակալութիւն յայտնելով այն սերտ համակրութեան մասին, որ անգլիացի բարեկամները ցոյց են տալիս կօնգրէսներին, նա ասաց, որ խաղաղասիրական շարժումը նոր է. նրա գործը զրոյացուար է, որովհետև Գերմանիան միլիտարական երկիր է և միլիտարիզմի ոգին շատ զարգացած է, սակայն այդ իրողութիւնը

ամենևին չէ վհատեցնում գերմանական խաղաղասէրներին. նրանք անդուլ պործում են և նրանց թիւը այսօր հասնում է 8,000-ի: Խաղաղասիրական շարժումը Անգլիայում աւելի հին է և աւելի մեծատարած: Անցեալ տարի, երբ որոշեցինք գումարուել Գլազգովում, համոզուած էինք, որ դժբախտ պատերազմը արդէն վերջացած կը լինի, բայց քանի որ այդպէս չէ, մեզ մնում է ամեն կերպ աշխատել և մեր դէվիզն անել «պատերազմ պատերազմի դէմ»:

Դանիայի ներկայացուցիչ օրիորդ Բայէր ասաց, որ խաղաղութեան այն սկզբունքները, որոնք գործադրուում են անհատներին վերաբերմամբ, պէտք է գործադրուեն և ազգերի վերաբերմամբ:

Դոն Արաուրօ դը Մարքոտտի՝ Սպանիայի ներկայացուցիչը ասաց, որ խաղաղութեան սկզբունքները անպատճառ պէտք է յաղթանակեն, որովհետև թէ կանայք և թէ բանուոր դասակարգը խաղաղութեան կողմն են:

Ամերիկայի ներկայացուցիչ դօկտօր Թրիւբլուդ ասաց, որ խաղաղութեան բարեկամները Ամերիկայում սքանչանում են անգլիայի բարեկամների քաջութեան վրայ. նրանք չեն կարող մոռանալ որ դեռ 1815-ին այս երկրում կազմակերպուեց խաղաղութեան շարժումն: Այն հանգամանքը, որ Հտազում կազմակերպուած իրաւարարական գերագոյն ատեանը անգործ է գեռ, իրաւունք չէ տալիս մեզ յուսահատուել: Միացեալ-Նահանգների կառավարութիւնը բացարձակապէս հակուած է այդ ատեանի կողմը և աշխատում է որքան կարելի է շուտով գործունէութեան շրջանի մէջ դնել նրան. այժմ Ամերիկայում ահագին ջանքեր են լինում համոզելու ամերիկական 19 հանրապետութիւնները կնքել իրանց մէջ իրաւարարական դաշնագիր, պարտաւորուելով Հաագի գերագոյն միջազգային ատեանին ենթարկել իրանց մէջ ծագող վէճերը:

Հօլլանդիայի ներկայացուցիչ տիկին Վաշկլէվիչ ասաց, որ ինքը եկել է բողոքելու պատերազմի դէմ ընդհանրապէս և Տրանսվալի պատերազմի դէմ մասնաւորապէս:

Իտալիայի ներկայացուցիչ Ֆրաչէլլի ասաց, թէ երիտասարդ Իտալիան լցուած է հիացմամբ, յարգանքով և համակրութեամբ դէպի նրանց, որոնք ծերացել են մեր դատի մէջ. խաղաղասիրական շարժումը խիստ տարածուած է Իտալիայում. խաղաղութեան բազմաթիւ ընկերութիւններ են հիմնուում և յոյս ունենք մօտ ապագայում Հռոմում գումարուած տեսնել խաղաղութեան կօնգրէս: Դեռ նորերս Իտալիայի պատերազմական միջնաւորը ասաց, որ Իտալիան մեծապէս նպաստեց խա-

դաշութեան պահպանութեան խտալիայում, մասնակցելով և բերքաւետեան դաշնակցութեան:

Ֆրանսիայի ներկայացուցիչ, խաղաղութեան գործի անխոնջ առաքեալ արեգարդ Ֆրեդերիկ Պասսի մի գեղեցիկ ճառ արտասանեց. նա առաջ որ շատ ուրախ է տեսնելով նորից անցեալ տարի Պարիզի կօնգրէսին մասնակցողներին չառերին. դուք կը վկայէք, որ Ֆրանսիայի ժողովուրդը այն համոզմունքը ունի, թէ առաջագիմութիւնը հնարաւոր է այն ժամանակ, երբ օտար երկրների անկախութիւնը և հաստատութիւնները յարգուած են. դուք կը վկայէք, որ Ֆրանսիան մեծապէս ողբում է Հարաւային Աֆրիկայի աղետալի պատերազմը և ֆրանսիական ազգը համակրութեամբ է վերաբերում ճշուած ազգերին, առանց թշնամութիւն տածելու Անգլիայի դէմ. նա ջառում է տեսնելով անգլիական ազգի ժամանակաւոր կուրուքիւնը և յուշուած կիրքը, այն ազգի, որ լացարձակապէս անձնուէր է եղել ազատութեան և արդարութեան գործին: Ֆրանսիական ազգը ևս կրել է բարոյական համանման համաճարակ յաւ. բայց կուրութեան, մթութեան, կրքերի բալէները կ'անցնեն, անսլ կը գայ առողջարար բէակցիւս և Անգլիան նորից կը դառնայ առաջուայ ազատասէր և արդարասէր Անգլիան:

Ապա Ֆրեդերիկ Պասսի նկարագրեց այն հակայական ծաւալը, որ ստացել է Ֆրանսիայում խաղաղասիրական շարժումը:

Ռուսաստանի ներկայացուցիչ Նովիկով առաջ, որ իրական ոչ մի անտաղծնիզմ չը կայ Ռուսաստանի և Անգլիայի մէջ. միայն առանդութիւնն է նկարագրում այդ երկու ազգերին իրեն բնական հակառակորդներ. ամբողջ անտաղծնիզմը հետեանք է դիպլոմատների երեսակայութեան և ինտրիգների և հիմնուած է ոչ մի իրական փաստի վրայ: Օրինակ, Բօլղարիայի ազատութիւնը նոյնքան չահաւէտ էր Անգլիային, որչափ Ռուսաստանին: Ճշմարիտ է, մի քանի ներքին պատճառներով, Ռուսաստանում չը կան խաղաղութեան ընկերութիւններ, բայց ռուս ժողովուրդը աշխարհիս ամենախաղաղասէր ժողովուրդն է: Դա ունի ոչ միայն իր բարոյական, այլ և նիւթական պատճառը. ռուս ժողովուրդը Եւրոպայի ամենաազգաստ ժողովուրդն է և երբ մի ժողովուրդ ստիպուած է մտածել իր ամենօրեայ պարէնի մասին, բնականաբար, նա ժամանակ չունի մտածել ոչ արշաւանքների, ոչ քաղաքական փառասէր ձեռնարկութիւնների, պատերազմների մասին:

Շվեյցարիայի ներկայացուցիչ՝ զօկտօր Բօվէ առաջ, որ չվեյցարական ժողովուրդը խաղաղասէր ժողովուրդ է, ըստ իր բնութեան և կրթութեան: Չը նայելով որ նա բաղկացած է

25 ինքնավար կանտոններից (նահանգ), բայց նա կազմում է իր հայրենասիրութեամբ նշանաւոր մի զաչնակցութիւն և մաղթենք, որ եւրոպական պետութիւնները իս, պահպանելով իւրաքանչիւրը իր ինքնուրոյնութիւնը, կազմեն մի մեծ զաչ-նակցութիւն, կազմեն Եւրոպայի Միացեալ-Նահանգներ, ներ-չընչուած ամենամեծ հայրենասիրութեամբ—մարդասիրութեամբ:

Անգլիայի ներկայացուցիչ՝ Ֆէլիքս Մօչլըէ ասաց, որ նա անսահման մեծ նշանակութիւն է տալիս Հաագի Միջազգային իրաւարարական ատենանիս: Նա առիթ է ունեցել խօսելու Հաագի կօնֆերէնցիայի ամերիկական պատգամաւորներին—Վիթի և Հօլ-սի, ինչպէս և Բարօն Ստալի հետ. առաջին երկուսը մի տեսակ-ցութիւն էին ունեցել Յարի հետ. «Հաագի Միջազգային իրաւարարական ատենան»—ասաց ինձ Վիթը, կրկնելով մի մեծ պետութեան առաջին մինիստրի խնդիրը,—այն կորիզն է, որի շուրջը կը կազմուի միջազգային օրէնագիրքը. կորիզը ինքն ի-րան կը զարգանայ. ճիշտ է, այդ ատենանին դիմելը՝ պարտաւո-րիչ չէ, այլ կամաւոր (ֆակուլտատիւ), բայց հէնց դրա մէջն է կայանում նրա գերազանցութիւնը, որովհետեւ վիճողները ան-պայման կը հնազանդեն այդ ատենանի վճռին, որին ենթարկուել յանձն են առել կամաւորապէս: Հաւատացէք ինձ, դուք ա-մենքդ, խաղաղութեան մշակներդ, դուք, որ երկար տարիներ, թերահաւատների ծաղր ու ծանակն էք դարձել, դուք կարող էք հաւատ ունենալ ձեր գործի վերջնական յաղթանակի հա-մար:

Ազգերի ներկայացուցիչների ողջոյնի ճառերից յետոյ, Բերնի միջազգային բիւրօի ներկայացուցիչ Էմիլ Արնօ կարգաց բիւրօի հետեւեալ տեղեկագիրը.

Տեղեկագիր խաղաղութեան միջազգային բիւրօի օգ-րուայ դէպքերի մասին, վերաբերեալ խաղաղասիրա-կան շարժման. 31 օգոստոս 1901:

«Խաղաղութեան համաշխարհային կօնգրէսների բացման նիստում միշտ կարգացում է մեր բիւրօի տեղեկագիրը տար-ուայ ընթացքում տեղի ունեցած այն գէպքերի մասին, որոնք կապ ունեն խաղաղութեան կամ պատերազմի հետ: Այդ տեղե-կագիրը կօնգրէսը ուղարկում է քաղաքական այժմէական հար-ցերի նախախորհրդակցական յանձնաժողովին (A), որ քննում է և ներկայացնում է կօնգրէսին առաջարկութիւններ կամ եզ-րակացութիւններ, որոնք և կազմում են կօնգրէսի դատողու-թիւնների ու վիճարանութիւնների հիմն:

«Ներկայացնելով այսօր այդ տեղեկագիրը, մենք ամենին յաւակնութիւն չունենք յայտնելու, թէ սպասել ենք բոլոր խնդիրները, ոչ կա թելադրելու մեր տեսակէտը կօնգրէսին, այլ յայտնելու, թէ մեր դերը, աւելի համեստ, կայանում է միայն նրանում, որ կօնգրէսի ուշադրութեան է յանձնարարում ամենածանր խնդիրները:

«Առաջինը, որ աչքի է ընկնում, հակառակ անցեալ տարուայ բոլոր նախատեսութիւններին, Հարաւային-Աֆրիկայում շարունակուող պատերազմն է անգլիացիների և բօէրների մէջ: Պարիզում 1900 թ. հսկումբերին կայացած կօնգրէսում ոչ ոք չէր հաւատում, որ այդ պատերազմը կարող է երկար ժամանակ քաղաքակիրթ աշխարհի մտահոգութիւնների ծրագրի մէջ մնալ: Հասարակաց կարծիքը արդէն կատարելապէս լուսաբանուած էր այդ բուպէին և ամենքը կարծում էին, թէ կռուող երկու ազգերը կամ ուղղակի համաձայնութեամբ կամ կռուին չէզոք պետութիւնների միջնորդութեամբ խաղաղասիրական լուծմանը կը յանգեն:

«Այդ լուծումն մանաւանդ բնական էր թւում, որ համաձայնէր Հաագի միջակառավարական կօնֆերէնցիայի որոշումներին, ինչպէս և երկու կողմերի բարոյական և նիւթական շահերին, որոնք վճռողաբար թելադրում էին թշնամութիւնների դադարումն:

«Այդ պատճառով բազմաթիւ և ազգու. քայլեր արուեցին ի նպատո միջնորդութեան բոլոր երկրների խաղաղասիրական խմբերի կողմից, առանց խօսելու ազդեցիկ նշանաւոր անձնաւորութիւնների նախաձեռնութեան մասին, նախագահ Կրիզէրի Եւրոպայի այցելութիւնից թէ առաջ և թէ յետոյ: Ոչ մի ջանք չը խնայուեց, բայց մարդկայնութեան այդ մեծ շարժումը դէմ ընկաւ Մեծ-Բրիտանիայի կառավարութեան դիմադրութեան, որ չուզեց մինչև այսօր լսել ոչ զգացումների ձայնը, ոչ ևս մի անվերջանալի կռուի սպառնալիքները:

«Վիկտորիա թագուհու մահը, որ վրայ հասաւ մեր վերջին տեղեկագրից ի վեր, ոչ մի ազդեցութիւն չը գործեց այդ անձկալի դէպքերի ընթացքի վրայ, որոնք, իրանց կողմից, ինչպէս երևում է, կարճեցրին թագուհու կեանքը: Բանակցութիւններ ի նպատ խաղաղութեան արուեցին էլուարդ VII-ի մօտ նրա գահակալութեան առիթով, բայց նրանք մնացին մինչև այժմ անհետևանք, կամ գոնէ երկիւղ ենք կրում որ հաշտութեան և բարեխօսութեան խնդիրը հասած լինեն արքայականական ջին այն մարդկանց համեմեներով, որոնք չա՛ն ունեն կանգնեցնել ճանապարհին այդ խնդիրը:

«Այս կրկնակի անաջողութիւնը չը պէտք է սակայն վհատեցնեն խաղաղութեան բարեկամներին. մարդ հանգստանում է միայն այն ժամանակ, երբ աշխատութիւնը կատարուած է և գործը աւարտուած»:

«Երկրորդ հարցը—Հայոց հարցն է. Անցկացած տարուայ ընթացքում հայ ժողովրդի վիճակը Թիւրքիայում ամենեին չէ բարւոքուել. Եւրոպական կառավարութիւնները ոչ մի հաւաքական ջանք չը խնայեցին մի վերջ դնելու համար այն անպըթութիւններին, որոնք սիստեմատիկաբար գործուած են այդ դժբախտ ազգի դէմ: Սակայն ֆրանսիական հանրապետութեան կառավարութիւնը կանգնեցնել տուեց իր դիպլոմատիական միջամտութեամբ մի կտորած, որ ծրագրուած էր Այնթաքում 1900 թ. դեկտեմբեր ամսում: Անյուր հարստահարութեան գործեր կատարուել են գրեթէ բոլոր հայաբնակ վիլայէթներում, Սպաղմարում՝ 1900 թ. յուլիսին, Բօրի վանքում՝ Բիթլիսի մօտ, սեպտեմբերին, Մուշում՝ դեկտեմբերին և դեռ նորերս մի քանի տեղերում: Միւս կողմից Ռուսաստան ապաստանած 40,000 հայ փախստականների հայրենիք վերադառնալու խնդիրը դեռ չէ լուծուած և նոր խմբական արտագրումներ ամեն օր սպասուում են»:

«Եւրոպական մեծ պետութիւնները մի մեծ ծառայութիւն մատուցած կը լինէին մարդկութեան, եթէ, համաձայն այն հրաւերին, որ ուղղեց իրանց խաղաղութեան IX Համաշխարհային կօնգրէսը, նրանք անհրաժեշտ միջոցներ ձեռք առնէին ընդունել տալու Թիւրքաց կառավարութեանը՝ հայկական հարցի մի արմատական և բացիծնալ լուծումը»:

Հայոց հարցից յետոյ տեղեկագիրը խօսում է Չինաստանի դէպքերի մասին, անցնում է ապա Վենեցուէլայի և Կօլումբիայի միջադէպերին և փափագ է յայտնում, որ X կօնգրէսը լուրջ ուշադրութիւն դարձնի այդ հարցերի վրայ:

Նախագահ.—«Բիւրօի այս տեղեկագիրը կ'ուղարկենք A Յանձնաժողովի քննութեան, բայց նախ քան A, B և C Յանձնաժողովների ընտրութիւնը կատարելը, ևս պէտք է կարգամ և երկու գրութիւն, որ ստացուել են Հայոց հարցի մասին»:

«Կօնգրէսի անգամ հայ հրապարակախօս պ. Հ. Առաքելեան ներկայացրել է հետևեալ յայտարարութիւնը.

«Ի նկատի ունենալով որ հայկական հարցը զանուած է X Կօնգրէսի օրագրի մէջ, մտցրուած լինելով խաղաղութեան Միջազգային բիւրօի տեղեկագրով, հետևաբար, նա պէտք է ուղարկուի A յանձնաժողովի նախաքննութեան, պատիւ ունեմ ներկայացնել Կօնգրէսին մի յիշատակագիր. «Հայոց հարցը համ-

աշխարհային խաղաղութեան տեսակէտից (La question arménienne de vue de la Paix Universelle) վերնագրով, որ կը դիւրացնի Յանձնաժողովի աշխատութիւնները, և խնդրում եմ ենթարկել այդ հարցը քննութեան ու կայացնել որոշումն:

«Ես համազում եմ, որ ի նկատի ունենալով հարցի մարդասիրական կողմը և Թիւրքիայի հայ ժողովրդի ողբալի վիճակը, ներկայ կօնգրէսը ևս նոյն համակրութեամբ կը վերաբերուի Հայոց հարցին, ինչպէս վերաբերուեց IX կօնգրէսը Պարիզում, 9 սեպտ. 1901»:

Իսկ միտար Լեօվէ, Ամերիկայի Միացեալ-Նահանգների խաղաղութեան ընկերութիւնների կողմից գրել է հետեւեալ նամակը կօնգրէսի պ. նախագահին.

«Հայերը քրիստոնեաներ են: Արդեօք չենք կարող պահանջել, որ Հայոց հարցը քննուի Գաստօն Մօխի առաջարկութեան առիթով: Այստեղ, Միացեալ-Նահանգներում, մենք պատրաստուած ենք մի կողմեր կառավարութեան՝ խնդրելով նրան միջամտել յանուն մարդկայնութեան, ինչպէս առաջ խնդրել են նաև քարտուղար Էվանտս, Թիչ և ուրիշները: Մենք կ'ուզարկենք Գլազկօվ, կօնգրէսին, մի պատճէն այն որոշումների, որոնք կը ներկայացուեն պ. Մակ-Կիլլէին, ինչպէս և պարլամենտի անդամներին և խնդրում ենք ձեզ յանձնել այդ դժուար մենտները նախագահող յանձնաժողովին, որպէս զի Բերլինի դաշնագիրը ստորագրող մեծ պետութիւնները միջոյններ ձեռք առնեն պաշտպանել հայերին քիւրդերից»:

Նախագահ.—Այժմ խնդրում եմ գաղտնի քուէարկութեամբ ընտրել A, B և C Յանձնաժողովների անդամներին:

Տեղի է ունենում գաղտնի քուէարկութիւն. պայքարը պիտաւորապէս համախմբւում է A Յանձնաժողովի ընտրութեան շուրջը:

Գաղտնի քուէարկութիւնը ցոյց է տալիս, որ ընտրուել են անդամներ A Յանձնաժողովի համար.

1) Դօկտօր Ռիխտէր, 2) դօկտօր Բօլէ, 3) արքա Պիչօ, 4) Տրիպիէ, 5) Ժ. Նօվիկօվ, 6) օրիորդ Լ. Միգ, 7) Ս. Նիւման և 8) Հ. Առաքելեան:

B Յանձնաժողովի համար.

1) Էմիլ Արնօ, 2) Ֆրեդերիկ Պասսի, 3) Ֆ. Մօշլէ, 4) Գրին, 5) Դարբի:

C Յանձնաժողովի համար.

1) Դօկտօր Հեօլլէլ, 2) Գաստօն Մօխ, 3) Րիչսէն, 4) Պրիւգհօմ, 5) Գուասօն, 6) դօկտօր Թօմաս և 7) Պէրրիս:

Ժամը 12-ին նախագահը յայտարարում է նիստը փակուած:

Երեկոյեան, ժամը 7-ին, հանգիստաւոր ընդունելութիւն կօնգրէսի անդամների Գլազկովի քաղաքապետութեան կողմից: Լօրդ-մէր՝ Գօկտօր Չիսհօլմ և խորհրդարանի անդամները իրանց պաշտօնական, հին-ազգային հաղուստներով սիրալիր ընդունելութիւն ցոյց տուեցին կօնգրէսի անդամներին, քաղաքապետութեան ընդարձակ և չքեղ ու ելեքարական լոյսով ողողուած դահլիճների մէջ: Ճոխ սեղաններ ամեն տեսակ համալսամ կերակուրներով, քաղցրեղէններով, օշարակներով, պտուղներով, ծաղիկներով ծանրաբեռնուած, շարուած էին սրահներում, սակայն ոգելից ըմպելիքի, դինու, շամպայնի կատարեալ բացակայութիւն էր տիրում, որովհետև Սկօվտիան բացառապէս ժուժկալական երկիր է և ոգելից ըմպելիքների գործածութիւնն արգելուած է, նոյնիսկ պաշտօնական ճաշերի ժամանակ:

Սկօվտիական երաժշտութիւն, երգեր և պարեր մինչև ժամը 12-ը զուարճացնում էին հիւրերին:

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

III

Ս Տ Ե Փ Ա Ն Ո Ս Կ Ա Ն

«Մենք—ասում է մի տեղ Բեօրնէն—ուզում ենք ոչ թէ փոխել գերմանական ազգը, այլ զարթեցնել նրան, որովհետև նա քնած է: Մենք նրա ճանճերն ենք, բզզում ենք նրա ականջներում, կծում ենք նրա երեսը»: Այսպէս է հռչակաւոր հրապարակախօսը պատկերացնում այն ուղղութիւնը, որ մենք անուանում ենք մերկայնող, մտրակողական:

Ո՞ր ժամանակից է մեղանում՝ ծնունդ առել այդ ուղղութիւնը:

Թերթելով հայոց պարբերական մամուլի արդէն հարիւրամեայ պատմութիւնը, մենք կանգ ենք առնում մի շատ զարմանալի երևոյթի առաջ: Մեր մամուլի կեանքը երկու կէսի է բաժանւում: Առաջին կէսում մենք ունէինք մամուլ, բայց չունէինք հրապարակախօսութիւն: Լրագիրը, ամսագիրը լուրեր հաղորդողներ էին, պատահական, անկապ յօդուածների ժողովածու: Այդպէս էր սկսել մեր լրագրութեան հայր Շմաւոնեան քահանան Հնգկաստանի Մադրաս քաղաքում. այդպէս էր պարբերական մամուլը շարունակւում ամեն տեղ: Անցաւ կէս դար: Նոյն Հնգկաստանում, նոյն Մադրաս քաղաքում, ուր ծնունդ էր առաջին հայ պարբերական հրատարակութիւնը, ծնւում է նաև առաջին հայ հրապարակախօսութիւնը:

Դա 1848 թուականին էր, երբ Մադրասում սկսեց հրատարակուել «Բանասէր» տասնօրեայ թերթը: Նրա խմբագիրը, մեր առաջին հրապարակախօսը, Բեօրնէի յիշած ճանճերից մէկն էր, Ս. Պ. Յովհաննէս անունով: Ո՞ւմ է յայտնի այդ անունը: Ո՞վ գիտէ թէ որտեղ է նրա գերեզմանը: Ոչ ոք: Միայն մամուլի պատմութիւնն է *) արձանագրում իր մի անկիւնում թէ

*) Հ. Գալէմբեարեան.—«Պատմ. հայ լրագրութեան», Վիեննա, 1893, եր. 107.

ինչ բացառիկ բախտ էր նրան վիճակուած։ Ապրել հասարակութեան մէջ, խիստ լեզուով ու համարձակ քննադատել նրա պակասութիւնները, տպագրութիւնը դարձնել մի խարազան և հարուածել նրանով անբարեխիղճ հոգեորականներին, ազգային ցեղ ազաներին և ապա տեսնել իր շուրջը փրփրած կատաղութիւն, լսել ատամների կրճտոց, բայց չընկճուել, տեղի չը տալ հասարակութեան արամագրութեան, այլ համարձակ տաջ տանել կսիւր յանուն արդարութեան, յանուն հասարակական և ազգային շահերի—ահա ինչ էր այդ մարդը։ Նա գանգատուում էր որ իր ժամանակի հայ լրագիրները ներկայացնում են հայերին իբրև հրեշտակներ, իբրև մեծագործ հայրենասէրներ և երբէք չեն զանում տպագրական խարազանին յարժանի վատութիւններ։

Եւ հնդկաստանցի համարձակ հրապարակախօսը—Երր և ուր չէ եղել այսպէս—համարում էր մի վերին աստիճանի վընաստիլաբ, քանդաղ, ատելութեան արժանի մարդ։ Եւ նրա դէմ կուում էին։ Բայց ինչպէս։—Բաժանորդներից զրկելով նրա թերթը։ Նա թւում է թէ ինչպէս իւրաքանչիւր մի խիստ հարց դնելիս պակասում էին բաժանորդները։ Շատ բնորոշ են մի քանի դէպքեր։ «Մի ուրիշ անգամ—ասում է Ս. Պ. Յովհաննէսը *)—մեր թերթում տեղիս պատուելի պարոններից մէկի անունը տալիս մոռացանք կցել պատուի տծական՝ քաջափայլ և իմաստնապէր, և ահա դարձեալ մի քանի բաժանորդներ թողին մեզ։ Ելի մի օր, թելագրուած խոհական մտածութիւններից, ասացինք թէ լաւ չէ որ տնտեսների արկղի հոգաբարձուն կորստի է մատնում կամ փոխ է առնում ախտեղից փող, որի պահպանութեան համար է կարգուած, և ահա դարձեալ մի քանի բաժանորդներ թողին մեզ։ Այսպէս են այն պտուղները, որ բերում է ազատ տպագրութեան ծառը Մադրասում, բայց յոյս ունենք որ ուրիշ են այդ պտուղների ուրիշ տեղերում։ Բայց և այնպէս, մեր աշխատանքի ամեն անաջող հետևանքները մեզ չեն զարհուրեցնում. մեր աչքում դրանք խրտուիլակներ են, որոնք վախեցնում են միայն երեխաներին և անբան կենդանիներին։ Իսկ մենք, սրտապնդուած ճշմարտասէր և ուղղադատ բարեկամների քաջալերութիւնից, աներկիւղ կը շարունակենք մեր գործը։»

Խեղճ խմբագիր։ Այդպիսի հերոսական վճռականութիւն յայտարարելուց երեք շաբաթ յետոյ նա հարկադրուած էր դա-

*) «Բանասէրը» հրատարակում էր գրաբար լեզուով, մենք թարգմանում ենք։

գարեցնել իր թերթը: Փող առնող չը կար, կարգացող չը կար...

Տպագրական ազատ, մտրակող խօսքը, սակայն չը մեռաւ: Նա փոխադրուեց Մագրասից դէպի հարաւ-արեւելք, Հնդկական Ովկիանոսում հասարակածի տակ գտնուող մի կղզի, ուր Սինգապուր քաղաքն էր: Այդտեղ միայն 50 հայ կար, որոնցից 30 տղամարդ: Դրանց վրայ յոյս դրած մի ոմն Գալստանեան «Ուսումնասէր» անունով կիսամահայ թերթ է հրատարակում 1849 թուից և հետեւում է Ս. Պ. Յովհաննէսի ուղղութեան, միայն փոքր ինչ չափաւոր լեզուով: 30 հատ բաժանորդով պահուող թերթն էլ վարդերի վրայ չէր հանգստանում. նրանից էլ դժգոհ էին:

Ուր զնար հիմա հայկական ազատ խօսքը: Նա ընկնում է Հնդկական Ովկիանոսը, բայց ոչ թէ խեղճուելու, այլ լողալու համար: Լողում է երեք-չորս տարի, մինչև որ հասնում է Ֆրանսիայի ափերին: 1855-ին, Պարիզում, 30 տարեկան մի հայ երիտասարդ դեռ չը տեսնուած համարձակութեամբ բարձրացնում է տպագրական ազատ խօսքի գրօշակը, գտնում է իր ազգը գարթեցնող մի շատ անհանգիստ, խիստ կծու ճանճ:

Այդ երիտասարդը Ստեփան Ոսկանն էր:

Շատ ինքնատիպ, ուժեղ, յամառ ու տոկուն մի քնաւորութիւն: Հայերիս մէջ այնքան քիչ են ինքնուրոյն, խրոխտ գծերի տէր դէմքեր, մանաւանդ մեր մտաւոր գործունէութեան ասպարէզում, որ Ստեփան Ոսկանը մի խոշոր անձնաւորութիւն է նախ և առաջ իբրև հասարակական գործիչ: Նրա կեանքը այն հազուագիւտ կեանքերից է, որոնց պէտք է ուսումնասիրել մի առանձին հետաքրքրութեամբ, նոյն իսկ հիացմունքով:

Ծնուել է Ստեփան Ոսկանը Ձմիւռնիս քաղաքում, 1825 թուականին: Նա էլ Ձմիւռնիայի հայ գաղութի մտաւոր-հասարակական շարժման արգասիքն էր, նա էլ Մեսրոպեան վարժարանի սանն էր՝ Անդրէաս վարժապետ Փափաղեանի օրով *):

Աւարտում է ուսումը, բայց չէ բաւականանում Ձմիւռնիայի առած կրթութեամբ: Վճռել է անցնել Եւրոպա՝ ուսումը շարունակելու համար: Միջոցներ են հարկաւոր, բայց նա օտարներին չէ դիմում, յոյսը իր վրայ է դրած: Մի քանի տարի դասատուի օգնականի պաշտօն է վարում Մեսրոպեան վարժարանում և կարողանում է իր ոտճիկից խնայել 30 օսմանեան ոսկի (մօտ 270 ռուբլի): Հարուստ ազգականներ ունէր, զրանցից յիշատակութեան արժանի է Մկրտիչ Նուբարեան, որ ապրում էր Եգիպտոսում և մեծ աջողութիւն էր ձեռք բերել՝ Նուբարեանի երկու որդիները՝ Նուբար (յետոյ յայտնի Նուբար փա-

*) Ցե'ս «Մատթէոս Մամուրեան», «Մուրճ» № 4.

չա) և Առաքել Եւրոպայում էին կրթութիւն ստացել և հայերէն չը գիտէին: Եգիպտոս վերադառնալուց առաջ նրանք գնացին Զմիւռնիա և այդտեղ հայերէնի դասեր էին առնում իրանց աղ-գական Ստեփան Ոսկանից: Նուրարը չուսով հետացաւ Զմիւռնիայից և չը կարողացաւ լսու. սովորել իր մայրենի լեզուն, իսկ Առաքելը մնաց և բուականաչափ ծանօթացաւ հայերէնի հետ. իր կողմից նա էլ Ստեփանին էր օգնում՝ ֆրանսերէնի մէջ լաւ վարժուելու համար:

1846 թուին Ոսկանը ուղիորուեց Եւրոպա. Նրա հօրեղ-բայր Կարապետ Ոսկանեանը 20 ոսկի տուեց նրան, այնպէս որ երիտասարդը գրպանում ունէր 50 ոսկի: Միաժամանակ Զմիւռնիայից ճանապարհւում էր և Առաքելը: Նա գնում էր Եգիպտոս և շատ յորգորեց Ստեփանին որ սա իր հետ Եգիպտոս գնայ. բայց երիտասարդը վաղուց ուխտել էր Եւրոպա գնալ և հրա-ժարուեց իր աղգականի առաջարկութիւնն ընդունելուց: Ուսու-նիչը և աշակերտը բաժանուեցան իրարից ու այնուհետև մոռա-յան իրար: «Կարծիքներու տարբերութիւնը թշնամութենէ ա-ւելի կը բաժնէ մարդը—ասում է այս առիթով Ստեփան Ոս-կանը *): Միայնով տարբեր էինք, բնակութիւնով հեռու կ'ապ-րէինք, անոնք (Նուրարն ու Առաքելը) կը բարձրանային և մին-չև փաշտներու աստիճան կ'ելնէին **), մենք կ'իջնէինք մինչև ռամիկներու կարգը, ուր տեսանք, օր մը, ազատութեան սի-րաբայր դէմքը, որ մեր կեանքին երազն է մանկութենէն ի վեր»:

Ի՞նչպէս հասաւ նա այդ օրին:

Պարիզումն է առիադի հայ երիտասարդը, 50 ոսկին մի անոպառ զբամազուովս չէր, և նա հէնց առաջին օրերից նեղու-թեան մէջ է: Այդ ժամանակ Նուրար-բէյը Պարիզում էր գտնւ-ւում մի բարձր պաշտօնով. բայց Ստեփանը չէ դիմում իր այդ աղգականին և նախկին աշակերտին: «Աշխատութեան մէջ զըտ-նուելու ենք, բայց ոչ նուսաստութեան,—ասում է նա.—կեանքը մեղի համար այնքան սիրելի չէ որ մահէն առաջ նուսաստու-թիւնը ընտրենք»։—Մի օր Գ. Տատեանի սենեակում նա ծանօ-թանում է Սէնտ-Բարբիի դպրոցի տեսչի հետ: Սա գնահատում է հայ երիտասարդի ֆրանսիացիացիութիւնը, ուսում առնելու տենչանքը և պաշտօն է գտնում նրա համար իր դպրոցից դուրս:

*) «Երևամութք», Պարիզ, № 5.

**) Առաքել-բէյը եգիպտական կառավարութիւնից բարձր պաշտօն-ներ ստացաւ: Վերջը նա նշանակուեց Խորտոմի նահանգապետ: Սա առա-ջին օրինակն էր որ Օսմանեան պետութեան մէջ մի քրիստոնեայ ստա-նում էր մահմեդական երկիր կառավարելու պաշտօնը: Առաքել-բէյը այդ պաշտօնում էլ վախճանուեց՝ զեռ ծաղիկ հասակից դուրս չեկած:

Մեծ օգնութիւն էր դառն Ոսկանը այդպիսով հնար է գտնում իր սեփական աշխատանքով ապրելու և սկսում է յաճախել Սօրբօն, Կօլլէժ դը-Ֆրանս, դասախօսութիւններ լսելու:

Մահելով Պարիզի ուսանողական շրջանը, Ստեփան Ոսկանը ընկաւ գաղափարական շարժումների այն մեծ հոսանքի մէջ, որից առաջացաւ 1848-ի յեղափոխութիւնը: Ջարմանալի, նշանաւոր ժամանակներ էին, և թիւրքական Արեւելքից եկած երիտասարդը ինքան բան ունէր սովորելու: Նա ընկել էր մի մեծ քուրայի մէջ և այդտեղ պողպատի պէս ձուլւում, բովւում էր նրա բնատրութիւնը:

Ամբողջ արեւմտեան Եւրոպան հրաբուդիսի վրայ էր նստած: Ամեն տեղ զգացւում էր յեղափոխութեան սուր, անխուսափելի անհրաժեշտութիւնը, մի յեղափոխութեան, որ պիտի ջարդ ու փշուր անէր հասարակական և քաղաքական անարդար կարգերը, ասպարէզ հանելով մի ազատ, ինքնագլուխ մարդկութիւն: Ամեն տեղ սպասում էին մի նշանի, որ պիտի դուրս հրաւիրէր ժողովրդի, ազատ մարդկութեան, հաւասարութեան, ազատ խօսքի, ազատ խղճի զինուորներին՝ կռուելու խաւար ու յետադէմ, ստրկացնող ու գժբախտացնող կարգերի դէմ: Եւ որտեղից պիտի տրուէր այդ նշանը, եթէ ոչ Ֆրանսիայից: Պարիզը մինչև այդ երկու յեղափոխութիւն էր ունեցել, այժմ էլ պատրաստւում էր երրորդը սկսելու: Քառասնական թուականների Պարիզը, այն մեծ Պարիզը, ուր սովորում էր Ստեփան Ոսկանը, տեսակ-տեսակ վարդապետութիւնների, քաղաքական կուսակցութիւնների մի եռուն կենտրոն էր: Ամենախիստ պահպանողական, յետադէմ հայեացքներից սկսած մինչև ծայրայեղ ազատամտական, սօցիալիստական և կոմունական վարդապետութիւնները գոյութեան իրաւունք էին ստացել իրար կողքին, գործում էին: Յաղթանակը, սակայն, ազատ, առաջաւոր հասկացողութիւններին էր պատկանում, և Լուի-Ֆիլիպպի կառավարութիւնը, որ յամառութեամբ մերժում էր պետութեան սոսնհրաժեշտ բէֆօրմների հարցը դնել, իր համար մի խորխորատ էր պատրաստում, որից դուրս գալ չը պիտի կարողանար: 1847-ին բոլոր քաղաքական ազատամիտ կուսակցութիւնները, բոլոր այն վարդապետութիւնները, որոնք ժողովրդի, աշխատող դասակարգերի դատն էին պաշտպանում, միացած էին մի մտքի մէջ, — այն, որ պէտք է տապալիլ միապետութիւնը և հանրապետութիւն դնել նրա տեղը:

Ուսանող երիտասարդութիւնը անտարբեր հանդիսատես չէր այս պատրաստութիւնների ժամանակ: Ընդհակառակն, նա տողորուած էր յեղափոխական մտքերով, նրան դաստիարակում

էին ազատ հոգով: Կօլլէժ դը-Ֆրանսի մէջ, ուր յաճախում էր և Ստեփան Ոսկանը, դասախօսութիւններ էին կարդում երեք շաառ նշանաւոր պրօֆէսօրներ. Միշլէ (մեծ անուն ունեցող պատմաբան), Էդգար Քինէ (նոյնպէս նշանաւոր պատմաբան) և Ադամ Միցկևիչ (հռչակաւոր լեհական բանաստեղծ): Նրանց դասախօսութիւններին ներկայ էին լինում ուսանողների ահագին խմբեր: «Այդ դասախօսութիւնները մտցնում էին երիտասարդ, զգայուն մտքերի մէջ սէր դէպի յեղափոխութեան մեծ սկզբունքները, ատելութիւն և արհամարհանք դէպի եկեղեցին և պաշտօնական հասարակութիւնը և խորին համակրանք դէպի հարստահարուող ազգութիւնները և դէպի հասարակութեան զրկուած դասակարգերի տանջանքները» *): Կառավարութիւնը փակեց այդ դասախօսութիւնները և պաշտօնից հեռացրեց յիշեալ պրօֆէսօրներին: Այդ ժամանակ ուսանողութիւնը աղմկալի ցոյցեր և անկարգութիւններ սկսեց: Պատգամաւորների ժողովին ներկայացրած մի հանրագրի մէջ ուսանողութիւնը խնդրում էր մինիստրական կամայականութեան վերջ դնել օրէնքի իշխանութեամբ և վերադարձնել պրօֆէսօրներին, որոնց դասաւանդութիւնը «լուսաւորում է միտքը և բարձրացնում է հոգին»:

Բայց սրանից, ուսանողութիւնն ունէր իր սեփական օրգանը, որ քաղաքական պրօպագանդայի կենտրոն դարձաւ. տեղի էին ունենում և ժողովներ, ուր ուսանողները դատողութիւններ էին անում քաղաքական և փիլիսոփայական հարցերի մասին:

Այսպիսի միջնավայրում էր անց կացնում Ստեփան Ոսկանը իր ուսանողական տարիները: Նա այնպիսի բնաւորութիւններից չէր, որոնք ձեռի համար, օրինաւոր մարդու համբաւից չը զրկուելու համար են մասնակցում մի ընդհանուր շարժման: Հայ երիտասարդը, մի վառվռուն իդէալիստ, հոգով-սրտով էր կպել իր ժամանակի գաղափարներին և ծառայում էր նրանց մեծ սգնորութեամբ ու անկեղծութեամբ: Դեռ ուսանող ժամանակ՝ նա քաղաքական գործիչ էր: Բայց ինչ գոյն ունէր:

Նա չը յարեց ծայրայեղ ռամկավարական, սօցիալիստական կամ կոմունիստական շրջաններին: Սովորելով պաշտել ազատութիւնը, մարդկային նուիրական իրաւունքները, նա մտաւ չափաւոր հանրապետականների կարգը: Եւ որ և է պատահական հոսանք չէր նրան այդտեղ մտցնող, այլ հաստատ կազմակերպուած, խոր համոզմունքը: Նրա բազմաթիւ հակառա-

*) Грегуаръ, Исторія Франціи въ XIX вѣкѣ т. II, кр. 47.

կորգներից մէկը Կ. Պօլսի մի լրագրում, 1859-ին, ասել էր թէ նա կոմունիստ է եղել 1848 թուականին: Պատասխանելով այդ հակառակորդին, Ստեփան Ոսկանը անուանում էր իրան Կանտի աշակերտ և ասում էր թէ այդպիսի մի աշակերտ չէր կարող լինել կոմունիստների մէջ: Կանտը, ինչպէս յայտնի է, Մօնտեսքիէի նման ընդունում էր որ ռամկապետութիւնը տա-
նում է դէպի բռնապետութիւն:

Բայց Ոսկանի քաղաքական դաւանանքների մասին ամենաճիշտ վկայութիւն կարող են տալ նրա գրուածքները: Դատելով այդ գրուածքներից, մենք գալիս ենք այն եզրակացութեան, որ Կօլլէժ դը-Ֆրանսի դասաւանդներից Միշլէն է ամենից շատ ազդել նրա վրայ իր գաղափարներով: Հռչակաւոր պատմաբանը չէր մերժում կրօնը, թէև սաստիկ թշնամի էր կաթոլիկութեան, իբրև մի եկեղեցու, որ հոգու ազատութեան թշնամի է և քաղաքական բռնապետութեան դաշնակից: Այդ անհաշտ թշնամութիւնը Ստեփան Ոսկանի հրապարակախօսութեան մէջ ամենից խիստ աչքի ընկնող յատկութիւններից մէկն է: Նա ատում էր կղերականութիւնը: Բայց դա չէր նշանակում թէ նա ուրանում է քրիստոնէութիւնը: Միշլէն Փրանսիական մեծ յեղափոխութիւնը համարում էր քրիստոնէութիւնից բղխած, նրա հարադատ դաւակ. նա ապացուցանում էր որ քրիստոնէութեան սգին հակառակ չէ մարդկային ազատութեան: Նշանակենք այստեղ և Միշլէի մի գլխաւոր դաւանանքը—ջերմ ժողովրդասիրութիւն: Յեղափոխութեան պատմութեան մէջ նա բարձրացրեց ժողովրդի նշանակութիւնը, ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան անունով սկսած յեղափոխութիւնը ժողովրդի գործ հռչակեց:

Շատ վաղ սկսուեց Ստեփան Ոսկանի գրական գործունէութիւնը, այն ժամանակից, երբ նա դեռ ուսանող էր: Այնքան լաւ էր նա իւրացրել Փրանսիական լեզուն, որ գրական աշխատանքն էլ դարձրեց ապրուստի միջոց: Այլստատակցում էր Փրանսիական լրագիրներին, գլխաւորապէս «Le National»-ին: Այս հանգամանքն էլ շատ նշանաւոր է: Որոշում է Ոսկանի ոչ միայն քաղաքական դաւանանքները, այլ և այն դերը, որ նա կատարեց 1848-ի դէպքերում:

«Le National» լրագիրը հիմնուեց թիէրի ձեռքով: 1830 թուականի յուլիսեան յեղափոխութեան առաջին գործիչներից մէկը այդ լրագիրն էր: Կառավարութեան ընդդիմադիր մի օրգան, հանրապետական գաղափարներով տոգորուած, նա շարունակեց իր դիրքը պահպանել Լուի-Ֆիլիպպի ամբողջ թագաւորութեան ժամանակ, թէև անցաւ ուրիշ գործիչների ձեռքը:

Խորաքանչիւր բողոք ապօրինութեան դէմ, ազատութիւնը և ժողովրդի իրաւունքները պաշտպանող իւրաքանչիւր գրուածք ուղղուած էր այդ լրագրին և տեղ գտնուած նրա էջերում: Այն ժամանակ, երբ Ստեփան Ոսկանը աշխատակցում էր «National»-ին, նրա գլխաւոր խմբագիրն էր Մարրա, որ փետրուարեան յեղափոխութեան գլխաւոր ղեկավարներից մէկը դարձաւ: Լրագրի խմբագրատունը 1847-ին և 1848-ին քաղաքական մի կենտրոն էր, ուր հաւաքուած էին հանրապետական գործիչները, կազմուած էին ժողովրդական ցոյցերի ծրագիրներ, ղեկավարուած էին ապստամբական գործողութիւնները: Դրա պէս ազդեցիկ և առաջնակարգ թերթ չը կար: Ծիշտ է, գոյութիւն ունէր և «*La Réforme*» լրագիրը, որ նոյնպէս նշանաւոր գործիչների աշխատակցութեամբ էր առաջ տարւում, բայց նա աւելի ծայրայեղ արմատական ուղղութիւն ունէր և եթէ գործում էր «National»-ի հետ, պատճառը ընդհանուր նպատակն էր, ամենքի համար պարզ և անհրաժեշտ այն իրողութիւնը, որ պէտք է տապալել միապետութիւնը:

Լինել ամենաազդեցիկ յեղափոխական լրագրի աշխատակից յեղափոխութեան միջոցին, այսինքն այնպիսի ժամանակ, երբ տապալւում էր պետական կարգը, երբ Պարիզի փողոցներում ժողովուրդը և զօրքերը կուում էին իրար դէմ— սրանից աւել էլ ինչ պերճաւիտ փաստ է հարկաւոր ուսանող Ստեփան Ոսկանին ճանաչելու: համար Բայց կայ դրանից աւելի նշանաւոր փաստ էլ: Հայ երիտասարդը չէ բաւականանում գրչով, կողմնակի հանդիսատեսի դիրք չէ բռնում: Այլ վերցնում է գէնքը, ինքն էլ կանգնում է կռուողների շարքում: Պարիզի բարրիկատների վրայ կար արդեօք այդ ժամանակ և մի այլ հայ—մենք չը գիտենք: Փետրուարեան յեղափոխութիւնը սկսողները ուսանողներն էին: Պարիզի ուսանողութեան մէջ այդ ժամանակ, երեւի, կային և այլ հայ ուսանողներ: Բայց մասնակցեցին նրանք յեղափոխութեան և ինչպէս: Կարևորը, ի հարկէ, մասնակցելը չէ: Կարևորը այն զաղափարներն են, որոնց անունով սկսուեց և առաջ տարուեց յեղափոխութիւնը: Միայն: Ստեփան Ոսկանն էր, որ հաւատարիմ մնաց այդ զաղափարներին իր կեանքի ընթացքում, միայն նա էր հայերից, որ իսկապէս մկրտուեց 1848-ի աւազանում և մարդկայնութեան, առաջադիմութեան անձնուէր զինուորներից մէկը մնաց: Մի ուրիշ այդպիսի հայ, որ գուրս եկած լինէր 1848-ի Պարիզից, մենք չենք ճանաչում: Փետրուարի 23-ին, վաղ առաւօտից, ուսանողները սկսեցին ցոյց կառավարութեան դէմ: Լուի-Ֆիլիպպը ոչինչ էր հոստոյեմբեր, 1901.

մարում ապստամբութիւնը, բայց չուտով նա տեսաւ որ զիջողութիւններ անելը անհրաժեշտ է: Միւս օրը յեղափոխութիւնը այնպիսի կերպարանք ընդունեց, որ այլ ևս զիջողութիւններով ոչինչ անել չէր կարելի. թագաւորը հրաժարուեց իր գահից. ժողովուրդը սպառնում էր Տիւլլըրի պալատին: Հրաժարուելը բաւական չէր, Լուի-Ֆիլիպը իր ընտանիքով փախաւ Պարիզից՝ հազիւ գտած երկու կառքի մէջ: Դեռ նոր էր դատարկուել թագաւորական պալատը, երբ ժողովրդի ահագին բազմութիւնը, կապիտան Դիւ-Նուայէի առաջնորդութեամբ, մտնում է այնտեղ: Ոչինչ դիմադրութիւն չը կայ: Ամբոխը մտնում է զահական դահլիճը, իր ոտքերի տակ է տալիս գահը և յայտարարում է հանրապետութիւն: Այդ բազմութեան մէջ էր և Ստեփան Ոսկանը: Բազմութիւնը վերցնում է թագաւորական գահը, հանդիսաւոր գնացքով տանում է Բաստիյի հրապարակը և այնտեղ այրում է նրան բարձրաձայն աղաղակներով և փողեր հնչեցնելով: Ֆրանսիայի ճակատագիրը յանձնուեց ժամանակաւոր կառավարութեան, որի անդամների յուշակը կազմուած էր «National»-ի խմբագրութեան մէջ:

Ստեփան Ոսկանը երկար չէ նկարագրում իր մասնակցութիւնը փետրուարեան յեղափոխութեան մէջ. նա բաւականաչափ է հետեւեալով. «Փետրուարեան ազատութեան առաջին որոտումը մեր վրայէն արեւելեան գերութեան մշուշը փարսաւ, մեր սիրտը բորբոքեց հրաբուխ սաստկութեամբ, անհուն աշխոյժ մը աուաւ մեզ և գրեթէ ակամայ ասպարէզի մէջ նետեց: Այո, Լուի-Ֆիլիպին դէմ ապստամբողներու հետ էինք, այո, ըրինք ազատութեան համար ինչ որ ամեն մարդու պարտքն է ընել, և դէն ի ձեռին Թիւլլըրի մտնելու պատիւը ունեցանք»:

Այսքանով էլ վերջանում է Ստեփան Ոսկանի մասնակցութիւնը փետրուարեան յեղափոխութեան մէջ: Չափաւոր հանրապետական կուսակցութիւնը, որին պատկանում էր նա և որ այդ յեղափոխութեամբ հասել էր իր նպատակին, այլ ևս անելիք չունէր. նրան մնում էր խաղաղ կերպով կառավարել երկիրը և իրագործել սպասուող Բէֆօրմները: Բայց փետրուարեան յեղափոխութիւնը բաւարարութիւն չը տուեց սօցիալիստներին. նրանք ուզում էին որ հաստատուի սօցիալական հանրապետութիւն: Բանուոր դասակարգի գլուխն անցնելով, նրանք սկսեցին յոյցեր անել փետրուարեան հանրապետութեան դէմ և այդ յոյցերը նոյն 1848-ի յունիսին նոր, աւելի ահաւոր արիւնալից ընդհարումներ առաջացրին Պարիզում: Կոխը յամառ էր, տեւեց երեք օր. գեներալ Կալֆենեակ հազիւ կարողացաւ ճնշել ապստամբութիւնը զօրքերի ձեռքով: Սօցիալիզմը ահ ու սարսափ

էր պատճառում բուրժուա դասակարգին և ֆրանսիացիները միաբանուեցան՝ նրա դէմ կռուելու համար: Ձեռք առնուեցան մի շարք դաժան միջոցներ, ազատութեան անունով առաջ եկած հանրապետական կառավարութիւնն սկսեց սքանդել, բանտարկել, մահուան պատժի ենթարկել հարիւրաւոր ու հազարաւոր բանուորներին ու նրանց զեկավարներին, մինչև որ բռնութիւնը վերջ գրեց ամեն մի դիմադրութեան:

Ստեփան Ոսկանը, ի հարկէ, չը կար այդ ապստամբութեան մէջ: «Երբէք, բնաւ երբէք—ասում է նա—յետագայ քաղաքական կռիւներու մէջ մասն չունէինք: Ընդհակառակն, մեր համոզումն էր որ նորէն ապստամբի՝ ազատութիւնը վտանգի մէջ դնել էր. դէպքերը յայտնեցին որ իրաւունք ունէինք... Տրտմալի սիրտով և արտասուալի աչերով հանդիսատես գտնուեցանք սոսկալի մարտերու, զորս հայ Թորոններու *) պէս մարդիկ պրգոներ էին նորածին ազատութիւնը խեղդելու համար: Կարելի է թէ, օր մը, այս դէպքերու պատմութիւնը գրենք և այն տուն Պօլսի հայերը կրնան համոզուել որ Հայկայ ճշմարիտ թոռ մը ազատութեան սէրը վատութեամբ ի գործ չլնէր, բայց հիմակընէ կը համարձակինք ըսելու և հաստատելու որ ոչ Քալանկաքի և ոչ ապստամբներու կողմը բռնելու կամք ունէինք: Աւելի անկեղծօրէն ըսենք, եթէ հարկ ըլլար այս երկու կողմին մէջ ընտրել՝ Քալանկաքի քան թէ ապստամբներու դրօշին ներքեւ դիմելու միտում կը զգայինք»...

Յունիսեան օրերից յետոյ պատգամաւորների ժողովը սկսեց մշակել հանրապետական սահմանադրութիւն. գեներալ Կալանկաքի հանրապետութեան նախագահն էր. «National»-ի խումբը շարունակում էր զխաւոր դերը կատարել: Բայց երբ տարուայ վերջին ընդունուեց սահմանադրութիւնը, որի զօրութեամբ նախագահը պիտի ընտրուէր ժողովրդի քուէներով, Ֆրանսիան Լուի-Նապօլէօնին տուեց իր ձայնը և Կալանկաքի իր տեղը տուեց նոր նախագահին: 1849 թուականի յունիսին նոր անկարգութիւններ սկսուեցին Պարիզում և դրանց պատճառը հետեւեալն էր: 1848-ին Հոռմում յեղափոխութիւն տեղի ունեցաւ. պապը փախաւ Հռոմից և այնտեղ պապի աշխարհական իշխանութեան տեղ իտալացի հայրենասէրների ձեռքով կազմուեց հանրապետութիւն: Պապը դիմեց կաթոլիկ աշխարհին, խնդրելով օգնութիւն, որ նորից ձեռք բերէ իր իշխանութիւնը: Լուի-

*) Այս անունով մէկը Կ. Պօլսի «Մասիսի» մէջ պատմել էր Ոսկանի կեանքը, որ, նրա կարծիքով, ամօթալի էր ազգի համար: Ոսկանը պատասխանեց նրան իր «Արեւմուտքում»:

Նապօլէօնը մի զօրաբաժին ուղարկեց Իտալիա: Պէտք է ասել որ Ֆրանսիական հանրապետութիւնը դեռ 1848-ին էր յայտարարել թէ ինքը ցանկանում է Իտալիայի ազատութիւնը: Իտալիա զօրք ուղարկելիս՝ Լուի-Նապօլէօնի մինիստրները յայտարարեցին թէ Ֆրանսիան միտք չունի ոչնչացնելու Հռոմի հանրապետութիւնը: Ֆրանսիական զօրքը, գրաւելով մի քանի քաղաքներ, հասաւ Հռոմին, բայց այնտեղ հանդիպեց զիմադրութեան: Յայտնի դարձաւ որ Ֆրանսիացիները հանրապետութիւնը պահպանելու համար չէին վնասեցել, այլ պապի իշխանութիւնը վերահաստատելու համար: Լուի-Նապօլէօն կարգադրեց որ զօրքերը պաշարեն Հռոմը: Այսպիսով դուրս էր գալիս որ հանրապետութիւնը ուզում էր ոչնչացնել մի այլ հանրապետութիւն և նրա տեղ վերականգնել կղերական միապետութիւն: Պատգամաւորների ժողովում մերիկ է բարձրանում: Ընդգրկմադիր կուսակցութիւնը պահանջում է դատի ենթարկել նախագահին և մինիստրներին, որովհետեւ սրանք ոտնակոխ են արել սահմանադրութիւնը: Այդ առաջարկութիւնը մերժւում է. և այդ ժամանակ բողոքող մասը յայտարարում է թէ սահմանադրութիւնը գէնքի ոյժով կը պաշտպանեն:

Յունիսի 13-ին սկսւում է մեծ բաղմութեան ցոյցը: Բայց գէներալ Շանգարնիէ, վաղօրօք պատրաստութիւններ տեսած լինելով, զօրք է հանում ցոյց անողների դէմ և ցրւում է նրանց: Յոյշին մասնակցում էր և Ստեփան Ոսկանը, որ այդ ժամանակ դեռ ուսանող էր: Ահա ինչպէս է բաղատրում նա այդ դէպքը.

«Հռոմայի դէմ պատերազմին ժամանակը՝ բաղմութիւն ուսանողք, Սահմանադիր ժողովին աղերսագիր մը տալու որոշում ըրին: Այս աղերսագիրը համեստ բողոք մը կը պարունակէր Ֆրանսիայի տէրութեան արտաքին քաղաքատրութեան դէմ: Ուսանողք, միազունդ ժողվելով և վարժատուններու դրօշը առնելով, սկսան պուլվարներու վրայէն դէպի ազգային ժողովը ուղղիլ: Իրանց նպատակը ոչ ապստամբիլ էր և ո՛չ կոտորիլ, և մէջերնէն մէկը փոքրիկ դէնք մ'անգամ չունէր: Երօնական կողմը այս բողոքի շարժումը զրպարտելով և ազգային զօրքը անկէ խտրուելով, սկսաւ ուսանողներու դէմ դնել և պզտի ընդդիմութիւնէ մը ետեւ ցրուեց զանոնք: Աղերսագիր տանող բաղմութեան զրօշակիրը մեր բարեկամներէն մէկն էր, և որովհետեւ իրեն քով կը գտնուէինք, վայրկեան մը դրօշը մեր ձեռք անցաւ շիրթին մէջ և կարող եղանք զայն պաշտպանելու իբրեւ ուսանող և ոչ իբրեւ մարտիկ ապստամբ»:

Հետաքրքրական է մանաւանդ այն, թէ ինչ էր տեսնում Ստեփան Ոսկանը իտալացիների համար սարքած այդ ցոյցի մէջ: Պատմելով իր ցոյց տուած «թեթիւ արիւնթիւնը, որ հազիւ թէ իշխու արժանի է», նա շարունակում է.

«Ճաստարի է անցած») այս փոքր ղեկավարն վրայ և դեռ այսօր զըզ-
ջում մը չենք զգար մեր ըրածէն: Ո՛ր և գտնուինք, ազատութեան հետ
սխալ մնանք և բռնութիւնը չպիտի սիրենք երբէք թէ՛ հայերուն և թէ՛
օտարներուն մէջ: Մեզի համար ազատութենէն զուրա լուսաւորութիւն չկայ:
Այս մեր չյանցանքը կը խոտոտվանինք, մեղա՛յ չենք ըսեր մէկու մ'առջև:
Մեղայ ըսելու ատկորութիւն չունինք, վասն զի ազատութիւնը ուրանալու
փափագ մը չենք զգար... Զնալիս կը սիրէինք, միշտ սիրեք ենք. Նոա-
լիս իր արիննաթաթաւ ճակտով միշտ երեւած է մեզ իբրեւ կենդանի պատ-
կեր նկուն ազգերու: Այս աչիւր և ազատութեան աւինը զմեզ թշուառու-
թեան մէջ զլորեցին: Եթէ այս թշուառութիւնը նախատինք է, հայո՛ւ մը
րելնէ չպիտի վիժէր այն և մեր անունը աղտոտէր, վասն զի Հայաստանի
աւերաւորեաց վիճակը իր զաւակներու վրայ պարտք կը դնէ թշուառ ժողո-
վուրդներու կարեկցիլ: Նկուն ազգերը միւս ազգերու համակրութեամբ
միայն կրնան վերականգնիլ: Ո՛վ զիտէ, զուցէ օր մը Նոալիսի զաւակ մը
մեր գերութեան և թշուառութեան ղէմ բողոքէ, ինչպէս մենք իրան հա-
մար բողոքելու զօրութիւնը ունեցանք...

«Ճաստարի անցան և հայերը փոխանակ ուրիշ ազգերը օրինակ
առնելու և մեր փոքր բազմ լարատե ջանքը հասկնալու, սկսան խորթալ
և մեր ըսածները երազ սեպել:»

Այս աչիւր ղեկի ազատութիւն որոնող Նոալիսի բաւական
թանգ նստեց Ստեփան Ոսկանին: Իբրեւ յունիսի 13-ի ցոյցին
մասնակցող նա բանտարկուեց և 54 օր մնաց բանտում: Բայց
սա նրա ուսանողական կեանքի վերջին արկածն էր: Այնուհե-
տե նա այլ ևս չէ մասնակցում քաղաքական կռիւներին: Վեր-
ջացնելով ուսումը «Կիտութեան և ցրականութեան ուսումնա-
ւարտի» վկայագրով, նա մնում է Պարիզում և, ըստ երևոյթին,
իր ապրուստը հայթայթում է գրական աշխատանքով: 1851
թուի դեկտեմբերի 2-ին Լուի-Նապօլէոնը կատարում է պետա-
կան յեղափոխութիւն, որ իր համար կայսերական զահ պիտի
պատրաստէր: Հանրապետութեան նուիրուած մարդիկ փորձում
են ղէկքով պաշտպանել ազատութիւնը, դիմադրում են Նապո-
լէոնին: Բայց ամեն պատրաստութիւն տեսնուած է. աղդեցիկ
և յայտնի հանրապետականները բանտարկուած են, լրագիրները,
դրանց հետ և «National»-ը, փակուած են: Զօրքերը արագ ճնշում
են ապստամբութիւնը, Պարիզի փողոցները նորից ներկուած են
արիւնով: Ստեփան Ոսկանը այլ ևս հանրապետական կուռուղնե-
րի չարքում չէ: «1852 թուականին Պարիզ էինք և մեր գործե-
րու կը զբաղէինք», ասում է նա:

Բայց երկար չէ մնում Պարիզում: Ոսկանը այնպիսի հայե-
րից չէր, որոնք օտարների մէջ փառք ու պատիւ գտնելու հա-
մար ուրանում են իրանց ազգութիւնը: Մի ուրիշը, Պարիզի

*) Զը պէտք է մոռանալ որ Ոսկանը վերեւ յիշած Թորոսի ղէմ գրած
պատասխանի մէջ է պատմում իր կեանքի ղեկքերը:

լրագրութեան մէջ այնպիսի դիմք բռնելով, կ'աշխատէր ֆրանսիացի ձեռնարկ Բայց Ոսկանը ոչ մի տեղ չէր թագցնում իր հայութիւնը, թէ է. ֆրանսիացիները չէին հաւատում թէ նա հայ է, այնքան նա լու իւրացրել էր ֆրանսիական գաղափարներն ու լեզուն:

Հայութիւն չը թագցնելը, սակայն, մի մեծ պարծանք չէր: Ոսկանը զգում էր որ ինքը, իբրեւ մի վառվառ հայրենասէր, պարտք ունի կատարելու զէպի իր հայրենիքը և ուղեորւում է այնտեղ: 1858-ին մենք նրան տեսնում ենք Կ. Պօլսում: Այդտեղ նա հրատարակում է իր առաջին հայերէն աշխատութիւնը—մի բրօշուր, որի անունն է «Ներքին Համոզումն»:

Ի՞նչ էր այդ գրութեան պատճառը: Վիեննայի Մխիթարեանները հրատարակում էին «Ներպա» անունով մի շաբաթաթերթ, որ համարեա միմիայն քաղաքական լուրեր էր պարունակում: Այն ժամանակները կրօնական վէճերը Կ. Պօլսում զբաղեցնում էին ամենքին: Վիեննայի Մխիթարեաններն էլ իրանց շաբաթաթերթում մի մի հրապարակ էին նետում և կաթողիկոսական ջատագով հանդիսանալով, անուանում էին լուսաւորչական հայերին «հերետիկոս», «հերձուածող»: Ահա այդպիսի մի յօդուածի դէմ էր ուղղած «Ներքին Համոզումն»: Ոսկանը, ինչպէս բնական էր 1848-ի յեղափոխութեան մէջ մկրտուած մի հրապարակախօսին, շատ խիստ կերպով յարձակում էր պապականութեան վրայ, ցոյց էր տալիս որ նա ազատութեան թշնամի է, որ կաթողիկ եկեղեցին չէ կարող միութիւն և եղբայրութիւն ստեղծել աշխարհի վրայ, քանի որ նրա գործընկերներն են եղել ինքզինգիտիան, Բարթուղիմէոսեան գիշերը, մեծ և ազատախօս հեղինակների գործերն արգելելը և այլ այսպիսի բռնութիւններ:

Կրօնական առելութեան տեսակէտից չէր Ստեփան Ոսկանը այդքան անխնայ հարուածում կաթողիկոսութիւնը և Մխիթարեաններին: Բրօշուրի մէջ նա երևան է գալիս իբրեւ մարդկային ազատութեան, ազգերի եղբայրակցութեան երկրպագու: Այդպիսի մարդը չէր կարող հաւատալ Մխիթարեանների այն պարծենկոտ վկայութեան, թէ պապականութիւնը պիտի միայնէ բոլոր ազգերը իր հովանու տակ: Այդպիսի միութիւն չէր կարող կայանալ: Ստեփան Ոսկանը ցոյց էր տալիս թէ Հռոմի պապը այդ իսկ ժամանակ Իտալիայում ոչինչ հեղինակութիւն չունի և պահւում է իր աթոռի վրայ ֆրանսիական զօրքերի օգնութեամբ:

Կ. Պօլսից Զմիւռնիա դնալով, Ոսկանը մի բրօշուր էլ այդտեղ է հրատարակում, այս անգամ Վենետիկի «Բազմապէ-

պի» դէմ՝ «Հռոմէական Պարգև» վերնագրով: Նրա գրիչը սուր սլաքի պէս էր դործում: Բայց զրական ուրիշ աշխատանքներ չարտադրեց Զմիւռնիայում, եթէ չը հաշուենք Էօփէն Սիււի յայտնի «Թափառական Հրէայ» վէպի թարգմանութիւնը, որ կիսատ մնաց, որովհետեւ հրատարակիչը, հակառակ պայմանի, չը կամեցաւ անփոփոխ հրատարակել թարգմանութիւնը, պարտք համարեց սրբագրութիւններ անել և աղաւաղել լեզուն: Ոսկանը հրաժարուեց թարգմանութիւնը շարունակելուց:

Եւ ուրիշ մի ասպարէզ չը գտաւ նա հայրենի երկրում: Նրա պէս երիտասարդների համար տեղ չունէր այն ժամանակուայ հայկական կեանքը: Աղաւս դադարներով տոգորուած, աղատութեան համար կոխ մղած մի երիտասարդ կարող էր գտնուել Թիւրքիայի պէս մի տեղում, ուր արիւնք էր բռնակալութիւնը, ուր «1789 անմեռ թուականին սկզբունքը ընդունիլը, մարդկային վեհ տեսիլներու սիրահարիլը, ազգութիւններու իրաւունքը գովելը և կրօնամոլութեան կռուքը ուրանալը հոգւով և սրտով» նախատինք էր և ամօթ, ինչպէս ասում է ինքը Ոսկանը:

Եւ թողնելով հայրենիքը, նա 1854-ին նորից վերագտնում է Պարիզ՝ այս անգամ իրան նուիրելու հայկական հրապարակախօսութեան:

Պարիզում արդէն կար հայերէն գրականութիւն, բայց մանաւանդ չքեղ ու հարուստ տպարանական գործ: Մուրադեան վարժարանում պաշտօն վարող երեք Միլիթարեան վարդապետներ (Սարգիս Թէոդորեան, Գաբրիէլ Այվազեան, Ամբրոսիոս Գալֆայեան) սկսում են գրքեր հրատարակել: Նշանաւորը նրանց այդ գրականութիւնը չէ, այլ այն ահագին յեղափոխութիւնը, որ նրանք մայրին հայկական տպագրութեան մէջ:

Պարիզում էր այդ ժամանակ և մի եռանդոտ, հասկացող թիւրքահայ, Ճանիկ Արամեան: Նա միանում է երեք վարդապետների հետ. մէջ տեղ են բերում գրամական միջոցներ, ճաշակ, գեղագիտութիւն, գծագրական ընդունակութիւն, օգնութեան են հրաւիրում այն յարմարութիւնները, որ տալիս էր Ֆրանսիայի մայրաքաղաքը. այդպիսով խումբը բազմատեսակ նոր ու շատ սիրուն տառերի մի մեծ ճոխութիւն է պատրաստում: Մինչև այն ոչ ոք այդպիսի ճաշակ չէր ցոյց տուել, ինչպէս որ մինչև այժմ ոչ ոք չէ կարողացել յիսունական թուականների այդ գեղեցկութիւնը գերազանցել:

Թիւում ենք այս հանգամանքը այն պատճառով, որ Պարիզը յիսունական և վաթսունական թուականներին, չնորհիւ հէնց

այս տպարանական հարստութեան, առաջնակարգ տեղ է գրաւում. Ճանիկ Արամեանի տպարանը լռեցնել է տալիս նոյն իսկ վեհապետի և վիեննայի տպարանները: Ոչ ոք նրա պէս չքեղ հրատարակութիւններ չէր կարողանում լոյս հանել: Միմեանց ետեից հայերէն գրքեր են լոյս տեսնում Պարիզում և իրանց սիրուն արտաքինով հայի գրասեղանի զարդ դառնում:

Գիրք գրողներն ու հրատարակողները մեծ մասամբ յիշեալ երեք վարդապետներն են, մանաւանդ Այվազեան և Գալֆայեան: 1855-ին նրանք հարկադրուած են լինում հեռանալ ոչ միայն Մուրադեան վարժարանից, ոչ միայն Մխիթարեան միաբանութիւնից, այլ և կաթողիկ եկեղեցուց: Եւ սկսում են աւելի ևս հռահդով պարապել գրականութեամբ: Յարմարութիւններ կային. ամենից գլխաւորը, ամենից մեծը Արամեանի տպարանն էր: Նոյն այդ յարմարութիւնից օգտուում է և Ստեփան Ոսկանը:

1855-ի յունուարից Այվազեան վարդապետը իր ընկերակիցների հետ սկսեց հրատարակել «Մասեայ Աղաւնի» ամսագիրը: Դա առաջին հայերէն պարբերական հրատարակութիւնն էր Պարիզում, մի անգոյն ամսագիր, կղերական ուղղութեամբ, բայց պատկերազարդ ու գեղեցիկ հրատարակութիւն: Անցնում է ուղիղ կէս տարի և յուլիսի 1-ից նոյն Արամեանի տպարանում, ուր տպագրւում էր քնած, ինքնագոհ, բարոյական խրատներ, «հարկաւոր տեղեկութիւնք և մարդկային կենաց և հանգըստեան դիւրութիւն տուող արհեստք ու ճարտարութիւնք» տպագրող «Մասեայ Աղաւնին», սկսում է հրատարակուել «Արեւելք» անունով կիսամսեայ թերթը, բոլորովին հակառակ ուղղութեամբ, տարբեր սգով և խառնուածքով:

Պարիզում ապրող վաճառական հայերից մի փոքրիկ հրատարակչական ընկերութիւն էր կազմուել այդ գործը առաջ տանելու համար: Ստեփան Ոսկանը, այդ հիմնադիրներին թողնելով հրատարակութեան տնտեսական հոգսերը, ստանձնում է խմբագրի պաշտօնը: Այսպիսի խօսքերով էր նա հրապարակ գալիս.

«Յոռւամբ թէ ազգը քսան տարիէ ի վեր իմաստակներու սուտումուտ գովեստը և անամօթ շողորորթութիւնը լսելէ ետեւ, քիչ մ'ալ ճշմարիտ քննութեան և անշահասէր խրատի աւկանջ պիտի դնէ, և իր էական պակասութիւնները պիտի շտկէ... «Արեւելք» այն աստիճան մեղրբերան չը պիտի ըլլայ, և քանի մը մարդերու հաճելի ըլլալու համար ճշմարտութեան երեսը չը պիտի թքնէ կամ մրոտէ» *):

*) «Պատմ. Հայ Լրագր.», հր. 156: Շատ ցաւում ենք, որ «Արեւելք»

Մադրասի «Բանասէրը» հրատարակում էր դրաբար լեզուով, շատ էր հեռու հայութիւնից, այդպէս էր և Սինգապուրի «Ռուսումնասէրը», որ, ինչպէս տեսանք, 32 հայի համար էր հրատարակում Հնդկական կղզիներից մէկի վրայ: Այդ պարբերական հրատարակութիւնները ազատախօս մամուլի առաջին թոյլ նշաններն էին, կարապետները, որոնք ցոյց էին տալիս միայն թէ պէտք է պայ, պէտք է ծնուի ազատ ու համարձակ խօսքը: Ստեփան Ոսկանն է այդ խօսքի իսկական նախահայրը մեզանում. դա մի տաղանդաւոր հրապարակախօս էր, մինչև հոգու խորքը առողորւած եւրոպական առաջադէմ մտքերով: Թոյնով ու մտրակով զինուած ճշմարտախօսութիւնը նա սկսում էր Պարիզում. դարձեալ հեռու էր այս գաղթավայրը հայութիւնից, բայց ուրիշ կերպ չէր էլ կարող լինել: Մնում էր այն հանգամանքը, որ նա չէր ծնուել ու մեծացել Պարիզում, այլ եկել էր Զմիւռնիայից, ճանաչում էր Կ. Պօլիսը, հետևաբար շատ լաւ տեղեակ էր հայկական կեանքին: Պարիզը բաւական մօտիկ էր այդ տեղերին, յարմար հաղորդակցութեան պատճառով. և «Արեւելքը» Պարիզի հայ գաղթականութեան մէջ չէր ամփոփուած, այլ տարածւում էր Կ. Պօլսում և Զմիւռնիայում: Այնպէս որ մեր կրակոտ խմբուիրը կարող էր ազդել հայութեան մի նշանաւոր մասի վրայ:

Եւ նա ազդում էր:

«Արեւելքը» սկսեց հրատարակուել 1855-ի յուլիսի 1-ից: Մի չը տեսնուած երևոյթ էր դա: Պառաւական գրոյցների, հոգեշահ խրատների, ազգասիրական ինքնագոհ խոհերի սովորած հայը տեսնում է իր առջև սրի պէս կտրող խօսք, ժամանակակից հարցերի անողորմ, խիստ, նոյն իսկ անսանձ քննադատութիւն: Աջ ու ձախ շտաշում է Ոսկանի մտրակը, հարուածում է մինչև այդ անսխալական համարուած հասկացողութիւնները, ազգային կուռքերը: Այդ հարուածները տակն ու վրայ են առնում հայկական ճահիճը, առաջ են բերում ատամների կրճատոց, սաստիկ թշնամութիւն: Ազատ խօսքը դեռ թոյլ էր, մեր հոգի վրայ չէր հաստատուել. և «Արեւելքը» կէս տարուց աւել գոյութիւն պահպանել չը կարողացաւ:

Ինչպէս տեղի ունեցաւ այդ առաջին կործանումը:

Պարիզի հայ գաղութը հէնց այդ ժամանակ մի քանի խո-

չը կարողացանք գտնել: Զեռքի տակ ունենք միայն 1859-ի «Արեւմտաքը» ամբողջովին. դա է Ոսկանի հրապարակախօսական գործունէութեան մասին մեզ հասկացողութիւն տուողը և մի և նոյն ժամանակ շատ տեղեկութիւններ է հաղորդում իր խմբագրի մասին:

չոր հարցեր ունէր, որոնք ընդհանուր ազգային տեսակէտից էլ նշանաւոր էին: Յիշենք մի երկու բան:

1855-ին էր, որ Վենետիկի Միսիթարեան արքահայր Հիւրմիւզի կարգադրութեամբ Մուրադեան վարժարանից վոնդուեց ծերունի Սարգիս վարդապետ Թէոդորեանը: Վոնդուեց նա ամենակոպիտ կերպով—Փրանսիական ոստիկանների միջոցով: Խուլ պաշքարը, որ վաղուց սկսուած էր այդ դպրոցի շուրջը, ստացաւ սուր բնակութիւն: Այլ ևս ծածկելու, լռելու հնար չը կար: Հասարակութեան առաջ հանուեցին այն բոլոր պատճառները, որոնք վերջ ի վերջոյ մի այդպիսի խոչար սկանդալի էին հասցրել—վարժարանի տեսչին ոստիկանական զինուորներէ ընդ դուրս անելը: Ի՞նչ էին այդ պատճառները:

Սարգիս վարդապետ Թէոդորեանը այն մարդն էր, որ երկու անգամ գնացել էր Հնդկաստան, երկար աշխատել էր, շարժարուել և մեծամեծ նեղութիւններով ստացել էր Սամուէլ Մուրադի ժառանգներից մօտ 2 միլիօն Փրանկ, որ կտակուած էր մի դպրոց բաց անելու համար: Բայուեց դպրոցը—Մուրադեան վարժարանը, Սարգիս վարդապետը, որին ժամանակակիցները ամենայն իրաւունքով անուանում էին երկրորդ հիմնադիր, ծառայում էր դպրոցին տեսչի պաշտօնով: Բայց նա պաշքար ունէր Վենետիկի Միսիթարեանների դէմ: Հօտմը իր իշխանութիւնը տարածել էր և Մուրադեան վարժարանի վրայ, պահանջում էր որ նա լինի մի կաթողիկ դպրոց, ուր «հերձուածողները» տեղ չը պիտի ունենան: Եւ Միսիթարեան միաբանութիւնը հպատակուեց այդ հրամանին:

Ահա այդ բանի դէմ էր բողոքում Թէոդորեան վարդապետը: Սամուէլ Մուրադը միայն կաթողիկներին չէր կտակել այդ ահադին գումարը, այլ իր կտակի մէջ պարզ կերպով ասել էր թէ դպրոցը պիտի բացուի ամբողջ ազգի չքաւոր, գլխաւորապէս որք երեխաների համար: Թէոդորեանը պահանջում էր որ կատարուի կտակողի կամքը, նա ցոյց էր տալիս որ ազգի որք երեխաները չեն կրթւում դպրոցում, այլ մեծ մասամբ Վենետիկի վարդապետների ազգականները և Պօլսի ազգեցիկ պղանների զաւակները: Բայց Միսիթարեանները ոչ միայն քաջութիւն չունեցան Հօտմի ստնձգութիւններին դիմադրելու, այլ և հարկադրուած եղան, իրանց վրայ բարդած մեղադրանքները ոչնչացնելու համար, հրապարակով, պաշտօնական կերպով յայտարարել հայ լուսաւորչականներին հերձուածողներ, որոնց հետ չը պէտք է յարաբերութիւն ունենալ: Թէոդորեանը, ինչպէս նաև Գարրիէլ վարդապետ Այվազեանը, սաստիկ բողոքեցին և այս բանի դէմ: Վերջ ի վերջոյ բանը այն տեղին հասաւ, որ

Այվազեանը իր կամքով հեռացաւ Մխիթարեան միաբանութիւնից, իսկ Սարգիս վարդապետին, Մուրադեան վարժարանի աշն երախտաւորին, ոստիկաններով վռնգեցին դպրոցից։

Այս բոլորը Ստեփան Ոսկանի համար լաւ առիթ էր իր անխնայ գրիչը սրելու Մխիթարեանների գէմ։ Առանց այդ էլ նա տեսնում էր թէ կղերական արաքները սրպիսի դժբախտութիւններ են բերում հայերի գլխին, տեսնում էր թէ սրպիսի մեծ աղէտներ են բաց անում կրօնական վէճերն ու հալածանքները։ Նա փափազում էր տեսնել հայերի մէջ աշխարհական, ազատ կրթութիւն, եւրոպական մտքով ու գաղափարով։ Եւ, ի հարկէ, չէր կարող հաշտուել այն բանի հետ, որ 2 միլիօն ֆրանկի զուճարը Հռոմի կամակատար կաթոլիկ վարդապետների ձեռքին մնայ մի այնպիսի ժամանակ, երբ հայ ազգը այնքան կարօտ էր ճշմարիտ կրթութեան։

Ու նա սկսում է իր յարձակումները, իր անխնայ, զարմանալի համարձակ մերկայումները։ Այդքան կծու ու խիստ լեզուն ուղղակի սարսափ էր պատճառում Ոսկանը հարուստ ծում էր կղերականութիւնը, չէր քաշւում ազգի «իշխաններից», այսինքն ազգեցիկ ազաններից ու էֆէնդիներից։ Ուր որ պահանջում էր ճշմարտութիւն, արդարութեան դատը, այնտեղ նա միանգամայն անողոք էր։ Եւ փորձեցին նրան սանձել, զսպել։ Յայտնի, մեծ դիրքով մարդիկ ձեռք առան այդ բանը։ Դրանց մէջ յիշատակութեան արժանի է Յակոբ Կոճիկեան անունով պօլսեցի հայը, որ Կ. Պօլսում վայելում էր զիրտուն, զարգացած մարդու համբաւ և 1855-ին գտնւում էր Պարիզում, ուր, ինչպէս երևում է, ծառայում էր օսմանեան դեսպանատան մէջ։ Այս էֆէնդին նամակով դիմեց Ոսկանին, բարեկամաբար (թէև Ոսկանը նրան չէր ճանաչում) խնդրում էր թողնել գրելու այդ ձեռը «Ձեր լրագրոյ բերանը փոխեցէք», ասում էր նա և աւելացնում թէ իր հետ այդպէս են կարծում և շատերը։

Բայց Ոսկանը յոյց տուեց որ Կոճիկեանից աւելի բարձր էֆէնդիներն էլ չեն կարող այդպիսի ազդարարութիւններ անել իրան։ Պարիզում էր գտնւում և Պօղոս-բէյ Տատեան, արքունի վառօդապետը, այսինքն օսմանեան վառօդարանի գլխաւորը, հարուստ ու մեծաշուք մի ընտանիքի զաւակ։ Այնքան կարևոր էր նրա դիրքը, վայելած պատիւները, որ Նապօլէօն երրորդը ունկնդրութիւն չնորհեց նրան և երկար խօսակցութիւն ունեցաւ նրա հետ օսմանեան գործերի մասին։

Օգուտ քաղելով այդքան բարձրատիճան մի հայի ներկայութիւնից, Գաբրիէլ վարդապետ Այվազեանը փորձեց նրան գործիք դարձնել իր մի նպատակին հասնելու համար։ Նա,

Սարգիս վարդապետ Թէոդորեանը և Ամբրոսիոս վարդապետ Գալֆայեանը թէև հեռացել էին Միթրարեան միաբանութիւնից, բայց դեռ կաթողիկէին և վճռել էին մնալ Պարիզում իբրև պարզ կաթողիկէ քահանաներ և բաց անել հայկական մի նոր դպրոց: Սակայն Հիւրմիւզ արքան հալածում էր նրանց և անդադար գրում էր Պարիզի արքեպիսկոպոսին, Հռոմի պապին, թէ գրանց չը պէտք է թոյլ տալ մնալ Պարիզում: Ի հարկէ, Պարիզի արքեպիսկոպոսին յայտնուած էին և այն պատճառները, որոնք հարկադրել էին հեռացնել այդ երեք վարդապետներին միաբանութիւնից: Ամենագլխաւոր պատճառն այն էր, որ նրանք պաշտպանում էին հայոց հերձուածող եկեղեցին: Դա մի շատ ծանր մեղք էր կաթողիկէ եկեղեցու պաշտօնեաների համար: Անկարելի էր, ի հարկէ, թոյլ տար որ հերձուածող եկեղեցու պաշտպան կաթողիկէ վարդապետները որ և է հովանաւորութիւն վայելեն Ֆրանսիայի մայրաքաղաքում, կամ նոյն իսկ քահանայութիւն անեն:

Ահա այդ հարուածին դիմադրելու համար Գաբրիէլ վարդապետ Այվազեանը Պոլոս-բէյի օգնութեանն է դիմում: Պոլոս-բէյը առհասարակ համակրում էր երեք վարդապետներին. օգնեց նրանց, 5 հազար ֆրանկ տուեց և խոստացաւ Կ. Պօլսից 50 հազար հաւաքել և ուղարկել դպրոցը պահպանելու համար: Մի անգամ նա այցելում է Պարիզի արքեպիսկոպոսին: Թարգմանի պաշտօն կատարում էր Այվազեանը: Արքեպիսկոպոսը խօսք է բաց անում կաթողիկէ և հայ եկեղեցիների մէջ եղած տարբերութիւնների մասին: Թարգմանը բացատրում է արքեպիսկոպոսին որ հայոց եկեղեցին ամենին հերձուածող չէ, որ նա տարբերում է լատին եկեղեցուց միայն մի քանի արտաքին ծէսերով, զաւանաբանական ոչ մի տարբերութիւն չը կայ: Ի վերջոյ նա խոստանում է զբաւոր ապացոյցներ ներկայացնել այդ բանը հաստատելու համար:

Սամանեան արքունի վառօդապետը, ի հարկէ, աստուածաբան չէր. բայց Գաբրիէլ վարդապետը նրա անունից գրում է մի ամբողջ բրօշուր ֆրանսերէն լեզուով, տպագրել է տալիս և մի քանի հատ էլ ներկայացնում է արքեպիսկոպոսին *): Այդտեղ ապացուցանում է որ հայոց եկեղեցին ամենագլխաւոր զաւանաբանական հարցերում կաթողիկէ եկեղեցու հարազատ զաւակ է: Բանը այնտեղին է հասցնում, որ ասում է թէ եթէ պատիւ սնունդ չի յիշատակում հայոց եկեղեցիների մէջ,

*) Բնագիրը, հայերէն թարգմանութեան հետ, տպուած է «Մասեաց Ազանիի» մէջ (1855, եր. 251):

դրա միակ պատճառն այն է, որ հայերը չեն ուզում իրանց վաղեմի եկեղեցական ինքնավարութիւնից զրկուել և ուզում են իրանց կաթողիկոսի ընտրութեան մէջ ազատ լինել:

Այսպիսով ահա մի Պօղոս-բէյ Տատեան գալիս էր մի փոքրիկ բրօշիւրով լուծելու այն հարցը, որ ամբողջ դարեր անլուծելի էր մնացել և ահագին վիճաբանական գրականութիւն էր ստեղծել: Բայց այստեղ աւելի գործնական նպատակ կար: Կը համաձայնուէին հայերը Պօղոս-բէյի ասածներին թէ ոչ,—այդ կարևոր չէր այնքան, որքան կարևոր էր այն, որ Պարիզի արքեպիսկոպոսը համոզուէր թէ երեք հայ վարդապետները յանցաւոր չէին, քանի որ նրանց պաշտպանած եկեղեցին հերձուածող չէր, այլ միահաւանաբար ուղղափառ՝ հռոմէական տեսակէտից:

Բայց Պարիզում կար «Արևելքի» խմբագիրը: Մինչև հոգու խորքը վրդովուկով այդ բրօշիւրներէից, նրան գրողների նպատակներից, Ոսկանը բարձրացնում է իր ձայնը: Գրում է մի խիստ յօդուած Պօղոս-բէյի և Այվազեանի դէմ: Յօդուածը, դեռ չը տպուած, յայտնի է դառնում Այվազեանին (երևի տպարանում): Մի այնպիսի ժամանակ, երբ երեք վարդապետները ուզում էին ժողովրդականութիւն և վստահութիւն ձեռք բերել, ազգից մեծ գումար ստանալ՝ իրանց ըստ արած դպրոցը ապահովելու համար, Ոսկանի անսնայ յարձակումները կարող էին ամեն ինչ փչացնել: Ուստի Այվազեանը դիմում է կարուկ միջոցների: Նախ և առաջ՝ նա, երևի Պօղոս-բէյի օգնութեամբ, հարկադրում է տպարանատիրոջը չը տպագրել այդ յօդուածը: Երկրորդ, Ամբրոսիոս վարդապետը, որ դնացել էր Կ. Պօլիս՝ դպրոցի համար փող հաւաքելու, համոզում է «Արևելքի» այնտեղի գործակալին, որ եթէ յօդուածը տպուած լինի թերթի մէջ, պահէ նրա բոլոր համարները, չը բաժանէ բաժանորդներին:

Մենք չը գիտենք թէ ուրիշ էլ ինչ միջոցներ են գործադրում վարդապետները՝ իրանց անողորմ հակառակորդին զսպելու համար: Յամենայն դէպս, նրանցից ոչ մէկն էլ չէ վստահւում կռուել նրա դէմ տպագրական ազատ խօսքի միջոցով: Գործադրուող միջոցները անպայման դատապարտելի են, բռնի, զրական կարգերի հետ ոչ մի կապ չունեցող: Ոսկանը չէ ընկճուում. նա տեղի է տալիս ոյժին, դադարեցնում է «Արևելքը», որպէս զի ոչ մի զիջողութիւն արած չը լինի իր ազգեցիկ հակառակորդներին: 1856 թուի յունուարի 15-ին հրատարակուած «Արևելքի» 14-րորդ համարը վերջինն էր: Բռնութեան և ապօրինութեան զոհ դարձած Ոսկանը ստիպուած է լռել, դռնէ առ ժամանակ: Բայց նրան լռեցնել տուողները ոչ մի չափ չունէին: Ոսկանը այնպիսի ընաւորութիւններից չէր, որոնք հեշտ ընկճը-

ւում են, քաշւում են հրապարակից: Այդ բռնութիւնը աւելի
 ևս թունալից է դարձնում նրա գրիչը. նա աւելի ևս համոզ-
 ւում է թէ՛ հրքան խաւար ոյժ է կղերականութիւնը, հրքան նա
 թշնամի է ազատութեան: Եւ նա լքւում է աւելի մեծ եռան-
 քով՝ այդ ոյժի դէմ կռուելու համար:

Թէ ինչպէս էր այդ երիտասարդը վերաբերւում իր պաշ-
 տօնին, ինչպէս էր հասկանում ազատ հրապարակախօսութիւնը,
 այդ կարելի է տեսնել նրա մի նամակից, որ գրուած է նրա
 ակամայ լռութեան միջոցին, 1857-ին: Դա մի պատասխան է,
 ուղարկուած վերոյիշեալ Յակոբ Էֆէնտի Կոճիկեանին, և մենք
 չենք կարող մի քանի կտորներ չը բերել այդտեղից՝ 1854-ի
 Ոսկանին աւելի լաւ բնորոշելու համար:

Փիլիսոփայ Էֆէնտի—գրում է նա—որքան գութ ունենամ ձեր մտքի
 վրայ, սիրտս չկրնար այն աստիճան կակղել որ մոմի կազմ ստանայ և
 որու վրայէն ժամանակը, իր թևով, ամեն զրոյժ սրբէ հանէ: Հաւատարի
 եղէք որ սիրտս աւելի պահուն կազմ ունի և երբ ձեզի նման բարեկամ
 մը երկասյրի գործիով վերք մը կամ աւելի թեթեւ բառով ըսեմ որ դուք
 ալ չվիրաւորուիք, նշան մը կը դրոշմէ հոն, ժամանակին թեւը անկարող
 է փնջել զայն... Ձեր սիրտը ենթակայ ըրեր է միշտ հակելու... տեսակ մը
 վարդապետներու կողմը, ինչպէս իմ սիրտս ալ դատապարտեր է այն
 մարդերէ հեռու ապրելու թշուառ, այլ կանգուն և պատրաստ Ազատու-
 թեան առջև:

... Աստուածարան Էֆէնտի, ձեր նամակը կը սկսիք ըսելով որ
 կրօնական կռիւր վերստին ծագեր է Թիւրքիայի մէջ և թէ՛ անկէ առաջ
 եկած վրդովը ձեր սրտին շատ վիշտ կը պատճառէ: Կրօնական կռիւր հոն
 ծագելու հարկաւորութիւն չունի, խրատատու Էֆէնտի, վառն գի դադրելու
 կամք չունի, միշտ կ'ապրի անյայտ և յայտնի կերպով, միտքիւր կը ժան-
 դոտէ, սիրտերը կը մաշէ և սէրը կը թունաւորէ անդու: Ուստի կարծեմ,
 կ'ուզէք ըսել թէ՛ կրօնական վէճը նոր աստուածութիւն մը, գրգիռ մ'առեր
 է քանի՜ ըր սեպէմ հոգիներու շունչէն իբրև մաղութի տակ պահուած
 կայծ մը զոր հով մը կը բորբոքէ: Ես ալ կը հաւանիմ ասոր և որովհետեւ
 հաւատքի կռիւները երկնային պատիժ մը կրնան սեպուիլ և մասնաւորա-
 պէս մեր ազգին համար մահացու հարուածներ են, կը մնայ տնայառ
 կերպով քննել թէ՛ ո՞վ է այն գրգռիչը և ուսկէ՞ կու գայ այն հրաշունչ
 աստուածութիւնը որ այնքան հայ սիրտեր բռնկել տուաւ: Մարդ չկրնար
 յանդգնիլ ըսելու որ «Արեւելքը» եղաւ այն գրգիւրը, կոյր ըլլալու է մէկը
 որ հաստատէ թէ՛ հոնկէ ելաւ փոթորիկը:

... Իզմէ խնդրեր էին, յանուն ազատութեան, որ բողոքներ հրա-
 տարակեմ օրագրին մէջ: Այլ եթէ չխնդրէին անգամ, հայրենական սիրտը
 պարտք մ'էր այսպիսի ամենի հրդեհին առջև անզգայ հանդիսատես
 չմնալ: Կամք ըրի այս պարտքս խղճի կատարել և լստին ճիշտ թափել որ
 կրօնական այս շփոթը վերջինն ըլլայ: Համոզուած եմ, միտաբարան է-
 ֆէնտի, և եմ տակաւին, որ մեր ազգային վէճերը մէկ կերպով կրնան
 անհետել,—վիճելու ազատութիւնով: Բանակուի մը խափանել՝ զայն չա-
 րտուել է և ահա անոր համար է, որ Պօլիսի կրօնական մոլի եռանդը
 միշտ կը վխտայ և օտարներէն շնորհուած ազատութիւնը հայու ձեռքով

կ' սպաննուի: Հայերուն առաջին թշնամին Հայերն են: Գանդատելու իրա-
տունք չունին, վասն զի զանգատը կ'ենթադրի օրէնք և հայերուն համար
քանի մը մարդու կամքը օրէնք կը թեպտի և իբրև այն՝ մոլեռանդ բազ-
մութենէն կը պաշտպանուի:

... Ձեր յարգութիւնը իմ ըրածներէ կը զգոհի և կը ժտի խրատել
որ ետ քաշուիմ ու առակ նշառակի ըլլամ հեղեղաւոր հանդիսակաւներու
առջև: Ուստի կը լանդգնի զրելու. «ձեր լրագրոյ բերանը փոխեցէ՛ք»,
Բայց, խրատատու էֆէնտի, ի՞նչ յարաբերութիւն կայ ձեր և իմ մէջ որ
կ'ողէք իրրև տէր առ ծառայ խօսիլ: «Արեւելքին» ոչ հիմնադիր էք, ոչ
բաժին մը գրաւած էք, ո՛չ ատորազրութիւն մը առած էք և ո՛չ աղեկու-
թիւն մը ըրած ունիք, ի՞նչպէս կ'ըլլայ ուրեմն որ ազատ հանդէսի մը
բերան փոխել տալ ուզէք և ի՞նչ իրաւունքով կը համարձակիք զիս զա-
տել: ... Ձեմ ներքի որ էֆէնտի մը ազատ հայու գրէ՝ «բերանդ փոխէ»...

... Կը գրէք որ այս ազգաբարձութիւնը՝ չէիք տար «թէ՛ որ լաւ
մը գիտցած չ'ըլլայիք ձեր համամիտ և համակարծիք ըլլալնիդ»: Բայց կը
մոռնաք ըսելու թէ որո՞ւ համամիտ եմ և ի՞նչ պարագայի մէջ համակար-
ծիք կրնամ գտնուիլ: Գիտէ՛ք արդեօք ինչ փիլիսոփայութեան կը հետեւիմ,
ի՞նչ մարդերու կարծիքը կ'ընդունիմ, ի՞նչ զրութիւն ընտրեի եմ, ի՞նչ
քաղաքական դաւանութիւն կը պաշտեմ, ի՞նչ բարոյականի կը ծառայեմ
թէ՛ ընտանի և թէ՛ մարդկային իրերու մէջ: ... Ձեր զրութիւնը, եթէ
զրութիւն ունիք զուք, ծածկաստանի շատ իմաստ... ասէրներու պէս աստ-
տածարանութեան տեսիլներու հիւս պիտի ըլլայ: Յայտնի կը խոստովա-
նիմ որ աստուածաբան չեմ և ըլլալու ալ փափագ չունիմ ամենեւին: Նա
ոչ միայն համամտութիւն մը չ'երեւի ինձ, այլ և կատարեալ հակամտու-
թիւն կը տեսնեմ: Աստուածաբան էֆէնտի, անոր վրայ մի՛ տարակուսիք
բնաւ, վառն զի ի մանկութենէ անտի ակադրութիւնէն հեռու ապրեի եմ:
Կրօնքի մասին մէջ ալ համամտութիւն մը չեմ տեսնել: Դուք փառք կը
սեպէք ձեզի Այվազովսքիին հետ կապուիլ, անոնց ձեռքով շարժիլ և զործ
տեսնիլ, ես զանոնք միահամուռ կ'ատեմ և չեմ ուզեր ո՛չ ի հեռաւոր և
ո՛չ ի մօտուստ յարաբերութիւն մը ունենալ անոնց հետ: Լուսաւորչեալ
ծնեի եմ և այն զրոյշով պիտի մեռնիմ, բայց թոյլտութիւնը *) ինձի
համար ուրիշ մկրտութիւն ո՛ր է զոր Եւրոպայի մէջ առի և զոր անհնարին
է ուրանալ, վասն զի թոյլտութիւնը միտքի աղատութիւն է և ազատու-
թեան ամեն տեսակ մասունքը կը պաշտեմ հասարակ չափ:

Քաղաքականութեան մէջ զուք թագաւոր և նշանաւոր անձերու կը
ծառայէք, ես ազատ եմ և մինչև հիմա մարդոց մ'առջև ծուել չեմ գրեւ:
Ձեք կրնալ ուրանալ, փիլիսոփայ էֆէնտի, որ ծառայութեան և ազատու-
թեան մէջ բաւական տարբերութիւն կայ և զմեզ անմիանալի կերպով կը
բաժնէ: Դուք ազատ էք ծառայելու, ինչպէս և ես ազատ էի, եմ և պիտի
մնամ, չ'ծառայելու... Եթէ էֆէնտիութիւնը պատուանուն մ'է ձեզի հա-
մար, անկախութիւնը ոչ նուազ պատուանուն է ինձի համար: Դուք ձեր
էֆէնտիութիւնը պահեցէք և անով ուղածնիդ չափ փառաւորութեանցէք, բայց
մի՛ գաք կ'աղաչեմ, յանուն բարեկամութեան, մեր անկախութիւնը թըշ-
նամանելու: Այս՝ աններելի է որ և իցէ մարդու և մանաւանդ ձեզի, որ
Բէշիտ փաշային արարածներէն մէկն էք:

*) Այսինքն՝ կրօնական համբերողութիւնը, խղճի ու դաւանութեան
ազատութիւնը:

... Գրոնական խնդիրներէ զգուշ եղիք: Աշխարհական մը և պաշտօնաւոր մը կը սեպուիք, թո՛ղ տուէք որ քահանաները իրենց պաշտօնը կատարեն եկեղեցիի մը մէջ, ինչպէ՞ս դուք կը կատարէք ձերինը զեսպանատունին մէջ: Միտքի ազատութիւնը քիչ մը աւելի պաշտելու է. վասն զի եթէ դուք համոզումի մը տէր էք, ինչպէս ոմանք կը համբաւեն, ձեր հակառակորդը համոզումէ զուրկ չէ և համոզում մը որ ուրիշին համոզումը կը նեղէ, բռնութիւն կ'անուանի, և փիլիսոփայութիւնը, ճշմարիտ փիլիսոփայութիւնը, այն՝ զոր պէտք էր սովորել, այլ՝ բռնութիւնը չընդունիր, վասն զի ազատութեան դուտոր է: Այս միտքի ազատութիւնը կ'ենթադրէ խօսելու և գրելու իրաւունքը, զոր ամեն մարդ ունի և կարծեմ ես ալ անկէ զրկուած չեմ Հայ Ըլլալովս Խնչ կըսէք, մետաքսաբան էֆէնտի, հայ ծնելով գերի՝ ծներ եմ արդեօք որ մէկ յօդուածի համար մամուլի ներքն ճնշուեցայ երկու տարի...

Անշուշտ, Յակոբ էֆէնտի կոճիկեանը շատ էլ ուրախ չը պիտի լինէր որ այնպիսի նամակ գրեց Ոսկանին: Նա և միւս էֆէնտիները, ազանները, վարդապետներն ու եպիսկոպոսները նո՛ւ հայ էին տեսնում իրանց առջև: Մեր այս բերած կտորները գեղեցիկ կերպով ցոյց են տալիս թէ ինչ էր Ստեփան Ոսկանը իբրև հրապարակախօս 1855 թուականին: Դա հայկական ուռաջին ազատ ու անկախ միտքն էր, մի միտք, որ անուելով Եւրոպայում, պողվատի ամբուլթիւն ստանալով, գալլիս էր մեզ մօտ՝ դարերի մտաւոր ստրկութեան թանձր ու սև վարագոյրը պատռելու: Ծնշուած, տափակացած, գերի էր հայի միտքը. նրա վրայ գեռ ծանրացած էին հին-հին դարերը: Ստեփան Ոսկանները նոր օրերի, նոր հայեացքների արշալոյսն էին մեզանում...

ԼԷՕ

(Աւերջը յաջորդ համարում)

ԼԱԼՈՒԱՐԻ ՈՐՍԸ*)

(Շարունակութիւն)

III

Ուր սուր ծերպերով ահեղ ցիրուցան
Լեռներն են բազմած բընութեան արձան.
Ուր թուի ամպերն են գունդապունդ գինւում,
Փայլակ-կայծակով իրար հետ կըռուում.
Զարնելով միմեանց երկիր ու եթեր,
Թըռչկոտում են հուր կայծակի շանթեր.
Խաղում են, գոռում ճայթիւն որոտով,
Ծեծում լեռներին, ծաղրում կարկուտով,—
Այնտեղ գիշերուայ խաւարի միջին
Մի խարոյկ վառուեց Լալուարի լանջին.
Զորերի քաջեր որսի են եկել,
Կըրակի շուրջը շարքով նըստոտել.
Ոմանք չըտկում են շողչողուն գէնքեր,
Կարմիր բոցերից փայլում են դէմքեր,
Ոմանք խորովում եղնիկ կամ վարազ
Երկար ձողերով չեղջի վրայ շարած,
Եւ լուռ նըստոտած ետինջի տակին՝
Շարունակ լարուած լըսում են մէկին.
Ինչպէս խոր ձորում գընդակ ու վտռոց՝
Թընդում է մէկի ձայնը կըրակոտ,
Այնպէս է զըլիւի անցուածքը պատմում,
Կարծես Լալուարին ամպ է որոտում:

«Անցնելով հազար արիւն-փորձանքից,
Մահուան հետ ընկեր-ախպէր եմ դառել.

*) Տե՛ս «Մուրճ», № 10:

Նամարդ չի պըրծել դեռ իմ գընդակից,
Գըլխիս մազի չափ որսեր եմ արել,
Դեռ ոյժ ունեմ ես վազրից առաւել,
Գընդակս էլ որսից իսկի չի չեղուել,
Բայց աղջիկս արդէն տեսաւ երազում,
Որ որս անելը էլ ինձ չի սաղում,
Ես էլ ուխտում եմ արիւն չը թափեմ,
Այլ ջահէլներիդ համար աղօթեմ,
Որ դուք էլ գընաք իմ թողած հետքով,
Պահէք աւանդը մեր սուրբ պապական,
Մէկն իր կատարած արժանի գործքով
Իմ տեղը լինի նոր Աւագ-որսկան»:

Զարմացած ծերի վերջին խօսքերով
Տըղերքը դարձան նըրան հարցնելով.
— Բեզնից ձորերում՝ գող-մարդասպան
Դողում են մարդիկ, հարամի, գազան.
Ով որ գընդակիդ ձէնը լըսում է,
«Աւագ-որսկանն է էլի», ասում է.
Թէկուզ դու լինես հարիւր տարեկան,
Ո՞վ կարայ լինել քեզ նըման որսկան:
«Մի շաբաթ էլ կայ դեռ Վարդավառին,
Որ սար ու ձորից ուխտ գան Լալուարին.
Երբոր էն օրը գան ծեր, պատանի,
Թող ով որ քաջ է նամառը տանի.
Մինչև որ անցնեն էս չորս-հինգ օրը,
Տալն ու վրայ արէք դուք սարն ու ձորը.
Ով որ մեծ որսով կը գայ Սուրբ-Սարգիս,
Նա էլ կը լինի ժառանգն Աւագիս»:

Երբ գիշերը անց, հէնց լուսադէմին
Խօսքը վերջացրեց Աւագ ծերունին,
Տըղերքը մեծ-մեծ որսերի յոյսով
Պարկ ու հրացան գըցեցին ուսով.
Ո՞րը սարերին, ո՞րը ձորերում
Հրացանը ձեռին որս է որոնում:
Մի տեղ եղնիկն է անմեղ բառաչում,
Մի տեղ պախրան է յանկարծ հառաչում.
Մի տեղ էլ արջին որջից հանելով,
Կըռում է մէկը իր սուր խոնչալով.

Գազանը տալով որսորդին ապտակ,
Դեռ պաշտպանում է նրա սրբի տակ.
Վայրի վարազը սըլեհը ¹⁾ սըրած՝
Մացան է նետուել ռելը փըրփըրած.
Նորից զընդակ են հրացանը լըցնում,
Նորից վազելով ետևից համնում.
Եւ որս ու որսկան սիւրագ ընկնելով,
Խեղճում են շատին շան վռնակներով.
Ոմանք էլ լըջում լիճկապ են անում
Եւ փախածներից նորից կոտորում:

Ամեն տեղ գընդակ, կըրակ, որոտում,
Բայց ինչի՞ կարօն որս չէ պատրաստում.
Նա թափառելով հրացանը ձեռին,
Դեռ նոր էր զըտել մի յարմար դարան
Եւ մըտածելով իր որսի մասին,
Լուռ գանգատում էր բախտից ինքն իրան.
«Ես էլ եմ ուզում զընալ Սուրբ-Սարգիս,
Ես էլ եմ ուզում տեսնել Ալվարդիս»:
Բայց ինչ արած որ դեռ նըրա բախտից
Որս չը դուրս եկաւ էն առատ հանդից.
«Էրնէկ անմուրազ էս ձորում մընամ,
Քան թէ ես դատարկ Լալուարը զընամ»:

Ուր առուակները մանուկ կարկաչով
Դիմում են ձորեր, լըցնում հառաչով.
Ժայռերից ժայռեր թափ առած, ոյժով,
Թընդիւն որոտով փրփրում է ջըրվէժ,
Մըլուխը կիտած հին ապառաժով
Ջարդուելով անյոյս, երգում է վըրէժ.
Ուր զեփեւ մեղմիկ ջըրուելով բոյրը,
Սուղում է սիրտը վայելքի ծովում.
Իսկ թարմ շուրթերի կոյսի համբոյրը
Ծաղիկների հետ անմեղ բարեում.
Ուր զգացումն է բըռնկում հուժկու,
Աղանույը հեղ, արծուից ահարկու,
Որսի հըրաթափ զընդակի թըսիչ,
Ջըրվէժի վայրի երգը ձորերում,

¹⁾ Ժանիքը:

Ամեն մի հընչին անուշիկ թովիչ
 Անցնում է սիրաը նըրանով փարւում—
 Այն կամարի տակ անսահման կապոյտ
 Լալուարն է դարթնում հարսի պէս անփոյթ.
 Գուգարքի հըսկան բարձըր եթերից,
 Գըլուխը հազիւ հանած ամպերից՝
 Ժըպտում է, ինդում փոքըր լեռներով,
 Որպէս ծերունին իրան թռռներով:
 Այսօր նա ժըպիտն անուշ ճակատին՝
 Ամպ-երեսկալը գըցած երկնքով՝
 Զուգւում է ուրախ Սուրբ-Սարգսի ուխտին
 Գուգարք աշխարհի զարդ ու պըծրանքով.
 Իսկ նըրա բարձըր դալար դագաթին
 Անշուք քարեկոյտն առանց տանիքի
 Հին սուրբ խաչքարը բազմած քարափին՝
 Գրաւում է սիրաը ուխտաւոր բինէքի.
 Սար, դաշտ ու հովիտ անթիւ ցիր ու ցան,
 Փըրփըրուն զետեր, դալար անտառներ
 Մի նուիրական նեղ, մոլոր կածան
 Այնտեղ է տանում բոլոր բլնաներ:
 Ասում են՝ ով որ միշտ վառ հաւատով
 Գալիս է Լալուար որեւէ ուխտով,
 Խնդրում, աղերսում քաջ Սուրբ-Սարգըսին,
 Հասնում է անշուշտ սըրտի մուրազին.
 Եւ թէ մարդ, թէ սար, սի ժայռ ու բըլուր
 Յաղթուած գըլիններով խոնարհուելով լուռ,
 Գալիս են նըրա զօրութեան ծուռայ,
 Որպէս զի հասած ցաւը վերանայ.
 Ոմանք հասնելով քըրտինքն երեսին,
 Հանդատանում են Լալուարի ուսին,
 Ոմանք էլ հեռուից երկար շարքերով
 Աչքեր յառած դէպի սուրբ սարը՝
 Գալիս են բարձուած հազար մեղքերով,
 Որպէս զի գտնեն փրկութեան ճարը:
 Արդէն ջերմեռանդ ծեր, պատանի, կին
 Հազար դունաւոր զգեստներ հագին՝
 Մատուռի շուրջը խունկ ու մոմերով
 Պըտոյտ են դալիս բոքիկ տոներով.
 Բերել են այնտեղ և՛ հիւսնադներին,
 Եւ՝ խաչ-փաթաթուի 1) թոյլ ընկածներին.

1) Խաչի պատած անդամալուծներին:

Ո՛րը մի ցաւից, կամ չօռից տըկար
Ընկել է կըծկուած սուրբի ոտները,
Ո՛րն էլ ուշաթափ մօրուց ցաւադար
Իրար է զարկում պինդ ատամները.
Բերանը փրփրած՝ տանջւում չարաչար,
Քաջ զօրավարից աղերսում մի ճար.
Եւ մուրադներով թըշուառ, բախտաւոր
Մոմեր են վառում սուրբ խորհրդաւոր:
Մի տեղ ուխտաւորը նըստում է ճաշի,
Մի տեղ զընում են կոխին ¹⁾ թամաշի,
Մի տեղ խընձորը նըշան են խըփում,
Մի տեղ մատաղը զեռ նոր են եփում,
Մի տեղ աշուղը լի սուփրի ծերին
Բազմած, խըփում է սազի սիմերին,
Մերթ իզիթների գործերը զովում,
Մերթ նամարդների սիրտը նըզովում.
Մի տեղ նաղարան զըլում է պարին,
Ջուռնաւ-բայեաթին կանչում է եարին.
Մէկը տեսնում է իր նըշանածին,
Մէկը նըշանում մըտքում սիրածին,
Մի տեղ էլ անմեղ կուսական սըրտեր,
Ըզգալով սիրոյ առաջին շանթեր,
Ջեռք-ձեռքի տուած երգում են, պարում,
Ամենքի գէմքին ժըպիտ է փայլում:

«Մուրադատու, ո՛վ Սուրբ-Սարգիս,
Դու պահպանի մեղ ամենքիս.
Ամեն տարի պաս ու ծոմով
Մենք ուխտ կը գանք խունկ ու մոմով
Եւ ծունկ չոգած մենք Լալուարին՝
Աղօթք կ'անենք զօրավարին.
Ջահէլ-ջիւան մեր սիրածին
Հասի՛ր որսի զըժուար ճամփին.
Հասի՛ր նըրան, որ նամուսով
Շուտ գայ Լալուար մի մեծ որսով:
Մանուկ ու ծեր քարեր զըրկած՝
Աղաչում ենք ոտդ ընկած—
Ցաւերը տո՛ւր սար ու քարին,
Անուշ մուրադ՝ սիրած եարին.

¹⁾ Գետեմարտ:

Մուրազատու, ով Սուրբ-Սարգիս,
Դու պահպանի մեզ ամենքիս»:

Իսկ այնտեղ խմբով անուանի քաջեր
Ջէնք ու զըրահը զըցած ուսներով՝
Բերել են եղնիկ, եղջերու, արջեր
Եւ պարծենում են իրանց որսերով.
Բայց յանկարծ լըսուեց կանացի հառաչ,
Մի խումբ աղջիկներ վազեցին առաջ
Եւ հեկեկալով յայտնեցին ծերին.
«Սիրուն Ալվարդին թուրքերը փախցրին.
Չորս-հինգ ձիաւոր զինուած հրայանով
Անցնում էին լուռ մոլոր կածանով.
Հէնց որ մեզ տեսան, նրանք կանգնեցին,
Իրար յայտնելով, առաջ վազեցին.
Մի տնա էն սիրուն, լէյլի աղջկան,
Նըրա պէս հիւրիք երկնքում չը կան.
Դալի-էրմանու զոզցած Սևուկն էլ,
Արար-աշխարհն էլ մըտքէս հանեց նա,
Դէ, տեսնեմ, տըղերք, ով կարայ բըռնել,
Նըրան փախցնողը ջաննաթ կը գընայ:
Եւ նըրանք տարան սիրուն Ալվարդին,
Կորած ձիու տեղ կապեցին թարքին¹⁾.
Մենք լըսում էինք դեռ նըրա հարան.
«Ապի ջան, ապի», կանչում էր, «տարան»:

Ծերունին կանգնած քարափի զըլխին՝
Ջայրացած ուժգին դարձաւ ամբոխին.
«Հէյ, տըղերք, տըղերք, սև սուգ պահեցէք,
Դափ ու զուռնայի ձէնն էլ կըտրեցէք.
Տեսնում եմ, որ դուք շատ ոյժ էք թափել
Եւ գազանների մեծ որսեր բերել.
Բայց ոչ դք չի'լնիլ դեռ Աւագ որսկան,
Մինչև չազատի գերի աղջկան.
Վայ, թէ թուրքերն էլ անպատուեն նըրան,
Ամթ, նախատինք կը մնայ յաւիտեան»...
Դեռ չէր վերջացրել խօսքը ծերունին,
Մի տրաքոց լըսուեց կաղնուտի ձորում:

1) Ձիու մէջքի յետևի մասին:

«Դէ, հասէք, տըղերք, հասէք էն ձէնին,
կըսիւ է էնտեղ, մարդիկ են գոռում»
էլ ժըպիտ չը մնաց ոչ մէկի գէմքին,
Վիշտն ու վըրէժը տիրեց ամենքին:
Լըռեց ի' քէֆը, ի' ամեն շըշուշը,
Ծերունին իջաւ ժայռից լուռ ու մունջ,
Ուխտուորն էլ մոռցած հանդիսի օրը՝
Վազեց նըրա հետ կաղնուտի ձորը
Եւ տեսաւ այնտեղ աղբիւրի փոսում
Ընկած թուրքերից արիւն է հոսում.
Կարօն Ալվարդի գէմ կանգնած արի՝
Երգում է որսած աչկըը հարի.—

«Ալվարդ, Ալվարդ, սև աչերից
Ես ընկել եմ սար ու ձոր.
Ալվարդ, Ալվարդ, սև աչերից
Դատար չունեմ ոչ մի օր»

Քեզ տեսնելով, կըսիւ ու ջարդ,
Չար մըտքերս յըրուեցան.
Նըրանց տեղը, սիրուն Ալվարդ,
Դու ես կապել ծիածան:

էն օրուանից չոր ժայռն էլ է
Անուշ բուրում, կանաչում.
էն օրուանից սիրտս էլ է
Արնածարաւ քեզ կանչում:

Ա'ն զէնքերս դու մէկ-մէկ,
Ես յաղթուած եմ քո սիրով.
Ա'ն զէնքերս, որ երբէք
Ես չեմ տուել թունդ կըռուով:

Ալվարդ, Ալվարդ, սև աչերից
Ես ընկել եմ սար ու ձոր.
Ալվարդ, Ալվարդ, սև աչերից
Ես հալւում եմ օրէց օր»:

Յետոյ ուխտուորի հետ նա միասին
Գընաց, պատմելով թուրքերի մասին.

«Հրապանս լըցրած երկու զընդակով՝
 Ես նըստած էի կաղնուքու կողքին.
 Մէկ էլ ինչ տեսնեմ, գալիս են շարքով
 Չորս-հինգ ձիաւոր մի աղջիկ թարքին.
 Տեսայ, որ մէկը ճանաչս է դալիս,
 Ասլան-բէկին էր նըմանը տալիս.
 Աղջիկն էլ ասի, թէ հայ է թըշուառ,
 Տես, թէ ինչ որսով յետ կ'երթամ Լալուար.
 Յանկարծ լըսեցի «վայ, տանում են, վայ»...
 Տեսայ, որ կապածն աղջիկ է և հայ.
 Մի զընդակ թողի ևս ծառի կողքից,
 Ասլան-բէկն ընկաւ իր ձիու մէջքից.
 Եւ նորից լըցրի և նորից ընկան,
 Մի մարդ ու մի ձի հազիւ թէ պըրծան,
 Ալվարդն էլ եղաւ իմ որսը անգին,
 Ահա բերել եմ, որ տամ Աւագին»:

Ուխտաւորը խառնուեց, փրնտրում է նըրան,
 Ուզում է տեսնել, ով է քաջ տըղան.
 Ծերը դաշտնը հանեց իր դօտից,
 Տուեց Կարօյին ամբօխի զիմաց
 Եւ համբուրելով նըրա ճակատից,
 Դողդոջուն ձայնով օրհնելով, ասաց.
 «Ապրիս դու, Կարօ, երկար տարիներ,
 Որ միշտ ազատես անմեղ գերիներ.
 Լալուարն էլ լինի թող խօսքիս վըկան,
 Որ քեզ եմ օրհնում ես Աւագ-որսկան»:

Նորից նոյն զուռնա-նաղարան հընչեց
 Եւ քաջ Կարօյին կեանք և ոյժ մաղթեց.
 Ուխտւորն էլ վերջին ջերմ համբոյրներով
 Իջաւ Սուրբ-Սարգսից նեղ կածաններով.
 Եւ պար ու երգով Լարուարից նա յած
 Գընաց իր սըրտի մուրազը առած.
 Կոյր աշուղներն էլ երգ յօրինեցին
 Եւ նոր իգիթի գովքը արեցին:

IV

Աշունն էլ եկաւ. Գուգարք աշխարհում
 Սարին ու դաշտին այլ կեանք է եռում.

Սուղեւով դառան, ոչխարի բուրդը,
 Քոչել է բինէն թողնելով իւրտը.
 Լեռներից զուարթ գերացած հօտեր
 Ջրմեռուան համար իջել են դաշտեր.
 Իւրտերը դատարկ սեխն են տալիս,
 Աղբիւր ու ծաղիկ ողբում են, լալիս:
 Մենակ խաղում է, թռչկոտում պախրան.
 Սարեր ու ձորեր մընացին նըրան:
 Արծիւն էլ տըխուր նըստած ժայռերին՝
 Որսեր է փընտրում իր սոված փորին:
 Փոխուկով սարից ամենքն արանը ¹⁾,
 Լըյրին բարկքով հօրն ու մարանը.
 Աստուած խընայեց խեղճ նաչարին—
 Լաւ հաց ու գինով առատ է տարին.
 Հասել են արգէն մըրդեր մեղրածոր,
 Կանաչ թըփերը բըռնած դաշտ ու ձոր,
 Հասել է ամրան միջօրեան տապին
 Բիւր շարաններով խաղողը ճիթ-ճիթ,
 Քաղում են նըրան առուակի ափին.
 Հընձանից անուշ մաճառը չիթ-չիթ
 Կարան է լըցւում ուրախ քըրքիջով.
 Եւ փըրփըրալով դեռահաս գինին
 Հանգստանում է միայն թակիչով ²⁾.
 Նորից խաղալով, հասնում է բերնին,
 Եւ յուզուած, զըժուած խոր գետնի գըրկում՝
 Իր ստորերկրեայ խուլ երգն է երգում:
 Վերջացաւ թէ չէ անկըրակ եփը,
 Սկսուեց իսկոյն գիւղացու քէֆը.
 Զուռնա-ղըհօլի ձայնը զըլում է,
 Հարսանիքների տուտը ³⁾ բացւում է:

«Ալվարդ ջան, աղջի, եկ լըսիր դու ինձ.
 Ես օրհնում եմ քեզ հայրական սիրով.
 Ե՛կ, թէն ծանր է բաժանուել քեզնից,
 Բայց նըչանում ես դու իմ երդումով:
 Վաղ ես ունէի մի ողջում-ախպէր ⁴⁾,
 Նա զէնքով որսի գընալ չը գիտէր.

1) Դաշտ:

2) Նոր գինու եփը իջեցնելու գործիք:

3) Մայր:

4) Հօգով եղբայր:

Արջերի հետն էլ միշտ կոխ էր բռնում,
 Կռնների զօռով իր որսը անում:
 Ողորմած հողի արջակեր Մ. սին,
 Էգպէս էր նըրա աւել անունը,
 Մի օր խօսք գըցեց իր տըղի մասին.
 — Իմ ու քո չը կայ, մէկ է մեր տունը.
 Թէ որ քեզ լինի մի աղջիկ զաւակ,
 Արի նըշանենք տըղիս հետ, Աւագ.
 Նըրանց պըսակէք կենդանի օրով
 Ու մենք հեռանանք յաւիտեան սիրով.
 Թէ Աստուած էսպէս մեր ուխտը կամի,
 Խօսք տուր, որ լինենք իրար խընամի:
 Եւ ես երգուեցի, երբ դու մեծանաս,
 Մօտենց Աթոյի հետ ամուսնանաս.
 Վաղուց է պառկած Մօսին հողումը,
 Վաղուց հեռացաւ նա փուշ աշխարհից.
 Բայց չեմ մոռայել ես իմ խոստումը,
 Որ բարձր է երկրի ակն ու գոհարից.
 Իգիթի խօսքը օրէնք ու կարգ է—
 Նամարդ ապրելուց մեռնելը փառք է.
 Ե՛կ, դու լըսելով ծընողիդ կամքը,
 Հաւատարիմ կայ քո նըշանածին,
 Եւ միշտ յիշելով մօրդ խընամքը,
 Ապրի ու մեռի միշտ մէկի բարձրնա:
 Եւ մի համրոյրով գըթոտ հայրական,
 Աւագ-որսկանը օրհնեց աղջկան:

Յանկարծ խեղճ կոյսը զըլուխը թեքեց,
 Դէմքը այլայլուեց, գողալով լուրից.
 Եւ մատաղ կուրծքը նետի պէս շանթեց
 Այն աւետիքը, որ լըսեց հօրից.
 Նա ճընշուած գաղտնի ներքին յուզումով
 Ջիւնի պէս ճերմակ ձեռքերը կըրծքին
 Դեռ սպասում էր դաժան զգացումով,
 Ինչպէս անմեղ զոհ ծերունու կողքին.
 Թէև արցունքը նա չուտ կուլ տալով
 Սիրոյ կըռիւը ծածկեց իր հօրից,
 Բայց սիրան ասում էր տըրուփտըփալով՝
 «Մարդու չեմ գընալ բացի Կարօյից»:
 Եւ դեռ յայտնի չէր որսկանին սէրը,
 Որով այրւում են երկու սըրտերը.

Բայց ով է գիտում՝ սէրը կը յաղթի,
Թէ նուիրական խոստումն իզիթի:

Քանի գիշեր է, մինչև լուսադէմ
Ծեր, երիտասարդ, այր, կին ժրպտադէմ
Հազար գունաւոր զգեստներ հագին՝
Խընդում են բարձրր Դնակտի ափին.
Հանգէս է այնտեղ մեծ հարսանիքի,
Զուռնան զըլիլ է վազուց սահարին ¹⁾:
Թընդում է յանկարծ ձայնը Աւագի,
Հոսում է սիպտակ ու կարմիր գինին.
Որսկանը առատ վայրի էրէներ,
Երինջ, ոչխար է հարսանքին մօրթեւ.
Ետում են լիքը քառկանթ կաթսաներ ²⁾,
Հարսանեաց ծուխը երկինք է պատել:
Մի տեղ ամբոխը խմբով նըստոտած՝
Անուշ է անում, հարսանիքն օրհնում,
Իսկ աչուղները, մըրցելով հարբած,
Ալվարդի համար երգ են յօրինում.
Մի տեղ սահելով հարսն ու աղջիկներ,
Կազմում են ուրախ շըրջապարի շարք,
Մի տեղ ձողերին վառած պատրոյկներ՝
Երեխայք գոռում, վազում են անկարգ.
Հերթիկների տակ և արձակ բակում
Թընդում են հազար աղմուկ ու երգեր.
Փըրփըրած գինու թասերը ձեռքում՝
Ուտում են քաշ-գան ³⁾, խորոված, մըրգեր:
Այսօր խընջոյք է, վաղըն էլ հանգէս,
Եօթ օր, եօթ գիշեր կը տևի այսպէս.
Գիւղի աղքատը, ծերն ու պատանին
Եօթ օր, եօթ գիշեր հիւր են որսկանին:

Յանկարծ Աւագի ջիւրիդը ճօճաց.

«Ջիրիդ է, ջիրիդ», ամբոխը ճըչաց.

Դըհօլը զըմբաց, հեծուորներն անցան,

Կազմեցին միմեանց հակառակ շըրջան.

¹⁾ Առաւօտեան երգի եղանակ:

²⁾ Զորս կանթ ունեցող մեծ կաթսայ:

³⁾ Թոնրի մէջ մսից և ձաւարից պատրաստուած կերակուր:

Զինուած ձողերի սուր նիզակներով՝
 Հէնց բաժանուեցին երկու բանակի,
 Բարձրացրեց փոշին ձին սմբակներով,
 Գրչուխներ պատուեց զարկը նիզակի.
 Ետում է հանդէսն ահեղ ջիրիզի,
 Հասնում են արագ, զարկում մէկ-մէկի.
 Զեռներին բըռնած թաւիչ թաշկինակ՝
 Դիտում են հեռուից և հարս ու աղջիկ,
 Իսկոյն տալիս են նըրան մըրցանակ,
 Ով որ նըշանին նետում է ճարպիկ:
 Աթօն էլ եկաւ շատ սնդամ սնցաւ,
 Բայց նա Ալվարդից ոչինչ չըստացաւ.
 Զիւրի կըրծքից քալաղին ¹⁾ կապած՝
 Դեռ փըսփըռալով, քըշում են, թրռչում,
 Բայց չի նըկատում ամբոխը հարբած,
 Որ խեղճ Ալվարդն է ամենից տըրտում:
 Շատերը յաղթուած մէկ-մէկ հեռացան,
 Մենակ Աւագը ջիրիզը ձեռքին,
 Ինչպէս յաղթութեան վիթխարի արձան,
 Հասնում էր, զարկում փախչողի մէջքին:

Մուրն ընկաւ արգէն. փայլում են կրակներ.
 Նորից հիւրերը նըստում են չըրջան,
 Լըցնելով փրփրած դինով գաւաթներ,
 Ետուն քէֆի մէջ կանչում են՝ «հա ջան...»:
 Նորից գուռնան է հանում աղմուկը,
 Աչուղը թասին լարում է երգեր,
 Նորից երգում են ծերն ու մանուկը,
 Բըռնելով առոյգ նոր զօփի շարքեր:
 Հարբածների հետ Դեպետը ձորում
 Փրփրած աչքերով ժայռէ քրնարին
 Ծփում է տըխուր, անվերջ փըրփըրում,
 Հազար երանի տալով անցեալին:

Երբ հողմն էր փըչում, Դեպետը վըշում
 Գիշերուայ վայրի մի տըխուր համերգ,
 Իսկ պաղ կայծերով աստղը զենիթում
 Դողալով, դիտում մըռայլ տիեզերք—

¹⁾ Մետաքսի թաշկինակ

Գիշերուայ նըման մի մուգ սև շալում՝
Ալվարդը գաղտնի անտառն էր մըտել.
Եւ վաղուց ծանօթ մըթին դարանում
Նըրան պահապան մայառն էր պատել:
Նըրա համար չէր երկնի կապոյտը,
Նա չէր դուրս եկել իբրեւ զբօսանք.
Որպէս ջրովէժի թափն ու պըտոյտը,
Նըրան քըշել էր վառ սիրոյ հոսանք.
Եւ այդպէս փախած մըթին գիշերով
Հայրական տընից հօրիցը գաղտնի՝
Նա սպասում էր սըրտի զարկերով
Իրան սիրելուն սարերին յայտնի:

Յանկարծ անտառի մըռայլ թաւուտից
Լըսուեց սմբակի տըրով ու դոփիւն.
Գըրտինքը հոսեց կոյսի ճակատից,
Ճերմակեց, դառաւ ինչպէս լեռան ձիւն.
Փայլեցին արդէն ձիւս պայտերը
Եւ մի ծանօթ ձայն՝ «Ալվարդ ջան», կանչեց.
Կարմըրին սուին կոյսի այտերը,
Նա սըրտի խորքից աղատ հառաչեց:
Այ, քեզ ցանկալի երջանիկ բոպէ,
Երբ կարօտ սըրտեր գըտնում են իրար,
Փըշըրելով արդեւ թէկուզ երկաթէ,
Գըտնում են միմեանց երկու սիրահար:
Հեծուորը թռաւ սև ձիուց շտապ,
Ալվարդին հանեց խիտ մայառներից,
Գըրկեց ու սեղմեց կրքձքին սիրատապ,
Համըռուներ քաղեց սյտ ու շուրթերից:

«Ալվարդ ջան, Ալվարդ», Կարօն չըշընջաց,
Ե'կ, շուտով փախչենք, քանի գիշեր է.
Գիտեմ, իմաստունն ձիս որ խրինջաց,
Փորձանք լինելը նա զգացել է.
Ա'ռ զարաբինաս, կախի՛ր քո վըզից,
Նա պէտք կը գայ քեզ գիշերը, ճամփին,
Մինչև որ թըռած անցնենք անտառից,
Մինչև որ տունս գըտնենք քարափին»:
— Թէկուզ սըրտումս ցըցեն սուր ու նետ,
Ես պիտի ապրեմ ու մեռնեմ քեզ հետ,

Ասաց Ալվարդն ու բռնկուած յոյզով
 Ամուր փաթաթուեց Կարօյի վըզով.
 Փախաւ նըրա հետ, գլուխն ու այտը
 Յենած սեուկի փըրփըրուն բաշին.
 Զարնուելով քարին, զրնգում էր պայտը
 Եւ սէրը երգում նրանց ականջին:
 Մոռցած ծերունի հօր պատուի մասին՝
 Կուսական սըրտից հուր էր բըռնկում,
 Սարերից ձորեր թե առած սե ձին՝
 Թաղում էր գոփիւնն մըթին ծըմակում:

Յանկարծ լըսւում է «հարան ու տարան»,
 Հարսանքատանը լըռում է դուռնան.
 «Կարօն Ալվարդին փախցրերեց, տարաւ,
 Կարօն ամեն ինչ ոտնատակ արաւ.
 Թիւհ, անաղուհաց նամարդ արարքին,
 Անդանակ մորթեց իգիթ Աւաղին»:

Ծերը զարկելով զըտակը գետնին,
 Ուրոտւած ձայնով դարձաւ ամբոխին.
 — Էս ութսուն ձըմեռ, էս ութսուն դարուն
 Ես կեանք կմ քաշել աշխարհի վըրայ,
 Բայց չեմ թողել, որ Աւաղի անուն
 Մի թեթեւ բանով անգամ սեանայ.
 Էպքան տարի է, որ կըռուի սովոր՝
 Արիւնն է եղել ինձ համար քըրտինք.
 Էպքան տարի է գըլուխս ալեոր
 Չէր կերել էսպէս մուր ու նախատինք.
 Բայց դող Կարօյի նամարդ արարքը
 Թաղեց որսկանիս պատիւն ու փառքը:
 Թէն երգուել կմ, որ էլ որս չսնեմ,
 Բայց էն նամարդի մուրն էլ ոնց տանեմ,—
 Ասաց ու ծերը հրացանը ուսեց
 Եւ տըմբտըմբալով խոր ձորը վազեց.
 Ո՛մանք ձիերով, հմանք էլ ոտով
 Վազեցին հետը զանազան ճամփով:

Աւագ-որսկանը իր զինուած խըմբով
 Շատ է թափառել անտառ ու ծըմակ,
 Անցել է ամեն մի նեղլիկ ճամփով,
 Ուր որս էր արել ջահէլ ժամանակ.

Բայց ոչ փախցնողին, ոչ էլ աղջըկան
 Նա դեռ չէր գըտել երկար փրնտրելով.
 «Ալվարդն ու Կարօն չըկան ու չըկան»,
 Ասում էր դարձեալ նա դեգերելով:
 Մի օր յուսահատ, տանջուած ու անքուն
 Անցնելով՝ արդէն վերջին կիրճերը,
 Մի խիտ դարեօր մըթին ծըմակում
 Ծերունին զըտաւ ձիու հետքերը.
 Եւ լըսեց ինչպէս ձիու տըրտիւով
 Ալվարդն ու Կարօն թըռչում են ճամփով:
 «Հէյ, Կարօ, Կարօ», որսկանը գոռաց.
 Սիրահարները մընացին սառած.
 «Էդպէս ես պատում հին աղուհացը,
 Էդպէս ես սիրում օրէնքն իգիթի.
 Քեզ նըման նամարդ գող արարածը
 Ինչի՞ չի վաղուց զոհուել զընդակի»:

Կարօն չուարած որպէս երազում՝
 Թէն հասկացաւ, թէ ով էր խօսում,
 Բայց տընդակ տըժժաց, անտառը թընդաց,
 Եւ նա գոլորուեց սև ձիուցը ցած:
 Ալվարդը իր գանգուր գիտերն է փետում.
 «Վայ, Կարօ ջան, վայ», անտառն է թընդում:
 Բայց արդէն մահը մըռայլ թևերով
 Թըռաւ ու գըրկեց իգիթ Կարօյին.
 Այրուած շուրթերը վայ ջուր կանչելով,
 Կըպան, փակելով հուրը սիրային:

Եւ դարաբխան պինդ ձեռքին սեղմած՝
 Ալվարդը կանչեց հօրը զառամած.
 «Ե՛կ, ապի ջան, եկ, անտառից շուտով,
 Ե՛կ, ինձ էլ զարկի մի նոր զընդակով.
 Ա՛խ, անսէր կեանքը ծանր է գեհնից,
 Ե՛կ, ապի ջան, եկ, յետ առ ինձանից.
 Լաւ է մի անգամ սիրելով մեռնեմ,
 Քան թէ միշտ անսէր թաղուհի լինեմ.
 Մեղանից յետոյ, էյ, սարեր-ձորեր,
 Աղբիւր ու առու ուրախ քըչքըջան,
 Երգեցէ՛ք՝ ինչպէս կորան մեր օրեր.
 Երգեցէ՛ք՝ «Ալվարդն ու Կարօն չը կան»:

Սև ծրխի միջից զընդակը թըռաւ...
 Ալվարդը վերջին մահուան տաղնապում
 Սիրուն գըլուխը գետնի վրայ գըրաւ
 Եւ լուռ գալարուած խոտ է պոկոտում.
 Դեռ թըռթըռում են նըրա շուրթերին
 Կեանքի գոյները մէկ-մէկ մարելով.
 Սըվրթնած վարդը կարմիր այտերին
 Հրաժեշտ է կարգում ընդմիշտ թողնելով.
 Մարում է հսւրը սև-սև աչերի,
 Սահում է կեանքը անհուն տենչերի.
 Ծորում են կամայ արեան շիթերը,
 Սպառում կեանքի վերջին ոյժերը.
 Եւ ամեն մի նոր ծորած կաթիլով
 Կարծես ասում է՝ կեանք, մըննա բարով:

Վերջին արեւ ճառագայթներով
 Դեռ արեւմտքից անտառի խորքում
 Սիրահարների լուռ դիակներով
 Ուղում է անհոգ, փարւում ու գըրկում:
 Տրաքոցի վըրայ հեռու ձորերից
 Վազկելով հասաւ հարսանքաւորը.
 Արիւն-արցունք է թափում աչքերից,
 Մենակ չի լալիս ծեր յանցաւորը.
 Գըզգըղում գիտեր, զընդակը կըրծէին՝
 Սարսափ էր ազդել Ալվարդն ամենքին.
 Օտար, բարեկամ ողբում են նըրան,
 Անէծք թափելով Աւագի վըրան.
 Կանչում են նըրան. «Ինչի՞ չես գալիս,
 Ինչի՞ չես դու էլ մի բերան լալիս»:

Բայց նըրանց լացը, ճիգն օրհասական
 Դարձեալ չեն ազդում քարացած ծերին.
 Եւ անշարժ կանգնած ծերունի հըսկան
 Նայում է միայն նրանց կոծերին.
 Անտառտան յենում նա նուիրական
 Հին աղուհացի պատուի օրէնքին՝
 Էլ չէր ամոսում միակ աղջըկան.
 Այլ բան էր զգում իգիթի հողին.

Թէն նա վերջին օրը ծերութեան
 Ներկեց իր միակ որդու արիւնով,
 Բայց համոզուած էր, որ արդարութեան
 Ձի գաւաճանիւ դեռ ոչ մի բանով,
 Որ ափսոսանքը և լացն ու կոծը
 Էլ չեն բուժելու սըրտի սև խոցը.
 Այլ նըրան միայն օրէնքն իգիթի
 Իր անդարձ ոյժով մի օր կը դատի:
 Մերթ թըռչում է նա դէպի ապագան,
 Ուր ստուերներով դատի պիտի գան
 Նամարդ սերնդի տըզեղ արարքը
 Եւ հին իգիթի պատիւն ու փառքը.
 Մերթ լուռ քարացած սառնց արցունքի
 Դէպի նոր բընող բըլուրն է դառնում,
 Մերթ նըրա դէմքը թաղուող յանցանքի
 Տըխրութեան ամպն է յանկարծ մըռայլում.
 Մերթ անշարժ կանգնած հրացանը ձեռին,
 Ինչպէս դարաւոր լեռների արձան,
 Նա հուժկու մէջքը դէմ տուած ժայռին՝
 Նայում է թաղմանն անթարթ ու անձայն,
 Եւ հին կընճռտած, ապառաժ դէմքով
 Կարծես ծաղրում է դեռ լալկաններին,
 Որոնք յանձնում են հողին խընամքով
 Իր աջող որսած սիրելիաններին.
 Յանկարծ զօռ տալով երկար չիբուխին,
 Նա վերջը դարձաւ լալկան ամբոխին.

«Հէյ գիտի հն, հէյ, իգիթ ժամանակ,
 Անցար, զընացիր, թողիր ինձ մենակ.
 Ո՛ւր են առաջուայ սէրն ու հաւատը,
 Պապերի դըրած օրէնքն առաջին.
 Իգիթ չէր աւելում էն արդամարդը,
 Որ չէր խոնարհում սուրբ աղուհացին.
 Արար-աշխահի օրէնքների դէմ
 Ես նըրանից մեծ օրէնք չը գիտեմ:
 Եւ ինչ արարած, ինչ աղտոտողի
 Կտարելով պատիւն, անունն իգիթի,
 Ապրում է մենակ ինքը նամուսով
 Դըրացուն պատուից զըցելու յոյսով,

Թէկուղ աշխարհն էլ զուլ անի իրան,
 Իսկի արդամարդ չեմ ասիլ 'նըրան:
 Մարդիկ մանրացան մըժեղի նըման,
 Արցունքն է դառել ցաւերին դարման.
 Բայց ողբն ու լացը էլ ինձ չեն ազդիլ,
 Ծով էլ որ դառնամ, արցունք չի կաթիլ:
 Հէյ գիտի հա, հէյ, իզիթ ժամանակ,
 Անցար, դընացիր, թողիր ինձ մոնակ.
 Հեռացէ՛ք դուք էլ, թողէ՛ք միանամ
 Ժայռ պապերիս հետ, ես էլ քարանամ:
 Ասաց ու լըռեց ծերը գըլխակոր,
 Ինչպէս վիթխարի մի ժայռի բեկոր:

Բայց հին վանքերի բարձրը գմբէթից
 Չեն հընչում մահուան զանգի ձայները
 Եւ շարականից, բուրվառ ու խաչից
 Զըրկուեցան նրանց պաղ մարմինները.
 Հարսանքաւորի ողբըն ու լացը
 Եւ սե նըժոյգի խորին թառանչը
 Աչնան հողմի հետ արձագանք տալով,
 Երգում են ձորում թաղման շարական.
 «Ա՛խ, Ալվարդ, Կարճ», լուռ հստուչելով
 Փորում են նըրանք մի խոր գերեզման
 Եւ սիրակարօտ զոյգ նըշխարները
 Յանձնում են ցաւով հայրենի հողին.
 Իսկ բըլուր դարձած սիրահարները
 Պատմում են սիրոյ արկածն անցնողին:

Դառն ափսոսանքով տմբոխը գընաց,
 Անտառում մենակ որսկանը մընաց.
 Նա քաշուեց հեռու մութ ծըմակները,
 Հսկայ ժայռերին եղաւ դըրացի,
 Ուր չեն որոտում ո՛չ գընդակները,
 Ո՛չ լըսւում ձայնը մարդկութեան լացի.
 Գըլուխ չը թեքած մարդկանց օրէնքին՝
 Նա եղբայրացաւ յաւէրժ տարերքին:

Երբոր բացւում են վայրի վարդերը,
 Երբ գարնան բոյրով ձորն է կանաչում,
 Գալիս են այնտեղ մատաղ կոյսերը,
 Ալվարդին իրանց սէրը մըրմընչում.

Մի-մի կըտոր չոր թուփից կապելով,
 Յիշում են նըրան արցունք թափելով,
 Եւ այն մամռապատ մենակ բըլրակը
 Նոր կեանք է առնում հին կազնու տակը:
 Երբ եղջերուն է այնտեղ բառաչում,
 Կամ եղնիկն անհոգ վըրայից թըռչում,
 Որսորդն աղբիւրից պաղ ջուր խըմելով,
 Սնցնում է որսի հետքից վազելով,
 Յանկարծ ցոյց տալով բըլուրն ընկերին,
 Դառնում է վաղուց անցած դէպքերին.
 «Դու ջահէլ ես դեռ, լաւ չես ճանաչում,
 Ալվարդն ու Կարօն այստեղ են հանգչում.
 Ո՞ւր են առաջուայ մարդիկն ու սէրը,
 Աւագ-որսկանի արած որսերը:
 Ասում են, երբ որ ամպի փէշերը
 Փըռուելով սարից, ձորերն են զըրկում,
 Լըսւում է յանկարծ մըթին գիշերը
 Մի խոր հառաչանք ժայռերի կըրծքում.
 Ու ամպերի մէջ Աւագ-որսկանը
 Գալիս է հըսկում իր աղջրկանը.
 Եւ նորից ծածկած նա վիշտը ներսից՝
 Փախչում է նամարդ մարդկանց երեսից»:

ՎԱՀԱՆ ՄԻՐԱՔԵԱՆ

ՖՐՕՄՕՆ ԿՐՏՍԵՐ

ՅԻ

ՌԻՍԼԵՐ ԱԻԱԳ

IV

Ֆրոմոնների առեւտրական նոր գործակաւարը:

Միւս առաւօտ շատ ուշ զարթնեց Ֆրոմոն կրտսերը: Ամբողջ գիշերը, մինչ ներքեում տեղի էր ունենում սարսափելի դրաման, իսկ վերեւում որսոտում էր խրախճանքը, նա քնել էր խոր քնով, այն ջարդուած քնով, որով քնում են մահուան դատապարտուածները պատժի նախընթաց օրը և յաղթուած զօրապետները պարտութեան գիշերը, որից մարդ չի ուզում զարթնել ամենեին և որի ժամանակ մարդ նախապէս ծանօթանում է մահուան հետ չնորհիւ որ և է զգայութեան բացակայութեան:

Վարագոյրների միջով ներս թափանցող արևը, որին աւելի ևս պայծառութիւն էր տալիս՝ ամբողջ պարտէզը և չրջակայ տանիքները հաստ խաւով պատող ձիւնի ցոլքը, սթափեցրեց նրան: Նա ցնցուեց իր ամբողջ էութեամբ և, նոյն իսկ դեռ ուշքը բոլորովին գլուխը չեկած, զգաց այն անորոշ ակնութիւնը, որ մնում է մարդու հոգու մէջ մոռացուած դժբախտութիւններից յետոյ: Գործարանի բոլոր ծանօթ աղմուկները հնչում էին լիակատար թափով, խառնուկով մեքենաների խուլ հեքին: Աչխարէքը դեռ չէր կործանուել ուրեմն, և պատասխանատուութեան զգացմունքը հետզհետէ զարթնեց նրա մէջ:

—Այսօր է պայմանաժամը... ասաց նա ինքն իրան, ակամայ շարժումով քաշուելով դէպի անկողնախորշի ստուերը, կտրծեա թէ ուզելով նորից խորասուզուել իր խոր քնի մէջ:

Հնչեց գործարանի զանգը, յետոյ ուրիշ զանգեր մօտակայքում, այնուհետեւ եկեղեցու զանգերը:

—Կէսօր է... Արդէն... Ի՞նչպէս քնով եմ անցել...

Նա զգաց մի փոքր խզճի խայթոց և մեծ սփոփանք, մտածելով, որ պայմանաժամի դրաման անցել է առանց իրան: Ի՞նչպէս են վերջացրել ներքեւում: Ինչո՞ւ իրան իմաց չեն տուել:

Նա վեր կացաւ, դուրս նայեց վարադոյրի արանքով ու տեսաւ, որ Ռիսլէրն ու Սիգիզմունդը, որոնք այնքան ժամանակից ի վեր խռով էին, պարտէզում կանգնած խօսում են իրար հետ: «Տեսնես, ի՞նչ է պատահել», մտածեց նա և ուզում էր դուրս գալ ու իջնել ներքեւ, բայց սենեակի դռանը պատահեց Կլէրին, որ կանգնեցրեց նրան.

—Դու չը պէտք է այժմ դուրս գաս,—ասաց Կլէրը:

—Ինչո՞ւ:

—Կաց այստեղ... Ես քեզ կը բացատրեմ:

—Բայց ի՞նչ է պատահել... Բանկից մարդ ուղարկել էին:

—Այո, ուղարկել էին... պարտքը վճարուած է արդէն:

—Վճարուած:

—Ռիսլէրը փող գտաւ, տուեց... Առաւօտունից Պլանիւսի հետ միասին ոտնատակ է տալիս ամբողջ քաղաքը... Ինչպէս երևում է, հիւանալի գոհարներ է ունեցել կինը... Հէնց միայն աղամանդէ վզնոցը ծախել է քսան հազար ֆրանկով... Նա ծախել է նաև Անիէրում ունեցած իրանց ամբողջ սուն ու սեղը, բայց որովհետև ժամանակ էր հարկաւոր վաճառման թղթերը հաստատելու համար, Պլանիւսն ու իր քոյրը պարտք տուեցին այդքան գումար:

Նա հրեաը չուռ էր տուել այդ ասելիս: Ժօրժն էլ գլուխը քաշ էր գցել նրա հայեացքին չը հանդիպելու համար:

—Ռիսլէրը աղնիւ մարդ է,—չարունակեց Կլէրը,—և երբ իմացաւ, թէ ումից էր իր կինը ընծայ ստացել այդ թանկագին բաները...

—Ի՞նչպէս,—ասաց Ժօրժը սարսափահար,—նրան յայտնի է...

—Ամեն ինչ... պատասխանեց Կլէրը, ցածացնելով ձայնը: Թշուառականը գունաթափուեց, սկսեց լեզուն ծամել.

—Ուրեմն... դո՞ւ էլ:

—Օ՜հ, Ես, ես Ռիսլէրից էլ ատաջ գիտէի ամեն ինչ: Յիշում ես, երէկ, երբ վերադարձայ Սափինիից, քեզ ասացի, որ շատ սարսափելի բաներ էի լսել այնտեղ և որ ուրախութեամբ կը զոհէի տասը տարի կեանքիցս, միայն թէ այդ ճանապարհորդութիւնը արած չը լինէի:

—Կլէր:

Ժօրժը սաստիկ խանդաղատուեց և մի քայլ արեց կնոջը

մօտենալու համար, բայց այնքան սառը, այնքան տխուր ու վճռական էր Կլէրի գէմքը, այնպիսի յուսահատութիւն, այնպիսի անողոք անտարբերութիւն էր երևում նրա ամբողջ կերպարանքում, որ նա չը համարձակուէր կատարել իր ցանկութիւնը, չը սղմէր նրան իր կրծքին, այլ ասաց միայն չշունչով.

—Ներիր ինձ... Ներիր...

—Երևի զարմանում ես ինձ այսպէս հանդիստ տեսնելով, —ասաց կորովի կինը,—բայց երէկ այնքան լաց եղայ, որ աչքումս էլ արցունք չը մնայ։ Եթէ դու կարծում էիր, թէ մեր սնանկութիւնն էի լալիս երէկ, դու սխալուում էիր։ Քանի որ մարդ մեզ նման ջահէլ է և դեռ ոյժ ունի մէջը, ամօթ է այդպէս թուլամորթ լինել։ Աղքատութեան գէմ մենք գէմք ունենք մեր ձեռքին և կարող ենք կռուել նրա հետ ճակատ առ ճակատ... Չէ, ես ողբում էի մեր չքացած երջանկութիւնը, ես ողբում էի քեզ, քո խելագարութիւնը, որ զրկեց քեզ քո միակ, քո ճշմարիտ բարեկամից...

Կլէրը գեղեցիկ էր այդ խօսքերն արտասանելիս, այնպէս գեղեցիկ, ինչպէս չէր եղել երբէք Սիդօնին, և այնպէս պայծառակերպուած, որ կարծես լոյսը շատ բարձրից էր իջնում նրա վրայ, ինչպէս խոր ու անամպ երկնքի շողք, մինչդեռ Սիդօնի անկանոն, բայց սիրուն դիմագծերը կարծես թէ իրանց փայլը, իրանց քմահաճ ու աներես հրապոյրը ստանալիս լինէին մի որ և է փոքրիկ թատրոնի բամպայի արուեստական ցոլքերից։ Կլէրի գէմքը, որ առհասարակ փոքր ինչ սառն էր ու անչարժ, այժմ կենդանութիւն էր ստացել բուն զգայմունքի ազդած անհանգստութիւնների, կասկածների ու տանջանքների չնորհիւ և ինչպէս ոսկէ ձոյլերը իրանց արժէքը ստանում են միայն այն ժամանակ, երբ փողերանոցում դնում են նրանց վրայ զտութեան աստիճանացոյցը, այնպէս էլ այդ կանացի գեղեցիկ գէմքը, որ վշտի դրոշմ էր կրում, երէկուանից ինչ որ անջնջելի արտայայտութիւն էր պահպանել, որ լրացնում էր նրա գեղեցկութիւնը։

Ժօրժը նայում էր նրան հիացած։ Կլէրը թւում էր նրան աւելի կենդանի, աւելի կանացի, քան առաջ, և պաշտելի, շնորհիւ այն բոլոր արգելքների, որոնք այժմ անջատում էին նրանց իրարից։ Խղճահարութեան, յուսահատութեան և ամօթի զգացմունքի հետ միաժամանակ նրա սրտում ծագեց այդ նոր սէրը, և նա ուզեց չոքել կնոջ առաջ։

—Չէ, չէ, վեր կաց,—ասաց նրան Կլէրը.—եթէ իմանայիր, թէ ինչ ես յիշեցնում ինձ դրանով, եթէ իմանայիր, թէ ինչ

ստախօս և ատելութեամբ լի կերպարանք եմ տեսել այս գիշեր ոտքերս ընկած:

—Օհ, չէ, ես չեմ խաբում... պատասխանեց ժօրժը, սարսռալով... Կլէր, աղաչում եմ, պաղատում եմ յանուն մեր երեխայի...

Այդ բոպէին դուռը ծեծեցին:

—Դէ վեր կաց: Ձեռ տեսնում, որ կեանքը մեզ կանչում է... ասաց Կլէրը նրան ցած ձայնով և դառն ժպիտով. յետոյ նա հարցրեց, թէ ինչ են ուզում:

Ասացին, որ պ. Ռիսլէրը խնդրում է, որ պարոն ժօրժը գնայ ներքև, գրասենեակը:

—Լաւ,—պատասխանեց Կլէրը,—ասացէք՝ այս բոպէիս:

Ժօրժը ոտը փոխեց, որ սենեակից դուրս գայ, բայց Կլէրը կանգնեցրեց նրան:

—Ձէ, թող ես գնամ: Դեռ նա չը պէտք է քեզ տեսնի:

—Բայց չէ որ...

—Ես քեզ ասում եմ, որ չը պէտք է գնաս: Դու չը գիտես, թէ ինչպէս վրդովուած ու զայրացած է այդ թշուառ մարդը, որին դուք խաբում էիք այնքան ժամանակ: Եթէ տեսնէիր, թէ ինչպէս էր նա այս գիշեր կոտորում իր կնոջ ձեռները...

Նա այդ ասում էր ժօրժին, նայելով ուղիղ աչքերի մէջը, մի այնպիսի հետաքրքրութեամբ, որ դաժան էր նոյն իսկ իր վերաբերմամբ. բայց ժօրժը չայլալուեց և բաւականացաւ ասելով.

—Իմ կեանքը պատկանում է նրան:

—Քո կեանքը ինձ էլ է պատկանում. իսկ ես չեմ ուզում, որ դու ներքև գնաս: Առանց այն էլ շատ խայտառակութիւն տեղի ունեցաւ հօրս տանը: Գիտես, որ ամբողջ գործարանին յայտնի է ամեն ինչ: Մեզ հետևում են, մեզ լրտեսում են: Վերականգունները իրանց ամբողջ հեղինակութիւնը գործ գնելով միայն կարողացան աշխատեցնել այսօր բանուորներին, ստիպել, որ նրանք իրանց գործի հետ լինեն ու քաշ գցեն իրանց հետաքրքիր հայեացքները:

—Բայց կարող են կարծել, թէ ես թագնւում եմ:

—Հէնց մի քիչ էլ թող կարծեն: Այդպէս էք բոլոր աղամարդիկդ: Դուք կարող էք կանգ չառնել ամենազգուշի յանցանքների առաջ, կարող էք խաբել ձեր կնոջը, ձեր մտերմին, բայց այն միտքը, թէ կարող են ձեզ մեղադրել, թէ վախեցել էք, հանգստութիւն չի տալիս ձեզ... Բայց այդ, լաւ լսիր, Սիդօնին գնացել է, նա գնացել է ընդ միշտ. եթէ դու այժմ

դուրս դաս այստեղից, ես պէտք է կտրեմ, թէ գնում ես նրան գտնելու:

—Շատ լաւ, կը մնամ,—ասաց ժօրժը... Ինչ որ ուզես կ'անես:

Կլէրը գնաց Պլանիւսի դրասնակը:

Ով որ տեսնէր Ռիսլէրին այդպէս ձեռները յետին դրած ու սովորականի պէս հանգիստ գնալ-դալիս, երբէք չէր կարողանայ կասկածել, թէ ինչ էր անց կացել նրա գլխովը երէկուանից ի վեր: Ինչ վերաբերում է Սիգիզմունդին, նա ուրախութիւնից ցնծում էր, այդ աւերով պատմութեան մէջ տեսնելով միայն այն, որ իրանց սրտովը պայմանաժամին վճարուած էր և առտորատան պատիւը մնացել էր անվթար:

Երբոր տիկին Ֆրոմօնը ներս մտաւ, Ռիսլէրը տխուր—տխուր ժպտաց ու թափ տուեց գլուխը:

—Ես գիտէի, որ դուք կը գաք նրա փոխարէն, բայց ձեզ հետ չէ իմ գործը: Անպայման հարկաւոր է, որ ես նրան տեսնեմ ու հետը խօսեմ: Այս առաւօտուայ վճարելիքը տուեցինք. ամենադժուար ըստէն անցաւ. բայց դեռ շատ բան ունենք միասին վճռելու:

—Ռիսլէր, սիրելի բարեկամս, խնդրում եմ, մի քիչ էլ սպասեցէք:

—Ինչո՞ւ սպասեմ, տիկին Շօրչ: Ոչ մի ըստէ չը պէտք է կորցնենք... Հն, գիտեմ, վախենում էք, որ յանկարծ չը կարողանամ զսպել բարկութիւնս... Հանգիստ եղէք... Հանգստացրէք նրան... Ես արդէն ասացի ձեզ, որ նախ քան իմ պատիւը՝ ինձ զբաղեցնում է Ֆրոմօնների առտորատան պատիւը, որ ես գետնովն եմ տուել իմ սխալմունքի չնորհիւ: Ամենից առաջ ես պէտք է ուղղեմ այն չարիքը, որ ես արել եմ կամ որ ես թողել եմ տուել անել:

—Ինձ լաւ յայտնի է, սիրելի Ռիսլէր, որ ձեր վերաբերմունքը դէպի մեզ վեր է ամեն գովասանքից:

—Օխ, տիկին... եթէ տեսնէիք, թէ ինչեր է անում... սուրբ մարդ է սա, սո՛ւրբ... ասաց խեղճ Սիգիզմունդը, որ, չը համարձակելով խօսել իր բարեկամի հետ, ուզում էր գոնէ ցոյց տալ նրան իր խղճահարութիւնը:

Կլէրը շարունակեց.

—Բայց չէք վախենում... Մարգկային ոյժերը անասման չեն... Գուցէ այն մարդու ներկայութեամբ, որ այնքան չարիք է պատճառել ձեզ...

Ռիսլէրը բռնեց նրա ձեռքերից ու լուրջ հիացմունքով նայեց նրա աչքերի մէջ.

—Աքանչելի հոգի, դուք միմիայն ինձ պատճառած չարիքի մասին էք խօսում... Բայց չը գիտէք, որ ես ատում եմ նրան նոյնչափ և այն պատճառով, որ նա դաւաճանել է ձեզ... Սակայն այս բողէիս այդ բոլորը գոյութիւն չունի ինձ համար: Այստեղ ձեր առաջ կանգնած է միմիայն մի վաճառական, որ ուզում է խորհրդակցել իր ընկերակցի հետ առետրատան չահերի մասին: Թող ուրեմն նա աներկիւղ գայ այստեղ, իսկ եթէ դուք վախենում էք, որ ես չը կարողանամ ինձ զսպել, մնայէք մեզ հետ: Բաւական է նայեմ իմ նախկին տիրոջ աղջկայ վրայ, որպէս զի յիշեմ իմ խոստումը և իմ պարտականութիւնը:

—Ես հաւատում եմ ձեր խօսքին, սիրելի բարեկամ,— ասաց կիւէրը ու գնաց ամուսնուն կանչելու:

Տեսակցութեան առաջին բողէն սարսափելի էր: Ժօրժը սպրտնած էր, այլաչուած ու ամօթահար: Նա հազար տնգամ կը գերադասէր կանգնել Ռիպլերի ատրճանակի առաջ քսան քայլ տարածութեան վրայ և սպասել կրակելուն, քան երեսու նրա աչքին իրր անպատիժ մնացած յանցաւոր և ոտիպուած լինել զսպել զգացմունքները ու բուրժուական հանգստութեամբ խօսել առետրական գործերի մասին:

Ռիպլէրը չէր նայում նրա երեսին և խօսում էր, շարունակելով ման գալ մեծ-մեծ քայլերով:

—...Մեր առետրատունը սարսափելի ճգնաժամի մէջ է... Այսօր մենք ազատուեցինք խաչատուկութիւնից, բայց դեռ շատ վճարելիքներ ունենք... Այդ նզովեալ գիւտը երկար ժամանակ ինձ չէր թողնում ուրիշ բանով պարապել: Բարեբախտաբար այժմ ես ազատ եմ և կարող եմ զբաղուել գործերով: Բայց պէտք է, որ դուք էլ զբաղուէք: Բանուորներն ու ծառայողներն էլ մի քիչ հետեւել են մեր օրինակին: Այնպիսի անկարգութիւն է տիրում գործարանում, որ չունը տիրաջը չի ճանաչում: Մի տարիից ի վեր այս առաւօտ առաջին անգամն է, որ ճիշտ ժամանակին են սկսել բանել: Յոյս ունեմ, որ դուք ամեն ինչ կարգի կը բերէք: Ինչ վերաբերում է ինձ, ես կը զբաղուեմ իմ նկարներով: Մեր տիպարները հնացել են: Նոր մեքենաների համար նոր տիպարներ են հարկաւոր: Ես շատ բան եմ սպասում մեր սպագրիչներից, փորձերը իմ յուսացածիցը աւելի յաջող դուրս եկան: Նրանց շնորհիւ մենք անշուշտ կը կարողանանք վերականգնել մեր առևտուրը: Առաջ չէի ասում ձեզ այդ, որովհետեւ ուզում էի յանկարծ զարմացնել ձեզ. բայց այժմ այլ ես իրար զարմացնելու ոչինչ չունենք, չէ՞, Ժօրժ:

Այնքան դառն հեգնութիւն կար նրա ձայնի մէջ, որ կիւէ-

բը գողգողաց, վախենալով բռնկումից, բայց նա շարունակեց շատ հասարակ կերպով:

—Այո, կարծում եմ, որ կարելի է հաստատ ասել, որ վեց ամիս անցած հիմնալի հետևանքներ կարող է տալ Ռիպերեան սպագրիչը: Սակայն այդ վեց ամսուայ ընթացքում շատ ծանր կը լինի մեր դրութիւնը: Պէտք է սղմենք մեզ, պակասեցնենք ծախսերս և, որքան կարելի է, խնայողութիւն անենք: Հինգ դժագրիչ ունէինք, այսուհետեւ երկուսն էլ մեզ բաւական է: Մնացածների գործը ես կ'անեմ, զիշերները աշխատելով: Բացի այդ, այս ամսից սկսած ես հրաժարւում եմ իմ առևտրակցական շահաբաժնից: Ես կը ստանամ այսուհետեւ գլխաւոր վարպետի ուժիկ, ինչպէս առաջ էի ստանում, և աւել ոչինչ:

Ֆրոմօն կրտսերը ուղեց մի բան ասել, բայց կիներ ձեռքով արեց, որ լռի, և Ռիպէր աւագը շարունակեց.

—Ես այլ ևս ձեր առևտրակիցը չեմ, Ժօրժ: Ես նորից ստանձնում եմ իմ նախկին պաշտօնը, որից երբէք չը պէտք է հրաժարուէի... Այսօրուանից մեր ընկերակցական պայմանը ոչնչացած պէտք է համարել: Ես այդպէս եմ կամենում, հոսկանում էք, այդպէս: Ես կը շարունակեմ մնալ ձեր գործակատարը, մինչև որ ձեր առևտրատունը ազատուի տաճնապից և ես կարողանամ... Բայց թէ ինչ կ'անեմ ես այն ժամանակ, այդ ոչ որի չի վերաբերում բացի ինձնից... Ահա այս էր իմ ասելիքը ձեզ, Ժօրժ: Պէտք է, որ դուք եռանդուն կերպով զբաղուէք գործարանով, պէտք է, որ ձեզ միշտ տեսնեն, զգան իւրանց տիրոջ ներկայութիւնը, և յոյս ունեմ, որ մեր գլխին եկած թշուառութիւնների մէջ կը դանուեն այնպիսիները, որ կարելի է ուղղել:

Այդ խօսքերին յաջորդող լռութեան միջոցին անիւների զղրդոց լսուեց պարտէզից և կահակիր երկու ահագին կառքեր եկան կանգնեցին պատշգամբի առաջ:

—Ներողութիւն,—ասաց Ռիպէրը,—ես պէտք է մի բուպէով հեռանամ ձեզնից: Աճուրդարանից կառքեր են ուղարկել կահ-կարասիքս տանելու համար:

—Ի՞նչպէս, կահ-կարասիքն էլ ծախում էք... հարցրեց տիկին Ֆրոմօնը:

—Անշուշտ... մինչև վերջին չիւղը... Առևտրատան կահ-կարասիքն է այդ և ես վերադարձնում եմ առևտրատանը:

—Բայց այդ անկարելի բան է,—ասաց Ժօրժը... Ես չեմ կարող տանել այդ:

Ռիպէրը շուռ եկաւ դէպի նա, լի ցասումով.

—Ի՞նչ էք ասում: Ի՞նչ բան չէք կարող տանել:

Կէրը աղաչական կերպով ձեռքով արեց, որ զսպի բարկութիւնը.

—Հա... մոռացել էի... չէնչայ Ռիսէրը ու շտապեց դուրս գալ, որովհետեւ վախենում էր, որ չի դիմանալ այլ եւս և դուրս կը թափի վերջապէս սրտի տմբողջ մաղձը:

Երկրորդ յարկը դատարկ էր: Ռիսէրը առաւօտուանից ճանապարհ էր գրել բոլոր ծառայողներին, որոնք, իրանց ամսականները ստանալով, գնացել էին առանց կարգի բերելու սենեակները երէկուայ խնջոյքից յետոյ, այնպէս որ բնակարանը այն առանձին տեղքն ունէր, որ ունենում են այն տեղերը, ուր մի քիչ առաջ աղէտ է տեղի ունեցել և որոնք մնում են առկախ արդէն կատարուած և նոր կատարուելիք դէպքերի մէջ: Բաց մնացած դռները, անկիւններում կիտած գորգերը, մատուցարանների վրայ չարած բաժակները, ընթրիքի պատրաստութիւնները, սեղանը, որ գցած էր, բայց որին դեռ ոչ ոք ձեռք չէր տուել, կահ-կարասիների վրայ պարերից նստած փոշին, պարահանգէսի բուրմուռները, բաղկացած փուռնչի, թառամած ծաղիկների ու երեսափողի խառն հոտերից,—այդ բոլոր մանրամասնութիւնները ազդեցին Ռիսէրի վրայ հէնց մտնելու րոպէից:

Տալին ու վրայ եղած դահլիճում դաշնամուրը մնացել էր բաց, Օրֆէյը դժոխում օպերէտտի բաքանալիւան նօտակալի վերայ, և այդ անկարգութիւնը պարուրող պայծառագոյն պաստառները ու դեռնատապալ, կարծես սարսափահար, աթոռները՝ այնպիսի տպաւորութիւն էին գործում, ինչպէս մի խորտակուող նաւի դահլիճ այն սոսկալի աղէտալից գիշերներից մէկի ժամանակ, երբ նաւորդները խրախճանքի միջոցին յանկարծ խմանում են, որ նաւի կողքը ձեղքուել է ընդհարումից և ամեն կողմից ջուր է լցւում մէջը:

Սկսեցին կահ-կարասիքը դուրս կրել:

Ռիսէրը նայում էր կահակիրներին մտքամուր դէմքով, կարծես թէ ուրիշի բնակարան էին դատարկում: Այդ չքեղ կահ-կարասիքը, որ մի ժամանակ այնքան ուրախացնում և հպարտացնում էր նրան, այժմ անտանելի զգուսնք էր պատճառում նրան: Սակայն կնոջ սենեակը մտնելիս նա մի քիչ յուզուեց:

Մի մեծ սենեակ էր այդ, պատած կապոյտ մնդուսով, որ ծածկուած էր սպիտակ ժանեակներով: Կատարեալ մի բոյն կօկօտ կնոջ: Ամեն կողմ թափթփուած էին պատռտուած ու ձմրուած շղարչէ զգեստազարդեր, հանգոյցներ ու արուեստական ծաղիկներ: Պատահայելի մոմերը, մինչև վերջը վառուելով, տրաքացրել էին իրանց ապակիէ օղակները, իսկ անկո-

ղինը, որ, իր ժանեակներով ու կապոյտ վերմակածածկերով և իր բացած ու վեր քաշած առագաստներով, մնացել էր անձևոնամուխ այդ խառնաշփոթութեան մէջ, այնպիսի տպաւորութիւն էր գործում, ինչպէս մի մեռած կնոջ մահիճ, մի հանդիսային անկողին, ուր այլ ևս ոչ ոք չի քնելու երբէք:

Ներս մտնելու րոպէին սարսափելի զայրոյթ զգաց Ռիսլէրը և ջանկութիւն՝ յարձակուել այդ բաների վրայ, ինչ կայ չը կայ պատռակ, կտրտել, ջարդ ու փշուր անել: Որովհետեւ չը կայ ոչ մի բան, որ այնքան նման լինի մի կնոջ, որքան նրա սենեակը: Նոյն իսկ նրա բացակայութեան ժամանակ նրա կերպարանը ժպտում է դեռ ևս նրա հայելիների մէջ: Այն բոլոր իրերի մէջ, որոնց նա ձեռք է տուել, մնում է միշտ մի փոքր բան նրանից, նրա սիրած անուշահոտութիւնից: Նրա նստուածքը զրոյմում է բազմոցի բարձերի վրայ և թւում է, թէ գորգերի նաշիների մէջ երևում են նրա քայլերի հետքերը արդասեղանի ու հայելիի արանքին: Այս սենեակում Սիդօնիին ամենից շատ յիշեցնողը նրա դարակախալն էր, լի երեխայական մանրոյթնութեամբ, չնչին ու աննշան չինեղէններով, խոշորացուցային հովհարներով, տիկնիկների անօթներով, ոսկեղօծ մաշիկներով և յարձապս կէ փոքրիկ հովիւներով ու հովուհիւներով, որոնք դէմ առ դէմ կանգնած փայլուն ու սառը հայեացքներ են փոխանակում իրար հետ: Սիդօնիի հոգին էլ այդպիսի մի դարակախալ էր, և նրա՝ միշտ տախի, միշտ մանր-մունր, սնափառ ու դատարկ մտքերը շատ նման էին այդ չնչինութիւններին: Եւ, յիշաւ, եթէ այդ գիշեր Ռիսլէրը, նրա կռնիցը բռնած ժամանակ, հատուղած րոպէին ջարդէր նրա փոքրիկ ու գիւրաբեկ զլուխը, մէջիցը, ուղեղի փոխարէն, անպատճառ դուրս կը թափուէին հազար ու մի դարակազարդ մանրոյթներ:

Խեղճ մարդը տխուր-տրտում մտածում էր այդ բաների մասին կահակիրների ոտնաձայնի և մուրճերի աղմուկի մէջ, երբ յանկարծ յետի կողմից լսեց կտկտան ու վստահ քայլերի ձայն և մի վայրկեան անցած տեսաւ իր առջևը պ. Շէքին, փոքրիկ, կարմրատակած, չնչակտուր ու բորբոքուած պ. Շէքին: Աները, ինչպէս միշտ, շատ բարձրից վերաբերուեց իր փեսային: —Այս ինչ բաներ են, այս ինչեր եմ լսում: Վա, տուններդ փոխում էք, ինչ է...

—Չեմ տեղափոխում, պ. Շէք... այլ ծախում եմ:

Փոքրիկ մարդուկը վեր թռաւ կանգնած տեղումը, ինչպէս տաք ջրի մէջ դրած ձուկ:

—Ծախում էք, ի՞նչ էք ծախում:

—Ինչ կայ չը կայ,—ասաց Ռիսլէրը խուլ ձայնով, առանց նոյն իսկ նրա երեսին նայելու:

—Լսիր, սիրելի փեսայ, մարդ պէտք է խելքով բան բռնի: Ի հարկէ, չեմ ուզում տեսլ, թէ Սիդոնիի վարմունքը... Թէպէտ, իսկն ասած, ես ոչինչ չը գիտեմ: Ես երբեք չեմ ուզեցել խառնուել այդ բաների մէջ... Ես միայն ձեր պատիւն եմ ձեզ յիշեցնում: Կեղտոտ փոխնորդը տանը կը լուսնան, այ մարդ: Ով է տեսել, որ մարդ իրան ամբողջ աշխարհքի առաջ խաղը ու խայտառակ անի, ինչպէս դուք էք անում այս առաւօտից ի վեր: Մէկ նայեցէք, թէ ինչպէս են բոլորը արհեստանոցների լուսամուտներին կալած ու դարպասի տակ կիտուած ձեզ մօտիկ տալիս... Բոլոր թաղականների բերնի ծամոնն էք դարձել, սիրելիս:

—Աւելի լաւ: Խայտառակութիւնը հրապարակական կերպով է կատարուել, պատուի վերականգնումն էլ պէտք է հրապարակական կերպով կատարուի:

Ռիսլէրի այդ առերևոյթ հանգստութիւնը, այն անտարբերութիւնը, որով նա վերաբերւում էր իր աներոջ բոլոր ասածներին, յուսահատեցրին պ. Շէրին: Նա յանկարծ փոխեց խօսակցութեան եղանակը ու սկսեց խօսել նրա հետ այնպիսի լուրջ ու առարկութիւն չը վերջնող ձևով, ինչպէս խօսում են երեխաների ու խելագարների հետ:

—Էհ, որ այդպէս է, ես ձեզ ասում եմ, որ դուք իրաւունք չունէք ոչ մի բան վերցնելու այստեղից: Ես բացարձակ կերպով արգելում եմ ձեզ այդ և կը դիմադրեմ ձեզ իմ առնական ամբողջ ոյժով, իմ հայրական ամբողջ իշխանութեամբ: Ի՞նչ է, կարծում էք, թէ ես կը թողնեմ, որ աղջիկս ամեն բանից զրկուի ու ստիպուած լինի չոր գետնին քնել... Ձէ, ներողութիւն կ'անէք... Ինչքան դժուարութիւն արեցիք՝ բաւական է: Այլ ես ոչ մի չիւղ դուրս չեն տանի այս բնակարանից:

Եւ պ. Շէրը, փակելով դուռը, կանգնեց չէմքի սուջեր հերոսական դիրքով: Ախր, սատոնան տանի, չէ որ նրա շահն էլ վտանգի էր ենթարկւում: Ձէ որ եթէ, ինչպէս նա ասում էր, նրա աղջիկը ստիպուած լինէր չոր գետնին քնել, նա ինքն էլ դժուար թէ կարողանար աղմուսամազէ անկողին ունենալ: Նա հրաշալի էր այդ՝ զայրացած հօր դիրքում, բայց երկար չը մնաց այդպէս: Երկու ձեռքեր, կարծես երկու երկաթէ մամուլներ, բռնեցին նրա կոնքերից և տարան կանգնեցրին նրան սենեակի մէջտեղը, ազատ թողնելով դուռը կահակիրների համար:

—Շէք, սիրելիս, լաւ լսեցէք ինձ,—ասում էր Ռիսլէրը՝

կռայած դէպի նա... Այ, այստեղս է հասել... Առաւօտից ի վեր սարսափելի ճիգ եմ թափում ինձ զսպելու համար, բայց ամենաշնչին մի պատճառ բաւական է ինձ համբերութիւնից հանելու համար, և վայ նրան, ում գլխին կը թափեմ բարկութիւնս: Աչքերս այնպէս կարմրել են, որ կարող եմ մարդասպանութիւն անել... Այնպէս որ լաւ կ'անէք, եթէ իսկոյն թողնէք գնաք...

Այնպիսի շեշտ կար նրա խօսքերի մէջ, այդ ասելիս այնքան պերճախօս կերպով էր նա ցնցում իր աներոջը, որ պ. Շէքը իսկոյն և եթ համոզուեց: Նա նոյն իսկ սկսեց կմկմալով ներողութիւն ինքրել: Ի հարկէ, Ռիսլէրը իրաւունք ունէր այդպէս վարուելու: Բոլոր ազնիւ մարդիկ նրա կողմը կը լինեն... Եւ այդպէս կմկմալով նա յետոյետ էր գնում դէպի դուռը: Շէքը քին հասնելով, նա վախժխելով հարցրեց, թէ արդեօք տիկին Շէքը այսուհետեւ էլ ստանալու է իր փոքրիկ թոշակը փեսայից:

—Այո,—պատասխանեց Ռիսլէրը,—բայց թոշակից աւելի չը ծախսէք, որովհետեւ այժմ իմ դրութիւնս փոխուել է: Ես այլ ևս առևտրատան մէջ մաս չունեմ:

Պ. Շէքը զարմանքից չռեց աչքերը և ստաղաւ այն ապուշ կերպարանքը, որ շատերին կարծեւ էր տալիս, թէ նրա գլխին եկած պատահարը,—յիշում էք, իսկ և իսկ այնպիսի պատահար, որ Օռլէանի դուքսի գլխին էլ էր եկել,—հնարովի բան չէր: Բայց նա չը համարձակուեց որ և է նկատողութիւն անել փեսային: Կարծես մի կտխարդ փոխել էր նրա փեսայի բնաւորութիւնը: Ով կ'ստի, թէ իրանց Ռիսլէրն է սա, այս վագրակատուն, որ ծպտուն հանելիս ժանիքները կրճտացնում էր և ուրիշ խօսք չունէր՝ բայի մարդասպանութիւնից:

Նա սուս ու փուս հեռացաւ, քիթը նորից բարձրացրեց միմիայն սանդուխի ներքեւում և անցաւ բակովը՝ քայլելով յաղթական կերպարանքով:

Երբոր ամբողջ բնակարանը դատարկեցին, Ռիսլէրը վերջին անգամ շրջեց բոլոր սենեակները և յետոյ վերցրեց բանալիքը, տարաւ ներքի Պլանիւսի սենեակը ու տուեց տիկին Ժօրժին:

—Այժմ կարող էք վարձով տալ այդ բնակարանը,—ասաց նա,—այդ էլ եկամուտի մի նոր աղբիւր կը լինի գործարանի համար:

—Իսկ դուք, սիրելի բարեկամ:

—Էհ, ինձ քիչ բան է պէտք: Մի երկաթէ մահճակալ վերնատանը շատ բաւական է ինձ նման մի գործակատարի համար: Որովհետեւ, կրկնում եմ, այսուհետեւ ես ոչ այլ ինչ եմ, թէ ոչ

մի հասարակ գործակատար... կարող եմ ասել՝ մի լաւ, մի կորովի ու հաւատարիմ գործակատար, որից, հաւատացած եղէք, զուր առիթ չէք ունենալ երբէք զանգատուելու:

Ժօրօր, որ հաշիւներ էր անում Պլանիւսի հետ, այնքան յուզուեց լսելով խեղճ Ռիսլէրի այդ խօսքերը, որ վեր թռաւ տեղիցը ու զուրս գնաց սենեակից: Հեկեկանքները խեղզում էին նրան: Կլէրը նոյնպէս սաստիկ յուզուեց և մօտենալով Ֆրօմօնների առևտրատան նոր պաշտօնեային.

—Ռիսլէր, —ասաց նրան, —չնորհակալութիւն եմ յայտնում ձեզ իմ հօր անունից:

—Ես էլ շարունակ նրա մասին եմ մտածում, տիկին, — պատասխանեց Ռիսլէրը ամենապարզ կերպով:

Այդ բոպէլին Աշիլլ քեռին ներս մտաւ ու բերեց նոր ստացուած նամակները:

Ռիսլէրը վերցրեց նամակների այդ կոյտը և սկսեց հանդիստ կերպով մէկ-մէկ քայ անել, կարգալ ու յետոյ տալ Սիգիզմունդին:

—Ահա մի յանձնարարութիւն Լիօնի համար... Ինչո՞ւ պատասխան չեն ուղարկել Սէնտ-Էտիէն:

Նա ամեն ջանք թափում էր խորատուզուելու այդ գործերի մանրամասնութիւնների մէջ և այդ անում էր մտքի զարմանալի պայծառատեսութեամբ, որ յառաջանում էր նրա հոգու յարատն ձգտումից դէպի անդորրութիւնն ու մոռացութիւնը:

Յանկարծ, այդ լայն ծրարների մէջ, որոնց վրայի գրոշմները կրում էին զանազան առևտրական անուններ և որոնց թղթից ու ծալուածքից դրասենեակի ու շտապ առաքման հոտ էր փչում, նա նկատեց մի աւելի փոքր ծրար, որ հոգատարութեամբ էր կնքուած և այնպէս գողունի կերպով էր սպրտել միւսների արանքին, որ նա սկզբում չէր նշմարել: Նա խկոյն ճանաչեց այդ նուրբ, երկարուկ ու հաստատուն գիրը: «Պարոն Ռիսլէրին:—Անձնական»: Սիգիզմի գիրն էր այդ: Տեսնելով այդ գիրը, Ռիսլէրը նոյնը զգաց, ինչ որ մի քիչ առաջ զգացել էր վերիում, նրա սենեակում:

Խաբուած ամուսնու ամբողջ սէրը, ամբողջ յասումը բորբոքուեցին նրա սրտում այնպիսի ուժգնութեամբ, որ մարդասպան է դարձնում մարդու: Ի՞նչ էր գրում նա իրան, էլ ինչ ստեր էր հնարել: Նա ուզում էր արդէն բանալ նամակը. բայց բաց չարեց: Նա հասկացաւ, որ եթէ կարգար այդ նամակը, այլ ևս սրտումը կորով չէր մնալ, ուստի կռանալով դէպի զանձապահը.

—Սիգիզմունդ, ծերուկս,—ասաց նրան ցած ձայնով,—կարող եմ ինքրել, որ մի ծառայութիւն մատուցանես ինձ:

—Ի՞նչ ասելու բան է... յափշտակութեամբ սլառասխանեց ծերուկը, որ անչափ բախտաւոր էր լսելով, որ իր բարեկամը խօսում է հետը իր հինաւուրց քաղցր ձայնով:

—Ա՛ռ այս նամակը, որ գրուած է իմ անունով և որ ես չեմ ուզում այժմ կարդալ: Հաւատացած եմ, որ դա կ'արգելի ինձ մտածել ու ապրել: Պահիր մօտդ, այս էլ հետը...

Նա հանեց գրպանիցը հոգատարութեամբ կապկպած մի փոքրիկ ծրար ու տուեց նրան ցանցապատի միջով:

—Այս է այն բոլորը, ինչ որ ինձ մնացել է անցեալից ու այն կնոջից... Ես վճռել եմ այլ եւ չը տեսնել ոչ նրան, ոչ էլ որեւէ բան, որ յիշեցնում է նրան, մինչև որ այստեղի գործերս չը վերջացնեմ ինչպէս պէտք է... Այս բանի համար ինձ պէտք է ամբողջ ուշ ու միտքս, հասկանում ես... Դու պէտք է վճարես Շէքսպիրն իրանց թողակը... Եթէ ինքն էլ որեւէ բան ուզի, ինչ որ պէտք է կ'անես... Բայց ինձ ոչինչ չասես նրա մասին... Իսկ այս աւանդը կը պահես, մինչև որ ուզեմ քեզանից:

Սիգիզմունդը նամակն ու ծրարը ուրիշ թանկագին լըզթերի հետ կողպեց իր գրասեղանի գաղտնի արկղիկում: Իսկ Ռիսէրը իսկոյն և եթ սկսեց կարդալ նամակները, բայց շարունակ նրա աչքի առաջ ձգւում էին անգլիական ձևի նուրբ ու երկարուկ տառերը, գրուած մի փոքրիկ ձեռքով, որ ինքը աջաբան յաճախ ու այնքան ջերմադին սեղմում էր երբեմն իր սրտին:

V

Կաֆե-շանսանում:

Շատ հազուադիւրս և բարեխիղճ ծառայող էր Փրոմօնների առևտրատան նոր գործակատարը:

Ամեն օր ամենից առաջ նրա մօտ էր վառւում և ամենից ուշ նրա մօտ էր մարում լամպը ամբողջ գործարանում: Վերնատանը, տանիքի տակին, նրա համար սարքել էին մի փոքրիկ սենեակ, իսկ և իսկ նման այն սենեակին, որի մէջ ապրում էին առաջ նա ու Ֆրանցը, մի կատարեալ վանական խուց, կահաւորուած մի երկաթէ մահճակալով և մի սպիտակ փայտէ սեղանով, որ գրուած էր նրա եղբոր պատկերի տակին: Այդտեղ նա վարում էր իր նախկին գործունեայ, կանոնաւոր ու խուփկեանքը:

Նա չարունակ աշխատանքի հետ էր և ճաշը բերել էր տա-
լիս իր հինաւուրց փոքրիկ ճաշարանից: Բայց, աւանդ, ընդ միշտ
անցած երիտասարդութիւնը ու չքացած յոյսերը ոչ մի քաղցրու-
թիւն չէին թողնում այդ հինաւուրց յիշատակների մէջ: Բարե-
բախտաբար, նա դեռ ունէր երկու սփոփանք, Ֆրանսիայ և տի-
կին Շօրշը, երկու միակ էակները, որոնց մասին նա կարող էր
մտածել առանց տխրութեան: Տիկին Շօրշը պահանջան հրեշտա-
կի նման խնամում ու մխիթարում էր նրան, Ֆրանսին էլ շուտ-
շուտ նամակ էր գրում, առանց սակայն երբեք յիշելու Սիդօնի
անունը: Ռիսլէրը կարծում էր, թէ մէկն ու մէկը իմաց է տուել
նրան պատահած դժբախտութիւնների մասին, և ինքն էլ իր կող-
մից իր նամակներում ոչ մի ակնարկ չէր անում այդ հարցի
մասին: «Ա՛խ, երբ պէտք է կարողանում նրան բերել տալ այս-
տեղ»: Նրա միակ իղձը, նրա փառասիրութեան միակ առարկան
էր՝ բարգաւաճութեան հասցնել գործարանը և բերել տալ իր եղ-
բորը:

Մինչ այդ, օրերը անցնում էին իրար յետեւից, միշտ միա-
կերպ՝ նրա համար, առևտրի եռուն աղմուկի և նրա վշտահար
ու կսկծալից միայնակութեան մէջ: Ամեն առաւօտ նա իջ-
նում էր ներքև, շրջում էր բոլոր արհեստանոցները, ուր նրա
ազգած խորին պատկառանքը, նրա խիստ ու լռակեաց դէմքը
վերականգնել էին՝ առ ժամանակ խանդարուած կարգը: Սկզբում
չատ էին ասէկօսէներով զրաղւում, հազար ու մի տեսակ բա-
ղատելով Սիդօնի անհետացումը: Ոմանք ասում էին, թէ նա
փախել է իր սիրականի հետ, միւսները՝ թէ Ռիսլէրը գուրս է
արել նրան տանից: Բոլորին չչկապնողը այն էր, որ առևտրա-
կիցները իրար վերաբերւում էին այնպէս սովորական կերպով,
ինչպէս առաջ: Սակայն երբեմն-երբեմն, երբ նրանք միայնակ
խօսում էին իրար հետ գրասենեակում, Ռիսլէրը յանկարծ ցընց-
ւում էր նստած տեղում, կարծես թէ երևակայութեան մէջ տես-
նելով նրանց անցեալ շնութեան պատկերը: Նա մտածում էր
այդ բոլորներին, թէ այդ աչքերը, որ տեսնում է այժմ, այդ
բերանը, այդ ամբողջ դէմքը անթիւ անգամ ստել են իր առաջ
իրանց հազար ու մի արտայայտութիւններով:

Այն ժամանակ նրա մէջ ցանկութիւն էր ծագում յարձակ-
ուել այդ թշուառականի վրայ, բռնել կոկորդիցը ու խեղդել
անխնայ կերպով, բայց խելոյն և եթ նա յիշում էր տիկին
Շօրշին և ձեռները թուլանում էին: Միթէ ինքը այնքան քա-
ջութիւն, այնքան ինքնազսպումն չը պէտք է ունենայ, որքան
այդ կիներ: Ո՛չ կլէրի, ոչ Ֆրօմօնի, ոչ ոքի մաքով չէր անցնում,

Նոյեմբեր, 1901.

թէ ինչեր է կատարուում այդ մարդու ներսումը: Հազիւ հազ էին կարողանում նրանք նշմարել նրա վարմունքի մէջ մի տեսակ խստութիւն ու անողորմութիւն, որոնք արտասովոր բան էին նրա համար: Այժմ բանուորները քաշուում էին Ռիսէր աւազից, և նրանցից այնպիսիները, որոնք չէին համակուում պատկառանքով դէպի նրա մի գիշերում սպիտակած մազերը և փոս ընկած ու ծերացած դէմքը, դող էին զգում նրա աչքերի տարօրինակ, պողպատէ գէնքի կապտածու փայլը յիշեցնող հայեացքից: Բանուորների հետ միշտ բարութեամբ, միշտ քաղցրութեամբ վարուող այդ մարդը այժմ անողորմ էր դարձել նոյն իսկ ամենաջնչին զանցառութիւնների նկատմամբ: Կարծես նա վրէժ էր հանում անցեալում սեղի ունեցած ինչ որ կոյր ու յանցաւոր ներողամտութեան համար, որի նկատմամբ ինքն իրան մեղաւոր էր համարում:

Յիրուէի, հիւանալի ծառայող էր Թրոմօնների առևտրատան այդ նոր գործակատորը:

Նրա չնորհիւ գործարանի զանգը, չը նայելով իր ծերացած ու ճաքած ձայնի դողդոջին, շատ չուտով ձեռք բերեց իր նախկին հեղինակութիւնը, և նա, որ ղեկավարում էր այդ ամբողջ գործարանը, ամենից խստապահանջն էր դէպի ինքը: Սակաւալէտ, ինչպէս մի արհեստաւորի աշակերտ, նա իր ուժիկի երեք քառորդը թողնում էր Պլանիւսի մօտ Շէքերի լոպակը տալու համար, բայց երբէք բան չէր հարցնում 'սրանց մասին': Ամսավերջի օրը փոքրիկ մարդուկը ճշտօրէն գալիս էր ստանալու իր փոքրիկ հասոյթը, ձգուած ու փքուած՝ Սիգիլմունդի նկատմամբ, ինչպէս վայել է մի հասոյթատէրի՝ իրան համոհութեամբ ստանալիս: Տիկին Շէքը մի քանի անգամ փորձեց սեմնուել փեսայի հետ, որին նա խղճում էր ու սիրում, բայց հէնց որ նրա քիչմիւրի շալը երևում էր դարպասի տակին, Սիգիլմունդի մոտսինը վախճում էր տանից:

Բանը նրանումն է, որ Ռիսէրի արիւթիւնը աւելի առերևոյթ էր, քան իրական: Նա չէր կարողանում երբէք մաքրիցը հանել իր կնոջը: Ի՞նչ դրութեան մէջ էր նա: Ի՞նչ էր անում: Ռիսէրը գրեթէ քէն էր զգում դէպի Պլանիւսը՝ նրա մասին իր հետ չը խօսելու համար: Նրան հանգիստ չէր տալիս մանաւանդ այն նամակը, որ նա քաջութիւն ունեցաւ չը բանալու: Շարունակ այդ նամակի մասին էր մտածում: Ախ, եթէ համարձակուէր, վաղուց պահանջած կը լինէր Սիգիլմունդից:

Մի օր փորձութիւնը շատ սաստիկ էր: Նա փնայել էր միտակ գրասենեակում: Ծերունի գանձապահը գնացել էր նախաճաշելու, թողնելով բանալին գրասենյակի արկղիկի վրայ, որ

չը տեսնուած բան էր նրա կողմից: Ռիսկերը չը կարողացաւ իրան զսպել: Արկղիկը բաց արեց, տնտղեց, թղթերը քրքրեց: Նամակը չը կար: Սիգիլովունդը անշուշտ աւելի խոր տեղ էր պահել նամակը, գուցէ նախատեսելով այն, ինչ որ այժմ տեղի էր ունենում: Արտի խորքումը Ռիսկերը դժգոհ չէր այդ անյաջողութիւնից, որովհետեւ նա լաւ զգում էր, որ եթէ գտնէր այդ նամակը, այլ եւ կը չքանար այն գործունեայ համակերպութիւնը, որ առանց այն էլ այնքան ծանր էր նրա համար:

Լի օրերը դեռ ոչինչ, տանելի էր: Խորասուզուած առեւտրատան հազար ու մի հոգսերի մէջ, Ռիսկերը այնքան յոգնում էր, որ գիշերը հասնելուն պէս վայր էր ընկնում անկողնի վրայ ինչպէս մի անզգայ զանգուած: Բայց կիրակին շատ երկար էր թւում նրան և տաժանելի: Ամայի բակերի և արհեստանոցների լուսթիւնը աւելի ընդարձակ առպարէզ էր բաց անում նրա մտածմունքի համար: Նա փորձում էր աշխատել, բայց զգում էր ուրիշների աշխատանքի խրախուսի պակասութիւնը: Միայն նա էր դրադուած լինում այդ հանգիստ վայելող ահագին գործարանի մէջ, որի շնչառութիւնն անդամ դադարում էր այդ օրը: Գլխած նիզերը, փակած պատուհանածածկերը և ամայի բակերում իր շան հետ խաղա ընկած Աշիլ քեռու հնչուն ձայնը,—ամեն ինչ յիշեցնում էր նրան իր միայնակութիւնը: Ամբողջ չրջակայ թաղն էլ այդպիսի տպաւորութիւն էր գործում նրա վրայ: Դատարկութիւնից աւելի լայն թուայող փողոցներում, որոնցով անց ու դարձ էին անում հազուադէպ հանգիստ դրօսնողներ, մեղամաղձօրէն տարածւում էր իրիկնաժամի զանգերի ձայնը, և երբեմն-երբեմն պարիղեան ժխորի մի արձագանք, անիւների զրդրոյց, ուշացած մի երգեհոն, մի կարկանդակավաճառ կնոջ ճռիկ թափանցում էին այդ լուսթեան միջով՝ կարծես նրան աւելի սաստկացնելու համար:

Ռիսկերը ծաղիկների ու սաղարթի զուգակցութիւններ էր որոնում, և մինչ նա տանում բերում էր թղթի վրայ ձեռքի մատիտը, նրա միտքը, որ բաւարար գործադրութիւն չէր զրտնում այդ բանում, գլուխն առնում, փախչում էր, թռչում էր դէպի անցեալ երջանկութիւնը, դէպի անմոռանալի աղէտները, նահատակում էր, և յետոյ, վերադառնալով, հարցնում էր խեղճ քնաչրջիկից, որ դեռ նստած էր լինում սեղանի մօտ. «Ի՞նչ ես չինել իմ բայակայութեան ժամանակ»: Աւանդ, նա ոչինչ չինած չէր լինում:

Օ՛րս, անվերջ, տխուր, տաժանելի կիրակիներ: Այն էլ ի նկատի ունեցէք, որ այդ բոլորի հետ նրա հոգու մէջ խառնուում էր նաև ժողովրդական նախապաշարմունքը տօն օրերի վերա-

բերմամբ, այդ քսան չորս ժամուայ քաղցր հանգստի վերաբերմամբ, որի ընթացքում մարդս կազդուրում է ոյժերը և վերականգնում կորույժը: Եթէ նա դուրս գար գործարանից, չէր կարողանայ դապել հեկեկանքները, երբ տեսներ մի բանուոր, որ զբօսնում է իր կնոջ ու երեխայի հետ, բայց նրա վարած վանականի փակ կեանքն էլ ուրիշ տեսակ տանջանքներ էր պատճառում նրան,—մենակեացներին յատուկ յուսահատութիւն, այնպիսի սարսափելի վրդովմունք, որ բորբոքւում է նրանց մէջ, երբ այն աստուածը, որին նուիրուել են նրանք, չի պատասխանում նրանց զոհերին: Այդ, Ռիսլէրի աստուածը աշխատանքն էր, և քանի որ նա այլ ևս անդորրութիւն ու հանգստութիւն չէր գտնում նրա մէջ, նա այլ ևս չէր հաւատում նրան և անիծում էր նրան:

Յաճախ, այդ ներքին մաքառման միջոցին, սենեակի դուռը կամաց բացւում էր և ներս էր մտնում Կլէր Փրօմօնը: Խեղճ Ռիսլէրի միայնակութիւնը այդ կիրակնօրեայ կէսօրավերջերին նրա գութը շարժում էր, և նա գալիս էր նրա մօտ իր փոքրիկ աղջկայ հետ, փորձով իմանալով, թէ որքան համակիչ է երեխաների քաղցր գգուանքը: Փոքրիկը, որ արդէն ոտ էր ելել և կարողանում էր մենակ ման գալ, մօր գրկից սլւում էր ու վազ տալիս իր բարեկամի մօտ: Ռիսլէրը լսում էր այդ կտկտան քայլերի ձայնը, զգում էր իր յետին այդ թեթև չնչառութիւնը և այդ իսկոյն և եթ առոյգացնող ու անդորրացնող տպաւորութիւն էր գործում նրա վրայ: Այնքան սրտագին կերպով էր փաթաթւում երեխան նրա վզովը իր թխլի կռներով և ծիծաղում իր միամիտ ու անառիթ ծիծաղով ու համբուրում իր սիրունիկ բերնով, որ դեռ չէր ստել երբէք: Կլէր Փրօմօնը, դառն մօտ կանգնած, ժպտում էր նայելով նրանց:

—Ռիսլէր, սիրելի բարեկամ,—ասում էր նա,—ինչո՞ւ չէք իջնում մի քիչ զբօսնելու պարտէզում... Կարելի է միթէ այդքան աշխատել: Չէ որ կը հիւանդանաք այդպիսով:

—Ձէ, չէ, տիկին... ընդհակառակը, աշխատանքն է ինձ փրկողը... Ձի թողնում, որ մտքիս հետ ընկնեմ...

Այնուհետև, երկար լռութիւնից յետոյ, Կլէրը նորից սկըսում էր.

—Այդպէս չի կարելի, սիրելի Ռիսլէր, պէտք է աշխատեք մոռանալ:

Ռիսլէրը պտտում էր գլուխը:

—Մոռանալ... Միթէ կարելի բան է այդ: Կան բաներ, որոնք մարդու ուժից վեր են: Կարելի է ներել, բայց մոռանալ՝ երբէք:

Գրեթէ միշտ վերջանում էր նրանով, որ երեխան քաշ էր տալիս նրան պարտէզը: Կամայ-ակամայ նա պէտք է գնդակ կամ աւազակոյտ խաղար փոքրիկի հետ, բայց խաղընկերի անշնորհքութիւնն ու կիսասիրտ վերաբերմունքը դէպի խաղը շատ շուտ սառցնում էին փոքրիկի աշխոյժը: Այն ժամանակ նա դարձում էր խաղալուց և հանգիստ էր կենում ու բաւականանում էր իր բարեկամի ձեռքը բռնած ծանրաբարոյ կերպով ման գալով տօսախնձորի ծառուղիում: Ռիսկերը շուտով մոռանում էր, թէ երեխան իր կողքին է, բայց առանց նրա գիտակցելուն՝ այդ փոքրիկ ձեռքի տաքութիւնը, որ նա բռնած ունէր իր ափի մէջ, մագնիսական կերպով ամրոքում էր նրա խոցիտուած սիրտը:

Կարելի է ներել, բայց մոռանալ՝ երբէք...

Խեղճ Կլէրն էլ այդ գիտէր, որովհետեւ նա էլ ոչինչ չէր մոռացել, չը նայելով սրտի ամբողջ կորովին և այն գաղափարին, որ նա ունէր իր պարտականութեան մասին: Նրա համար էլ, ինչպէս Ռիսկերի համար, այն միջավայրը, ուր ապրում էր, մի մշտական յուշարար էր կրած տանջանքների: Շրջապատող իրերը անզթաքար բանում էին նրա սրտի խոցը, որ պատրաստ էր փակուելու: Սանդուխը, պարտէզը, բակը, Սիդօնիի ու Ժօրժի շնութեան այդ համր վկաներն ու մեղսակիցները որոշ օրեր անողոք կերպարանք էին ունենում: Նոյն իսկ այն ջանքերը, այն նախազգուշութիւնները, որ ամուսինը ձեռք էր առնում, որպէս զի զառն յիշողութիւններ չը զարթնէին նրա մէջ, այն չափադանդում հոգատարութիւնը, որ նա ցայց էր տալիս՝ երեկոները այլ ևս տանից դուրս չը գալով և մանրամասնօրէն պատմելով, թէ ուր է գնացել ցերեկը, — այդ բոլորը աւելի ևս առիթ էր տալիս նրան յիշելու ամուսնու դաւաճանութիւնը: Երբեմն քիչ էր մնում խնդրէր, որ խնայի իրան, ասէր՝ «Այդքան ջանք մի թափի»... Հաւատը խախտուել էր նրա մէջ, և սարսափելի տանջանքը մի քահանայի, որ կասկածով է վերաբերում իր աստուածութեան և սակայն ուզում է հաւատարիմ մնալ իր ուխտին, ակամայ արտայայտում էր նրա զառն ժպիտի, նրա սառն ու անտրտուն ճկութեան մէջ:

Ժօրժը սաստիկ տանջւում էր: Այժմ նա սիրում էր իր կնոջը: Կլէրի բնաւորութեան վեհութիւնը յաղթել էր նրան: Հիացմունք կար այդ սիրոյ մէջ, և ինչո՞ւ չասել, — վիշտը Կլէրի գեղեցկութեանը աւելացնում էր մի հրապոյր, որ փոխարինում էր կօքէտութիւնը, մի բան, որ Կլէրի բնաւորութեան դէմ էր և որի պակասութիւնը միշտ զգալի էր ամուսնու համար: Ժօրժը այն առանձնատեսակ տիպի տղամարդիկներիցն էր, որոնք

սիրում են նուաճումներ անել: Քմահած ու սառը Սիդոնին համապատասխանում էր նրա սրտի այդ խեղաթիւր ձգտումին: Ամենաքնքոյշ հրաժեշտի հետեւալ օրը Սիդոնին հանգրիպում էր նրան անտարբեր ու մոռացկոտ կերպով, և այդ մշտական կարիքը՝ նորից գրաւելու նրա սիրտը՝ ժօրժի համար փոխարինում էր իսկական սէրը: Անդորր սէրը ձանձրացնում էր նրան, ինչպէս ծովասէր նաւորդին՝ անփոթորիկ նաւագնացութիւնը: Այս անգամ նա իր կնոջ հետ քիչ էր մնում նաւաբեկութեան ենթարկուէր, և զեռ մինչև այժմ էլ վտանգը բոլորովին չէր անցել: Նա գիտէր, որ Կլէրը բոլորովին սառել էր իրանից ու ամբողջապէս անձնատուր եղել երեսային, որ այժմ միակ կապն էր նրանց մէջ: Այդ սառնութիւնը աւելի գեղեցիկ, աւելի բաղձալի էր թուացնում նրան, և ժօրժը նրա սիրտը նորից շահելու համար գործ էր դնում իր ամբողջ հրապուրչական արհեստը: Նա զգում էր, որ շատ դժուար կը լինի այդ և որ ինքը գործ ունի մի բացառիկ հոգու հետ: Սակայն նա չէր յուսահատուում: Երբեմն-երբեմն նրա ճիգերը դիտող այդ մեղմ և ըստ երևոյթին բոլորովին անզգամ հայկացի խորքում երևում էր մի անորոշ ցոլք, որ յոյսեր էր ներշնչում նրան:

Ինչ վերաբերում է Սիդոնիին, նա այլ ևս չէր մտածում նրա մասին: Եւ թող ընթերցողը չը զարմանայ այդ արագ բարոյական պառակտման վրայ: Այդ երկու վայրիվերոյ էակները ոչինչ չունէին, որ կարողանար խոր կերպով կապել նրանց իրար հետ: Ժօրժը անընդունակ էր կրկն երկարատև տպաւորութիւններ, եթէ այդ տպաւորութիւնները չը նորոգուէին չարունակ. Սիդոնին էլ իր կողմից անկարող էր ազդել որ և է յարատև կամ զօրեղ զգայմունք: Նրանց սիրահարութիւնը կօկոտի ու ֆատի սիրահարութիւն էր, բաղկացած սնտկառ ձգտումներից ու խռովկոտ ինքնասիրութիւնից, անկարող ներշնչելու ոչ անձնութիւն, ոչ հաւատարմութիւն, և ընդունակ զրդել միմիայն դէպի տրագիկական արկածներ, մենամարտութիւններ ու ինքնասպանութեան փորձեր, որոնցից գրեթէ միշտ վերադառնում են և վերադառնում են բուժուած: Ո՞վ գիտի, եթէ նա նորից տեսնէր Սիդոնիին, թերևս դարձեալ սիրահարուէր վրան, բայց փախուստի հողմը այնքան արագ և այնքան հեռու էր տարել Սիդոնիին, որ վերադարձը անհնար էր: Յամենայն դէպս, ժօրժի համար մեծ սփոփանք էր, որ կարող էր այժմ ապրել առանց ստելու, և նրա վարած նոր կեանքը, որ լի էր ախտատանքով ու զրկանքներով և ունէր յաջողութեան հեռաւոր նպատակակէտ, անախորժ չէր նրա սրտին: Եւ լաւ էր, որ այդպէս էր, որովհետև երկու առևտրակիցների կորույն ու հաս-

տատուն կամքը հաղիւ հազ կարող էին բաւական լինել գործարանի դրութիւնը վերականգնելու համար:

Ֆրոմօնների խեղճ առևտրատունը խարխուլ նաւի էր նրման, որի մէջ ամեն կողմից ջուր էր ներս լցւում: Պլանիւս քեռին զեռ շատ սև գիշերներ անց կացրեց, տանջուելով վճարման պայմանաժամի կոշմարից և կապոյտ մարդուկի տեսիլքից: Բայց խնայողութիւններ անելով միշտ յաջողեցնում էին վճարել ժամանակին:

Շատ չանցած չորս հատ Ռիսլէրեան տպագրիչներ, վերջնապէս սարքի գցուելով, սկսեցին բանել գործարանում: Որմաթղթերի վաճառանոցում սկսեցին յուզուել այդ բանից: Լիօնը, Կանը, Ռիքսբէյմը, արդիւնաբերութեան այդ խոշոր կենտրոնները շատ էին անհանգստանում այդ զարմանալի «պտտուն և տանկերիւ անկիւնանի» մեքենայի պատճառով: Մի գեղեցիկ օր էլ Պրօշասօնները եկան ու երեք հարիւր հազար ֆրանկ առաջարկեցին հէնց միմիայն արտօնութեան իրաւունքին մասնակից լինելու համար:

—Ի՞նչպէս պէտք է անել... հարցրեց Ֆրոմօն կրտսերը Ռիսլէր աւագից:

Ռիսլէրը ուսերը վեր քաշեց անտարբեր կերպով:

—Ի՞նչպէս ուզում էք վճանցէք... Այդ ինձ չի վերաբերում: Ես միմիայն ձեր գործակատարն եմ:

Պաղարիւն ու անդայրոյթ կերպով ասուած այդ խօսքերը սառը ջուր ածեցին Ֆրոմօնի թեթևամիտ հրճուանքի վրայ և յիշեցրին նրան իրանց դրութեան լրջութիւնը, որ նա միշտ քիչ էր մնում մոռանար:

Սակայն, հէնց որ մենակ մնաց իր սիրելի տիկին Շօրչի հետ, Ռիսլէրը խորհուրդ տուեց շքնդուսնել Պրօշասօնների առաջարկութիւնը:

—Սպասեցէք... մի շտապէք: Յետոյ աւելի թանգ կարող էք ծախել:

Նա միմիայն նրանց մասին էր խօսում այդ գործում, որ այնքան փառաւոր կերպով վերաբերում էր իրան: Պարզ էր, որ նա ինքն իրան զատում էր նրանց ապագայից:

Մինչ այդ՝ պատուէրներ էր, որ գալիս էին, կուտակուած իրար վրայ: Թղթի յատկութիւնը և պատրաստութեան հնչտութեան շնորհիւ էժանացած գները անհնար էին դարձնում որ և է մրցութիւն: Անկասկածելի էր այլ ևս, որ շատ չանցած՝ վիթխարի հարօտութեան տէր էին դառնալու Ֆրոմօնները: Գործարանը նորից ստացել էր իր նախկին ծաղկեալ տեսքը և առաջումն պէս ազմկալից մեթակ էր յիշեցնում: Աշխատանքը և

ուում էր բոլոր շէնքերում, որոնք լիքն էին հարիւրաւոր բանուորներով: Պլանիւս քեռին այլ ևս չէր կարողանում քիթը հեռացնել գրասեղանից: պարտէզից երևում էր, թէ ինչպէս նա, կռայած իր հաստափոր հասոյթադրքերի վրայ, գեղեցիկ թուանշանների շարքերով գրի էր անցնում տպագրիչի եկամուտները:

Ռիսլէրը նոյնպէս աշխատանքից աչք չէր բաց անում: Վերսկսուած բարգաւաճութիւնը ոչ մի փոփոխութիւն չը մտցրեց նրա ճգնականաց սովորութիւնների մէջ, և ապարանքի վերջին յարկի ամենաբարձր լուսամուտիցն էր նա լսում իր մեքենաների եռանդուն աղմուկը: Գործերը յաջող էին գնում, բայց նա նոյնչափ մռայլ էր և նոյնպէս լռակիաց, ինչպէս և առաջ: Սակայն մի օր գործարանում տեղեկութիւն ստացուեց, որ Տրպագրիչը, որի մի օրինակը ուղարկել էին Մանչէստրի մեծ ցուցահանդէսը, այնտեղ արժանացել էր ոսկէ մէդալի, որով վերջնապէս նուիրագործուել էր նրա յաջողութիւնը: Տիկին Ժօրժը պարտէզը կանչեց Ռիսլէրին նախաճաշի պահին և ինքը անձամբ աւետեց նրան այդ ուրախ լուրը:

Այդ լսելով Ռիսլէրը ժպտաց հպարտ կերպով և նրա ծեռայած ու մռայլ դէմքը բացուեց: Հնարիչի յաղուրդ ստացած փառասիրութիւնը ու ձեռք բերած պարծանքը և մանաւանդ այն միտքը, որ ինքը այդպէս հիանալի կերպով ուղղել էր այն չարիքը, որ իր կիներ հասցրել էր առևտրատանը, մի բոպէ իսկական երջանկութիւն պատճառեցին նրան: Նա սղմեց կլէրի ձեռքերը, և մրմնջաց, ինչպէս մրմնջում էր երբեմն երջանիկ օրերին.

—Շատ գոհ եմ... Շատ գոհ...

Բայց ճրքան տարբերութիւն արտասանութեան եղանակի մէջ: Նրա ձայնի մէջ չը կար յափշտակութիւն, չը կար յոյս, այլ միմիայն պարտականութիւնը կատարած լինելուց յառաջացած գոհութեան զգացմունք, աւել ոչինչ:

Չանգը խփեցին, որպէս զի բանուորները վերսկսեն աշխատանքը, և Ռիսլէրը հանգիստ կերպով գնաց վերի ուրիշ օրերի նման աշխատելու համար:

Բայց մի բոպէ անցած նա նորից իջաւ ներքև: Այնուամենայնիւ այդ լուրը նրան աւելի էր յուզել, քան նա ուզում էր ցոյց տալ: Նա դէս ու դէն էր գնում պարտէզում, պտոյտպտոյտ էր գալիս գանձարանի շուրջը, տխուր-տխուր ժպտալով Պլանիւսին պատուհանի սպակինների միջով:

—Ի՞նչ է պատահել դրան,—հարցնում էր ինքն իրան ծերուկը... Ի՞նչ է ուզում ինձանից:

Վերջապէս, երեկոյեան, այն միջոցին, երբ գանձապահը

փակելու էր գրասենեակը, Ռիսլէրը վճռեց ներս մտնել ու խօսել հետը:

—Պլանիւս, սիրելիս, ես ուզում էի...

Նա կմկմաց մի քիչ:

—Ուզում էի խնդրել, որ տաս... այն նամակը, յիշում ես, այն փոքրիկ նամակն ու ծրարը:

Սիգիզմունդը ապշած նայեց նրա երեսին: Նա այնքան միամիտ էր, որ երեսակալում էր, թէ Ռիսլէրը բոլորովին մոռացել է Սիգոնիին ու այլ ես չի մտածում նրա մասին:

—Ի՞նչպէս... ուզում ես...

—Լսիր, սիրելիս, ես այնքան բան արեցի, որ արժանի եմ դրան: Ես իրաւունք ունեմ մի քիչ էլ իմ մասին մտածել այժմ. բաւական է ինչքան մտածեցի միմիայն ուրիշների մասին:

—Ճիշտ ես ասում,—ասաց Պլանիւսը:—Որ այդպէս է, ահա ինչ կ'անենք: Նամակն ու ծրարը մեր տանն են, Մօնոուփում: Եթէ կ'ուզես, գնանք Պալէ-Ռօյալ ճաշելու, միտդ է, ինչպէս առաջուան ժամանակները: Հիւրասիրողը ես եմ լինելու... Պէտք է ոսկէ մեղալի սրսկենք ընտիր, թանկագին գինիով... Յետոյ միասին կ'երթանք մեր տունը ու դու կը վերջնես քո բաները, իսկ եթէ չատ ուշ լինի յետ դառնալու համար, քոյրս, օրիորդ Պլանիւսը անկողին կը պատրաստի քեզ համար ու դու կը քնես մեզ մօտ... Այնտեղ չատ լաւ է... քաղաքից դուրս է... Վաղը՝ առաւօտ, ժամի եօթին, մենք միասին կը վերադառնանք գործարան առաջին հանրակառքով... Դէ, թէ բարեկամ ես, խաթրս մի կոտորիր. թէ չէ կարծելու եմ, թէ դեռ ոխ ես պահում սրտումդ քո ծերունի Սիգիզմունդի դէմ...

Ռիսլէրը համաձայնեց: Նրա ուղածը մէղալը սօնելը չէր, այլ ժամ առաջ բանալ այն փոքրիկ նամակը, որը կարդալու իրաւունք էր ձեռք բերել վերջապէս:

Պէտք էր հագնուել: Ահագին գործ էր այդ, որովհետեւ վեց ամսից ի վեր նա միշտ աշխատանքի բաժկոնով էր լինում: Մի ամբողջ դէպք էր այդ գործարանում: Իսկոյն և եթ իմաց տուեցին տիկին Ֆրոմօնին:

—Տիկին, տիկին... Պ. Ռիսլէրը տանից դուրս է գալիս:

Կլէրը դուրս նայեց պատուհանովը, և Ռիսլէրի յաղթանդամ մարմինը, ճկուած վշտից և կոթնած Սիգիզմունդի թևին, խորին ու տարօրինակ յուզմունք պատճառեց նրան, որ նա այնուհետեւ չէր կարողանում մոռանալ երբէք:

Փողոցում մարդիկ համակիր կերպով ողջունում էին Ռիսլէրին, և լուի այդ քաղցր ողջոյնները բաւական էին նրա սիրտը քերմացնելու համար: Այնքան կարիք ունէր խեղճը բարեա-

ցակամութեան: Բայց կառքերի գղրգոցը մի քիչ շնչեղնում էր նրան:

— Գլուխս պտոյտ է գալիս... ասում էր նա Պլանիւսին:

— Լաւ կռթնիր իմ վրայ, ծերուկս... մի վախեցիր:

Եւ Պլանիւսը շիտկում էր, թեանցուկ տանելով իր բարեկամին այնպիսի միամիտ ու մոլեռանդ հպարտութեամբ, ինչպէս հարաւային Ֆրանսիայի մի գեղջուկ տանում է իրանց գիւղի հովանաւոր սուրբի պատկերը:

Վերջապէս նրանք հասան Պալէ-Ռոյալ:

Պարտէզը լի էր բազմութեամբ: Եկել էին երաժշտութիւն լսելու, և աթոռների գղրգոցի ու փողու մէջ ամենքը տեղ էին փնտռում իրանց համար: Ռիսլէրն ու Պլանիւսը շտապեցին մըտնել ճաշարանը այդ աղմուկից խուսափելու համար: Նրանք տեղաւորուեցին առաջին յարկի մեծ դահլիճներից մէկում, որտեղից երևում են սաղարթախիտ ծառերը, զբօսողները և ծաղկոցի երկու մարգերի արանքում ցայտող շատրուանի ցցունքը: Սիգիզմունդի համար ճոխութեան իղէալ էր ճաշարանի այդ դահլիճը, ուր ոսկեզօծանք էր նշմարւում ամեն տեղ, հայելիների շուրջը, ջահի մէջ և մինչև իսկ ուռուցիկ որմաթղթի վերայ: Սպիտակ անձնուցիկը, փոքրիկ հացերը և հաստատագին ճաշի ցուցակը հրճուանքով լցնում էին նրա սիրտը:

— Լաւ է, չէ... ասում էր նա Ռիսլէրին:

Եւ ամեն անգամ երբ բերում էին այդ երկու ու կէս ֆրանկ արժող ճաշի կերակուրները, նա գովասանական բացականչութիւններ էր արձակում և բռնի լցնում իր բարեկամի ամանը:

— Կեր սրանից... լաւ բան է:

Ռիսլէրը, չը նայելով իր ցանկութեանը՝ պատուել իր բարեկամի հիւրասիրութիւնը, մտահոգ էր թւում և շարունակ դուրս էր նայում պատուհանովը:

— Յիշում ես, Սիգիզմունդ... հարցրեց նա մի քիչ անցած:

Ծերունի գանձապահը, որ բոլորովին անձնատուր էր եղել այն ժամանակուայ յիշատակներին, երբ Ռիսլէրն ու ինքը նոր էին մտել գործարան, պատասխանեց.

— Ի հարկէ, յիշում եմ: Ես ու դու առաջին անգամ այստեղ ճաշել ենք 46 թուի փետրուարին, այն տարին, երբ փորագրութեան տախտակները հաստատուեցին գործարանում:

Ռիսլէրը գլուխը թափ տուեց.

— Չէ... իմ տաճա երեք տարուայ բան է... Դիմացի դահլիճումը չէր, որ ճաշեցինք այն նշանաւոր երեկոն:

Եւ նա ցոյց տուեց Պլանիւսին Վէֆուրի հիւրանոցի ահա-

զին պատուհանները, որոնք վերջալոյսի շողքերից փողփողում էին հարսանեկան հացկերոյթի ջահերի նման:

—Հա, ճիշտ որ,—մոմաւայ Սիգիզմունդը փոքր ինչ չը-
փոթուելով: Ի՞նչ չարաբաստիկ միտք էր՝ բերել Ռիսէրին
այսպիսի մի տեղ, որ այդքան ծանր յիշողութիւններ էր զար-
թեցնում նրա մէջ:

Ռիսէրը, չուզելով տխրեցնել իրանց ճաշը, յանկարծ բար-
ձրացրեց բաժակը:

—Դէ, քո կենացդ, իմ հինաւուրց ընկեր:

Նա աշխատում էր խօսակցութեան ատարկան փոխել,
բայց մի բոպէ անցած, հէնց ինքը սկսեց նոյն բանի մասին խօ-
սել ու ցած ձայնով, կարծես թէ ամաչելով, հարցրեց Սիգիզ-
մունդից.

—Նրան չեմ տեսել իսկի:

—Կնձգ... Չէ, ամենևին չեմ տեսել:

—Այլ ես նամակ չի՞ գրել:

—Չէ... ոչ մի նամակ:

—Բայց եւ այնպէս դու անպատճառ տեղեկութիւն կ'ունե-
նաս նրա մասին: Ի՞նչ էր անում այս վեց ամիսը: Հօր ու մօր
մօտն է ապրում:

—Չէ:

Ռիսէրը գունատուեց:

Նա յոյս ունէր, թէ Սիգիզմունդ վերադարձած կը լինէր մօր
մօտ, թէ նա էլ իր պէս անձնատուր եղած կը լինէր աշխա-
տանքի՝ անցեալը մոռանալու եւ քաւելու համար: Նա մտածում
էր յաճախ, թէ այն ժամանակ, երբ ինքը իրաւունք կ'ունենայ
խօսել նրա մասին, կը կարգադրի իր ապագայ կեանքը նայելով
այն տեղեկութիւններին, որ կը հաղորդեն իրան նրա մասին,
եւ հետաւոր ապագայում, որ երազի նման անորոշ է թւում մեզ,
նա երբեմն-երբեմն երեւեակում էր իրան ու Շէքսպիրն քաջուած
մի անյայտ երկիր, ուր ոչինչ չէր կարողանայ յիշեցնել նրան
իրանց անցեալ խայտառակութիւնը: Որոշ ծրագիր չէր այդ,
բայց մի յոյս էր այդ, որ նա տածում էր իր հոգու խորքում,
դրդուած բոլոր մարդկանց յատուկ պահանջից՝ անվերջ ձգտելու
գէպի երջանկութիւնը:

—Ո՞րտեղ է նա, Պարիզումն է,—հարցրեց նա մի փոքր
մտածելուց յետոյ:

—Չէ... Երեք ամիս կը լինի, որ հեռացել է Պարիզից: Չը
գիտեն թէ ուր է գնացել:

Սիգիզմունդը չաւելացրեց, որ նա գնացել էր իր Կաղա-
բօնիի հետ, որի անունն էր կրում նա այժմ, որ նրանք միա-

սին չըջում էին գաւառական քաղաքները, որ նրա վշտահար մայրը երբէք չէր տեսնում նրան ու միմիայն Դըլօբէլի միջոցով էր տեղեկութիւններ ստանում նրա մասին: Սիգիզմունդը լաւ համարեց այդ բաները չասել և յայտնելով, որ նա գնացել է Պարիզից, լռեց:

Ռիսլէրն էլ նմանապէս չէր համարձակում այլ ևս որ և է բան հարցնել:

Մինչ նրանք այդպէս դէմ առ դէմ նստած նեղւում էին իրանց երկարատև լուսթիւնից, պարտէզի ծառերի տակ թնդաց գինուորական երաժշտութիւնը: Նուագում էին իտալական օպերաների ու վէրտիւրներից մէկը, որոնք կարծես յատկապէս յօրինուած են հրապարակական բացօթեայ զբօսավայրերի համար և որոնց բաղմարանակ նստաները, օդը բարձրանալով, խաւնդւում են ծիծեռնակների «պըստ... պըստ»-ների և շատրուանի մարգարտաձև դայտի հնչիւնների հետ: Որտաձայն պղնձէ փողերը աւելի ևս զգալի են դարձնում բարեխառն մեղմութիւնը ամարային երեկոնների, որոնք ափսոսանք խոնջացած, ափսոսանք երկար են լինում Պարիզում. թւում է, թէ մարդ ոչինչ չէ լրսում բացի այդ փողերի ձայնից, կառքերի հեռաւոր զղրդոցը, խաղաղող երեխաների աղաղակները և զբօսնողների ոտնաձայնը իրանց հետ վերև են տանում այդ դայտուն ու զովացուցիչ հնչական ալիքները, որոնք նոյնքան օգտակար են պարիզցիների համար, որքան նրանց զբօսատեղերի ամենօրեայ ջրջնքումը: Բոլոր չըջապատող յոգնած ծաղիկները, փողուց սպիտակած ծառերը, չոքից զոնատուած ու փայլատուած դէմքերը, մեծ քաղաքի բոլոր վշտերն ու թշուառութիւնները, մտահոգ ճկուած պարտէզի նստարանների վրայ, սփռիլի ու կազդուրիլ տպաւորութիւն են ստանում այդ երաժշտութիւնից: Այդ ակիօրդները թափանցում են օդի միջով, չարժում ու փոփոխում են նրա շերտերը և ներդաշնակութիւն սփռում նրա մէջ:

Խեղճ Ռիսլէրը մի տեսակ հանգստութիւն զգաց իր բոլոր ջղերի մէջ:

— Մարդուս վրայ լաւ է ազդում երաժշտութիւնը... ասաց նա փայլուն աչքերով, և յետոյ, ձայնը ցածացնելով, աւելացրեց.

— Սիրտս լիքն է, սիրելիս... Եթէ խմանայիր...

Նրանք մնացին լուռ, կոթնած պատուհանին, մինչ մատուցանում էին նրանց սուրճը:

Յետոյ երաժշտութիւնը դադարեց և պարտէզը դատարկուեց: Անկիւններում ու շաղկապ արևը բարձրացաւ դէպի կտուրը, լուսաւորեց իր վերջին շողքերով ամենաբարձր ապակիները ու ծիծեռնակներին, որոնք, տանիքի ջրորդանի վրայից, ուր թա-

ռել էին իրար հուպ եկած, վերջին ճռուղիւնով ողջունեցին մարող վերջալոյսը:

—Ի՞նչ կ'ասես, Ուր գնանք այժմ,—հարցրեց Պլանիւսը ճաշարանից դուրս գալիս:

—Ուր ուզում ես...

Մօտերքում, Մօնպանսիէ փողոցում գտնուող մի տան առաջին յարկում մի կաֆէ-շանտան կար, ուր հետզհետէ մտնում էին բազմաթիւ մարդիկ:

—Լաւ չի լինի, եթէ մենք էլ գնանք այդտեղ,—հարցրեց Պլանիւսը, որ ինչ էլ լինի, ուզում էր զրուել իր բարեկամի տխրութիւնը,—հիանալի գարեջուր ունեն:

Ռիսլէրը չը դիմադրեց. վեց ամսից ի վեր նա գարեջուր չէր առել բերանը...

Մի հին ճաշարան էր այդ, նուագադահլիճի փոխարկուած: Երեք ընդարձակ սենեակներ, որոնց միջնորմները քանդել էին, հետևում էին իրար, պահպանուելով ու իրարից զատուելով սակեղօծ սիւներով և մի մաւրիտանական վառ կարմիր ու մեղմ կապոյտ գէկօրայիայով, որի վրայ իբրև գարդեր նկարուած էին զլխի փաթեթներ և փոքրիկ մահիկներ:

Չը նայելով կանուխ ժամին, դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր, և նոյն իսկ դեռ ներս չը մտած՝ մարդ քիչ էր մնում խեղդուէր, տեսնելով սեղանների շուրջը կուտակուած բազմութիւնը և խորքում, սիւների շարքի յետին, կիսով չափ ծածկուած բեմի վրայ՝ դադի շլացուցիչ փայլի և ջերմացած օդի մէջ շարէշար նստոտած սպիտակազգեստ կանանց:

Ռիսլէրն ու Սիդիդմունդը մեծ գժուարութեամբ կարողացան մի կերպ տեղաւորուել, ահն էլ մի սիւնի յետին, որտեղից նրանք կարող էին տեսնել միմիայն բեմի կէսը, ուր այդ ժամանակ կանգնած էր մի փառահեղ պարոն Փրակով ու դեղին ձեռնոյներով, պանգուրուած, օծուած ու կոկուած, որ երգում էր գիլ ձայնով.

Սիրուն ասիւծներ, սակեպոյն բաշով,

Ծարաւի՝ արեան իմ ոչխարների,

Կանգ առէք այդտեղ, ոչ մի քայլ այլ ես...

Արթուն եմ ես, պահապանը նրանց...

Հանդիսատեսները—չըջակաքի մանր խանութպանները իրանց տիկիներով ու օրիորդներով—յափշտակուած էին թւում, մանաւանդ կանայք, իսկ և իսկ այդ խանութպանուհիների ու գործակատարուհիների երևակայած իգէալն էր այդ անապատային փառահեղ հովիւը, որ պարահանդիսային զգեստով պահպանում էր իր հօտը ու այդպէս իշխանաբար խօսում առիւծ-

ների հետ։ Ուստի, չը նայելով իրանց բուրժուական ձևերին, իրանց համեստ հագուստներին ու իրանց խանութպանական տափակ ժպիտին, այդ բոլոր տիկիները, մեկնելով իրանց փոքրիկ կոտուցները գէպի զգայականութեան խայծը, սիրահալ աչքերը ծոր էին տալիս գէպի երգչի կողմը։ Ծիծաղելի էր տեսնել, թէ ինչպէս գէպի բեմը ուղղուած այդ հայտաքը կերպարանափոխուած էր յանկարծ, արհամարհոտ ու վայրագ արտայայտութիւն ստանաւ, ընկնելով խեղճ ամուսնու վրայ, որ իր համար հանգիստ գարեջուր էր խմում, կնոջ դիմացը նստած։ «Ձէ մի դու էլ կարող էիր այդպէս սաստել առիւծներին, այն էլ ֆրակով ու գեպին ձեռնոցներով»...

Եւ ամուսնու աչքերը կարծես պատասխանում էին.

— Ամեն մարդ հօ չի կարող այդպէս ափզանջ լինել։

Բաւական անսարքեր վերաբերուելով այդ տեսակ հերոսութեան՝ Ռիսլէրն ու Սիգիզմունդը վայելում էի իրանց գարեջուրը, առանց շատ ուշադրութիւն դարձնելու կրած շտուկութեանը, երբ ուսմանը վերջանալուց յետոյ սկսուած ծափահարութիւնների, աղաղակների ու ժխտի մէջ Պլանիւսը բացականչեց։

— Վա՛, ինչ եմ տեսնում... հէնց իմանաս... չէ, չեմ սխալում, հաստատ նա է... Դըլօբէլը։

Յիրաւի Դըլօբէլն էր այդ, որին Սիգիզմունդը նոր միայն նկատեց բեմի մօտի առաջին կարգում։ Նրա ալեխառն գլուխը երևում էր երեք քառորդով։ Նա անհոգաբար կռթնել էր մի սիւնի, գլխարկը ձեռքին, և այնպէս կոկուած, զուգուած ինչպէս զուգուում էր առաջնեկ ներկայացումներին գնալիս, — սպիտակեղէնը՝ շրացուցիչ, մազերը մանր գանգուր դրուած, և ֆրակի մէքը զարգարած կամէլիայով։ Նա երբեմն-երբեմն նայում էր բաղմութեանը սաստիկ բարձրից, բայց աւելի յաճախ նա շուռ էր գալիս գէպի բեմը, գէմքի սիրալիր արտայայտութիւններով, իրախոսիչ ժպիտներով ու անձայն ծափահարութիւններով դիմելով մէկին, որին Պլանիւսը չէր կարող տեսնել իր տեղից։

Հռչակաւոր Դըլօբէլի ներկայութիւնը այդպիսի մի նուագասրճարանում տարօրինակ չը պէտք է թուէր, քանի որ նա միշտ դրսին էր լինում երեկոները, բայց և այնպէս ծերունի գանձապահը մի քիչ այլայլուեց, մանաւանդ երբ հանդիսատեսների նոյն կարգում նկատեց մի կապոյտ կանացի գլխարկ ու պողպատազոյն աչքեր։ Տիկին Դօրսօնն էր այդ, երգեցողութեան սանտիմէնտալ վարժուհին։ Չիբուխների ծխի և բաղմութեան խառնաշփոթութեան մէջ այդ երկու, իրար մօտակայ, կերպարանքները այնպիսի տպաւորութիւն գործեցին Սիգիզմունդի

վրայ, ինչպէս վատ երազում զուգադիպաբար տեսած երկու տեսիլքներ: Նա վախ զգաց իր բարեկամի համար, առանց պարզ գիտակցելու թէ ինչու, և իսկոյն ևեթ վճռեց նրան դուրս տանել այդտեղից:

— Գնանք, Ռիսէր... Մարդ չոքից խեղդւում է այստեղ:

Այն րոպէին, երբ նրանք վեր էին կենում, — որովհետեւ Ռիսէրի համար միենոյն էր մնալ այնտեղ թէ գնալ, — նուազախումբը, որ բազկացած էր մի դաշնամուրից ու մի քանի ջութակներից, սկսեց մի օտարոտի ուտուռնէլ: Ամենքը հետաքրքրութեամբ շարժուեցին տեղներումը: Սկսեցին աղաղակել. «Սոլսո... սոլսո... Նստե՛ք»:

Նրանք ստիպուած էին նստել տեղները: Բացի այդ Ռիսէրը արդէն սկսել էր յուզուել:

— Ծանօթս է գալիս այդ եղանակը: Ո՞րտեղ պէտք է լսած լինեմ:

Որոտագին ծափահարութիւնները և Պլանիւսի բացականչութիւնը ստիպեցին նրան բարձրացնել աչքերը:

— Արի գնանք... արի գնանք... ասում էր գանձապահը, աշխատելով դուրս տանել նրան:

Բայց արդէն շատ ուշ էր:

Ռիսէրն արդէն տեսել էր, թէ ինչպէս իր կիներ մօտեցաւ բեմի եզրին ու գլուխ տուեց հասարակութեանը պարող կնոջ ժպիտներով:

Սիգօնին սպիտակ զգեստով էր, ինչպէս վերջին պարահանդէսի գիշերը, բայց այժմ աւելի քիչ ճոխութիւն կար նրա արդուզարդի մէջ և անվայել ազատարձակութիւն ամբողջ հագուստում:

Զգեստը հազիւ հազ կախ էր ընկնում ուսերից. մազերը վուշ-վուշ էին ածած ու շիկագոյն մշուշի պէս բաց թողած աչքերի վրայ, իսկ վզի շուրջը զիզի-պիզի վայլով շարէշար պատած էր մարգարտէ մանեակը, որի հատիկները շատ խոշոր էին իսկական լինելու համար: Դըլօբէլը ճիշտ էր ասում. բօհէմական կեանք էր հարկաւոր նրան: Նրա գեղեցկութեան վրայ աւելացել էր այդ կեանքում մի նոր հրապոյր, մի տեսակ անփութութեան արտայայտութիւն, որ բնորոշութիւն էր տալիս ներան, դարձնելով նրան կատարեալ տիպ դուրս ընկած կնոջ, որ, մասնաւորապէս ամեն տեսակ պատահարի, աստիճան առ աստիճան գահավիժւում է պարիզեան դժոխքի ամենախորին վիհերը, որտեղից ոչ մի ոյժ չի կարող դուրս բերել նրան լոյս աշխարհ:

Նւ որքան լու էր զգում նա իրան իր դերասանական արհեստում: Ինչ սէգ կերպով էր նա առաջ գալիս այդ բեմի

վրայով: Ախ, եթէ նա տեսնէր այն յուսահատ ու զարհուրելի հայեացքը, որ սևեռուել էր նրա վրայ սլւններից մէկի յետևից, նրա ժպիտը անշուշտ չէր ունենայ այդ անամօթ անդորրու-
թիւնը, նրա ձայնը չէր կարողանայ գտնել այդ անուշ ու սի-
րահալ ելիէջները գեղգեղելու համար այն միակ ուսմանսը, որ
տիկին Դօբսօնին յաջողել էր սովորեցնել նրան.

Pauv' petit mamz'elle Zizi,

C'est l'amou, l'amou qui tourne

La tête à li.

Ռիսէրը վեր էր կացել տեղիցը, չը նայելով Պլանիւսի
ճիգերին:

—Նստէք... նստէք... գոռում էին յետևից:

Խեղճը ոչինչ չէր լսում:

Նա նայում էր իր կնոջը:

C'est l'amou, l'amou qui tourne

La tête à li.

Կրկնում էր Սիդօնին կոտրտուելով:

Մի բոպէ Ռիսէրը հարցնում էր ինքն իրան, արդեւք չը
թռչի բևմի վրայ ու բոլորին սպանի. կարմիր փայլակներ էին
չողչողում աչքերի մէջ և կարծես թէ կուրացել էր կատաղու-
թիւնից:

Յետոյ յանկարծ նրան տիրեց ամօթի ու զզուանքի զգաց-
մունք, և նա դուրս պրծաւ դահլիճից, գետին գլորելով ավոռ ու
սեղաններ և սարսափ ու զայրոյթ ազդելով հանդիսատես
բուրժուաներին, որոնք անէծքներ էին թափում նրա յետևից:

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(ԱԼԵՔՍԱՆԴՐ յաջորդ համարում)

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆ ՈՒԹԻՒՆԸ

XVIII ԴԱՐՈՒՄ

V

Ասացինք արդէն, որ «Որոգայթ Փառայ»-ի պէս ուսուցիւններ տարածելով չէր բաւականանում Շահամիրեանցը. միաժամանակ նա գործնական մարդ էր և աշխատում էր որ ազատ Հայաստանը միայն թղթի վրայ չը լինի: Այս նպատակով նա անդադար թղթակցում էր իր այն ժամանակակիցների հետ, որոնք կարող էին գործել, մի բան ստեղծել: Նա շարունակ յորդորում էր, խրատներ էր տալիս և նրա այդ եռանդուն հոգսերն ու վառ տենչանքները բաւական են, որ նա էլ դասուի XVIII դարի մեր սակաւաթիւ քաղաքական գործիչների շարքում:

Չը նայած որ Հնդկաստանը այնքան հեռու էր, չը նայած որ ճանապարհներ, յարմար հաղորդակցութիւններ չը կային և շատ սնգամ ամիսների մի երկար շարք էր հարկաւոր, որ նամակը տեղ հասնէ, Շահամիրեանցը ուղարկում էր իր ծրագիրներն ու տենչերը ամեն տեղ, ուր հարկաւոր էր: Նրա թղթակիցներն էին Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսները, Հերակլ Թազաւորը և նրա ժառանգ Գիօրգին, Ղարաբաղի հայ մէլիքները, Ռուսաստանի հայերի առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը: Նւ ամեն տեղից նա ստանում էր այնքան մանրամասն և լիակատար տեղեկութիւններ, որ Հնդկական ովկիանոսի ափից իմանում էր թէ ինչ է կատարւում Պարսկական Հայաստանում և ով է այնտեղ ընդունակ գործ կատարելու: Կարեւոր թղթակից էր մանաւանդ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը: Ինչպէս կը տեսնենք իր տեղում, Արղութեանը, ուստայ արքունիքում գրաւած իր բարձր դիրքի շնորհիւ, միակ մարդն էր այդ ժամանակներում, որ մարմնացնում էր հայկական սպատութեան յոյսը: Նրա վարած բա-

նակցութիւնները ուսումնականութեան հետ, այն խորհրդակցութիւններն ու ծրագիրները, որոնց մէջ խորհրդատուի ու ղեկավարի դեր էր նա կատարում, համարեա ոչինչ կասկած չէին թողնում, որ Իսրայէլ Օրիի գործը մեռած չէ, կենդանանում է և պիտի իր ցանկալի վախճանին հասնէ։ Շահամիրեանցը, ինչպէս ցոյց են տալիս բոլոր հանգամանքները, երկարատև և շատ եռանդուն նամակագրութիւն ունէր Արզութեանի հետ։ Արզութեանին հարկաւոր էին հնդկաստանցի վաճառականի ոչ միայն խելքն ու հասկացողութիւնը, այլ և հարստութիւնը. ուստի նա էլ մի առանձին ուշադրութեամբ էր վերաբերւում Շահամիրեանցին։

Տարաբախտաբար, շատ քիչ բան է մնացել Շահամիրեանցի նամակագրութիւններից *)։ Մեր ձեռքում եղածները «Որոգայթ «Փառաց»-ի տպագրութիւնից շատ յետոյ ժամանակներին են վերաբերում։ Նախ քան այդ վաւերագրերին դիմելը, հետեւեալ Շահամիրեանցի տպարանին։

Երկարատև և բեղմնաւոր չէր այդ հիմնարկութեան կեանքը։ 1775 թուականին նա տպագրում է «Պատմութիւն մնացորդաց Հայոց և Վրաց» անունով գիրքը։ Յակոբ Շահամիրեանցը այլ ևս չը կայ, նա վախճանուել է երիտասարդ հասակում, բայց տպարանը շարունակում է կրել նրա անունը. այս գիրքը տպողը նրա կրտսեր եղբայրն է, Եղիազարը, որի հրահանգիչը, այսինքն ուսուցիչը, նոյն Մովսէս Բաղրամեանն է։ Սակայն ոչ Յակոբը, ոչ էլ նրա եղբայր Եղիազարը, ինչպէս տեսանք, ինքնաբերաբար և ինքնագլուխ գործողներ չէին. մնում էր նրանց հայրը, Շահամիր Սուլթանումը, որ ղեկավարող էր կամ նոյն իսկ միակ գործող իր որդիներին անունից։ Այստեղ էլ, այս գրքի վրայ, մենք դարձեալ տեսնում ենք Շամիրի գրոշմը—մկրատ, ասեղներ, կըշիւ իր քարերով, թանաքաման։

Շահամիրեանի գրագրութիւնից մենք իմանում ենք, որ նա մի առանձին սէր ունէր դէպի հայոց հին մատենագիրները և սաստիկ ցանկանում էր տեսնել նրանց տպագրած։ Այդ միտքը նա սկսում է իրագործել վերոյիշեալ հրատարակութեամբ։ Բայց ինչ գիրք էր դա։ Ստեփանոս Օրբէլեանի պատմագրութեան մէջ կայ մի գլուխ, որ նկարագրում է Օրբէլեան իշխանների ծագումն ու Ձինաստանից դալը։ Այս գլուխը արտագրուած էր մի ձեռագրի մէջ, որին կցած էր X դարի հեղինակ Մես-

*) Մի քանի հատ այդ նամակներից և ուրիշ վաւերագրերից սիրաւոր պատրաստակամութեամբ մեր տրամադրութեան տակ ղրեց հնագէտ պ. Ա. Երիցեանը։

րուպ երէցի «Պատմութիւն վարույ սրբոյ Մեծին Ներսիսի» աշխատութիւնը: Շահամիրեանը գտնում է այդ ձեռագիրը մի քահանայի մօտ և կարծելով թէ երկու աշխատութիւններն էլ Մեսրոպ երէցի գրածն են, հրատարակում է միասին: Այդտեղ, սակայն, նորութիւնը միայն Օրբէլեանի պատմագրութեան այդ մի գլուխն էր, իսկ Մեսրոպ երէցը տպագրուած էր Կ. Պօլսում ղեռ 1737-ին:

Գրքի վերջում Շահամիրեանը խնդրում էր իրան ձեռագիրներ ուղարկել տպագրելու համար, ծախսերը իր վրայ էր վերցնում, մինչև իսկ պատրաստ էր գնել ձեռագրերը: Ինչպէս երևում է, այդ հրաւերը ոչինչ արդիւնք չունեցաւ, որովհետև տպարանը ոչ մի գիրք չը տպեց մինչև 1780 թուականը: Այդ տարին լոյս է տեսնում «Պատմութիւն Նազիր-Շահի» գիրքը:

Նազիրը, իբրև նուաճող, այնքան մեծ անուն էր հանել, որ Եւրօպայում շատերը գրեցին նրա պատմութիւնը զանազան լեզուներով: Գրողներից մէկն էր անգլիացի ճանապարհորդ Հանուէ, որի աշխատութիւնը տպագրուեց Լոնդոնում 1753-ին: Այդ աշխատութիւնը թարգմանել է Պօղոս Միրզայեան Ամթեցին, որ հայերէնը սովորել էր Զուլայի Ամենափրկիչ վանքում, իսկ անգլիերէնին հմտացել էր, երևի, Հնդկաստանում: Առաջին թարգմանութիւնը անգլիերէնից, որ կատարել են հնդկահայերը:

Դրանից յետոյ բաւորովին անհետանում է Շահամիրեանի տպարանը: Գրականական գործունէութիւնը, չը նայած այդ մեծատան վառ հետաքրքրութեան, մի առանձին աջողութիւն չունեցաւ: Մագրասում: Դա շատ հասկանալի է: Բայց Շահամիրեանի գլխաւոր նպատակը, որ հայրենիքի ազատութիւնն էր, շարունակուեց անընդհատ եռանդով:

«Որոգայթ Փառաց»-ի մէջ մենք տեսանք այն կենտրոնական միտքը, որ նա դրել էր հայերի ազատութեան գործում: Հերակլ թագաւորը, իբրև ծագումով Բագրատունի, հայերի ազատողն է հանդիսանում և ստանում է հայկական հանրապետութեան նախագահի պաշտօնը ժառանգաբար: Օղի միջից չէր Շահամիրեանը հանել այդ հիմնական գաղափարը: Իրականութիւնն էր նրան թելադրել այդ միտքը: Հերակլը, իսկ որ, Կովկասի քրիստոնէութեան միակ յոյսն էր:

Պարսից թոյլ, քայքայուող պետութեան մէջ Հերակլը երևան է գալիս իբրև քաջ պատերազմող և մի բախտաւոր շրջան է բաց անում իր բազմատանջ հայրենիքի համար: 1762 թուականին նա միացնում է իր իշխանութեան տակ Վրաստանի երկու անջատ, միմեանց թշնամի թագաւորութիւնները—Կախեթը և Քարթալինիան, ամրացնում է երկիրը, կազմակերպում է

բանակը և սկսում է ոչ միայն ամենայն աջողութեամբ պաշտպանել պետութեան սահմանները, այլ և ընկճել շրջակայ թուրք խաներին: Ճիշտ է, Հերակլը չէ կարողանում զուրս դալ պարսից հպատակութիւնից, ճիշտ է, պարսից արքունիքի համար դեռ «Գիւրջիստանի վալի» էր նա, բայց նրա Վրաստանը աւերակների տակից ոտքի ելած մի ոյժ էր ներկայացնում, որից վախենում էին:

Անդրկովկասի թուրք խաները շարունակ թշնամութիւններ էին անում իրար հետ, կռւում էին իրար դէմ. իւրաքանչիւրը այնքան թոյլ էր ինքն ըստ ինքեան, այնքան մոռացուած էր պարսից կենտրոնական իշխանութիւնից, որ հեշտութեամբ կարող էր աւելի ուժեղի որսը դառնալ: Հերակլը շատ զեղեյիկ կերպով օգտուեց այդ գրութիւնից: Երևանի և Գանձակի խաները նրա հարկատուները դարձան, իսկ միւս խաները նրա բաւակամութիւնն էին որոնում:

Կար, բայց դրանից, մի հանգամանք էլ, որ աւելի ևս բարձրացնում էր Հերակլի հեղինակութիւնն ու պատիւը ազգաբնակչութեան աչքում և որը հիացմունքով է յիշատակում Շահամիրեանը: Ամբողջ Անդրկովկասի համար երկնային պատուհաս էին Դաղստանի լեռնականները, որոնք պարբերաբար իջնում էին իրանց լեռներից և սոսկալի մրրիկի նման անցնում էին երկրի վրայով, աւերակ ու անապատ տարածելով ամեն տեղ: Դրանց դէմ աջողութեամբ կռւում էր Հերակլը: Վրաստանը դարձաւ մի պատուար այդ մրրիկների դէմ և հարսուային Անդրկովկասը քիչ էր տեսնում լեռնցի գիշատիչների վնասակները:

Եթէ Անդրկովկասի մահմեդական ազգաբնակչութեան համար էլ Հերակլը միակ զսպող, տոկուն ուժն էր, հասկանալի է թէ ինչ կը լինէր նա քրիստոնեաների համար: Հայերի միակ յոյսն էր այդ քրիստոնեայ թագաւորը և, պէտք է խոստովանել, Հերակլը սիրով և բարեկամաբար էր վերաբերում հայ ազգին: Դրա մի մեծ ապացոյցն է այն մեծ յարգանքը, որ նա ունէր դէպի Էջմիածնի Սիմէօն կաթողիկոսը:

1765 թուականին Հերակլը մեծ բանակով գնաց Երևանի խանի դէմ: Խանը, սարսափահար դարձած, փախուեց իր բերդում: Թուրքերը հաւատացած էին, որ վրաց զօրքերը բերել էր տուել հայոց կաթողիկոսը. այդ պատճառով նրանք մի շարք պաշտպանողական միջոցներ էին ձեռք տուել հայերի դէմ: Այսպէս, խանը շրջակայքից 600 հայ էր հաւաքել և նրանց ձեռքը հրացաններ տալով, պահում էր Երևանում: Հէնց որ Հերակլը յարձակում դորձէր բերդի վրայ, այդ հայերը պիտի սուսջ տար-

ուէին. քրիստոնեաները քրիստոնեաներին չէին կոտորի, բայց կթէ Հերակլը մոռանար էլ քրիստոնէութեան պարսպը և շարունակէր պատերազմը, այն ժամանակ այդ հայերը կը կոտորուէին, իսկ մինչև այդ՝ խանը իր թուրքերի հետ կը հեռանար բերդից: Թէև Սիմէօն կաթողիկոսը գործում էր փորձուած քաղաքագէտի զգուշութեամբ, թէև նա չէր ցոյց տալիս թէ մի առանձին համակրութիւն ունի դէպի Հերակլը, բայց խանը շատ լաւ զիտէր որ Հերակլը չի վնասի նրան, ուստի և աւելորդ համարեց նրան կանչել Երևան՝ պաշարման ժամանակ այդտեղ պատրաստուելու համար:

Եւ նա սխալուած չէր: Հերակլը գնաց Էջմիածին, փառաւոր ընդունելութիւն գտաւ այնտեղ իբրև մի քրիստոնեայ թագաւոր, ամենայն պատկառանքով երկրպագեց տաճարի սրբութիւններին և ապա հիւրասիրուեցաւ կաթողիկոսի մօտ, միշտ մեծարանքի և սիրոյ նշաններ ցոյց տալով նրան: Երևանի խանը պատգամաւոր ու զարկեց Հերակլի մօտ, խնդրելով հաշտութիւն և խոստանալով հպատակութիւն և հարկատուութիւն: Թագաւորը շատ էր բարկացած խանի վրայ և ընդունեց այդ խնդիրը: Այն ժամանակ խանը զիմեց Սիմէօնին և վերջինս յօժարեցրեց Հերակլին: Այնքան մեծ էր Հերակլի բարեկամութիւնը հայոց մայր աթոռի հետ, որ բացարձակ կերպով յայտնեց թէ Երևանը մի տարով բաշխում է Էջմիածնին ու նրա կաթողիկոսին, չուզեց նոյն իսկ որ և է գրաւոր պարտաւորութիւն խանի կողմից, միայն սաստեց թէ կը զայ երկրորդ անգամ, եթէ խանը չի կատարի իր բերանացի խոստումները: Հայոց կաթողիկոսը վրայ բանակումն էր դառնում, նոյն իսկ զօրքերի շարժման և ճանապարհների մասին խորհուրդներ էր տալիս, չէր թողնում որ զինուորները վնասեն արտերը և զրկողութիւններ պատճառեն ազգաբնակչութեան: Հերակլը նոր չէր այդպէս յարգում Սիմէօնին: Թիֆլիսից էլ նա շարունակ բարեկամական յարաբերութիւններ էր պահպանել Էջմիածնի հետ. կաթողիկոսի համարեա ոչ մի խնդիրքը նա անտես չէր արել: Եւ այժմ, իր արշաւանքի ժամանակ, նա ամեն մի պատշաճաւոր դէպքում ցոյց էր տալիս ամենքին թէ հայոց կաթողիկոսի պատճառով է այդպէս մեղմ ու ողորմած վարուում Երևանի հետ:

Չորս տարուց յետոյ, 1779-ին, Հերակլը նորից ստիպուած էր արշաւել Երևանի վրայ: Նորից վախկոտ ու թոյլ խանը, ուրիշ ճար չը գտնելով, զիմեց հայոց կաթողիկոսի բարեխօսութեանը և նորից Սիմէօնը հաշտեցրեց Հերակլին, վերադարձրեց նրան Վրաստան, սպասելով Արարատեան երկիրը սլատերազմի արհաւիրքներից:

Ահա ինչ փաստեր ունէր Շահամիրեանը իր առջև: Հերակլիլը, քրիստոնէութեան պաշտպան, ամբողջ մահմեդական Արևելքում միակ ուժեղ ու ընդունակ քրիստոնեայ վեհապետն էր: Ո՞վ կարող էր ազատել հայերին, եթէ ոչ նա: Մենք հաստատապէս չը գիտենք՝ միայն Շահամիրեանն էր, որ 1770-ական թուականների սկզբում արծարծում էր այդպիսի մի միտք, թէ կային և ուրիշ այդպէս մտածողներ էլ: Շատ հաւանական է որ կային: Ղարաբաղի մէլիքները, հէնց որ տեսան Հերակլիլ զօրեղանալը, նրան էին դիմում և քաջալերութիւն գտնում: Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը, տարիներ յետոյ, նոյն այդ միտքն ունէր—ստեղծել հայ-վրացական մի պետութիւն Ռուսաստանի հովանաւորութեան տակ:

Այսպէս թէ այնպէս, Շահամիրեանը, չը բաւականանալով միայն գրքերի մէջ այդպիսի ծրագիր մշակելով, ուղղակի բանակցութիւն է սկսում վրաց թագաւորի հետ: Յայտնի չէ թէ երբ սկսուեցան այդ յարաբերութիւնները. մեզ մօտ եղած աղբիւրները վերաբերում են 1780-ական թուականներին, և այդ ժամանակ յարաբերութիւնները վրաց թագաւորի և հնդկաստանցի հայ վաճառականի մէջ բաւական մտերմական են. Հերակլիլ յատուկ պատգամաւորներ էր ուղարկում Շահամիրեանի մօտ, ամենայն ուշադրութեամբ էր վերաբերւում նրա առաջարկութիւններին: Շահամիրեանը դեռ իր մտքի վրայ էր, դեռ հաւատում էր որ Հերակլիլ պիտի լինի իր ազգի ազատարարը: Բայց ուրիշ բան էին ցոյց տալիս հանդամանքները. Հերակլիլ այլ ևս այն չէր, ինչ մի 10—15 տարի առաջ:

Վրաստանի ուժեղանալը ժամանակաւոր երեւոյթ էր: Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել մի երկրում, ուր անպակաս էին ներքին խռովութիւնները, ուր պետական կազմակերպութիւնը թոյլ էր, հնաչած: Ինքը, Հերակլիլ, մինչև վերջը մնաց նոյնը—գլխուոր, քաջ, ընդունակ: Բայց, տարաբախտաբար, նրա անձնական բարեմասնութիւնները բաւական չէին փրկելու մի պետութիւն, որի ներքին ցաւերը նա չէր կարողանում բժշկել: Լոկ զինուորական աջողութիւններով փայլող Վրաստանը ներքուստ նոյնն էր, ինչ դարերի ընթացքում—անմիաբան, երկպառակութիւններից կեղեքուող: Զօրքը, որ Հերակլիլ առաջնորդութեամբ այնքան քաջութիւններ էր ցոյց տալիս, բաղկացած էր մեծ մասամբ օտար վարձկաններից: Ինչ յոյս կարելի էր դնել նրա վրայ: Այդ զօրքը ի վերջոյ ինքը դարձաւ անկարգութիւնների հեղինակ:

Բացի դրանից, 1770-ական թուականների սկզբում Հերակլիլ, ընդունելով Եկատերինա կայսրուհու հրաւերը, նրա դաշնակիցը հանդիսացաւ ռուս-թիւրքական պատերազմի մէջ:

Ռուսաց մի զօրաբաժին մտաւ Անդրկովկաս և վրացիների հետ միացած՝ պատերազմական գործողութիւններ սկսեց Թիւրքիայի դէմ: Այդ հանգամանքը բաց արեց Թիւրք կառավարութեան աչքերը. նա պարզ տեսնում էր որ Վրաստանը հիւսիսային պետութեան ձեռքում լաւ գործիք է դառնում՝ Սսիայի կողմից իրան հարուածներ հասցնելու համար: Կասկածուած, միշտ արթուն հակող և վստահութիւն չունեցող մի ուժեղ հարեանի անյարմարութիւնը չուտ զգաց Հերակլը. Վրաստանին արեւմուտքից միշտ վտանգ էր սպառնում: Դրութիւնը հետզհետէ վատանում էր, լէզգիները յարձակումներ էին գործում և աւերում Վրաստանը. նոյն իսկ Թաղաուրի ընտանիքի մէջ տիրում էին երկպառակութիւններ: Մի չարագուշակ մենակութիւն հետզհետէ ծանրանում էր Հերակլի վրայ և նա տեսնում էր մռայլ ապագան, հասկանում էր որ ամեն կողմից մահմեդական աշխարհով շրջապատուած Վրաստանը չը պիտի կարողանայ իր սեփական միջոցներով անկախութիւն պահպանել:

Հասկանալի է որ այդ հոգսերի մէջ նա չէր կարող մտածել այն յոյսերի մասին, որ հայերն էին դնում իր վրայ: Ոչ ոք չէ թողնում իր տունը հրդեհի ճարակ դառած, որ դնայ ազատէ հարեանի տունը: 1779 թուականի գարնանը Հերակլը մի նոր արշաւանք սկսեց Երևանի դէմ. մի արշաւանք, որ շատ բան էր ասում և ամենից ասաջ այն, որ 1765 ու 1769 թուականները այլ ևս չէին վեհադառնայ: Դեռ կենդանի էր Սիմէօն կաթողիկոսը, բայց նրա խաղաղասիրական միջնորդութիւնները այս անգամ ոչինչ արդիւնք չը տուին: Հիւանդ էր խեղճ ծերունին, բայց վեր կացաւ անկողնից և գնաց անձամբ խնդրելու ու համոզելու Հերակլին: Հերակլը, սակայն, անողորմ մնաց: Սկսուեց պատերազմը, որ մի քանի ամսուայ մէջ անապատ դարձրեց ամբողջ Արարատեան դաշտը: Հերակլը չէր կարողանում առնել Երևանը և այդ անաշտողութիւնից զայրացած՝ կատարեալ ազատութիւն տուեց իր խառնիճաղանճ զօրքին, որ ընկաւ հայ և Թուրք գիւղերի վրայ և ամեն ինչ քարուքանդ արեց «մարդակերների» նման, ինչպէս ասում է Սիմէօն կաթողիկոսը: Հայերի մի մասը փախաւ Բայազէտ. բայց Հերակլը մարդիկ ուղարկեց որ փախստականներին համոզեն յետ դառնալ: «Ինչո՞ւ ինչպէս օտարից փախել էք քրդերի աշխարհի անկիւնները, — ասում էր նրանց Հերակլը. — չէ՞ որ ձեզ համար եմ դէնք վերցրել, որ ազատեմ ձեզ ձեր նեղիչ պարսիկների ձեռքից. ահա ես այստեղ պատերազմի մէջ եմ և չեմ թողնի պատերազմը, մինչև որ չը քանդեմ ամրոցները և իմ կողմից այս աշխարհի համար իշ-

խողներ չը կարգեմ. իսկ ձեր զրկանքները եօթնապատիկ պիտի աւնենամ պարսիկներէյ» *):

Գեղեցիկ խոստումներ: «Որոգայթ Փառաց»-ից վեց տարի անցած, կարծես իրականանում էին Շահամիրեանի, Արղութեանի և միւսների յոյսերը: Փախստականները վերադառնում են: Բայց ինչ ազատութիւն: Գիւղերը աւերակ, ամեն ինչ՝ թալանուած, մարդիկ՝ գերի ընկած: Ծերունի, հիւանդ կաթողիկոսին վիճակուած էր տեսնել սարսափելի աւերակները և ոչինչ չը կարողանալ անել: «Քանզեցին և աւերեցին բոլոր շէները, — գրում է նա *) — գտած մարդկանց գերի տարան, բոլոր տնաստէնները և կայքերը, անային իրերը, հայահատիկների ամբարները և ուրիշ թագոտոյները, ամեն ինչ հանեցին, աւերեցին և առան... Ձեռք գցելով փախստականներին, նրանց ուղարկեցին իրանց երկիրը և ապա մնացած բոլոր շէներն ու գիւղերը միահամուռ կրակ տալով, իրանք վեր կացան ու գնացին նոյեմբերի 3-ին»: Ծանր ճգնաժամի մէջ ընկաւ Էջմիածինը, աւերուած այդ ամբողջ երկրում նա էր միակ փոքր ի շատէ ունևոր, բարեկեցիկ հիմնարկութիւնը, և սովի ու զրկանքների մատնուած ազգաբնակչութիւնը, հայ թէ թուրք, Էջմիածնից էին ապրուստ խնդրում ու ստանում: «Մահ էինք ցանկանում և մահ չը կար», աւելացնում է Սիմէօն կաթողիկոսը՝ իրերի զրոյթեան մասին մի հասկացողութիւն կաղմել տալու համար:

Հերակլը ութ հայ գիւղ տարաւ գերի: Այդ ժողովուրդը հարկաւոր էր նրան՝ թէ տոհմատարակ իր երկրի ազգաբնակչութիւնը աւելացնելու և թէ մասնաւորապէս վրաստանի սահմանադրուիւնները ապահովելու համար: Գաղթականների մի մասը ընտելեցնում է Ղարայեազի անապատում, մի մասը թէլաւում, Թիֆլիսում: Ժողովուրդը կոտորւում էր, նրա կէսն էլ չէր մնացել, բայց Հերակլը դեռ ուզում էր նրան այս ու այն կողմը տեղափոխել: Թէլաւի հայերին նա հրամայում է ընտելուել Թօփ-ղարաղաջ գիւղում, որ լէզգիների սահմանադրուին էր: Բայց հայերը ընդդիմանում են: Հետաքրքրական է այն խօսակցութիւնը, որ տեղի է ունենում նրա և հայ քէթիւղանների մէջ: Հերակլը բարկացած ասում է հայերին թէ նրանք չը պիտի յանդգնեն ընդդիմանալ իրան, քանի որ նա իր սրով է նուաճել նրանց: Հայ քէթիւղաններից մէկը, Խրանած Յարութիւն անունով, պատասխանում է. «Ո՞վ տեսաւ քո սրի զօրութիւնը, չէ որ երդումով վերադարձրիր մեզ Բայազէտից, և ձեր է քո բա-

*) «Առունկ» ամսագիր, 1860, էր. 279.

**) «Кавказский Вестник», 1901, № 10, էր. 69.

բօրութիւնը, որ խոստանում էիր մեզ: Այդպէս էլ հայերը մնացին թէլաւում: Շուտով գաղթականների մի մասը, Երևանի խանի միջնորդութեամբ, վերագործաւ հայրենիք:

Բայց այս արշաւանքը, այս գերեզմարութիւնը վրաց թագաւորի ոյժն ու կարողութիւնը չէին ցոյց տալիս: Իրողութիւնը անփոփոխ է մնում. նեղուած ամեն կողմից, ոչինչ լաւ բան չը տեսնելով տպագայում, Հերակլը դիմում է Ռուսաստանին և 1783 թուականին Գորոդելսկում կայացած զաջնագրութեամբ ընդունում է ռուսաց հպատակութիւն, փոխարէնը ստանալով խոստում, թէ ռուսաց մի զօրաբաժին մշտապէս կը մնայ Վրաստանում: Թշնամիներին դիմադրելու համար: Թէև այսպէս, բայց Շահամիրեանը շարունակում էր իր բանակցութիւնները Հերակլի հետ: 1786 թուականին Հերակլը վրաց իշխանի տիտղոս է տալիս Շահամիրեանցին՝ ճերա բազմատեսակ հաւատարմութեան համար», ինչպէս ասուած է նրա հրովարտական:

Ի՞նչ «բազմատեսակ հաւատարմութիւն» էր դա: Ասում են թէ Շահամիրեանը մի թանկագին ակն էր ուղարկել Հերակլին *): Նրա գրագրութիւններից երեւում է, որ միայն այդ ակն չէր Հնգկաստանից ընծայ գնաղել Թիֆլիս. ամբողջ հակերով էին այն ընծաները, որոնք նշանակում էին արքունիքի և բարձրաստիճան անձինքների համար:

Իշխանական փառքուրդ աւելի ևս խրախուսում է Շահամիրեանցին: Նւ բանակցութիւնները ընդունում են աւելի պարզ ու որոշ կերպարանք: 1786 թուականին Հերակլի կողմից Հընդկաստան գնացին Յովսէփ անունով մի հինգհարիւրապետ և ոմն Կիրակոս, «վաճառական հայ վրացի»: Նրանք տարան իրանի հետ Հերակլի հրովարտակը, որով իշխանութիւն էր շնորհւում Շահամիրեանին ժառանգաբար, և մի նամակ, որի բովանդակութիւնը մեզ յայտնի չէ: Հետեւեալ տարին Շահամիրեանը պատասխան է ուղարկում: Դա մի երկար գրութիւն է, որի մէջ նա այսպէս է ձևակերպում իր առաջարկութիւնները.

Հերակլը գրում է «գիր շնորհաց», այսինքն բոլոր հայերին ուղղած մի նամակ, որի մէջ թագաւորը խոստանում է իր հովանաւորութիւնը հայ ազգին և հրաւիրում է հայրենիքից հեռացածներին վերադառնալ իրանից հայրերի երկիրը: Այդտեղ հայերը ստանում են արտօնութիւններ, վճարում են չափաւոր հարկ: Նամակի օրինակն էլ ուղարկել էր Շահամիրեանցը և խոստանում էր իր հաշուով տպագրել տալ հազարաւոր օրինակ-

*) Ս. Վ. Թեոդորեան. «Պատմ. Մուրատեան վարժ.», Պարիզ, 1866, հատ. Ա., հր. 591:

ներ և ցրուել հայերի մէջ: Ապա առաջարկուած է Հերակլին կանոններ հաստատել ժողովրդի համար: Մենք արդէն զիտե՞նք որ Շահամիրեանը ազգի փրկութիւնը տեսնում էր խելացի, արդար և ազատամիտ օրէնսդրութեան մէջ և շարունակ քարոզում էր որ ամենից առաջ այդ բանը իրագործուի *): Ինքը արդէն պատրաստ ունէր մի այդպիսի օրէնսգիրք—«Որոգայթ Փառաց»-ը: Դրանից մի օրինակ ուղարկում է Հերակլին, բայց դա տպածը չէ, այլ նրա համառոտութիւնը, ձեռագիրը, որից պէտք է արտագրել տալ երկու օրինակ և մէկը ուղարկել Էջմիածնի կաթողիկոսին, միւսը՝ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանին: Չը մոռանանք աւելացնել, որ դրա հետ Հերակլին ընծայ էր ուղարկում և մի հատ Մովսէս Խորենացի, որպէս զի թագաւորը կարգալ տայ և իմանայ հայերի անցեալը, մանաւանդ Բագրատունիների, այսինքն իր նախահայրերի, պատմութիւնը:

Մեզ յայտնի է, որ Հերակլին հայոց աշխարհի տէր դարձնելու համար Շահամիրեանը ունէր այն օրինական հանգամանքը, որ նա էլ Բագրատունի է: Եւ յիշեցնելով թագաւորին, որ նրա ժառանգութեան մի մասը (Հայաստանը) դեռ գտնուում է պարսից տիրապետութեան տակ, յիշեցնելով թէ որքան ամօթալի բան է որ քրիստոնեաները գտնուեն մահմեդականների լուծի տակ, Շահամիրեանն ասում է որ այժմ, երբ վերջացել է Սէֆէվիների տոհմը և Պարսկաստանը երեքուեւ ալիքների է նմանւում, եկել հասել է ժամանակը, որ Հերակլը տարածէ իր իշխանութիւնը և՛ պարսիկների վրայ: Դա հեշտ է, պէտք է միայն զոյքի, կեանքի ապահովութիւն և դաւանութեան ազատութիւն խոստանալ,—և Պարսկաստանը յօժարութեամբ կը համաձայնի: Ինչ վերաբերւում է Հերակլի այն ժառանգութեան, որ գտնւում է Թիւրքիայի տիրապետութեան տակ, Շահամիրեանը խորհուրդ էր տալիս կամաց-կամաց պատրաստուել և այդ ժառանգութիւնն ստանալու: Պէտք է սպասել յարմար ժամանակի. իսկ մինչև այդ հարկաւոր է գրաւել այն կողմի հայերի սիրտը: Գրաւելու միակ զեղեցիկ միջոցը դարձեալ նոյն ազատ, ժողովրդական օրէնսդրութիւնն է: Երբ միանգամից այդ օրէնքները կը մտցնուեն Հերակլի ազատած Հայաստանի մէջ, այն ժամանակ Թիւրքիայի հայերն էլ կը հասկանան թէ ինչ զեղեցիկ բան է դա և հարկաւոր դէպքում արդէն միանգամայն համոզուած կը լինեն թէ

*) 1779 թուականին Փանձասարի Յովհաննէս կաթողիկոսին զրած մի նամակի մէջ Շահամիրեանը խնդրում էր նրան միանալ Էջմիածնի կաթողիկոսի հետ և ժողովրդական ընդհանուր համաձայնութեամբ խմբագրել որոշ և ամենքի համար պարտադիր օրէնքներ:

պէտք է Թիւրքաց Հայաստանն էլ միայնկ ազատ Հայաստանին:

Նոյն այդ գրութեան մէջ Շահամիրեանցը չէ մոռացել իր շնորհակալութիւնները յայտնելու Հերակլին՝ իշխանական տիտղոսի համար: Բայց, աւելացնում է նա, այդ տիտղոսը կրելը իրան առայժմ անյարմար է, որովհետեւ նա կը խանգարէ իր վաճառականութեանը: Երբ Շահամիրեանցը վերջացրած կը լինի իր գործերը, նա կը կամենար բնակութիւն հաստատել իր հայրենի երկրում, բայց որովհետեւ իշխան է նա, ցանկալի կը լինէր ունենալ սեփական հող՝ իշխանի պէս ապրելու համար:

Միաժամանակ Ղուկաս կաթողիկոսին գրած իր նամակի մէջ Շահամիրեանցը հետեւեալ առաջարկութիւններն էր անում: Պէտք է հայերը միանան վրացիների հետ և մոնէն ուսաց հովանաւորութեան տակ: Ազատուած Հայաստանը պիտի սպասէ Հայկի սերունդներից մէկին, որ ձեռք առնէ նրա կառավարութիւնը, իսկ եթէ չը կայ այդ սերունդից մէկը, պէտք է, ուրեմն, Բագրատունիներից մէկին ընդունել: Թող կաթողիկոսը փոյթ տանէ վրացի Բագրատունիների հետ միանալու: Հարկաւոր է այդ Բագրատունիներից մէկի որդին վերցնել և ամուսնացնել մի աղետատոհմ հայ օրիորդի հետ, որպէս ղի նա լինի «ժառանգորդ ի վերայ տանն Հայոց»: Վրացի իշխանը, ի հարկէ, պիտի լուսաւորչական դաւանութիւն ընդունէր: Ղուկաս կաթողիկոսին Շահամիրեանցը նաև առաջարկում էր ժողով կազմել և նրա քննութեան ենթարկել իր ուղարկած «Որոգայթ փառաց»-ը:

Հնդկաստանում մշակուած այդ քաղաքական ծրագիրը, ինչպէս տեսնում ենք, իր էական մասերում շատ չէ տարբերւում Իսրայէլ Օրիի ծրագրից. — նոյն կարծիքները Պարսկաստանի և Թիւրքիայի մասին, նոյն հեշտութիւնը, որով զլուխ էր բերւում հայկական ազատութիւնը, նոյն հայեացքները հայերի և վրացիների միացման մասին: Բայց Օրին աւելի գործնական մարդ էր, աւելի մօտիկ էր ճշմարտութեան, քան հնդկաստանցի հայ վաճառականը: Նկատենք հէնց այն, որ Օրին անձամբ չըրջում էր, տեսնում, ուսումնասիրում. նա համոզուած էր որ միայն մի եւրօպական, կանոնաւոր զօրաբանակ կարող էր վճռել պարսիկներին Հայաստանից, մինչդեռ Շահամիրեանցը կարծում էր թէ դրա համար բաւական է և Հերակլը, նա, որ իր սեփական երկիրը ապահովելու համար ստիպուած էր ուսաց հպատակութիւն ընդունել:

Թէ ինչ պատասխանեց Հերակլը Շահամիրեանցին, մենք չը գիտենք: Բայց Ղուկաս կաթողիկոսի տուած պատասխանը շատ բնորոշ է. այդտեղ խօսում է իրականութիւնը, այն իսկ

իրականութիւնը, որի վերաբերմամբ այնքան միամիտ էր Շահամիրեանցը: Գրել էիր մեզ, ասում է կաթողիկոսը, հոգ տանել մեր աշխարհի և ազգի ազատութեան համար և ցոյց էիր տուել մի քանի միջոցներ և կարգադրութիւններ: Բայց երանի էր թէ գրածներիդ գոնէ մի մասը իրականանար. որովհետեւ այդպիսի մի բան դու լի բերելու համար հարկաւոր էր որ մեր ամբողջ ազգը բարեմիտ և հաւատալիք տէրերի հովանու տակ գտնուէր և ապահովութիւն ունենար թէ նրանց խնամքով կարելի է ձեռք տել երջանկութեան: Բայց հայերը մեծ մասամբ մատնուած են անողորմ թշնամիների խստութիւններին և հաւատարիմ ծառայութեամբ անգամ չեն կարողանում ողորմութիւն գտնել. ապա ինչ կը լինէր, եթէ ապստամբուէին: Դու կ'ասես թէ մենք հաճութիւն ունենք դէպի այլազգիների ծառայութիւնը և չենք սիրում ազատութիւնը: Բայց եթէ այնպէս լինէր որ դու այս կողմերը դայիր և չըջագայէիր Զուղայից մինչև այստեղ և ուրիշ այլ կողմեր, ուր կան հայեր, ականատես լինէիր մեւրոնց կայութեան, տեսնէիր նրանց անօգնականութիւնը և իշխողների բռնութիւնը, ինքդ կը վճռէիր որ այդպիսի բան չի լինի: Հրէաներին ազատեց Մովսէսը. բայց ուր է մեր Մովսէսը, որ հրէականից էլ մեծագործ պիտի լինի, քանի որ հրէաները միայն Փարաւոնի իշխանութեան տակ էին, իսկ մեր ազգը ցիրուցան դառած է մի քանի իշխանութիւնների մէջ: Թւում է թէ մի քանիսը, հաճոյանալու համար, ասել են թէ իմ այս ճշմարիտ խօսքերը ծանր կը լինեն քեզ համար: Հաստատապէս իմացիր, որ ոչ հիւսիսական պետութիւնից (Ռուսաստան) և ոչ էլ ուրիշներից մեզ օգնութիւն չէ լինելու: Շրջապատուած լինելով թշնամիներից, եթէ մենք նշան ցոյց տանք թէ միանում ենք և նայում ենք մեր կարծեցեալ օգնողներին, այն ժամանակ մեր առջև կայ նեղութիւն, տանջանք, յափշտակութիւն և սուր: Եթէ չես հաւատում, հարցրու և իմացիր թէ անցեալներում ինչ նեղութիւններ կրեցին զարաբաղյիները, որոնք յոյս դրեցին այդ կարծեցեալ օգնողների վրայ և թէ նրանց բռնաւորը (Շուշու խանը) ինչ ու ինչ փորձանքներ բերեց նրանց գլուխը *):

Ահա ինչ էր ասում իրականութիւնը: Եւ դա միանգամայն ճիշտ էր: Ղարաբաղի ժողովուրդը հերոսական ջանքեր էր գործ դնում մի թուրք խանից ազատուելու համար և նրան ոչ ոք չէր օգնում: Մենք տեսանք ուրիշ շատ օրինակներ էլ Մէլիք-Աւանի և Դաւիթ-բէկի ժամանակ: Այդպէս էր դեռ այն լեռ-

*) „Դիւան Հայոց պատմ.“, Դիրք Ա.—Բ., եր. 181

նաստանում, ուր կար անկախութեան նշոյլ, ուր պատերազմող տարրեր կային: Իսկ ինչ էր դրութիւնը երկրի դաշտային մասերում: Այնտեղ կատարեալ ստրկութիւն էր տիրում, իւրաքանչիւր թուրք քէլ կամ աղա մի անասման բռնապետ էր անդէն ու անպաշտպան հայ ժողովրդի վրայ: Այսպիսի միջնավայրում էր ուղում Շահամիրեանցը կանգնեցնել ռամկավարական հանրապետութիւն...

Գործնական հետեանք ունեցաւ Շահամիրեանցի միայն մի ցանկութիւնը—սեփական հող ունենալը: Հերակլը անկաստար չը թողնէր այդ խնդիրքը. նրա հրամանով թագաժառանգ Գիօրգին 1790 թուի նոյեմբերի 10-ին գրած իր կալուածագրով տալիս է Շահամիրեանցին իրան պատկանող ամբողջ Լօսին բոլոր դիւղերով ու հողերով, յայտնի սահմանների մէջ: Դա մի բաւական խոշոր նուիրաբերութիւն էր, և Շահամիրեանցը կարող էր այնտեղ մի փոքրիկ աւատական իշխանութիւն հիմնել և դոնէ մանր չափերով իրագործել իր ծրագիրները, եթէ առևտրական գործերի մէջ խրուած մի վաճառական չը լինէր: Ի՞նչ էր պակաս: Ունէր իշխանական տիրոջ, մեծ կալուածք, հարստութիւն: Պակաս չէին և մարդիկ: Հէնց այդ ժամանակներում Ղարաբաղի ժողովուրդը, ղգուած Շուշու խանի բռնութիւններից, հեռանում էր իր երկրից և գաղթականութիւններ էր ցրւում դէպի զանազան կողմեր: Գաղթում էին և հայ մէլիքները: Բայց Շահամիրեանցը տեղից չը շարժուէր, չը տիրացաւ իրան ընծայած կալուածքին:

1792 թուականի մայիսի 14-ից Ղուկաս կաթողիկոսին գրած նամակի մէջ Շահամիրեանցը յայտնում է որ մտադրութիւն ունի Լօսի քաղաքը իր ամբողջ գաւառի հետ տալ Մէլիք-Աբովին, որին նա անուանում է «սիրեցեալ»: Դա նրա քաղաքական ծրագրի մի մասն էր: Պէտք է իմանալ, որ այդ ժամանակներում Ղարաբաղի հինգ մէլիքութիւններից երեքը համարեա ոչնչացել էին կամ գոնէ բոլորովին անլուրտ էին դարձել Իբրահիմ-խանի համար: Մնում էին Գիւլստանը և Ջրաբերդը, երկու սահմանակից գաւառներ, որոնց քաջ տէրերը, Մէլիք-Աբով և Մէլիք-Մէժլում, դեռ շարունակում էին օրհասական կռիւ Շուշու բռնաւորի դէմ, թէև դրանց համար էլ համարեա վերջացել էր ամեն ինչ: Ստիպուած աննպաստ, դժբախտ հանգամանքներից, նրանք հեռացել էին հայրենիքից, զրսում որոնելով օգնութիւն:

Շահամիրեանցը մտածում է այսպէս կարգադրել Ղարաբաղի գործերը: Այդ երկրի հարաւային մասը պէտք էր բոլորովին կորած համարել, ժողովուրդը դէս ու դէն էր ցրւում, մինչ-

դեռ կարելի էր նրան հաւաքել այնպիսի տեղերում, ուր նա կարող էր պահպանել իր աւանդական ինքնավարութիւնը: Դրա համար նախ և առաջ պէտք էր հաշտութիւն կնքել Շուշու խաւնի հետ, նոյն իսկ յարձակողական և պաշտպանողական դաշնադրութիւն կապել նրա և մէլիքների մէջ: Այնուհետև Մէլիք-Աբովի և Մէլիք-Մէժլումի որդիները, որոնք Իրահիմ-խանի ձեռքն էին ընկել և պահուում էին Շուշում, կը ստանային իրանց հայրական կալուածքները՝ Զրաբերդ և Գիւլստան, Մէլիք-Աբովը երկրից հեռացած իր ժողովրդի հետ կը հաստատուէր Լօռում, Մէլիք-Մէժլումը—Շամքորում: Այդ տեղերում հայ ժողովուրդը, մի քանի ժամանակ խաղաղութիւն վայելելով, այնքան կը մեծանար և կ'ուժեղանար, որ չորս մէլիքութիւնները հեշտութեամբ կարող կը լինէին զսպել Իրահիմին:

Հերակլը պիտի կատարէր այդ ծրագիրը, և Շահամիրեանցը հէնց այդ տեսակ խնդիրք ուղարկեց նրան: Նրա համար շատ դժուար չէր մի այդպիսի գործ գլուխ բերելը: Բայց նա չարից: Մի քանի տարի անցնելուց յետոյ թագաժառանգ Գիօր-գին յայտնում էր Շահամիրեանցին թէ Մէլիք-Աբովը չէ կամենում Լօռում ապրել և թէ ուրիշ այնպիսի մարդիկ չը կան, որոնք յանձն առնեն այդ կալուածքի կառավարութիւնը և հոգաւարութիւնը: Թագաժառանգը յորդորում էր, որ ինքը, Շահամիրեանցը, դայ ու տիրանայ իր ստացուածքին, հանդստանայ հայրենի հողի վրայ: Ինչպէս երևում է, վրայ արքունիքին շատ ցանկալի էր մօտիկ հարևանութեան մէջ ունենալ հարուստ մարդուն: Անկասկած, եթէ Շահամիրեանցը գնար, նրա առաջ ոչինչ դժուարութիւն չէր յարուցուի. շատ հեշտ կը լինէր հիմնել հայերի մի մեծ գաղթականութիւն և հաւաքել այնտեղ Ղարաբաղի բոլոր նշանաւոր մարդկանց:

Այդ հրուէրն էլ նրան տեղից շարժեց չը տուեց: Առհասարակ Շահամիրեանցի համար բնորոշ գիծ է—ծրագիրներ կադմել, բայց միևնոյն ժամանակ լինել շատ միամիտ, անգործնական: Վերոյիշեալ նամակում նա պատասխանում էր Ղուկաս կաթողիկոսի այն առարկութեան թէ հայերը չը ջապատուած են թշնամիներով, ենթարկուած են անողորմ տիրապետողներին և չեն կարող քաղաքական շարժում սկսել: Եւ ինչ էր նա ասում: Այդ միջոցին ռուս-թիւրքական պատերազմը վերջացնելու համար եաշ քաղաքում հաւաքուած էին պատերազմող կողմերի լիազօրները: Ռուսաց գլխաւոր հրամանատարի կողմից Եաշ էր կանչուած և Յովսէփ արքեպիսկոպոս Արղուսթեանը: Շահամիրեանցը Արղութեանի գրութիւններից գիտէր արդէն թէ որպիսի համակրութեամբ է վերաբերում ռուսաց կայսրուհին դէպի

հայերը: Եւ ահա Շահամիրեանցը հաւատացած էր որ Եաշի «կօն-
գրէսը», ինչպէս նա է անուանում, կը հրամայէ հայերի և վրա-
ցիների գրացի տիրողներին հեռանալ իրանց յօժար կամքով Ա-
խալցիայից, Ախալքալաքից, Բայազէտից, Երևանից, Խոյից և
ուրիշ տեղերից ու յանձնել այդ երկիրները Հերակլ երկրորդին.
և կը հեռանան այդ տիրողները, նոյն իսկ Վեաս չը հասցնելով
հայերին: Ահա ինչպիսի միամիտ հեշտութեամբ էր հնդկաստան-
ցի քաղաքագէտը վճռում դարաւոր արիւնտ հարցերը: Զուր
չէր նա ասում իր մասին. «Ինչպէս երազում քաղցածը հայ է
տեսնում, իսկ ծարաւածը ջուր, կարելի է որ իմ մտքի ձգտումն
էլ այդպէս լինի»:

Այն, հէնց այդպէս էլ եղաւ: 1798 թուին վախճանուեց
Շահամիրեանցը և թաղուեց իրան պատկանող հնդկական գիւ-
ղում: Թողել էր նա ժողովներ, բայց զբանցից ոչ մէկը նրա
բարեմասնութիւններից մէկն էլ չունեցաւ: Հնդկական զաղու-
թում հայերը արագ փչանում էին. այդ փչալած, անբարոյական
մարդկանցից էին և Շահամիրեանցի ժողովները: Նրանք վառ-
նեցին իրանց ժողովրդած հարստութիւնները, անառակ և ան-
պէտք կեանք վարելով աջիպիսի դրութեան հասան, որ նրանց
վերջին շառաւիղը XIX դարի առաջին քառորդում արդէն մի
անտուն, անտէր սրիկայ էր, որի համար բանտերում ապրելն
էլ բարօրութիւն էր *): Կար Լօսին, բայց նա այնպէս էլ ան-
տէր մնաց: Ռուսաց կառավարութիւնը, վրաստանում հաստատ-
ուելուց յետոյ, սպասում էր Շահամիրեանցի ժողովներիին
որ գան ու տիրանան իրանց հայրենական սեփականութեան:
Բայց այդքան էլ չը կարողացան անել այդ ողորմելի, փչալած
ժողովները և Լօսին արքունական կալուածք դարձաւ...

Շահամիրեանցը շատ մտածեց, շատ աշխատեց, երազեց:
Բայց վերջ ի վերջոյ նրան մնաց միայն այն պատիւը, որ նա,
մի անգրագէտ վաճառական, առաջինը եղաւ որ մտցրեց մեր
վերացական-աստուածաբանական գրականութեան մէջ աշխար-
հական տարր, հրապարակախօսական սկզբունքներ, հայրենասի-
րութեան, ազատութեան, անկախութեան գաղափարները: Նա
էր, որ առաջին անգամ մամուլի միջոցով խօսք բաց արաւ ի-
րականութեան մասին, նկագրագրեց ստրկութեան դառնութիւ-
նը, հայրենիքի շահերը նուիրագործեց, գրեց օրէնքի, քաղաքա-
կան և հասարակական ազատ զարգացման դատը:

Համաձայնուենք որ այդ պատիւն էլ փոքր բան չէ...

*) Թէոդորեան, «Պատմ. Մար. Վարժ.», Ա., եր. 299 և 586:

VI

Երբէք չը մոռանանք վաճառականութեան բացասական կողմերը, որոնք շատ են. բայց և չուրանանք, որ այն ժամանակները, երբ մեզանում դեռ չը կար աշխարհական կրթութեամբ ու անկախ դաստիարակ, Հնդկաստանի հայ վաճառականները, մանաւանդ ջուղայեցիները, այնքան զրական, գնահատելի ծառայութիւններ մատուցին մեզ, որ գոնէ դրանց բացասական յատկութիւնները պէտք է մոռացուեն: Շահամիրեանցը անհատական երեոյթ չէր. Հնդկաստանի հայութիւնը հարուստ էր ոչ միայն փողով, այլ և ընդհանուրի բարօրութեան նուիրած գործերով:

Եւ հարցնենք մեզ. շատ ստուարաթիւ էր այդ դործունեայ հայութիւնը: Ասողներ կան թէ 10 կամ նոյն իսկ 20 հազարի էր համարում հնդկահայերի թիւը *): Բայց չը հաւատանք զրան. անկասկած, խիստ չափազանցացրած է այդ թիւը. Գոնէ 1829 թուականին հնդկական երկիրները ճանապարհորդած մի հայ **) ասում է թէ ամբողջ Հնդկաստանում ապրող հայերը հազիւ 150 տուն լինեն: Ենթադրենք թէ XVIII դարում դրանից անհամեմատ մեծ էր հայ գաղթականութիւնը,—դարձեալ շատ աչքի ընկնող մի թիւ չենք ստանայ: Մանաւանդ չը պիտի մոռանանք այն, որ հայերը, իրրի վաճառականներ, փոքրիկ իմբերով ապրում էին ցիր ու դան մեծ երկրի զանազան կողմերում:

Այդ մանր գաղթականութիւնների մէջ XVIII դարում հռչակուում է մանաւանդ Մազրասի հայ գաղութը: Հռչակուում է ոչ թէ իր բազմամարդութեամբ, այլ իր գործերով: Այդտեղ սկսուեց մի զրականութիւն, որ չը նայած իր սաստիկ աղքատութեան, նշանաւոր է մեզ համար իբրեւ նոր ուղղութեան սկզբնաւորութիւն: Այդտեղից էին դուրս գալիս առատ գումարներ հայոց վանքերի, եկեղեցիների, տպարանների, դպրոցների համար: Այդտեղ էին դիմում հոգևորական ժողովարարները—էջմիածնի նուիրակները, պատրիարքները, առաջնորդների ներկայացուցիչները. և պէտք է ասել, որ նրանցից ոչ մէկը զատարկաձեռն չէր յետ դառնում: Հնդկաստանը XVIII դարում մի ոսկեհանք էր թէ հայ վաճառականների և թէ դրանց փողին կարօտ հայ հիմնարկութիւնների համար: Բարեկեցութիւնը բարեգործու-

*) Չաղըճեան, Պատմ. Հայ, Եր. 411.

**) Պօղոս Աղաբաբովիչ - «Ստորագրութիւն Կալկաթայ քաղաքի», Վենետիկ, 1832, Եր. 43.

թեան հետ մի զարմանալի դաշնակցութիւն էր կապել. կարծես մէկը առանց միւսի անհասկանալի էլ կը լինէր:

Հարստութիւնը ձեռք էր բերում առատութեամբ. արդեօք այդ չէր պատճառը որ առատութեամբ էլ նուէրներ էին անւում, կտակներ էին կազմւում: Հնդկաստանը դեռ կուսական զրութեան մէջ էր. անգլիացիները դեռ չէին մտել նրա բոլոր խորքերը: Դեռ շարունակւում էր պատերազմը, որովհետև դեռ անկախ տեղացի իշխաններ կային: Այդ տեղացիների հետ էին հայերը մեծ մասամբ դորձ տեսնում և այդ պատճառով էլ այնքան հեշտ ու շատ էին հարստանում: Քանիսներն էին դատարկ ձեռքերով գնում Հնդկաստան՝ բախտ փորձելու համար և գտնում էին շրացուցիչ բախտ, գիզում էին մեծ հարստութիւններ: Դեռ անգլիական մրցութիւնը հայերին դուրս չէր չափտել ասպարէզից, չէր հասցրել նրանց անանկութեան և աղքատութեան: Աջողութիւնների այդ երջանիկ ժամանակներում հայ վաճառականը չէր խնայում, տալիս էր զրկւածին ու աղքատին, տալիս էր մանաւանդ իր ազգին:

Եւ ահա մի շարք փաստեր: XVIII դարի երկրորդ կէտում Սիմէօն կաթողիկոսին աջողւում է մի հրաշք գործել. — նա բաց է անում տպարան իջմիածնում — առաջինը Հայաստանի հողի վրայ: Այդ բաւական չէ. — նա բաց արաւ և թղթի գործարան, մի բան, որ մինչև այժմ էլ հայաց երկրում դեռ չէ տեսնուած: Անշուշտ, Սիմէօնի եռանդն ու ընդունակութիւնն էին այդպիսի հրաշք գործողները: Բայց պատուի մի մեծ մասն էլ պատկանում է Հնդկաստանում վաճառականութիւն անող ջուղայեցի Գրիգոր Չաքիկեանցին, որ սուեց բոլոր ծախսերը *): Չաքիկեանցն էր, որ երկու ֆրանսիացի հմուտ վարպետներ վարձեց և ուղարկեց իջմիածին՝ թուղթ շինելու համար: Գործարանի բոլոր ծախսերն էլ նա է տուել:

Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը Ռուսաստանում մեծ ձեռնարկութիւններ էր սկսել. նա գործ ունէր պալատական պաշտօնեաների հետ, մեծամեծ ընծաներ էր տալիս, հիմնում էր քաղաքներ, դպրոցներ, տպարաններ: Հարկաւոր էին ահագին միջոցներ: Եւ Յովսէփին իրանց ոսկով օգնող հանդիսանում էին մեծ մասամբ հնդկահայերը: Յայտնի անուն ունէր Արղութեանը Հնդկաստանում, և նրա զիմունները անկատար չէին մնում: Նոր-Նախիջևանում նա դպրոց է բաց անում,

*) «Զբօսարան Հոգևոր», իջմիածին, 1772, յիշատակարան:

դպրոցը չինութիւնը կառուցանում է Սուրաթում ապրող ջուղայեցի Յօհաննան Գերաքեանը: Նոյն Գերաքեանը տպարան է գնում և տալիս Արղութեանին, գրքեր է տպագրում իր ծախսով: Նոր-Նախիջևանին է կտակում իր անշարժ կալուածքը համադանցի Մասեհ Բաբաջանեանցը, կալիւթայում. նոյն տեսակ նուէրներ անում են կեսարացի Եղիա Մահտեսի Յակոբեանը, Սարգիս Ծատուրեանը, տիկին Կատարինա Խօջամալը *). չէ մոռացւում այդ կտակների մէջ և հայոց նոր քաղաք Գրիգորիօպօլը, Յովսէփ արքեպիսկոպոսի այս ձեռակերտը և նրա առանձին հոգացողութիւնների առարկան: Արղութեանը տպարան է հիմնում և Աստրախանում. և ահա ինչ ենք կարգում այդտեղ տպուած մի գրքի մէջ **). «Յիշեցէք և այս տպարանի մեծ հրախտաւորներին և սրան իրանց առատ նուէրներով պայծառ պահողներին, ամբողջ Հնդկաց երկրի Լուսաւորչածին իշխաններին և ղուարթամիտ ժողովուրդը, որոնք իրանց լիութի տուրքերով միշտ արեգակի պէս փայլեցնում են այս աղբօգուտ տպարանը»:

Մխիթարեան Միաբանութիւնն էլ վաղուց ճանաչել էր Հնդկաստանի ճանապարհը. Վենետիկից վարդապետները գնում էին Հնդկաստան, նուիրատուութիւններ հաւաքում: Հնդկահայերի մէջ կային և կաթօլիկ հայեր. դրանցից երկուսը—Եդուարդ Ռափայէլ Ղարամեան, բայց մանաւանդ նրա փեսայ Սամուէլ Մուրադը—հռչակուել են իրանց մեծ նուիրաբերութիւններով: Եդուարդի մասին մի քիչ մանրամասն խօսելը շատ հարկաւոր է մեր գործի տեսակէտից. սա հնդկահայ վաճառականի խիստ բնորոշ տիպն է, որի պատկերը տեսնելով, մենք կարող ենք երևակայել ուրիշ շատ այնպիսիներին, որոնք անյայտ են մնացել:

Նոր-Ջուղայեցի էր Եդուարդ Ռափայէլը. նրա հայրը Հնդկաստանում կարողութիւն էր չինել իր համար, բայց նրա մեռնելուց յետոյ այդ հարստութիւնը կորաւ անգլօ-Ֆրանսիական պատերազմի ժամանակ, Պօնտիշերիում, ուր Եդուարդը ապրում էր իր մօր հետ և ուր նա սովորել էր Ֆրանսիական դպրոցում: Տեղափոխուելով Մադրաս, նա սկսում է նորից աշխատել. առնտուր է սկսում Ջինաստանի և Ֆիլիպպեան կղզիների հետ, հարստանում է, ամուսնանում, զաւակների տէր

*) «Հիւսիսափայլ», 1859, № 5.

**) «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի», Աստրախան, 1797.

դառնում: 1780-ական թուականներին մի զէպը ծանօթացնում է Եղուարդին Մխիթարեան երկու վարդապետների հետ:

Հետաքրքրական է, որ Մխիթարեան Միաբանութեան երկու մասի բաժանուելու մէջ գլխաւոր դերը կատարել են հնդկական ոսկիները *): Մխիթարի յաջորդ Մելգոմեան Ստեփանոս արքայի ժամանակ մի գումար է ստացւում Հնդկաստանից իբրև միաբանութեան համար հաւաքուած նպաստ: Այդ անակնկալ օգնութիւնը մեծ ուրախութիւն է պատճառում միաբանութեան. Մելգոմեան արքան, ժլատ և կծծի մարդ լինելով, միաբանների մասին ոչինչ հոգ չէր տանում, չէր մտածում նրանց յարմարութիւնների և բարեկեցութեան մասին: Միաբանութիւնը վճռում է հնդկահայերի այդ նուէրով հոգալ իր անյետաձգելի կարիքները և ապա իրագործել իր մի մտադրութիւնը—բաց անել վանքում մի աշխարհական դպրոց հայ երեխաների համար, որոնք այդտեղ ուսումնի աւարտելուց յետոյ պիտի վերադառնային հայրենիք՝ իրանց աղզը լուսաւորելու համար:

Սակայն Մելգոմեան արքան այդ գումարը պահ է տալիս մի հայ վաճառականի՝ շահեցնելու համար և լսել անգամ չէ ուղում միաբանութեան բացատրութիւնները. դպրոց նա չի բաց անի, միաբանութիւնը պարտաւոր է հպատակուել և ոչ թէ գանգատուել իր կեցութեան անյարմարութիւնների վրայ: Եւ միաբանները, առանց երկար մտածելու, վանական յեղափոխութիւն են սկսում: Աբբային հանում են իր սենեակից, փակում են մի այլ սենեակում և յայտարարում են թէ նա պաշտօնանկ է արուած: Բայց կաթօլիկ վանքում չէ կարելի յեղափոխութիւններ կատարել. այնտեղ խիստ հնազանդութիւն է պահանջւում: Վրայ է հասնում վենետիկի պատրիարքը և անհնազանդ միաբաններին աքսորում է Տրիեստ: Այդտեղ էլ հիմնւում է Մխիթարեան երկրորդ վանքը, կազմւում է միաբանութեան մի նոր, անկախ ճիւղ: Աղքատ ու դժբախտ էին աքսորուածները. նրանք մուրացկանութեամբ պիտի ապրուստ հայթայթէին: Բայց չէին մոռացել աշխարհական դպրոց բացելու միտքը: Պէտք էր միջոցներ գտնել՝ այդ ձեռնարկութիւնը ապահովելու համար: Տրիեստցիները Կ. Պօլսում գտնուող Մխիթարեաններից մի քանիսին իրանց կողմն են որսում և նրանց միջոցով տոկոսով փող են վերցնում դպրոցի համար: Այդ որսածներից երկուսը, Հ. Բուդայեան և Հ. Մեհերեան, ճանապարհւում են Հնդկաստան որ այնտեղ ժողովարարութիւն անեն տրիեստցի-

*) Թէոդորեան, հատ. Դ., եր. 570.

ների համար: Շաբաթը մի անգամ Եդուարդը դրանց իր տունը ճաշի էր հրավիրում:

Բայց նա բոլորովին մտադիր չէր ձրի կերակրել վարդապետներին: Ոչ մի տեղից նպաստ չէին ստանում այդ ժողովարարները. Եդուարդը յայտնում է թէ ինքը պատրաստ է նպաստ տալ, եթէ վարդապետները ընդունեն իր պայմանը: Իսկ պայմանը այն էր, որ Հ. Բուզայանը տանէ նրա Ալեքսանդր և Յովհաննէս որդիներին Լօնդօն և խնամէ նրանց այնտեղ հինգ տարի, այսինքն մինչև այն ժամանակը, երբ պատանիները կաւարտեն իրանց ուսումը անգլիական դպրոցում. միւս վարդապետը պիտի մնար Մադրասում և հայերէնի դասեր տար նրա միւս երեխաներին: Վարդապետները համաձայնութիւն են տալիս:

Հնդկահայ գաղթականութեան դրութիւնը բաւական ծանր էր այն կողմից, որ այդ հեռաւոր տեղում հայը, չըջապատուած լինելով օտար տարրերով, կամաց-կամաց պիտի մոռանար իր մայրենի լեզուն: Տեսանք, որ անգլիերէնը շատ վաղուց մտաւ գաղթական հայ ընտանիքի մէջ: Նրանք, որոնք Ջուղայից և այլ տեղերից էին գաղթել, գիւ գիտէին իրանց լեզուն. իսկ ինչ պիտի լինէր այն սերունդը, որ ծնւում էր Հնդկաստանում: Չը կար մի տեղ, ուր նա կարող լինէր սովորել հայերէնը, ուստի և օտարացումը այնքան արագ էր սկսուել, որ չէր կարելի նրա վրայ ուշադրութիւն չը դարձնել: Հնդկահայ գաղթականութեան մի գեղեցիկ յատկութիւնն էլ այս էր: Ուրիշ աշխարհներում ցրուած հայ գաղթականութիւնների համար այսպիսի հարց չը կար. նրանք ուղղակի օտարանում էին, չը կարողանալով որ և է միջոց գտնել դրա դէմ: Հնդկահայերը այդպէս չէին. նրանց մէջ կային հայրենասէրներ, որոնք շատ լաւ հասկանում էին թէ չէ կարող ազդ լինել առանց ազգային լեզուի: Շահամիրեանը, ինչպէս տեսանք, իր տպագրած գրքերում առանձին ուշադրութիւն էր դարձնում լեզուի վրայ. հայերէն և ղէնք—սհա այն սիւները, որոնց վրայ պիտի հաստատուի հայութիւնը: Անձնապէս նա ինքը ցոյց տուեց թէ ինչպէս պէտք է վարուի ամեն մի հայր. իր երեխաների համար նա պահում էր տնային հայ ուսուցիչ: Բայց ամեն մէկը չէր կարող նրա նման լինել. ուստի իր նամակներից մէկում խնդրում էր Ղուկաս կաթողիկոսից որ նա մի տիրացու ուղարկէ Հնդկաստան՝ դպրոց բաց անելու համար: Այդ ձգտումը կար և ուրիշ շատ հնդկահայերի մէջ. մենք կը տեսնենք յետոյ, որ դպրոց էլ, գրականութիւն էլ ունեցան այդ մի բուռն հայերը և հէնց այդ պատճառով էլ երկար մնացին իրրի պարտաճանաչ հայեր:

Հայրենասիրութեան կողմից Եդուարդ Ռափայէլը Շահամիրեանից պակաս չէր Ոչինչ ծախս ու ջանք չը խնայելով որ իր որդիները եւրօպական լաւ կրթութիւն ստանան, նա միեւնոյն ժամանակ չէր մոռանում և մի հայ հօր առաջին պարտականութիւնը: Առաջին հնդկահայն էր նա, որ որդիներին, ուսում ստանալու համար, ուղարկում էր Լօնդօն: Նա գրեց մի շարք խրատներ և տուեց այդ պատանիներին՝ ղեկավարուելու համար: Մի սիրող և միեւնոյն ժամանակ կրթուած ու հասկացող հօր սիրտն էր խօսում այդ խրատների, այդ կտակի մէջ: «Հնազանդ եղէք,—ասում էր նա,—Հայր Նիկողայոս վարդապետին, որ կարգուած է ձեզ ուսուցիչ և դաստիարակ. նա կը կրթէ ձեզ ձեր հաւատքի մէջ և բարի վարք կը սովորեցնէ, դրա հետ և մեր հայկազեան լեզուն, որ ձեր սեփական լեզուն է. որովհետեւ դուք ծնուել էք հայ և պարտաւոր էք իմանալ ձեր լեզուն: Երգումով ասում եմ ձեզ, որ եթէ, Տէրը մի արասցէ, չիմանանք ձեր լեզուն, ես ձեզ իմ որդի չեմ ճանաչի»: Մայրենի լեզուն այդ հօր համար այնքան կարեւոր և մեծ նշանակութիւն ունի, որ իր խրատների մէջ նորից ու նորից նրան է վերադառնում՝ «Որդիք, կրկնում եմ և զգուշացնում եմ ձեզ. ազգով հայ էք, ոչ մի ժամանակ չը պիտի մոռանաք ձեր ազգը կամ լեզուն, որովհետեւ բնութեան և բարի ուսմունքների օրէնքով ամեն մարդ պիտի սիրէ իր ազգը և օգնէ նրա պայծառութեան: Ծնւարիան ասած, ձեզ Եւրօպա ուղարկելու դիտաւորութիւններիցս մէկն էլ այն է, որ ջանաք իմաստուն լինել՝ ապագայում ձեր ազգին օգնելու համար. և ազաչում եմ Աստուծուն որ պիտանի լինէք նրա ազատութեան՝ խօսքով կամ գործով»:

Ահա անգլիական ազգեցողութեան տակ գոյացած ինքնաճանաչութեան և առողջ ու գեղեցիկ հայրենասիրութեան մի ուրիշ նմուշ էլ: Չը մոռանանք որ կաթօլիկ էր այդ հայը. բայց կար նմանութիւն նրա և այն բազմաթիւ հայ կաթօլիկների մէջ, որոնք իրանց ֆրանկ էին անուանում և իրանց ազգութեան մընասելու մէջ մի առանձին ֆանատիկոսական հաճոյք էին զգում: Լայն, ազգային գաղափարների վրայ էր հիմնուած այդ կաթօլիկ հայի աշխարհայեցողութիւնը: Ընդհանուր հայ հայրենիքի որդի, նա, անկասի իր կրօնական համոզմունքներից, հաւատացած է որ այդ հայրենիքը իր անվերջ դժբախտութիւններից պիտի ազատուի գիտութեան միջոցով և պիտի ձգտէ ազատութեան:

Այդ դաւանանքը Եդուարդ Ռափայէլը պարզում է Տրիեստի Միթիթարեաններին 1785-ին գրած իր մի նամակի մէջ: Նրանից օգնութիւն էին խնդրել և նա համաձայն էր օգնութիւն

ուղարկել: Բայց ի՞նչ պայմանով: Բերելով այն իրողութիւնը, որ թիւրքիայում դեռ չարունակում են կռիւները լուսաւորչական և կաթօլիկ հայերի մէջ, նա խորին ցաւ է յայտնում: Ազգը, ասում է նա, ամեն տեսակ տառապանքներ է կրում, տգիտութեան թշուառութիւնը ծանրացած է նրա վրայ. ոչինչ բան չը կայ, որ միաբանուելու նախանձ գրգռէ մեղանում, միայն կրօնական վիճաբանութիւններ կան եղբայրների մէջ: Մեր վաստակած փողը զուր վատնում ենք և տալիս ենք թիւրքերին. իսկ ի՞նչ ենք չափում, եթէ ոչ միայն ամօթ, նախատինք և աղքատութիւն: Ո՛հ, անիմաստ ազգեր, բաւական համարեցէք ձեր անմտութիւնը. միաբանութիւն հաստատեցէք, նախանձաւոր եղէք մեր տառապանքների համար և թողէք որ մեր վաստակը տանք գիտութիւն գտնելու, որ արիութեան և ազատութեան դուռն է:

Այս գեղեցիկ դատողութիւնը հասցնում է Եղուարդին աւելի գեղեցիկ և արդար եզրակացութեան: Նա ասում է այն, ինչ վաղուց պիտի ասուէր մեր հոգևորականութեան, որ ազգի գրող ու կարգացող միակ դասակարգն էր: Աշխարհականները տեղ չունեն գրականութեան մէջ, իսկ հոգևորականները ի՞նչ են տալիս: Հոգևորականի պարտքն է, ի հարկէ, նախ Քրիստոսի հաւատը ուղիղ քարոզել և տպել սուրբ գրքեր, բայց այդպիսի գրքեր, ասում է Եղուարդը, հայերը բաւական ունեն: Այժմ պէտք է հրատարակել այնպիսի գրքեր, որոնք զարթեցնում են ազգասիրութիւն, գիտութեան և արիութեան նախանձ: «Գիտեմ, աւելացնում է նա, ինձ պատասխան կը տան թէ ով տուեց մեզ ծախսերը և մենք չարինք այդ: Բայց յայտնի գիտեմ, որ Հնդկաստանից շատ դրամ ուղարկուեց թէ մի և թէ միւս կողմի (այսինքն լուսաւորչական և կաթօլիկ) եկեղեցիներին՝ պատմական գրքեր տպագրելու համար, և վերջը տեսանք ոչինչ, բայց Սաղմոսից և Ժամագրքից»:

Այսպիսի միտք յայտնելը մեր օրերում էլ հայ կղերական բարեպաշտ անշարժութեան համար նշանակում է լինել լիւթերական, անհաւատ, ի՞նչ պիտի լինէր այն ժամանակներում, բարեպաշտական անշարժութիւնը համատարած էր: Եւ Եղուարդ Ռափայէլը շտապում է ասել թէ ինքը լիւթերական չէ, այլ ուղղափառ, բայց մի ուղղափառ, որ ուզում է նսնսնուել հրէական մեծ հայրենասէրներ Մակարէներին կամ, խօսելով ժամանակակից լեզուով, ամերիկացիներին: Այս վերջին ակնարկութիւնը մի անգամ էլ ցոյց է տալիս թէ Ամերիկայի ազատութիւնը որքան մեծ կրթիչ ազդեցութիւն ունեցաւ հնդկաստանցի հայ հայրենասէրների վրայ:

Մենք տեսանք թէ հայրենիքի ազատութեան մասին մտածողների համար սրպիսի մեծ օրինակ էր հին Հոօմը: Շահամիրեանցը իր հանրապետական գաղափարները և հայրենասիրական մտածողութիւնները հաստատելու համար Հոօմին էր դիմում և ցանկութիւն էր յայտնում որ Հոօմի պատմութիւնը հայերէնի թարգմանուի, որպէս զի հայերը կարգան, դաստիարակուեն այդ մեծ օրինակի վրայ: Նոյն ցանկութիւնն ունի և Եգուարդ Ռաֆայէլը: Փոքր հասակում, Պօնդիշէրիի ֆրանսիական դպրոցը աւարտելուց յետոյ, նա կարգացել էր ֆրանսիացի Ռօլլէնի գրած «Հոօմի Պատմութիւնը» և այն ժամանակից ուխտել էր թարգմանել տալ այդ մեծ գործը, որ բազմապատ էր 16 հատորներից: Տրիեստցիները նրանից օգնութիւն էին խնդրում, բայց նա մտադիր չէր փող տալ, հարկաւոր չը համարելով մտածել թէ ինչպէս և ինչի վրայ պիտի գործադրուեն այդ փողը: «Ես—ասում է նա մի այլ նամակում,—այն հայերից չեմ, որոնք շատ նուէրներ ևն տալիս էջմիածնին ու Երուսաղէմին և ուրիշ ոչինչ չեն ստանում, բայց «Աստուած քեզ օրհնէ» խօսքերից: Ես դիտեմ որ իմ գործերը պիտի օրհնեն ինձ»:

Ահա հէնց այդպէս էլ մտածելով, նա առաջարկում է տրիեստցիներին թարգմանել Ռօլլէնը: Տպագրութեան ծախսերը հոգալու համար նա այս գլխից տալիս էր ութ հազար ռուփի, որից հինգ հազարը իր սեփականութիւնից, իսկ մնացածը իր երկու ծանօթներից ստացած: Առաջին հատորը տպագրելուց յետոյ խոստանում էր տալ դարձեալ հինգ հազար ռուփի: Բոլոր գրքերը, ի հարկէ, տալիս էր Միխիթարեաններին. նրանց ծախելուց պիտի գոյանար 75,000 ռուփի, մի գումար, որ մեծ օգնութիւն էր տրիեստցիների համար: Իսկ հայ ընթերցողները այն շահը կ'ունենան, որ հոօմէական կառավարութեան, միաբանութեան և ազգասիրութեան մասին լիուրի տեղեկութիւններ կը ստանան:

Այսպէս էր առաջանում մեր գրականութիւնը: Վաճառականն էր ցոյց տալիս հոգեորականին թէ պէտք է, վերջապէս, մի քիչ էլ ազգի իրական շահերի ու պահանջների մասին մտածել: Նոյն այդ ժամանակները Տրիեստի Միաբանութիւնը տպագրել էր Ռօբէրտսօնի «Վիպասանութիւն Ամերիկոյ» գրուածքը, որ Ամերիկայի գիւտի պատմութիւնն էր, դարձեալ ջուղայցի մի հայ վաճառականի ծախսով: Եւ պէտք է նկատենք, որ մեր վաճառականների համար այնքան էլ հեշտ չէր հոգեորականներին հարկադրելը: Գոնէ Եգուարդ Ռաֆայէլը մի առանձին բախտ չունեցաւ. իր առաջարկութիւնը նա նախ վենետիկ էր ուղար-

կել, բայց պատասխան չէր ստացել: Իսկ ինչ արին տրիեստցիները: Նրանք ստացան փողը և լռեցին. չորս տարուց յետոյ Եղուարդը գրում էր. «Ծաղր դարձայ իմ ազգի մէջ, միշտ ասում են թէ վարդապետներն Հեղվարթին փողն լաւ կերան. սակայն իմ փողը ես ժամանակին կը պահանջեմ»: Այս սպառնալիքն էլ չօգնեց: Ծիշտ է, վարդապետները սկսեցին թարգմանութիւնը, մինչև իսկ մի թերթ էլ տպագրեցին, բայց գործը այդպէս էլ կիսածո մնաց և Եղուարդը հայերէն Ռօլլէն չը տեսաւ:

Կ'ասենք, սակայն, որ տրիեստցիների այդ վարմունքը մի բարի գործ ծնեցրեց: Տեսնելով որ ոչինչ չէ լինում, Եղուարդը կտակով մի գումար նշանակեց (65,000 ֆրանկ), որ պիտի պահուէր բանկում. նրա տոկոսներով էլ պիտի հրատարակուէր Ռօլլէնը: Կտակում նա կարգադրեց որ միայն «Հոսմի Պատմութիւնը» չը տպագրուի, այլ և նոյն հեղինակի «Հնախօսութիւնը», որ պարունակում է Եգիպտոսի, Ասորեստանի, Յունաստանի, Բաբելոնի և Պարսկաստանի հին պատմութիւնը *): Այդ բոլորը կատարելուց յետոյ, դրամագլուխը ստանում էր այլ նշանակութիւն: Նրա տոկոսներով պիտի բացուէր մի դպրոց աղքատ հայ երեխաների համար և այդ դպրոցի ղեկավարը պիտի լինէր Եղուարդի որդիների դաստիարակ Բուզայեան վարդապետը **):

Կտակած 65,000 ֆրանկ գումարը ինքն ըստ ինքեան մի մեծ բան չէր, բայց նշանաւորը այստեղ այն է, որ նա նուիրում է աղքատներին—հայոց խղճուկ գրականութեան և աղքատ դասակարգի կրթութեան: Այդ կտակը մի տեսակ առաջաբան էր. նրան հետեց մի այլ, աւելի խոշոր բարեգործութիւն, որի մասին շուտով կը խօսենք:

Առ այժմ դեռ լրացնենք Եղուարդ Ռափայէլի նկարագրութիւնը: Գեղեցիկ մտքերով տոգորուած այդ հայ մարդը, միևնոյն ժամանակ մի կծծի ու ժլատ վաճառական էր: Հ. Մեհերեանը, որ տարիներով նրա տանը ուսուցչութիւն էր անում, ճանապարհ դրուեց առանց վարձատրութեան, ստանալով միայն ճանապարհածախս, այն էլ իբրև հոգու վարձք: 1790 թուականին

*) Ռօլլէն XVIII դարում մեծ ժողովրդականութիւն վայելող մի հեղինակ էր: Հոսմի պատմութեան թարգմանութիւնը տպագրուեց 1815-ին, իսկ «Հնախօսութիւնը» 1825-ին, երկուսն էլ Վենետիկում: Երկու աշխատութիւնները կազմում են 12 մեծ հատոր, քարտէզներով զարդարուած:

**) Հ. Բուզայեան, հեռանալով Ցրիեստի միաբանութիւնից, նորից վերադարձաւ Վենետիկի միաբանութիւնը և այդ դպրոցի վրայ ունեցած իր իրաւունքները լանձնեց այդ միաբանութեան արքային: Այդ պատճառով էլ Վինետիկի Միթթարեանները դարձան Ռափայէլեան կտակի տէրը:

մեռնում է նրա կինը. աղջկան ամուսնացնելով Սամուէլ Մուրադի հետ, նա վերցնում է կրտսեր որդուն և նաև է նստում՝ Լօնդօն, իր որդիների մօտ գնալու համար: Եւ ահա ինչ է պատահում ճանապարհին: Նաւի ներքնայարկ սենեակներից մէկում մի կին բռնւում է ծննդական ցաւերից. հարկաւոր էր նրան տեղափոխել վերին յարկի մի սենեակ, ուր օդ շատ կար: Նաւապետը դիմում է Եղուարդին, խնդրելով իր սենեակը զիջել. բայց սա հրաժարում է, ասելով թէ իր սենեակի համար աւելի վարձ ունի տուած: Նաւապետը առաջարկում է ստանալ այդ աւելնորդը և Եղուարդը միայն այդ պայմանով համաձայնում է տալ իր սենեակը ծննդականին: Բայց դրանից յետոյ նա նաւապետի սաստիկ արհամարհանքին է արժանանում, այնքան սաստիկ, որ նա չէ կարողանում տանել և մեռնում է նաւի վրայ, երբ մինչև Լօնդօն մի օրուայ ճանապարհ էր մնացել: Սակայն նրա սնչունչ դիակն էլ չէ կարողանում ջնջել նաւապետի արհամարհանքը. և աւելորդ համարելով այդ գիակը ափ հասցնել, նաւապետը նրան գցել է տալիս ծովը *):

Այսքան շահամուռ ու ժլատ էր մեր աղգային բարերարներից մէկը: Նա վաճառական էր, ասիացի, միայն քիչ տաշուած կրթութեամբ, ինչպէս ասում է նրա փեսայ Սամուէլ Մուրադը: Եւ կարող ենք ասել թէ միւս վաճառականները միանգամայն ազատ էին այդ վատ յատկութիւններից: Ահա մեր այնքան ողորդած հայրենասէր Շահամիրեանը, ունէր ահագին կարողութիւն, բայց բոլորը, Լօնդօն հետ միասին, կտակեց իր անպէտք ժառանգներին և միայն մի ինչ որ սնդուկ հիմնեց Մադրասի հայոց եկեղեցում՝ աղքատների համար: Վատը դատապարտելով և լաւը բարձրացնելով, մենք պիտի խոստովանենք, այնուամենայնիւ, որ այդպիսի ստոր յատկութիւնները չէին խանգարում հնդկահայ վաճառականներին լինել իրանց ազգի բարերարները:

Ահա մի երախտաւոր էլ—Եղուարդի փեսայ Սամուէլ Մուրադը, որի անունը այժմ էլ արտասանւում է խորին պատկառանքով. ծնունդ է նա Թիւրքիայի Թօքաթ քաղաքում 1760-ին: Բայց հօր կողմից նա դարձեալ այն երկրիցն էր, որտեղից Շահ-Աբասը գաղթականութիւն տարաւ Սպահան և Ջուղայ Մուրադը, Սամուէլի նախահայրը, մէկն էր պարսից կառավարութեան կողմից գաղթականների վրայ նշանակած կառավարիչներից կամ մէլիքներից:

Երիտասարդութեան հասակում Սամուէլը իր հօր հետ

*) Թէոդորեան, հատ. Ա., եր. 45.

բաւական ժամանակ աստանդական կեանք է վարում. լինում է կ. Պօլսում, ապա գնում է Ունգարիայի Պետրօվարդէն քաղաքը, ուր մի քանի հայ ընտանիքներ կային. այդտեղ նա աշակերտում է Մխիթարեան մի վարդապետի, սովորում է հայերէն լեզուն: Բայց առևտրական աջողութիւն չը գտնելով, նա գնաց Վենետիկ, մտերմացաւ այդտեղ Մխիթարեանների հետ և ապա, չարունակելով ճանապարհը, ուղևորուեց Հնդկաստան: Այդտեղ նա Գրիգոր Շէհրիմանի մօտ գործակատար էր, մարգարիտ էր տանում Չինաստան: Առևտրի մէջ լաւ ընդունակութիւններ ցոյց տալով, նա գրաւեց Եգիպտոս Ռաիայէլի ուշագրութիւնը և նրա փեսան դարձաւ: Աներոջ մահից յետոյ մնալով նրա գործերի կառավարիչ և կտակակատարներից մէկը, Սամուէլը ամենայն բարեխղճութեամբ աշխատում էր կատարել տալ կտակի մասնաւանդ բարեգործական կէտը, որի հետ վերևում ծանօթացանք:

Հետզհետէ մեծացնելով իր կարողութիւնը, Սամուէլ Մուրադը չէ մոռանում իր ազգային պարտականութիւնները: Նա էլ խնդրում է որ Մխիթարեան վարդապետներից մէկը գնաց Հնդկաստան՝ երեխաներին ուսուցանելու համար, մտածում է Ռօլլէնի գրքերի տպագրութեան մասին, ցանկութիւն է յայտնում մի քանի գրքեր էլ իր հաշուով տպելու, մանաւանդ անգլիերէն-հայերէն և հայերէն-անգլիերէն բառարաններ: Սակայն նրա գլխաւոր մտածութիւնը ուրիշ առարկայի վրայ էր: Քիչ համարելով այն գումարը, որ իր աներ Եգիպտոսը կտակել էր դպրոցի համար, նա աւելացնում է այդ գումարի վրայ իր կնոջ ստացած ժառանգութեան մի տասներորդ մասն էլ: Դրանով դարձեալ չէ բաւականանում նրա բարեսիրութիւնը: Մտածում է ինքն էլ մի բան անել: 1798 թուականին գրած իր նամակում նա այսպէս էր նկարագրում հայ ազգի տգիտութիւնը. «Մենք, հայերս, ուսումից ու գիտութիւնից զուրկ լինելով, թէև պանդխտութեան մէջ չըլելով և հեռու աշխարհներ գնալով՝ այս ու այն կողմում շահւում ենք և մի փոքր տաշուելով ուրիշ ազգերի մէջ, մեր հարստութեան ուժով գիտունների մէջ ենք զրտնւում, սակայն այդ տաշումը մատաղ հասակում չէ կատարւում, այլ քարացած և կարծրացած հասակում, ուստի և բաւականաչափ կատարեալ չենք լինում: Նոյն նամակի մէջ էլ նա ցաւ է յայտնում որ հայոց որք ու աղքատ երեխաները ուսման բարիքներից զուրկ են մնում:

Այս ամենը արդէն ցոյց է տալիս, որ Սամուէլ Մուրադն էլ պիտի հետևէ իր աներոջ օրինակին և իր ազգի տգիտութեան

դէմ իրական ճար պիտի գտնէ: Եւ իրաւ. անցնում են տարիներ, Սամուէլի հարստութիւնը դնալով մեծանում է: Սամուէլը մեռնում է 1816 թուականին: Բայց դրանից մի տարի առաջ գրած իր կտակում նա գրել էր հետեւեալ կէտը.

«Ես իմ հաշուագրքումն մին որբոց, աղքատաց և տնանկաց հաշիւ ունեմ. իմ ստացուածքիցն մին հարիւր և յիսուն հազար հուն հանեն և տանեն նոյն հաշիւն. և յետ ասացեալ հարիւր յիսուն հազար հունն աւասցեալ հաշիւն տանելէն, զոր ինչ որ ասացեալ հաշուումն տալիքս գումարի՝ ասացեալ գումարի բոլորն թողման ամ Հայոց ազգի որբ և աղքատ մանկանց զպրատան շինութեան համար, որ ըստ խորհրդոյ և միջնորդութեան Վենետիկի Հայոց միանձանց՝ ո՛ր մի կողմն Եւրոպիոյ որ աջողակ համարեն, զետին դնեն, և ասացեալ գետնի եկամուտն քանի մանկանց տարեկան ծախուցն որ բաւական առի, այնքան Հայոց ազգէն որբ և աղքատ մանկունք ասացեալ զպրատանն ձրկապէս ուսումն և լեզուք ուսանեն և դառնան իւրեանց հայրենիքն:

«Եւ պարտականութիւն չլինի ասացեալ զպրատանն ուսանողաց վրայ քահանայ լինելոյ. բայց եթէ ոմանք իւրեանց աղատ կամաւն յօժարեցին քահանայութեան, լինիցին:

«Եւ եթէ ոմանք հարուստ անձինք ևս ազգէս Հայոց կամեսցին զմանկունս իւրեանց վերոյ ասացեալ զպրատանն ուսուցանել, կարող ան զծախան հատուցանելով. քանզի զիտաւորութիւն իմ վասն այս զպրատան շինութեան է վասն աղքատ մանկանց ուսուցանելոյ. այսինքն վասն նոցա որոնց հարքն չբաւարք են. վասն չկարելոյ նոցա զծախան զպրատան հատուցանել՝ զանց առնեն ուսմամբ մանկանց իւրեանց, և անմեղ մանկունքն այնոքիկ մնան զուրկ ի չամենայն ուսմանց և գիտութեանց, և որոյ վասն գրեթէ ըստ մեծի մասին անտէրունչ ազգս Հայոց տգէտք են:

«Եւ յուսամ յԱստուած, զի և այլք հարուստ անձինք չազգէս հայոց՝ յետ ճաշակելոյ զքաղցրութիւն ուսման զպրատանն զորս իմով միջնորդութեամբ սկսանի, և նոքա իմոց շաղաքն հետեւեցին, և այնու կարելի լինիցի սիւսել ի մէջ ազգիս, եթէ ոչ բոլորովին՝ զոնէ ըստ մասին, զլոյս գիտութեան և իմաստութեան. և անտէրունչ ազգս զարթնուցու ի քնոյ թմրութեան և անհոգութեանս:

Առատաձեռն նուիրատուն, բայցի դրանից, կարգադրում է որ եթէ իր որդիներէն մէկը անժառանգ մեռնէ, այն ժամանակ նրա բաժինն էլ պիտի աւելացուի այդ բարեգործական գումարի վրայ: Թողնելով իր որդիներին խաղաղ ու համերաշխ ապրելու կտակ, Սամուէլ Մուրադը յորգորում է նրանց վէճեր և զժուարթութիւններ չը յարուցանել կտակի կատարման դէմ, այլ, ընդհակառակն, բարոյական պարտք է դնում նրանց վրայ, որ իրանց բաժիններից էլ մասն հանեն իր ծրագրած զպրոցին: Այսպիսով հաւ Մուրադեան կտակը, մեր ազգային ամենախոշոր կտակներից մէկը, պատճառ է դառնում որ բացուի Եւրոպայում մի մեծ, բարեկարգ ու ապահով ուսումնարան: Բացւում է այդ

դպրոցը *), երկար ժամանակ մեծամեծ ծառայութիւններ է անում ազգին:

Մենք այժմ բաւական նիւթ ունենք դատելու հնդկահայերի կատարած դերի մասին: Ի՞նչ է ցոյց տալիս մեր մինչև այժմ պատմածը:

Կարևորը միայն զրամական օժանդակութիւնը չէր, որ այնպիսի առատութեամբ ստանում էին Հնդկաստանից մեր հիմնարկութիւնները XVIII դարում. շատ նշանաւոր են և այն գաղափարները, այն ոգին, այն ուղղութիւնը, որոնց քարոզիչներ հանդիսացան այդ վաճառականները: Իրանց դժբախտ հայրենիքի ցաւերին անկեղծ կարեկից, նրանք ձայն են բարձրացնում նրա ազատութեան մասին. դա միայն քաղաքական ազատութիւնը չէր, որ արեւելեան հայութեան հոգսերի առարկան էր, այլ և ազատութիւն ասիական ծանր խաւարից, տգիտութիւնից, — մի ազատութիւն, որի մասին մտածում էին արևմտեան գրական շրջանները, բայց մտածում էին միակողմանի կերպով, կաշկանդուած կղերական աւանդութիւնների մէջ: Շահամիրեանները, Ռափայէլները, Մուրադները տալիս են առաջադէմ, կենսունակ մի ազգի իդէալները, քարոզում են եւրօպական լոյս և գիտութիւն, նրանք առաջին ընտելիտ մտածողներն են մեղանում, աշխարհական ուղղութեան առաջին կարապետները: Ազգային համերաշխութիւնը, բոլոր հայերի եղբայրակցութեան գաղափարը այն ժամանակներում ամենից շատ անարգուած, նահատակուած հասկացողութիւններն էին: Կրօնական անհաշտ թըշնամութիւնների այն խաւար ժամանակներում հիացմունք են ազդում այն երկու կաթօլիկ հայերը, Եղուարդ Ռափայէլ և Սամուէլ Մուրադ, որոնք վեր են կենում հասկացնելու կրօնական երկպառակութիւնների մէջ գլուխ կորցրած հայերին, թէ նրանք ունեն տառապող ազգ, թէ այդ ազգը խեղճ ու գերի է իր տգիտութեան պատճառով: Նրանց կտակները մի-մի բարձր ու վեհ քարոզներ են համազգային համերաշխութեան, եղբայրակցութեան մասին: Նրանք գումարներ են թողնում ոչ թէ իրանց կրօնական համայնքին, այլ ամբողջ հայ ազգին: Մէկը, աները, փոքրիկ դպրոց է բաց անում որը ու աղքատ հայ երեխաների համար, իսկ միւսը, փեսան, աւելի առաջ է գնում, այդ որբերի

*) Մուրադեան դպրոցի պատմութիւնը վերաբերում է XIX դարին: Առաջիմ կ'ատենք այլ քանի, որ Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւնը ստացաւ ժառանգներից 1,815,000 ֆրանկ, մի պատկառելի գումար, որի կկամուտներով միանգամայն ապահովուած էր դպրոցը:

ու աղքատների կրթութեան գործը մեծացնում է, հաստատում է Եւրօպայում Նկատեցիք երկու սիրուն հանգամանք. 1) զըս-
րոցն աւարտող աղքատները չը պիտի մնան Եւրօպայում, այլ
պիտի վերադառնան հայրենիք. և 2) նրանց չէ կարելի ստիպել
որ հոգևորական գառնան: Բացատրութիւնների կարօտ չեն այդ
սկզբունքները, մանաւանդ այժմ, մեր ժամանակ:

Այստեղ ինքն ըստ ինքեան հարց է ծագում. ինչ կարող
էր անել հնգկահայ գաղթականութիւնը, եթէ նա աւելի բազ-
մամարդ լինէր, եթէ ունենար իր մէջ աւելի շատ պատրաս-
տուած, գիտուն գրական մարդիկ: Արդեօք նրա դերը աւելի
ազդեցիկ, աւելի տեղական չէր լինի: Արդեօք նա չէր կարող
միանգամայն յեղափոխել մեր գրական և հասարակական հաս-
կացողութիւնները: Նայելով բազմաթիւ նշաններին, նայելով այն
եռանդուն ջանքերին, առողջ ու գեղեցիկ սկզբունքներին, որոնք
հնգկահայերի միջից սկսեցին առաջին անգամ մտնել մեր իրա-
կանութեան մէջ, մեզ թւում է թէ անգլիական կրթութեան
հզօր ազդեցութիւնը կրող այդ հայութիւնը կարող էր աւելի
լաւ և առաջագէտ միջնորդ հանդիսանալ մեր և Եւրօպայի մէջ,
քան այն գրական ընկերութիւնը, որ գործում էր Եւրօպայի
հողի վրայ, ս. Ղազարի վմնքում և Տրիեստում:

Տեսնենք մի վերջին փաստ էլ:

VIII

Շահամիրեանի տպարանը ունեցաւ իր շարունակութիւնը:
1781 թուականից յետոյ այդ տպարանի գոյութեան մասին ու-
չինչ տեղեկութիւն չը կայ: Բայց 1789-ին Մազրասում արդէն
բացուած է մի նոր տպարան:

Այս անգամ այդ հիմնարկութեան տէր է հանդիսանում
տեղական հայոց եկեղեցու աւագ քահանայ Յարութիւն Շմա-
ւոնեանը: Այս համեստ հայ տէրտէրին վիճակուած էր պատուա-
ւոր տեղ բռնել մեր գրականութեան պատմութեան մէջ և մենք
կը կամենայինք նրա մասին կենսագրական մանրամասն տեղե-
կութիւններ հաղորդել: Սակայն յայտնի է շատ քիչ բան: Շմաւո-
նեանը Պարսկաստանի Շիրազ քաղաքից էր, ծնունդ էր 1750
թուականին և 1784-ից Մազրասի եկեղեցու քահանան էր: Այդ-
տեղ նա իր աշխատանքով, իր սեփական ծախսով հայերէն տա-
ռեր է պատրաստում, որոնց նա անուանում է «որդի վշտաց»,
ակնարկելով, երևի, իր այն չարչարանքները, որոնք հասկանալի
և անխուսափելի էին այդ դէպքում, երբ ամեն ինչ ինքը պիտի
պատրաստէր: Պէտք է խոստովանել որ թէև շատ էին չարչա-

րանքները, բայց Շմաւոնեանը Շահամիրեանից անհամեմատ բախտաւոր էր. նրա պատրաստած տառերը Շահամիրեանի տառերից աւելի գեղեցիկ, կանոնաւոր էին, ինչպէս նաև տպագրութիւնը անհամեմատ մաքուր էր և պարզ:

Տպարանատէրը այն ժամանակներում պիտի լինէր և գրական գործիչ: Շմաւոնեանը սկսում է հրատարակութիւններ աւելի իր ընտրութեամբ և այդ բանի մէջ ցոյց է տալիս որ Շահամիրեանցի ընկերը չէ: Մինչդեռ մադրասցի հարուստ վաճառականը իր տպարանը դարձրել էր քաղաքական պրօպագանդայի գործիք, տպագրում էր իր հեղինակութիւնները կամ հրատարակում էր այնպիսի պատմական գրուածքներ, որոնք համապատասխանում էին նրա դիտաւորութիւններին, Շմաւոնեանը սկզբում լուի հրատարակիչ է և տպագրում է գլխաւորապէս կրօնական գրքեր: Նրա տպարանի առաջին պտուղն է «Պատմութիւն Մարիամնէ կ'ուսին» անունով վկայաբանութիւնը, որ սկսեց տպագրուել 1789 թուականին և որ արտատպութիւն էր Կ. Պօլսում տպած մի օրինակից:

Երկրորդ գիրքը արդէն ուրիշ բան է—«Ողբ Հայաստանեայց», հեղինակութիւն ջուղայեցի Թադէոս քահանայ Սօգինեանցի, տպուած 1791-ին: Թէ ինչ էր պարունակում իր մէջ այդ «Ողբը», մենք չը գիտենք: Նրան հետևում է արդէն շատ անգամ՝ զանազան տեղերում տպագրուած և հայերի մէջ մեծ ժողովրդականութիւն վայելող «Յիսուս Որդին», Ներսէս Շնորհալու հոգևոր բանաստեղծութիւնը: Հետաքրքրական է որ Շմաւոնեանի մի քանի հրատարակութիւնների վրայ էլ նշանակուած է. «Ի թագաւորութեան օգոստափառ տեառն Երկրորդի Հերակլայ Բագրատունւոյ որ ի Թիփլիս»: Արդեօք սա չ'է ցոյց տալիս որ Շահամիրեանցի մտադրութիւնները յայտնի էին Հնդկաստանում շատերին և համակրութիւն էին վայելում շատերի կողմից:

1793-ին Շմաւոնեանը սրտի բերկրութեամբ, իբրև հնութիւնից մնացած մի թանկագին նշխար, տպագրում է յոյն փիլիսոփայ Պորփիւրի «Ներածութիւն ի գիրսն Արիստոտէլի» գործը, Դաւիթ Անյաղթ փիլիսոփային վերագրուող մի հին թարգմանութիւն: Բայց այսպիսի գործերով Մադրասի հայոց աւագերէցը շատ բան աւելացրած չէր լինի իրանից առաջ եղած տպագրութիւնների վրայ: Դաւիթ Անյաղթի խրթին թարգմանութիւնները չը պիտի կարգային Հնդկաստանի վաճառական հայերը: Իսկ տպած գրքերի տարածելը անհրաժեշտ էր նախ և առաջ այն պատճառով, որ տպարանը նոր գործեր էր պահանջում, նա չէր կարող պարագ մնալ, մանաւանդ առանց ծախսերի չէր գործի: Այդ պահանջը բարերարութիւն է գտնում

մեզ համար: Հետևեալ 1794 թուականին գտնուած էր նրան բաւարարութիւն տալու միջոցը, որ մի անմոռանալի դարագլուխ է բաց անում մեր գրականութեան մէջ:

Օգոստոսի 7-ին երևան է գալիս մի տպագրած թերթ, ուղղած «Բարեպաշտ Պարոնաց և Մաքրակենցաղ Տիկնաց Մաքրասիս Հայոց»: Այդտեղ Յարութիւն քահանան յայտնում էր թէ «դիտաւորութիւն ունի ամեն ամսի վերջում իր տպարանից լոյս հանել մի տետրակ, որի անունը կը լինի «Ազգ արարօզ» և որից ընթերցողը կ'իմանայ նոյն ամսուայ անջքերը, քաղուած թէ զանազան կաղէթներից, թէ զանազան քարտէսներից և թէ զանազան գրքերից, նոյնպէս և հարկաւոր ու քաղցրալուր բաներ. տետրակի վերջում կը տրուի հետևեալ ամսի օրացոյցը, որի մէջ կը լինեն սրբերի տօները, լուսնի ծննդեան և լրման օրերը»: Յայտարարութիւնը վերջանում էր նրանով, որ եթէ այդ տետրակին գրողները լինեն, հրատարակութիւնը չուտով կը սկսուի Նրկու ամիս չանցած՝ 28 բաժանորդներ կան, և Յարութիւն քահանան հրատարակում է իր «Ազգարարը», առաջին հայերէն պարբերական հրատարակութիւնը:

1794 թուականի հոկտեմբերի 16-ը, երբ լոյս տեսաւ «Ազգարարը» առաջին համարը, այն օրն էր, երբ հայ ազգը, կարելի է ասել, մտնում էր քաղաքակիրթ ազգերի ընտանիքի մէջ: Մտնում էր նա, ի հարկէ, իբրև աղքատ ու խեղճ մի արեւելի: Լրագրութիւնը Ներօպայում ծնունդ էր առել զեռ XVII դարի սկզբում—ահա թէ որքան էր յետ մնացել այդ արեւելին: Բոլոր եւրօպական ազգերն ունէին մամուլ. իսկ այն ժամանակ, երբ Շմաւոնեան քահանան շարում էր Մաքրասի տպարանում իր «Ազգարարը», արևմտեան մի քանի երկիրներում, մանաւանդ Անգլիայում և Ֆրանսիայում, լրագրութիւնը արդէն այնքան հսկայական առաջադիմութիւն էր արել, որ կային բազմաթիւ ամենօրեայ լրագիրներ. հրապարակաւօսութիւնը հաստատ հիմքեր էր բռնել, հասարակական կարծիք էր ստեղծում և զեկավարում, քաղաքական մեծ ոյժ էր դարձել: Այն ժամանակ, երբ Անգլիայում լրագիրները տարածւում էին միլիօնաւոր օրինակներով, մեր «Ազգարարը» Մաքրասում ունէր 28 բաժանորդ: Մենք, ի հարկէ, չենք ասում թէ կարող էր ուրիշ կերպ էլ լինել:

Պարբերական հրատարակութեան գաղափարը, ինքն ըստ ինքեան հասկանալի է, փոխ առնուած էր անգլիացիներից: Բրիտանական Հնդկաստանը ունէր իր լրագրութիւնը. առաջին անգլիերէն լրագիրը սկսեց հրատարակուել 1784 թուականին Կալկաթա քաղաքում («Calcutta Gazette»): Բայց Շմաւոնեանը այդ լրագրից օրինակ չը վերցրեց: «Մեր քաղաքի բարեկարգ

անգլիացիները,—ասում է նա,—սրանից մի ամսով առաջ սկսեցին տպագրել մի տետրակ, մերի նման՝ ամսի վերջում. և ինչպէս իմացայ, նրա մէջ մի ուրիշ բան չը կայ, բայց միայն իրանց ազգի համբաւաւոր մարդկանց վարքը, զանազան պատմութիւններ, գործերի որպիսութիւնը և մի քանիսնների արժանաւոր գրուածքները... իսկ տետրակի վերջում, իրանց հասարակութեան գործերը քաղցրայնելու համար, տպագրում են այստեղ վաճառելի զանազան իրերի գները և նաւերի գնալու ու գալու ժամանակները: Այս տետրակը ես ինձ օրինակ վերցրի»:

Գործը կազմակերպուած է կանոնաւոր կերպով. կայ խմբագրութիւն, կան աշխատակիցներ: Յարութիւն քահանան զտնում է Մադրասում մի քանի «ուրախակից երիտասարդներ», որոնք յանձն են առնում աշակցել առաջին հայ լրագրին: Այդ աշխատակիցները կոչւում են վերակապուներ. Շմաւոնեանը միահեծան տէր չէ, իւրաքանչիւր գրուածք նախ և առաջ պիտի վերակայունների կամ, խօսելով այժմեան լեզուով, խմբագրական մարմնի հաւանութիւնն ստանայ և ապա միայն ուղարկուի տպարան: Եկեղեցու զանգակատան տակ մի արկղ է դրուած, որի մէջ ամեն մէկը կարող է գցել իր այն գրութիւնը, որ նըշանակուած էր «Ազգաբարի» համար: Մէկը ուղարկել էր մի թարգմանութիւն, և ահա ինչ էր պատասխանում խմբագիրը իր լրագրի միջոցով. «Թարգմանութեանդ մի մասը տեսայ և հաւանեցի և ցոյց տուի քո երիտասարդ ընկերակիցներիդ, որոնք միաբան ուրախացան, որի մասին շտապում եմ յայտնել քեզ... Որովհետեւ դեռ չէ աւարտուած թարգմանութիւնդ, ուստի «Ազգաբարի» վերակապուները կասկածում են, պատճառ որ սկզբից կարգադրել են չընդունել մի բան, մինչև որ չտեսնեն նրա վերջը»: Ընկերական-խորհրդակցական սկզբունքով առաջ տարուող մի գործ, ճիշտ այնպէս, ինչպէս հասկացւում է խմբագրութիւն բառով:

Նշանակենք այստեղ մի շատ բնորոշ հանգամանք.—Շմաւոնեան քահանան հրապարակով յայտարարում էր որ թէ ինքը և թէ իր աշխատակիցները հմուտ չեն գրելու արհեստին և շատ կարգացած մարդիկ չեն: Մեզ այդ բանը չէ էլ՝ զարմացում: Հնդկաստանում այդպէս էր, և եթէ «Ուրդայթ Փառաց»-ը մի անգրագէտ մարդու գրուածք էր, առաջին հայ լրագրին էլ, որ նրա պէս նոր երևոյթ էր հայերի մէջ, նոյնպէս պիտի այդ տեսակ մարդկանց գործ լինէր: Հարցը գիտնական լինելու մէջ չէր, այլ ժամանակի պահանջները ըմբնելու կարողութեան մէջ: Այնքան լաւ մտքեր յայտնողները, այնքան սիրուն ծրագիրներ

ղայրողները ուղբեր էին, եթէ ոչ կիսագրագէտ վաճառականներ, Նոյն այդ վաճառականները իրանց անհմուտ, բայց գրասէր քահանայի հետ միացած, առաջին հայ խմբագրութիւնն են կազմում, հայ լրագրութեան սկիզբն են դնում...

«Ազգարարը» իսկական լրագիր էր: Թող մեր ժամանակի ընթերցողին չը չիփթեցնէ այն, որ նա ամիսը մի անգամ էր լոյս տեսնում, տետրակի ձևով, մինչդեռ մենք սովոր ենք՝ լրագիր ասելով հասկանալ պարբերական այնպիսի հրատարակութիւն, որ աւելի կարճ միջոցներում է լոյս տեսնում: Եւրոպական լրագիրներն էլ սկզբում ուշ-ուշ էին հրատարակում, շաբաթը մի անգամ: Մեզանում ընականը և հնարաւորը միայն ամսաթիւթով սկսելն էր: Զը մոռանանք պայմանները, հարկաւոր էին նիւթեր, տպարանական բարեկարգ գործ, հաղորդակցութեան յարմարութիւններ, ընթերցողների բազմութիւն: Թէ «Ազգարարը» լրագիր էր, դրա ապացոյցն է նրա ծրագիրը: Ամենագլխաւոր նպատակն է լուրեր տալը, և խմբագրութիւնը խոստանում է ջանք գործ դնել և լուրեր ստանալ Հայաստանից և Պարսկաստանից, տալ և թարգմանական լուրեր օտար լրագիրներից, շուկայի գները, նաւերի երթևեկութեան ժամանակները: Այդպէս է եղել լրագրութեան ծնունդը ամեն տեղ: «Ազգարարը» տպագրում էր և մասնաւոր մարդկանց յայտարարութիւններ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ միաժամանակ տրւում է և այսպէս անուանում՝ ընթերցանութեան նիւթ, այսինքն գրուածքներ, որոնք օրուայ նորութիւնների հետ կապ չունեն: Այդ նիւթը սովորաբար բաղկացած էր լինում թարգմանական պատմութեաններից, բարոյախօսական առակներից և ոտանաւորներից:

Հայ տպարանը Հայաստանի հողից հեռու տեղերում, հայկական գաղթավայրերում, գոյութիւն ստացաւ և շատ երկար ժամանակ օտար ու պանդուխտ էլ մնաց: Այդ նոյն վիճակին պիտի ենթարկուէր և հայ պարբերական մամուլը, որ կապուած է տպագրական գործի հետ: Մինչև այժմ էլ, եթէ չը հաշուենք մի քանի աննշան բացառութիւնները, մամուլը հայ գաղթականութիւնների մէջ է պահւում: Սա մի աւելորդ անգամ էլ ցոյց է տալիս թէ որքան կարևոր էին գաղթականութիւնները հայութեան համար: Եթէ հայ գաղթականների չնորհիւ էր, որ մենք շատ ազգերից առաջ տպագրութիւնը մտցրինք մեր մէջ, նոյն այդ գաղթականներին ենք պարտական և մեր այն պատիւը, որ պարբերական մամուլ ունենալու մէջ էլ մենք շատ ազգերից առաջ ընկանք: Մենք, ճիշտ է, եւրօպական ազգերի

հետ համեմատած էինք աղքատ ու խեղճ, երբ մեր «Ազգարարը» մտցրինք մամուլի համաշխարհային պատմութեան մէջ: Իսկ եթէ համեմատենք մեզ մեր դրացի, մեր բախտակից ազգերի հետ: Սերբիացիները, բոլգարները, վրացիները մեզանից շատ ուշ հասկացան մամուլի նշանակութիւնը և հիմնեցին պարբերական հրատարակութիւններ: Թիւրքիան սեփական, թիւրքերէն լրագիր ունեցաւ միայն XIX դարի առաջին կէսում, Պարսկաստանը—դրանից էլ ուշ: Մեզ վրայ այն ժամանակ տիրողներից, մեզ շրջապատողներից ոչ ոք մեր առաջնորդը չը դարձաւ այս բանի մէջ: Այստեղից պարզ է Յարութիւն քահանայ Շմաւոնեանի սկսած գործի ամբողջ մեծ նշանակութիւնը հայութեան համար:

«Ազգարարը» 18 ամիս ապրեց, կանոնաւոր հրատարակութեամբ մինչև 1796-ի մարտը: Ամբողջ այդ ժամանակամիջոցում հայ ընթերցողը ունէր մի թերթ, որ ընթացիկ կեանքի պատկերն էր ներկայացնում, որքան միջոց ու կարողութիւն ունէր: Մի կողմից ֆրանսիական յեղափոխութեան լուրերն էին տեղ գտնում այդ լրագրի մէջ, միւս կողմից Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի նամակները Պետերբուրգից, որոնց մէջ պատմուած էին 1791-ի ռուս-թիւրքական պատերազմի անցքերը, հայերի գաղթականութիւնը: Թէև «քերթողական արհեստին» հմուտ չէր Մադրասի անդրանիկ հայ խմբագրութիւնը, բայց և այնպէս, նրան աջողութեամբ էր մի կենդանի գործ կատարել: Այդպէս է եղել մեր լրագրական պատմութեան մէջ համարեա միշտ. «քերթողական արհեստին» հմուտ հայերը չէին գործ կատարողները, այլ նրանք, որոնց լեզուագիտութեան վրայ ծաղրում էին այդ հմուտները: Այսօր էլ «Ազգարարը» տալիս է մեզ շատ ապացոյցներ թէ իր ժամանակի հանգամանքներին ու հասկացողութիւններին նայած՝ նա շատ մեծ պատուով է տարել պարբերական մամուլի պարտաւորութիւնները: Նա տպագրել է ոչ միայն ամեն տեսակ լուրեր (մինչև իսկ Մադրասի հայերի մէջ տեղի ունեցող ամուսնութիւնների, մահերի և ծնունդների մասին), այլ և տուել է լուրջ գործեր, այսպէս, տպագրել է նոր-ջուղայեցի Խախատուր վարդապետի գրած «Պարսից Պատմութիւնը», որի մէջ շատ հետաքրքրական տեղեկութիւններ կան պարսկահայերի և հնդկահայերի մասին*), տպագրել է հայկական մատենագրութեան մի ամիսի պատկերը: Գրաբար լեզուով էր խմբագրւում ամսաթերթը. բայց աշխարհաբարն էլ միան-

*) Այդ պատմութիւնից նմուշներ տե՛ս «Ազգասէր» շաբաթաթերթ, Կալկաթա, 1845:

գամայն դուրս վաճառած չէր, նա էլ երևում էր «Ազգարարի» էջերում: Եւ ինչպէս արհամարհուէր աշխարհաբարը, երբ ընթերցողներին մէկը գրում էր. «Հասարակութիւնն ... կնեքի աշխարհաբար գրելէս, վասն որ իմ կենօք մն սաղմոսից էլ ոչինչ յաւել չեմ կարգացել, և էս էլ ողջ իմ մտկի հնարածն չի, թէ ոչ ես էլ կը զարմանայի իմ գիտութեան վրայ»: Այո, մեր պարբերական մամուլի հէնց առաջին օրին երևան է գալիս Սաղմոսից աւել ոչինչ չը կարգացած ընթերցողը և նա պիտի հարկադրէր որ լեզուով խօսեն իր հետ լրագրի էջերից: Այս անհրաժեշտութիւնը մի մեծ յեղափոխութիւն էր պատրաստում մեզանում:

Վերջացնելով մեր խօսքը «Ազգարարի» մասին *), մենք պիտի այն էլ աւելայնենք, որ Շմաւոնեան քահանայն իր այդ գործով ոչ միայն մեր լրագրութեան սկիզբն էր դնում, այլ և ստեղծում էր լրագրի մի տիպ, որ համարեա կէս դար գոյութիւն պահպանեց մեզանում: Հրապարակախօսութիւն չը կայ, պատահական են յօդուածները, զանազան գիտելիքների, ասածների, հետաքրքրաշարժ տեղեկութիւնների մի ժողովածու—անձնայդ տիպը: Դեռ երկար ժամանակ այս կերպարանքով և պատկերով հայերէն լրագիրներ պիտի հիմնուէին զանազան կողմերում, մինչև որ կը գար այն օրը, երբ կը ծնուէր հայ հրապարակախօսութիւնը: Այնպէս որ Շմաւոնեանը նախահայր է հանդիսանում ամբողջ կէս դարի հայ պարբերական մամուլի ուղղութեան կամ, աւելի ճիշտ ասած, բովանդակութեան, որովհետև ուղղութեան մասին ոչինչ հասկացողութիւն չը կար այդ ժամանակամիջոցում:

1796 թուականից յետոյ Յարութիւն քահանային մենք այլ ևս չենք տեսնում դրական և հրատարակչական ասպարէզում: Բայց նա երկար տարից և, ինչպէս ասում են **), շատ զժախտութիւններ տեսաւ իր ընտանեկան կեանքի մէջ: Այդ զժախտութիւնների պատճառը գլխաւորապէս այն էր, որ նրա աղջիկն ու փեսան Հնդկաստանի փչացած և անբարոյական վարքի տէր հայերից էին: Այդ ընտանիքի պատճառով էլ մեր առաջին խմբագիրը վասնում է եկեղեցական և ազգային գումարներ,

*) «Ազգարարի» մասին մեր տեղեկութիւնները վերցնում ենք Հ. Գ. Պալէմբարեանի «Պատմութիւն Հայ Լրագրութեան» գրքից (Վիեննա, 1893, եր. 200—213):

**) Պ. Ա. Երիցեանի մօտ գտնւում է հնդկաստանցի չայտնի խաչիկեան քահանայի մի գրութիւնը հնդկահայերի մասին, որ գրուած է 1879-ին: Այդտեղից էլ մենք հանում ենք այս տեղեկութիւնները:

դատաստանի տակ է ընկնում և մեռնում է մի շատ ցաւալի մահով 1824 թուականին:

Բայց տպագրութիւնը Հնդկաստանում չէ անհետանում: Նոյն 1796 թուին, երբ դադարեց «Ազգարարը», մի նոր տպարան բացուեց, այս անգամ Կալկաթայում: Յովսէփ քահանայ Ստեփանոսեանն է այդտեղի տպարանի տէրը, որ բայ է անում այդ հիմնարկութիւնը հայոց ս. Նազարէթ եկեղեցու բակում: Առաջ տպագրում է Կրեոացի Աբրահամ կաթողիկոսի «Պատմագրութիւնը», որի հետ մենք արդէն ծանօթ ենք *): Իսկ 1797-ին հրատարակուեց ջուղայեցի տիեզերալոյս անուանուած Յովհաննէս Մրբուղ վարդապետի վիճաբանութիւնը Սուլէյման-Շահի հետ, որի մասին նոյնպէս խօսել ենք **): Չէ կարելի երևակայել Ստեփանոսեան քահանայի տպարանից աւելի խեղճ ու աղքատ մի հիմնարկութիւն. արհեստի, ճաշակի կատարեալ բացակայութիւն, երևում է որ քահանան ինքն է շինել տառերը, ինքն է շարել ու տպագրել, ունենալով այդ բոլորի մասին երկխայական հասկացողութիւն:

Եւ այսպէս անա մենք տեսնում ենք որ հնդկահայերը, հայ ազգին իրանց դրամով ու խելքով օգնութիւն հասցնելով հանդերձ, մտածում են իրանց մասին էլ և աշխատում են կենդանացնել այնպիսի ուժեղ զործօններ, որոնք մի ազգի պահպանութեան գլխաւոր յենարաններն են: Հնդկաստանի տպագրութիւնները մեծ մասամբ 200 օրինակից աւել չէին լինում: Դա ցոյց է տալիս որ տպագրողները գլխաւորապէս տեղացի հայերին էին ի նկատի ունենում, ինչպէս այդ մասին մի քանի ակնարկութիւնների էլ ենք հանդիպում: Աւելորդ է ասել թէ ազգային դատարարակութեան տեսակէտից որքան կարեւոր և մեծագործ հիմնարկութիւն էր մանաւանդ պարբերական մամուլը. — հնդկահայերը այդ էլ գլուխ բերին, բայց նրանց ապագայում վերապահուած էր աւելի նշանաւոր դեր այդ ասպարէզում:

Սրանք մեծամեծ ջանքեր են, որոնք միայն տեղական նշանակութիւն չունեն, այլ և ընդհանուր ազգային: Բայց դեռ պակասում էր մի գլխաւոր բան — հայկական դպրոց, մայրնի լեզուի այդ ամենաուժեղ պահապանը: Այդ պակասութիւնն էլ լրացնում է Յարութիւն Գալուցեանը: Պատանեկութեան հասակում այս հայը, որ ծնուած էր Բերիայի գաւառում, գնում է Հնդկաստան, ուսում է ստանում Բէնգալիան նահանգի (երևի Կալկաթայի) անգլիական դպրոցում և ապա բայ է անում կա-

*) Տե՛ս վերևում, եր. 410.

**) Հայկ. Տպ., I, եր. 261.

նոնաւոր դպրոց XVIII դարի վերջերում: Դպրոցը 25 տարի գոյութիւն է պահպանում և այնքան յայտնի է դառնում, որ նոյն իսկ Պարակաստանից այնտեղ երեխաներ էին ուղարկում՝ սովորելու համար. Գալուցեանը պատրաստում է բազմաթիւ աշակերտներ, որոնցից շատերը նշանաւոր հանդիսացան նոյն իսկ Հնդկաստանում *):

Այստեղ փակենք հնդկահայ երախտաւոր գաղթականութեան պատմութիւնը, մինչև որ նորից կը հանդիպենք նրան XIX դարում:

ԼԷՐ

Վերջ առաջին մասի:

*) «Անդխտաց անպէտ»-Յ. Ավդալեանցի, Կարկաթա, 1821:

ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳԸ

(Ն. Պանկեևիչ)

Մի՛ յիշիր դու ինձ մայրենի աշխարհ,
Մա՛նուկ, մոռացի՛ր, հնչիւնը հայրենի...
Այս ցուրտ եւ դաժան երկրի մէջ օտար
Ինչո՞ւ ես յուզում վիշտ քո արքի...

Ննջի՛ր, ի՛մ մանուկ, ննջի՛ր դու անդորր,
Թո՛ղ ցնորհները հեռաւոր բախտի.
Նրանք շատ դառն են, սաստիկ թունաւոր
Այս տխուր երկրում անտրուածների...

Մա՛նուկ, այստեղ ողջ կը մեռնի ցրտից,
Այստեղ կեանքը քեզ շողեր չի սփռի,
Եւ ինչպէս տեսնու աշխարհ հողմերից՝
Այդ ցնորհները կը տարուեն հեռի...
Ե՛ւ թարմ ոյժեր, ե՛ւ քո պերճ ծաղկունք
Զմրան խիտ ցրտից պիտի մահաւան,
Եւ պիտի տեսնես դու լոկ վիշտ, արցունք
Քո օրոցից մինչեւ գերեզման...

—Օ՛, ո՛չ, ո՛չ, հա՛յրիկ, հայրենիքս հէգ
Եւ հնչիւնները իմ սիրած երգի
Ես չեմ մոռանայ այս երկրում երբէք,
Ո՛չ մի տեղ չը կայ անջատում մտքի...

Երբոր փչում է մերիկ չորս կողմիս,
Երբոր խնկրոք ծածկում է ձիւնով,

Մի՛ս հայրենիքս մի՛սս է գալիս,
Մի՛սս տոյրուրս հայրենի երգով...

Նա գարնան անուշ բոյրն է վարդի,
Նրա մէջ արճն է շենչում դալար.
Թո՛ղ շուրջս հողմը անվերջ կասաղի,
Թո՛ղ բուք բարձրանայ գիւղերը խաւար,—
Հայրենի ծաղկունք ցրտից չեն մեռնում.
Նրանք կրծքիս մէջ բուրում են անուշ,
Ախորան օսար անապատներում
Ձմեռը փրթում—ծաղկում են քնուշ...

Թո՛ղ մի՛ս արճումս կրեմ այդ վերքը,—
Երբ ոյծս հասնի—քոչնիկի նման
Վե՛ր կը սլանայ հայրենի երգը,
Ու ես ժպտալով կ'իջնեմ գերեզման:

Կ. ԿՐԱՍՈՒՆԻԿԵԱՆ

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

49) Ալժերէյ դը Վինէի, Քերթուածներ, թարգմ. Ա. Զօպանեան, Պարիզ, գինն է 1 ֆրանկ:

Ալֆրէդ դը Վինէին ֆրանսիական բոմանտիկ գրականութեան ամենահետաքրքիր դէմքերից մէկն է: Այս բանաստեղծ կոմսը՝ թէն բոմանական միջնուրարի ծնունդ և իր հայրենակից նախորդներից բաւականին ազդուած՝ այնուամենայնիւ իր գեղարուեստական ընդհանուր խառնուածքով շատ մօտ է գերմանական բոմանտիկներին, մանաւանդ հանճարեղ Նովալիսին: Նա «Կապոյտ ծաղիկի» հաւատարիմ և իսկական երկրպագուներից է, միւս կողմից մաքուր, սնապակ արուեստի լաւագոյն ջատագովը: Նրա նուրբ, խանդավառ հոգին շարունակ եթերային բարձունքներումն է սաւառնում. երկրաւորը, աշխարհայինը, նիւթեղէնը նրան շատ նուազ չափով է գրաւում: Այս պատճառով նրա թէ քնարերգական և թէ նոյնիսկ վիպական ու գրամատիկական գրուածքներից մի տեսակ հոգեղէն քնքշութեան շունչ է փչում:

Գ. Բրանդէս իրաւունք ունէր նկատելու, որ դը Վինէին մի ստոյիկեան է: Թէ ստօիցիզմը նա իր կեանքում ինչ չափով է գործ դրել, սա մենք մտադիր չենք քրքրել, բայց պէտք է խոստովանել, որ նա իբրև արուեստագէտ, վերին աստիճանի ողջախոհ է, մաքուր և նուրբ: Նրա ոճը չափազանց գրաւիչ է, պատկերաւոր և արտայայտիչ, լեզուն գեղեցիկ, զարդարուն, բայց ոչ արուեստական, երևակայութիւնը վառ և փարթամ, ինչպէս առհասարակ շատ բոմանտիկների:

Ալֆրէդ դը Վինէի առաւելութիւնը կայանում է նրա գեղարուեստական նրբութեան, զգայնութեան մէջ: Բայց այս առաւելութիւնը պատճառ է դառնում նաև մի խոշոր թերութեան—անընդունակ է դարձնում լուրջ պրօբլէմներ, լայն հորիզոններ ընդգրկել: Այս թերութեան վրայ անուղղակի կեր-

պով մատնանիչ է անում նաև պ. Զօպանեանը իր փոքրիկ յառաջաբանում:

Պ. Զօպանեանի գրքոյկը, որ կազմում է «Անահիտի» մատենադարանի II համարը, ամփոփում է միայն «Վինէի գեղեկագոյն քերթուածներուն հայերէն թարգմանութիւնը»: Նա թարգմանել է հետեւեալ կտորները. «Մովսէս», «Աղէտքը», «Ծակատաղիները», «Հովիւին տունը», «Զիթենեայ լեռը», «Գայլին մահը»:

«Մովսէսը» խրոխտ շեշտով գրուած մի ոտանաւոր է, ուր Իսրայէլի մեծ մարգարէն Եհովային դէմ առ դէմ կանգնած պաղատում է. «Տէր, աւանդ, ես հզօր եմ և մենաւոր, թնյ տուր, որ հողին քունը քնանամ»: Եւ Տէրը լսում է իր ծառայի ձայնը. «հզօր մենաւորը» վախճանւում է:

Յայտնի է, որ բօմանտիկները սովորաբար մի առանձին հակումն էին ցոյց տալիս դէպի կրօնական-միստիկ թեմաները: Այս առանձնայատկութիւնը նկատելի է մանաւանդ կաթողիկոսականութիւնների մօտ, որոնց շարքին է պատկանում նաև դը Վինէին: Բայց «Մովսէսից» միստիկ տրամադրութեամբ են համակուած նաև «Ծակատաղիները» և «Զիթենեայ լեռը»:

«Հովիւին տունը» և «Գայլին մահը» ամփոփում են իրանց մէջ լուրջ խորհրդածութիւններ:

Ալֆրէդ դը Վինէի ճաշակը բմբռնելու և նրա մասին փոքրի շատէ պաղափար կազմելու համար արժէ կարգաւ պ. Զօպանեանի թարգմանութիւնը, որ տեղի է ունեցել արձակ ոճով և որ ըստ ինքեան աշուղ կարող է համարուել: Մեզ թւում է, սակայն, որ ուռաահայ ընթերցողների համար թարգմանութիւնը մի քիչ անմատչելի է, որովհետև ազատ չէ խորթութիւններից և փնտրուած բառերից—մի թերութիւն, որից թիւրքահայոց թէ ինքնուրոյն գրողների և թէ թարգմանիչների մի մասը դժբախտաբար դեռ թօթափած չէ:

Վ. Ն.

50) Վահան Թէֆէեան, Հոգեւ, Պարիզ, 1901 թ., գինն է ?

Նքեղ սպուած այս գիրքը պարունակում է իր մէջ «ոտանաւոր և արձակ քերթուածներ», որոնց համարեա միակ նիւթը սէրն է, այն էլ հասցրած հեշտասիրութեան: Մի ղգացմունքի այդչափ ծայրայեղ ղարգացումը հիւանդ երեոյթ է. ղա սիրամոլութիւն է (էրօտօմանիա): Գիշեր ու ցերեկ հեղինակը

հէնց գեղեցիկ աղջկանց համբոյրները մասին է երագում... Պատենակական այդ տենչերի մէջ հետաքրքրական ոչինչ չը կայ. նոր է, և մեզ համար տարօրինակ, յոյզերի արտայայտութեան այն ձևը, որ պ. Թէքէեանը փոխ է առել ֆրանսիական դեկադենտ կամ սիմբոլիստ բանաստեղծներից:

Ինքը հեղինակն էլ կարծես զգում է, որ արդէն չափից անցան իր սիրահարական մրմունջները. «Վերջաբանում» նա ասում է.

Հիմա նրման պարտիզպանին այն խոհեմ,
Որ կը հանէ ածունեքէն տունկերն հին'...
Սնեղանակ, լողնած սէրերս կը խըլեմ

Յարդարելու համար հողը նոր բերքին,
Յամռներուն, աշուններուն քարերար,
Հողույս քաղցին 'ուրիշներուն համար... *):

Բայց այդ «նոր բերքերը» թող արուեստական չը լինեն արտայայտութեան կողմից. պ. Թէքէեանի լեզուն առանց արուեստական պաճուճանքների ազեղ չէ և իզուր նա ֆրանսիական դեկադենտներից վերցրած ներկերով այլանդակում է իր ոճը: Մենք գերադասում ենք պարզ, բնական դէմքը՝ կօսմեսիկական հնարներով իբրեւ թէ «գեղեցկացրածներից», բնական մաղերը՝ կեղծ ծամերից... Յամենայն դէպս առանձին ճաչակ է հարկաւոր հաւանելու համար այսպիսի «բանաստեղծութեան».

Նայումսմբ

Նայումսմբ մոռցա՛յ ու անտանելի
է ինձի անվերջ որոնումը այս
Մըտքիս ծալքերուն մէջ ուր խոյս կու տաս,
Օղին մէջ ուրկէ յոյսըս անյեղի

Կը սպասէ որ օր մ' ինձի նորէն գաս...:
Երբոր, դիպումս, նայումսմբ ինձի
Սռաջին անգամ դարձա՛ւ՝ ծրծեցի
Ջայն ինչպէս ջուրի մէջ ոսկի աւազ:

Եւ տենջացի, սէ՛րս, որ տարիներով
Նայումսմբիդ ներքե խեղճ օխտըս խըռով
Քընանալ...: Ըսպունդ, ուղեցի ըլլալ

Որ վըրաս ինկած, լուշիկ, անկասկած
Խըծելէ լետալ հոգիս լըճացած,
Ալ ինձմով լեցուն՝ գերեզմա՛նս ըլլալ...:

*) Ուղղագրութիւնը հեղինակին է պատկանում:

Եթէ մօգային հոսանքի ազդեցութիւնը չը լինէր պ. Թէ-քէնանի վրայ, գուցէ աւելի պարզուէր ընթերցողի համար հեղինակի ստեղծագործութեան ոյժը, որովհետեւ «Հոգեբուժ» կան մի քանի «արձակ» կտորներ, որոնք յոյց են տալիս որ հեղինակը զուրկ չէ բանաստեղծական սուրբից: Այդ կտորները կարծես զեկադենտական սուրբի ճեղքուածքներից կրկան լինեն հանում բանաստեղծական դէմքի աւելի բնական ու պարզ գոյն, որ սակայն այլանդակուած է ներկերի հաստ ծեփով:

Լ. Ս.

51) «Գիրք բղթաց». մատենագրութիւն նախնեաց: Սահակ Մեսրոպեան Մատենադարան, Ե: Թիֆլիս, 1901, մեծագիր 8⁰, կր. ժ. + 584. գինն է 1 ռ. 50 կոպ.

Քրիստոնէութիւնը իր գոյութեան առաջին երեք դարերում չարունակ ենթարկուած էր հալածանքի արեւմուտքում և արևելքում. որովհետեւ այն ժամանակուայ հեթանոս իշխողները այդ նոր արծարծուող կրօնի մէջ տեսնում էին ոչ միայն մի վտանգաւոր խնայեան իրանց հեթանոսական կրօնների դէմ, այլ և կարծում էին, թէ նա կարող է խախտել ու քայքայել նաև քաղաքական կարգերը: Հազարներով ու տասնեակ հազարներով քրիստոնէաներ այս չրջանում մատնուեցին բանտի, կապանքների, ստակալի չարչարանքների և մահուան: Բայց նոր կրօնը, չնորհիւ հաւատի կենդանութեան և կենսունակութեան, ոչ միայն չոչնչացաւ այս հալածանքներից, այլ օրէցօր զարգացաւ ու ծաւալուեց Եւրոպայի, Ասիայի և Աֆրիկէի շատ կողմերը:

Քանի որ տեսնում էին այս հալածանքները, և քրիստոնէութիւնը պարտաւոր էր պաշտպանողական դիրք բռնել հալածիչների դէմ՝ բոլոր ազգերի մէջ յրուած քրիստոնէաները իրանց մէկ էին զգում, գործում էին համերաշխ ու միաբան, որովհետեւ բոլորն էլ միևնոյն պայմանների մէջ էին իբրև հալածուածներ, և միայն ներքին կապն ու համերաշխութիւնը կարող էր բարոյական ու նիւթական ոյժ տալ նրանց՝ դիմադրելու նեղութիւններին: Բայց չորրորդ դարի առաջին քառորդում մի շատ կարևոր դէպք պատահեց, որ ահագին նշանակութիւն ունեցաւ քրիստոնէութեան համար. — այն ժամանակուայ ամենահզօր կայսերութեան, Բիւզանդիայի կայսր Կոստանդիանոս Մեծը ընդունեց քրիստոնէութիւն, որով այս կրօնը դարձաւ բիւզանդական

կայսրութեան պետական կրօն, և մի անգամից՝ հալածուած, ճնշուած դրութիւնից իշխող ու տիրապետող դարձաւ:

Այս մեծ յեղափոխութեան շնորհիւ՝ զանազան տեղերում պստուղ քրիստոնեայ ազգերն ու համայնքները ազատ շունչ քաշեցին. հալածանքները վերացած էին, և նոր կրօնը նոյն իսկ հովանաւորւում էր աշխարհական իշխանութեան կողմից: Բնականապէս ուրեմն պէտք էր սկսել կազմակերպել, աւելի որոշ կերպով ձեակերպել եկեղեցին, պէտք էր հետզհետէ բազմացող հաւատացեալների համար հոգևոր հովիւներ նշանակել, վարչութիւն ստեղծել: Վերջապէս՝ հաւատացեալների մէջ նոր կրօնի զաւանաբանական զանազան կէտերի վերաբերմամբ ծագում էին տարաձայնութիւններ, տարբեր կերպով էին հասկանում ու մեկնում Աւետարանի այս կամ այն տեղը. պէտք էր—այսպէս կարծում էին—այդ տարաձայնութիւնները լուծել, սխալ մեկնութիւնները ուղղել, որպէս զի եկեղեցին լինի մի հօտ և մի հովիւ:

Փոքր հարցերն ու տարաձայնութիւնները լուծւում էին իւրաքանչիւր աշխարհում առտնին կերպով. բայց շատ յաճախ պատահում էին և ծանր խնդիրներ, որոնք չօչափում էին դաւանաբանութեան էական կէտեր, որոնք առտնին կերպով լուծելու համար բաւականաչափ ոյժ կամ հմտութիւն պակասում էր: Շատ անգամ էլ որեւէ նոր միտք սկսում էր քարոզուել խօսքով ու գրով և բազմաթիւ կողմնակիցներ էր գտնում, և եկեղեցու վարչութիւնը անկարող էր լինում նրա արծարծուելու առաջն առնել: Հարկ էր լինում ընդհանուր ժողովներ գումարել՝ աշխարհի բոլոր կողմերում գտնուող քրիստոնեաների ներկայացուցիչներից, քննել այդպիսի մտքերը և լուրջ խնդիրները և մի որոշում կայացնել՝ որ պարտաւորական լինի բոլոր տեղերի քրիստոնեաների համար:

Այս կերպով սկիզբ առան տիեզերական ժողովները: Դեռ սկզբներում այդպիսի ժողովներում գլխաւորապէս տիրում էր՝ կրօնը մաքուր պահելու, եկեղեցու ընդհանուր միութիւնը պահպանելու ոգին: Բայց շուտով նրանց մէջ մուտք գործեցին մարդկային թոյլ կողմերը.—կուսակցականութիւն, գերիշխանութեան ձգտում, անձնական հակակրօնութիւն, ազգայնական խտրութիւն: Այնտեղ այլևս այնքան չէր հետաքրքրւում այն հարցը, թէ վիճող կողմերից որն է ճշմարիտը, այլ այն՝ թէ որը պէտք է յաղթէ: Յաղթողի կողմը կը մնային պատիւը, պաշտօնները, տիրապետութիւնը. իսկ յաղթուածը պէտք է կորցնէր ամեն ինչ և անպատիւ կերպով մերժուէր հաղորդակցութեան իրաւունքից յաղթողի հետ, հաշակուելով հերետիկոս, հերձուածող, ազանդաւոր

և այլն: Ուրեմն երկու մրցող կողմերն էլ լարում էին իրանց բոլոր ոյժերը, աշխատում էին կարելոյն չափ շատ կողմնակիցներ տանել ժողով, որպէս զի ձայների բազմութեամբ յաղթեն. այս նպատակի համար գործ էին դնում ամեն տեսակ միջոցներ — սպառնալիք, խոստումներ, կաշառք, բռնութիւններ և այլն: Թաղթուած կողմերը շատ անգամ յաջողում էին զանազան միջոցներով իշխանութիւնից տապալել իրանց երջանիկ ախոյեաններին, ու նրանց տեղը զբաւելով նորից ժողովներ էին հրաւիրում և արդէն իրանց կողմից նրանց բանադրում և հերետիկոս հրատարակում: Նոյն բանը յետոյ նրանց զլխին էին բերում նրանց հակառակորդները:

Այս ներքին կռիւներն ու փառասիրական ձգտումները հարկաւ շատ պէտք է նուազեցնէին տիեզերական ժողովների բարոյական վարկը և նրանց մէջ ընդունուած վճիռների նշանակութիւնը: Արա վրայ աւելացաւ և այն հանգամանքը, որ միմեանցից շատ հեռու ապրող, ցեղով ու լեզուով բոլորովին տարբեր ազգեր բնականապէս սկսեցին զգալ ինքնուրոյնութեան պահանջ, որովհետեւ մի ընդհանուր եկեղեցու ըստ ինքեան գեղեցիկ դադարաւորի տակ թաքնուած էր մի ծանր անհրաժեշտութիւն — ճանաչել կենտրոնական քաղաքի — Բիւզանդիոնի կամ Հոռոմի հայրապետների գերիշխանութիւնը և այն տեղերում ընդունուած ու նուիրագործուած լեզուով — յունարէնով կամ լատիններէնով — կատարել ժամերգութիւնը: Ուրեմն եկեղեցու միութեան անունով ազգերը պէտք է ենթարկուէին Բիւզանդիային կամ Հոռոմին թէ քաղաքականապէս և թէ մտաւորապէս:

Այս և ուրիշ պատճառներով քրիստոնէական ընդհանուր եկեղեցու մէջ առաջացաւ քայքայում. ազգերը մէկը միւսի յետեից սկսեցին առանձնանալ և յատուկ ազգային նուիրապետութիւն հիմնել և իրանց կրօնական գործերը ներքին կերպով կարգադրել: Ամեն մի բաժանուող, առանձնացող եկեղեցի ի հարկէ ունենում էր իր պատճառը և հիմքը, և ամեն մէկը իրան համարում էր իրաւացի, իսկ միւսներին ոչ-իրաւացի: Եւ այսօր տեսնում ենք տաճնեակ մեծ եկեղեցիներ, որոնցից ամեն մէկը համարում է, թէ միայն ինքն է պահպանել բուն, ուղղափառ կրօնը, իսկ միւսները մոլորուած են. իսկ ամեն մի մեծ եկեղեցու մէջ էլ կան ստորաբաժանումներ կամ աղանդ կոչուածներ, որոնք ևս իրանց կողմից նոյնն են պնդում տիրող, մեծ եկեղեցիների վերաբերմամբ:

Հայ ազգի քրիստոնէութեան պատմութեան մէջ աչքի ընկնող երկու կէտ կայ. — նա առաջինը եղաւ, որ քրիստոնէութիւնը ընդունեց իբրեւ պետական կրօն, և առաջինն էլ եղաւ,

որ առանձնացաւ, ինքնուրոյնացաւ: Այս հետաքրքրական երեւոյթները դժուար թէ կարելի լինի բացատրել լոկ պատահականութեամբ, մանաւանդ ինքնուրոյնանալը: Երեք խոշոր քայլեր պէտք էր անել այս ինքնուրոյնութիւնը ձեռք բերելու համար. նախ՝ պէտք էր ունենալ անկախ նուիրապետութիւն, այսինքն որ հայոց եկեղեցու հայրապետը օծումն ստանար հայոց եպիսկոպոսներից և ոչ թէ, ինչպէս առաջ, Կեսարիայի յոյն պատրիարքից, որեւմն և նրա ստորադրուածը լինէր. երկրորդ՝ պէտք էր ազգային եկեղեցու մէջ մայրենի լեզուով ժամերգութիւն մտցնել, այսինքն քրիստոնէութիւնը ազգայնացնել, և ոչ թէ, ինչպէս առաջ, յունարէն և ասորերէն լեզուները գործ դնել եկեղեցիներում: Երրորդ՝ պէտք էր մի անգամ ընդ միշտ դուրս գալ հզօր եկեղեցիների խնամակալութիւնից, ինքնուրոյն կերպով տնօրինել իր վիճակը, և ոչ թէ, ինչպէս առաջ, կախումն ունենալ տիեզերական ժողովների վճիռներից և անդադար իր դաւանաբանութիւնը և ծէսերը փոփոխութիւնների ենթարկել՝ նայելով թէ ժողովներ գումարել տուող ու կոռուող ոյժերից որը կը տանի յաղթութիւնը:—Այս երեք քայլերը հայոց եկեղեցին կատարեց մօտ հարիւր տարուայ ընթացքում, այնպէս որ հինգերորդ դարի վերջերին նա կատարելապէս ինքնագլուխ և ինքնուրոյն եկեղեցի դարձաւ:

Յոյն եկեղեցին, որի հետ առաջ կապուած էին հայերը, ի հարկէ հաշտ աչքով չէր նայում հայոց ինքնուրոյնանալու այս ձգտումներին, և մեր վերը յիշած երեք քայլերն էլ դժկամակութեամբ ու տրտունջով ընդունեց: Մանաւանդ մեծ դժգոհութեան տեղիք տուեց վերջին քայլը: Հայերը ճանաչել էին առաջին երեք տիեզերական ժողովները և նրանց վճիռները ընդունել. իսկ չորրորդը, Քաղկեդոնում գումարուածը, չճանաչեցին իբրեւ տիեզերական և ոչ էլ նրա դաւանաբանական վճիռն ընդունեցին: Յոյն և կաթոլիկ եկեղեցիները սրանից հետևորին, թէ որովհետեւ հայոց եկեղեցին չէ ընդունում Քաղկեդոնի ժողովի վճիռը, որի մէջ դատապարտուած էր Եւտիքէսի վարդապետութիւնը՝ ուրեմն նա Եւտիքէսի է, հերձուածող է: (Այն ինչ հայոց եկեղեցին, չընդունելով հանգերձ Քաղկեդոնի ժողովի վճիռը՝ միաժամանակ չէր ընդունում և Եւտիքէսի վարդապետութիւնը և նղովում էր նրան):

Քաղկեդոնի ժողովը չընդունելը չատ մեծ հետեանքներ ունեցաւ հայերի համար՝ քաղաքական, կրօնական և մատենագրական տեսակէտից, թէ՛ օգտակար և թէ՛ վնասակար: Խօսել այս հետեանքների մասին՝ մեզ շատ հետուն կը տանէր: Այսքանը անհրաժեշտ է յիշել, որ սյդ ժողովի առիթով գրական և կրօ-

նական բաւական մեծ չարժուած տեղի ունեցաւ Հայաստանում:— Ժողովներ գումարուեցին, դաւանաբանական շրջաբերականներ ու երկար թղթակցութիւններ գրուեցին, Քաղկեդոնի վճռին ի նպաստ և ընդդէմ գրաւոր փաստաբանութիւններ եղան, և այս բոլորը՝ ստեղծեցին հայերէն լեզուով մի բաւական ընդարձակ գրականութիւն:

«Գիրք թղթայր»-ը, որի առիթով այս համագոտ տեսութիւնն արինք՝ մեծ մասամբ այդ «Քաղկեդոնեան» գրականութիւնն է պարունակում: Նա ժողովածու է իննսունից աւելի թղթերի, որոնք պարունակում են հայոց եկեղեցու կողմից ուղարկուած շրջաբերականներ, հայոց կաթողիկոսների և գիտնական վարդապետների նամակագրութիւններ՝ յունաց բարձր եկեղեցականների և հայոց մէջ փոխանակուած թղթակցութիւններ—որոնք բոլորը վերաբերում են դաւանաբանական խնդիրների և մասնաւորապէս Քաղկեդոնի ժողովի վճռին: Ի հարկէ, Քաղկեդոնեան ամբողջ գրականութիւնը այստեղ չէ զետեղուած. այնու ամենայնիւ նա բաւական որոշ գաղափար է տալիս այն մասին, թէ ինչ զրութիւն ստեղծուեց Հայաստանում այդ ժողովի առիթով: Մենք տեսնում ենք այստեղ, որ հայերը սկիզբը բաւական անտարբեր են վերաբերուել դէպի Քաղկեդոնի ժողովն ու նրա վճիռը, այնպէս որ ժողովից դեռ մօտ կէս դար յետոյ Հայաստանում դեռ պաշտօնապէս ոչ մի որոշում չէ եղել նրան ընդունելու կամ չընդունելու մասին. և միայն վեցերորդ դարի սկզբներում ժողովով մերժուած է Քաղկեդոնի դաւանաբանութիւնը: Այնուհետև մի առ ժամանակ մեզմ լեզու են բանեցնում հայ եկեղեցեցականները այդ ժողովի դէմ. բայց նրանց լեզուն հետզհետէ խստանում է. նկատում ենք որ հայոց եկեղեցին սկսում է նշուել Քաղկեդոնը, նախատական խօսքեր ուղղելով նրա դէմ. եկեղեցուց մերժում ու բանադրում է նրանց, որոնք ընդունում են այդ ժողովի դաւանաբանութիւնը: Այս խստութիւնը երկարատևութիւն է ձգում հայերի և վրացիների մէջ, որոնք մինչև այդ ժամանակ միացած էին: Վրաց կիւրիոս կաթողիկոսը առիթից օգտուելով մի անգամ ընդ միշտ կտրում է յարաբերութիւնը հայոց եկեղեցու հետ և ինքնուրոյնացնում է վրաց եկեղեցու նուիրապետութիւնը (եօթներորդ դարում): Այնուհետև տեսնում ենք, որ հայերը փոխում են իրանց դերը. յարձակողականից դիմում են պաշտպանողական դրութեան, որովհետև քաղաքանապէս հզօր յոյն եկեղեցու նշանաւոր ներկայացուցիչները սկսում են գրաւոր կերպով մեղադրել հայերին հերձուածի ու մոլորութեան մէջ և յորդորել դէպի ուղիղ դաւանութիւնը, այսինքն Քաղկեդոնի ժողովն ընդունելը: Նոյնպիսի

առաջարկութեամբ յոյներէն յետոյ հանգէս է գալիս և կաթողիկ եկեղեցին՝ Ռուբինեան իշխանութեան ժամանակ։ Եւ հայոց հայրապետները ստիպուած են լինում պաշտպանել իրանց եկեղեցու ուղղափառութիւնը այս յարձակումներէ զէմ։

Գրքում ժողովուած թղթերից մի մասը արդէն տպագրուած է զանազան ժամանակ (Ուխտանէս պատմագրի մօտ, Սոփերքի մէջ կայն)։ Բայց համեմատութիւնից երևում է, որ այս գրքում պահպանուած բնագիրը շատ աւելի մաքուր է։ Ուրիշ, բաւական նշանաւոր մասն էլ պահուած կայ ուրիշ ձեռագիրներ ի մէջ՝ Վենետիկ, Էջմիածնի և ուրիշ մատենադարաններում։ Բայց կան և շատ թղթեր, որոնք յայտնի չեն ուրիշ տեղ, ուրեմն և իբրև միակ օրինակ պահուած են այս ժողովածուի մէջ։ Սրանց բանասիրական արժէքը, վաւերականն ու կեղծը կայն որոշելու համար պէտք է մասնագիտական ուսումնասիրութիւն նուիրել, որ այստեղ մեր նպատակից դուրս է։ Բաւականանանք ընդհանրապէս ասելով, թէ ամբողջ ժողովածուն մեծ հետաքրքրութիւն ունի հայոց եկեղեցական ու քաղաքական պատմութեան, նաև գրականութեան համար։ Թղթերից մի քանիսը ուղղակի գիւտ պէտք է համարուեն այս տեսակէտից։ Նրանց միջոցով ճշտում են շատ թուականներ մեր պատմական անձերի և անցքերի վերաբերեալ, հանգէս են գալիս մինչև այժմ անծանօթ մնացած գործիչներ քաղաքական և եկեղեցական ասպարէզներում, նոր լոյս է սփռում արդէն յայտնի անձնաւորութիւնների ու անցքերի վրայ, աւելի պարզ որոշում է հայոց եկեղեցու գրաւած դիրքը չրջապատող ազգերի ու եկեղեցիների մէջ և այլն։ Իսկ սրանք բոլորը նոր նիւթեր են մատակարարում՝ աւելի լաւ ճանաչելու մեր անցեալը։

Ձեռագիրը, որից կղած է այս տպագրութիւնը՝ բաւական հին է—1298 թուից։ Նա այժմ պատկանում է Անտոնեան միաբանութեան մատենադարանին և 1871-ին Հոռմից փոխադրուած է Կ. Պօլիս։ Տպագրութեան ձեռնարկողն եղել է՝ հանգուցեալ Յովսէփ Իգմիրեանցի սահմանած Սահակ-Մեսրոպեան գրական մրցանակի Յանձնաժողովը, որ գիմելով Անտոնեան միաբանութեան Աբրահայր Գեր. Ռափ. Ժ. Վ. Միւսէրեանին՝ թոյլտուութիւն է ստացել ձեռագրից մի օրինակ արտագրել՝ տպագրելու համար։ Յանձնաժողովը սրանով կամեցել է, առանց քննութիւնների ու բաղդատութիւնների մէջ մտնելու, իսկ ձեռագիրը հրատարակել հաւատարմութեամբ, «որ պարզապէս ձեռագրին օրինակները շատցուն ամենայն ճշտութեամբ և հաւատարմութեամբ», բանասէրներին թողնելով նրա բազմակողմանի հետազոտութիւնը։ «Ձեռագրին ընդօրինակութեան և առաջին բաղ-

դատութեան հսկողը եղաւ—յայտնում է հրատարակող Յանձնա-
ժողովը—գլխաւորապէս տ. Յովհաննէս Աւագ քահանայ Մկրեան.
տպագրութեան հոգը կատարեց տ. Գիւտ Աւագ քահանայ Ա-
ղանեանց, իսկ՝ տ. Բաբգէն ծ. վարդապետ Կիւլէսէրեան՝ վեր-
ջին բաղդատութիւնը ըրաւ և կազմեց յատուկ անուանց և վրի-
պակներու ցանկերը»:

Պէտք է շնորհակալ լինել յարգելի Յանձնաժողովից այս
գեղեցիկ միտքը յղանալուն և իրագործելուն համար. նոյնպէս
և աշխատողներին: Մասնաւորապէս շնորհակալութեան արժա-
նի է Անտոնեան միարանութեան Աբբահայրը, որ աննախան-
ձաբար թոյլ է տուել հրատարակել միաբանութեան ձեռագիրը,
կրօնական խտրութիւններից աւելի բարձր համարելով գրակա-
նութեան շահերը: Բայց չենք կարող ջառ չը յայտնել, որ տպա-
գրութիւնը չափազանց վատ է կատարուած. նա ոչ միայն չէ
համապատասխանում գիտութեան արդի սղահանջներին, ուստի
և չէ ներկայացնում «ձեռագիրը ամենայն ճշտութեամբ և հա-
ւատարմութեամբ», այլ և լիքն է անհափ տառախախտումների, թէև
Բաբգէն վարդապետը կազմել է այս տառախախտների ցանկը
(11 էրես, որ պարունակում է մօտ 300 տառախախտ), բայց այդ
ցանկով էլ չեն սպառուում տառախախտները: Պարապօղը ժամեր
գործ պէտք է դնէ՝ նախ այս տառախախտները գրքի մէջ ուղ-
ղելու, և դարձեալ վստահ չէ, թէ իր ձեռքի տակ ունի բնագրի
իսկական ընթերցանութիւնը: Այս պակասութիւնները ջառալի
են մանաւանդ այն պատճառով, որ այսպիսի բովանդականու-
թեամբ գրուածքները մեր մէջ չուտ չեն արժանանում երկրորդ
տպագրութեան:

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

Ն Ո Ր Ս Տ Ա Ց Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) «Հանդէս Հայագիտութեան», «Zeitschrift für ar-
menische Philologie. Unter Mitwirkung von Abgar
Joannissiany herausgegeben von Franz Nikolaus Finck
als verantwortlichem Redacteur, Esnik Gjandschezien und
Agop Manandian. Erster Band, erstes Heft (ausgegeben
am 30. Oktober 1901). Marburg (Hessen). «Հանդէս Հայ-
ագիտութեան» խմբագրութեան անունով գրութիւնները
պէտք է ուղարկել Թիֆլիս պ. ֆ. Ն. Ֆինկին (Գօլթ-
վինսկի, 36):

Նոյեմբեր, 1901.

- 2) Сборникъ Техническихъ статей. Изданіе экспедиціи за-
готовленія госуд. бумагъ. С.-Петербургі. № 1.
- 3) Գ. Ղազարեան, «Երկրագործական անհրաժեշտ գիտելիքներ»,
արտատպ. «Արարատից», Վազարշապատ, 1901 թ. գինն է
50 կոպ.:
- 4) Մ. Արեղեան, «Հայ ժողովրդական անասունները Մ. Խորե-
նացու Հայոց պատմութեան մէջ», արտատպած «Արարա-
տից», Վազարշապատ. 1901 թ., գինն է 1 ռ. 50 կոպ.:
- 5) Д-ръ Г. Д. Саркисовъ. Случай самоизлѣченія отъ фиб-
ромы пищевода. „Врачъ“ № 36.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ
ՄԵՐ ԵՒ ՈՒՐԻՇ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ԳԼ. Ա

Կովկասի աշխարհագրական դիրքը.—Հողի բաժանումները Կովկասի զանազան շրջաններում.—Անասունների քանակությունը և նրանց տեսակները.—Համեմատություն Ռուսաստանի և Եւրոպայի հետ.—Նկատուած տարբերությունների պատճառները.—Ի՞նչ փոփոխություններ է կրում անասնապահությունը ժամանակի ընթացքում:

I

Ինչպէս և բոլոր լեռնային երկիրներում, անասնապահութիւնը Կովկասում խաղում է բաւականին մեծ դեր: Դրա ամենամեծ պատճառը երկրի մակերևոյթը և դիրքն է: Պ. Ստատկովսկու *) հաշուով Անդրկովկասի հինգ նահանգների ամբողջ մակերևոյթի 1522 հազ. քառ. վերստից, զանազան բարձրութիւն ունեն (հաշուած ծովի մակերևոյթից).

Մինչև	1,000"	Փուտ ունի	444	ք.	վ.	կամ 290/0
» 1—	2,000"	»	»	217	»	» 142
» 2—	4,000"	»	»	299	»	» 150
» 4—	6,000"	»	»	309	»	» 202
» 6—	8,000"	»	»	236	»	» 154
» 8—	10,000"	»	»	68	»	» 44
» 10—	12,000"	»	»	18	»	» 11
» 11—	12,000"	»	»	03	»	» 02

6,000"—7,000"—ից վերև այնքան ցուրտ է, որ չի կարող բուսնել ոչ մի հացահատիկ: Այդ պատճառով Կովկասի մօտ 150/0-ը

*) Известія Кавк. Общ. С. Хоз. 1884 г. № 4.

ծառայել է անցկալում, ծառայում է ներկայումս և ապագայում էլ ծառայելու է իբրև ամառուայ արօտ «սարի», «եալի» անուան տակ: Կովկասեան ցուցահանդէսում ի ցոյց դրուած քարտէզում միմիայն պէտական ամառուայ արօտներ թարածութիւնը ցոյց է տրուած հաւասար 2,876,000 դեկտինի:

Բայց այդ, միայն արօտի համար կարող են ծառայել և այն ընդարձակ անապատները (Մուղանի, Ղարաբաղի, Շիրակի, Սարդարաբաղի և այլն), որոնք թէև գտնուում են տաք գօտիի մէջ (0—2000" ծովի մակերևոյթից բարձր), բայց չեն կարող մշակուել, որովհետև անձրևների պակասութեան պատճառով առանց արհեստական ոռոգման այդտեղ ոչինչ չի բուսնում: «Ոչինչ» ասելով, ես ուզում եմ շեշտել մշակուող բոյսերի վրայ և ոչ խոտի ու մի քանի տեսակ փշերի ու թփերի, որոնք կանաչում են այդտեղ գարնանն ու աշնանը և միջոց տալիս թափառականներին արածայնել իրանց հօտերը նոյն իսկ ձմեռուայ ամիսներին: Այդ տեսակ «ձմեռանոցներ» (կիչլակների) տարածութիւնը ոչ պակաս է քան 2 միլիօն դես., որովհետև միայն պետութեան ձմեռուայ արօտները բռնում են 1,708,600 դես.:

Նոյն իսկ Երևանի նահանգում, որ ամենախիտ բնակուածն է Կովկասում, «դաշտերի» տարածութիւնը հասնում է 300,000 դես., կամ նահանգի ամբողջ տարածութեան 115⁰/₀-ի *), ժամանակին ձմեռանոցները կը ջրուեն, կը դառնան մեր երկրի ամենահարուստ անկիւնները, միջոց տալով բնակութիւն հաստատել 1¹/₂—2 միլիօն ընտանիքների: Դա նախատեսուած է դեռ 40 տարի մեզանից առաջ, երբ անգլիացի Բէլլի և Գաբլինժենէրները կազմեցին իրանց յայտնի ծրագիրները Կովկասի ոռոգման մասին... Բայց... դա դեռ ծրագիր է, ուչ իրագործուելի ծրագիր և մեր տաք անապատները դեռ երկար ժամանակ ամառը կը ծառայեն օձերին, իսկ ձմեռը իբրև արօտատեղեր:

Եթէ «սարերի» ու «դաշտերի» վրայ աւելացնենք և լեռների լանջերի ու փէշերի այն մասերը, որոնք չնորհիւ զառիմայրի մեծ աստիճանի չեն կարող մշակուել, այլ ընդ միշտ մնալու են ծածկուած խոտով կամ թփերով, մենք կըստանանք մօտաւոր գաղափար այն ահագին տարածութեան մասին, որ յատկացուած է Կովկասում միմիայն անասնապահութեան համար:

Բայց չէ որ անասունների կեր են կազմում և վարելահողերի վրայ բուսնող արօտերի դարմանը, այգիներում քաղուող խոտը և անտառների թալաններն ու ծառերի չուաքի տակ գալարող ցողունները:

*) Даниловичъ, Районъ Тифл.-Карсеской ж. д., Тифлисъ, 1897 г

Հողաչափութեան ենթարկուած հողերի հաշուին նայելով, ինչպէս և ի նկատի առնելով պ. Էմերովի՝ ցուցահանդէսին հանդէս բերած քարտէշները Դաղստանի մասին, Կովկասի այլ և այլ նահանգներում զանազան կարգի հողերը կազմում են ընդհանուր տարածութեան հետեւեալ մասը (0/0-ի վերածած)․

Նահանգ-ներ	Ալդի, Բանջար.	Վարե-լահոզ:	Խոտ-հարք:	Արօտ, Մացառ:	Անտառ:	Անպէտք:	Ընդա-մենը.
Թիֆլիսի	08	200	81	280	390	41	100
Քութայիսի	19	182	26	55	657	61	100
Երևանի	07	290	23	598	23	2	100
Դաղստանի	03	80	93	334	55	435	100

Ինչ վերաբերում է Անդրկովկասի հողերի բաժանման ընդհանրապէս, դրա մասին դաղստանի կարելի է կազմել պիտական պալատի ժողոված ցուցակից, որ կազմուած էր նոր մտցրած հողահարկի համար։

Այդ ցուցակին նայած, ամբողջ Անդրկովկասի 22682 միլ. դես. հողից պիտանի է համարուած միայն 15516 միլ. դ. կամ երկրի մակերեսի 6750/0-ը։ Մնացած 1/3 մասը բռնուած է ժայռերով, ջրերով, աւազներով, ճանապարհներով, տան տեղերով և այլ գիւղատնտեսութեան համար անպէտք հողերով։ Պիտանի տարածութիւնից (155 միլ. դ.) զանազան կարգի հողերը բռնուած են․

I	կարգի հողերը (այգի, բոստան)	148 հ. դ.	10/0-ը։
II	» » (վարելու, խոտհարք)	4,1875 դ.	27 »
III	» » (արօտ և անտառ)	11,281 »	72 »

Եթէ վերջի կարգի հողերից բաժանենք անտառները (4,801 հ. դ. տարածութեամբ), կարող ենք հաշուել, որ մաքուր արօտները բռնուած են 6,480 հ. դ. կամ պիտանի հողի 410/0 իսկ անտառները » 4,801 » » » » 31 »

Համեմատած երկրի ամբողջ տարածութեան հետ (227 միլ. դ.),	
Այգիները կը բռնեն	148 հ. դ. կամ երկրի մակերեսի 0650/0
Վարելահող, խոտհարքները	4,1875 » » » » 1850 »
Արօտ և մացառները	7,4800 » » » » 3300 »
Անտառները	4,801 » » » » 2120 »
Անպէտք տարածութ.	6,066 » » » » 2670 »

Ինչքան խոտ է ստացուում այս տարածութիւնից և ինչքան «ապրանք» կարելի է սնուցանել ուրեմն Կովկասում՝ բաւականին դժուար է ճշտորէն որոշել։

Չոր կլիմայ ունեցող Երևանի արօտները, մանաւանդ ձմեռանոցների, աւելի աղքատ են խոտով, քան աւելի բարեխառն կլիմայ ունեցող Թիֆլիսի նահանգի արօտները, թէև միևնույն

ժամանակ Երևանի նահանգում ցանուող եօնջան տալիս է 300—400 պուգ դեսետինից, իսկ Թիֆլիսի արօտների բնական խոտհարքները միմիայն 100—150 պուգ:

Միւս կողմից Դաղստանի լեռների վրայ բուսնող «ալպեան», «ոչխարի» խոտը աւելի ազնիւ, աւելի մնդարար է, քան խոնաւ Քութաիսի նահանգի ճլոտ ու ջրալի (թէն ըստ արտաքինին փարթամ) բուսականութիւնը:

Ի նկատի ունենալով, որ Թիֆլիսի նահանգում խոտհարքներից ու այգիներից միջին թուով ստացւում է 100-ական պուգ խոտ, արտերից 80-կան պ. յարդ, արօտներից 40 պ. խոտ, իսկ անտառներից 10-ական պ., 1900 թուին *) ևս հաշուած էի որ ամբողջ նահանգում միջին թուով կենդանիների պաշար է ստացւում՝ ձմեռուայ 719 միլ. պ., ամառուայ 743 միլ. պ., իսկ ընդամենը 1462 միլ. պ., որ նահանգի ամբողջ տարածութեան հետ համեմատած տալիս է 375 պ. միջակ դեսետինից: Երևանեան նահանգի **) ձմեռուայ պաշարը հաշուած էր 424 միլ. պ., ամառուանը 593 միլ. պ., ընդամենը 1017 միլ., որ նահանգի տարածութեան վրայ տալիս է 452 պուգ դեսետինից: Քանի որ գիտնական Վօլֆի հաշուով կենդանիների ապրելու համար ամեն մի 1000 ֆունտին (25 պուգ) օրական տրում է 20—26 ֆ. խոտ և քանի որ Կովկասի մեծատաւարը իր փոքրութեամբ (10—15 պուգ) իսկապէս բաւականանում է 15 ֆունտով, տարեկան ծախսը միջակ մեծատաւարի վրայ հաշուելու է մօտ 56 պ. ձմեռուայ 5 ամիսների համար և մօտ 79 պ. ամառուայ 7 ամիսների համար, ընդամենը 135 պուգ, որ ներկայ պայմաններում պահանջում է իր համար միջին թուով 3 դեսետին հող:

Այս թուերի համեմատ կարելի էր հաշուել, թէ Երևանեան նահանգի ամբողջ ապրանքի թիւը «մեծատաւարի» ղերածած (2260:3=753), նամանաւանդ որ այդ ձևով ստացուած թուին (753 հազ.) շատ մօտ է նահանգի ամբողջ ապրանքի քանակութիւնը (7513 հազ.), և թէ դրան իբրև հիմք ընդունել արքունական հողերի վրայ ապրող գիւղացոյց անասնապահութիւնը, որ հաշուած էր 1884—85 թուերին: Բայց քանի որ այս հարցի վերաբերմամբ շատ մեծ դեր են խաղում տեղական պայմանները, քանի որ պաշտօնական (տանուտէրերի միջոցով ժողոված) թուերը շատ կասկածելի են, աւելի նպատակայարմար է երկրի անասունների քանակութիւնը որոշելիս, իբրև հիմք ընդունել

*) Кавказ. въ сельско-хоз. отношеніи въ 1899 г.

**) Ibid.

պետական հողերի վրայ ապրող գիւղացոյց *) ապրանքի չափը: Մանաւանդ որ այդ կարգի գիւղացիք կազմում են երկրի ազգաբնակչութեան ստուար մասը (5720/0): Ինչ վերաբերում է այդ կարգի գիւղացիների համեմատաբար աւելի հարուստ լինելուց առաջ եկած ախալին, դա գերակշռուած կարող ենք համարել այն հանգամանքով, որ մենք հաշուի չենք առնելու քաղաքացիների անասունները: Ի նկատի առնելով այդ հանգամանքը, ինչպէս և ընդունելով որ ժամանակի ընթացքում անասունների թիւը աւելացել է նոյն չափով, ինչ չափով աւելացել է ազգաբնակչութիւնը, մենք կըստանանք, որ Անդրկովկասի գիւղական ազգաբնակչութիւնը (4822 հազար թուի համեմատ) ունի.

Ի՛նչ տեսակ անասուն	100 անձի վրայ	Ընդամենը
Մեծատաւար (գոմէշ, կով, հորթ, եզը)	78	3,761 հազ.
Մանրատաւար (ոչխար, այծ, գառը)	229	11,038 »
Զիւ, ջորի, աւանակ	13	627 »
Խոզ	8	386 »
Ուղտ	1	48 »
Ընդամենը	329	15,860 »

Սրանք մի ջաւկ թուեր են ամբողջ երկրի համար ընդհանրապէս:

Ամեն մի նահանգի, գաւառի և մանաւանդ գիւղի անասունների քանակութեան և որակութեան մասին այս թուերը տալիս են շատ հարեանցի գաղափար: Այդ կողմից կովկասի զանազան շրջաններ և նոյն իսկ գիւղեր տարբերում են միմեանցից շատ զգալի կերպով, նոյն չափով, ինչ չափով տարբեր են զանազան շրջանների բնական, հասարակական և նոյն իսկ ազգագրական պայմանները:

Դրա մէջ համոզուելու համար բաւական է մի թեթիւ հայեացք ձգել, թէ ինչ տարբերութիւն են ներկայացնում անասնապահութեան վերաբերմամբ կովկասի զանազան նահանգներն ու գաւառները: Այդ տարբերութիւնների նշանակութիւնը աւելի ևս լուսաբանելու համար, ինձ օգտուէտ է թուում բերել այստեղ և այլ երկրներին վերաբերեալ համապատասխան տեղեկութիւններ ամեն մի 100 անձի վրայ հաշուելով.

*) Թիֆլիսի, Քութայիսի, Բագուի, Պանձակի և Երևանի նահանգների:

Երկիր, նահանգ և դաւան.	Ազգաբնակ. խտութիւն □ վ. վրայ ²⁾		Մեծատար.	Մանրատա. 24, ջորի աւանակ.	Իող.	Աղտ.	Ընդամենը.	Վերածած «մեծատա- ւարի» ³⁾ .	
	□	□							
Անդրկովկաս ¹⁾	255	78	229	13	8	1	329	695	139
Թիֆլիսի նահ.	232	103	365	16	23	—	507	985	197
Քութայիսի նահ.	357	40	12	5	29	—	86	265	53
Գանձակի »	229	76	151	11	7	—	245	595	119
Բաղուի »	241	71	222	15	1	—	310	665	133
Երևանի ն. մշտականաց ազգաբնակ.	443	78	177	9	04	2	265	620	124
Երևան. ն. թափառակ.	88	735	23	0	3	849	1300	260	
» » Ալեքսանդ. գ.	466	127	224	11	1	—	383	935	187
» » Նոր-Բալաղ. գ.	23	81	226	9	01	—	316	675	135
Կարաի շրջան.	189	114	186	14	0	0	314	730	146
Դաղստանի շրջան	255	56	290	14	0	0	360	640	128
Եւրոպ. Ռուսաստան	233	34	70	22	14	0	142	75	—
Ռուս. Տաւրիկեան նահ.	272	61	503	45	97	0	619	180	—
Սիբիրիայի Տոմսկի նահ.	26	78	98	77	0	0	253	194	—
Սիբիր. Խրիստոսի շրջ.	27	45	380	90	0	12	527	236	—
Թուրքեստան և Անդրկ. երկիր	27	33	255	25	0	20	333	125	—
Փորթուգալիա	508	16	99	7	25	—	147	36	
Սպանիա	346	19	175	19	29	—	242	56	
Յունաստան	336	19	284	16	12	—	331	56	
Ռումանիա	385	62	118	12	25	—	217	92	
Սերբիա	449	61	257	10	106	—	434	114	

¹⁾ Թիֆլիսի, Քութայիսի, Գանձակի, Բաղուի և Երևանի նահանգներին վերաբերեալ տեղեկութիւնները վերցրած են «Сводъ Матер. по изученію эконом. быта Госуд. Кр-янтъ Закавказья» գրքից: Կովկասի մնացած նահանգներինը՝ պաշտօնական հրատարակութիւններից, որ տպուած են նահանգապետների տարեկան զեկուցագրերի մէջ: Սիբիրիային վերաբերեալ տեղեկութիւնները—«Производит. Силы Россіи» գրքից: Եւրոպ. պետութիւնների վերաբերեալ տեղեկութիւնները—«Иссонъ-и Сравнит. Статистика»-ից: Ամերիկայինը—Սուփօրինի «Русскій Календарь»-ից:

²⁾ Կովկասի և Ռուսաստանի ազգաբնակչութեան խտութիւնը (1897 թուի ազգագրութեան հիման վրայ) հաշուած է քառ. վերստի վրայ. Եւրոպայինն ու Ամերիկայինը—քառ. քիլոմետրի վրայ, որ վերստից քիչ պակաս է և վերցրուած է «Otto Hübner-ի Geographische statistische tabellin» գրքից:

³⁾ Կովկասի համար «մեծատաւարը» հաշուած է հաւասար=1 զոմէշի =5 ուշխարի, այժի=1 ձիու, ջորիի, աւանակի=2/3 ուղտի:

Ռուսաստանի և Եւրոպայի համար Янсонъ-ը «մեծատաւարը» համարուած է հաւասար=2/3 ձիու=1 1/3 ջորիի, աւանակի, 10 հորթ ու ուշխարի=4 խոզի=12 այժի:

Ե Ր Կ Ի Ր	Խառն.	Մեծա- տա.	Մանրա- տա.	Ձի.	Խոզ.	Ուղտ.	Ընդամ.	Ընդամ. մեծատ.
Խտալիա	1052	13	31	5	6	—	55	23
Ֆրանսիա	715	29	62	9	16	—	116	54
Գերմանիա	914	39	67	8	17	—	131	58
Աւստրո-Ունգարիա	633	36	61	10	19	—	126	58
Շվեյցարիա	709	39	29	4	12	—	84	44
Բելգիա	242	26	12	6	13	—	57	37
Անգլիա	192	19	86	5	9	—	119	36
Հոլլանդիա	1383	41	27	6	19	—	93	50
Իրլանդիա	51	74	76	9	23	—	182	96
Շոտլանդիա	56	30	195	5	4	—	234	57
Դանիա	537	69	103	18	25	—	264	104
Շվեդիա	106	48	39	10	9	—	106	63
Նորվեգիա	61	56	111	8	6	—	181	73
Ամերիկայի *) Միաց.-Նահ.	87	52	47	19	46	—	164	104

Ինչպէս յայտնի է Կովկասի բոլոր նահանգները ունենալով լեռնային բնաւորութիւն ընդհանրապէս, իրանց օդի և բընութեան խոնավութեան աստիճանով արեւմուտքից և ովկիանոսի զով հոսանքներից զէպի արեւելք և Ասիայի դամաքների խորքերը դասաւորուում են այս կարգով՝ Քուիթայի, Թիֆլիսի, Գանձակի, Բաղուի, Դաղստանի, Երևանի, Կարսի Մօսուստրապէս այդ կարգով էլ իջնում է մեծատաւարի ու ձիու 0/0-ը և ընդհակառակը բարձրանում՝ ոչխարի, ջորի և աւանակի 0/0-ը: Այս տեսակ դասաւորման պատճառը այն է, որ բոլոր միւս հաւասար պայմաններում ոչխարը, այծը, աւանակը աւելի չոր, աւելի դառ բուսականութիւն սիրող կենդանիներ են, քան մեծատաւարը, ձին: Աւելի ցուրտ և աւելի հարթ Կարսի շրջանի հարստութիւնը մեծատաւարով ու ձիով և նրա ազգատութիւնը մանրատաւարով համեմատած հարևան Երևանի նահանգի հետ, չի հակասում վերը ասածներին, այլ ընդհակառակը՝ կողմնակի կերպով ապացուցանում է: Նոյն տեսակ կողմնակի ապացոյց է ասածներին և մեր «սարերի աշխարհի» (Դաղստանի) առատութիւնը մանրատաւարով և սակաւութիւնը մեծատաւարով: Աւելի խոնավ և նոյն իսկ ճահճային երկրների կենդանիներ են գոմէջն ու խոզը: Եւ ի՞նչ չը լինէին Կովկասում կրօնական այլ բաժանումներ ու մի քանի ուրիշ պատճառներ, որոնց մասին յետոյ, խոզերի տարածման վե-

*) Ամերիկային վերաբերեալ թուրը վերաբերում են վերջի տարիներին և վերցրած էն Սուլօրինի «Русский Еалендарь» за 1901-ից:

րաբերմամբ մենք կը նկատէինք նոյն կանոնաւորութիւնը, թէ և հիմա էլ խոնաւ Գութայիսի, միջակ Թիֆլիսի և չոր Գանձակի, Բագուի, Երևանի նահանգների համեմատութիւնը (խոզի քանակութեան վերաբերմամբ) որոշ չափ ապացուցում է վերը ասածներս: Դժբախտաբար, վիճակագրութեան մէջ գոմէշը չի բաժանուած մեծատաւարից, որպէս զի մենք կարողանայինք նոյն օրէնքը թուերով պարզել և գոմէշի վերաբերմամբ: Բայց ով կղեկ է Երևանեան դաշտի «Ղարասունների» ատերի և միւս ջրով առատ գիւղերում, ով տեսել է Շամախու գաւառի Մադրասի չրջանի գիւղերը, ուր հազողը բուսնում է առանց ջրի, ով ապրել է խոնաւ Զաքաթալի անտառներում, կը համաձայնի ինձ հետ, որ գոմէշները յիշուած տեղերում կազմում են մեծատաւարի $\frac{1}{2}$ — $\frac{1}{3}$ մասը և որ դրա պատճառը ջրերի և ճահիճների առատութիւնն է, որ գոմէշի և խոզի համար հանդիսանում է ամենանպաստաւոր պայման: Բոլորովին հակառակ տիպար են ներ կայայնում ջորին, աւանակը և մանաւանդ ուղտը, որ լինելով ամայի քարոտ անապատների կենդանիներ, տարածուած են Կովկասում, առաջինները քարոտ լեռնային չրջաններում, իսկ վերջինը Բագուի և Երևանի նահանգների ջրից զուրկ, «չորային» չրջաններում:

Որ Կովկասում գոյութիւն ունեցող տարբերութիւնները այս կամ այն կենդանին պահելու վերաբերմամբ հասարակ «քէֆի» և «կամբի» հետեանք չէ, այլ առաջ է եկած տեղական բնական և հասարակական պայմաններից, դա պարզուում է և եւրոպական պետութիւնների օրինակով:

Աւելի չոր և լեռնային բնաւորութիւն ունեցող Անգրեկովկասը համեմատած աւելի խոնաւ և աւելի հարթ եւրոպական Ռուսաստանի հետ, ունենալով ընդհանրապէս անասունների մի և նոյն քանակութիւն (75 և 70 մեծատաւարի վերածած), չափ անգամ աւելի ոչխար և ուխտ է պահում, քան Ռուսաստանը, բայց միևնոյն ժամանակ երկու անգամ աւելի պակաս խոզ և ձի: Վերջինիս տեղը Կովկասի լեռնոտ և չոր տեղերում (Երևան, Ղարաբաղ, Դաղստան, Ռսճա) բռնում են աւանակները, ջորիները և ուղտերը: Ամենից շատ Կովկասին անասունների տեսակներով մօտենում է Ռուսաստանի ամենաչոր նահանգը—Տաւրիկեան—որ, սակայն (իր հարթութեան պատճառով երկի) անհամեմատ աւելի ձի է անդում քան Կովկասը: Սիբիրիայի խորքերից զէպի Թուրքեստան ու Անգրեկասպեան երկիրը խոնաւութեան պակասելու հետ միասին մենք տեսնում ենք, որ պակասում է և մեծատաւարի ու ձիերի քանակութիւնը, աւելանում ոչխարների, ուղտերի (և, հաւանական, աւանակների, ջորիների) թիւը:

Եւրոպայի տաք և չոր հարաւից սկսած դէպի աւելի խոնաւ և ցուրտ հիւսիսը մեծատաւարը աւելանում է, մանրատաւարը պակասում:

Այսպէս՝ ազգաբնակչութեան ամեն մի 100 հոգուն գալիս է.

Ո՛ր երկիրներում:	Մեծատաւար:	Մանրատաւար:
Փորթուգալիա, Սպանիա, Յունաստան	16, 19, 19	99, 175, 284
Ֆրանսիա, Գերմանիա, Աւստրիա .	29, 39, 36	62, 67, 61
Բելգիա, Անգլիա, Հօլլանդիա .	26, 19, 41	12, 86, 27
Շվեդիա, Նորվեգիա .	48, 56	31, 111

Ճիշտ է, հարաւային երկիրների մէջ նոյնպէս կան այնպիսիները, Ռումանիան ու Սերբիան, օրինակ, որոնք տալիս են մեծատաւարի քաւականին խոշոր թիւ (62,61) և նոյնքան, ինչքան և հիւսիսի Իրլանդիան ու Դանիան (74,69), բայց, նախ՝ որ այդ երկիրները իրանց բնական ճոխ արօտներով ներկայացնում են շատ յարմարութիւններ մեծատաւարի համար և երկրորդ՝ նոյն հարաւի Ռումանիա և Սերբիա մանրատաւարը հաւնեմաքաւ աւելի շատ է, քան աւելի հիւսիս՝ Իրլանդիա և Դանիա:

Մի կողմից Սերբիայի ահագին խոզի տոկոս տալը (106 հատ ամեն 100 հոգուն) շնորհիւ իր աճարի անտառների ու խոնաւ, սիւմինդր տուող Դանուբի հովիտների և միւս կողմից լեռնոտ Շոտլանդիայի համեմատութիւնը աւելի հարթ և խոնաւ Իրլանդիայի, Դանիայի ու Հօլլանդիայի հետ, ակներև կերպով պարզում են թէ ինչ մեծ նշանակութիւն ունեն տեղական աշխարհագրական պայմանները և ինչ չափ լեռնոտ երկիրները նպաստում են մանրատաւարի զարգանալուն, հակառակ մեծատաւարի, խոզի և ձիու, որոնց պահելը աւելի ձեռնտու է աւելի հարթ երկիրներում:

Բայց կայ և մի այլ հանգամանք, որ խաղում է շատ խոշոր դեր այս կամ այն տեսակ անասուններ պահելու վերաբերմամբ—դա ազգաբնակչութեան խտութիւնը և զանազան երկիրների կուլտուրական բարձրութեան աստիճանն է:

Ամեն մի երկրում ժողովրդի բազմանալու հետ միասին վարելահողերը շատանում են, իսկ արօտները պակասում: Ճիշտ է, սրա հետ միասին լաւանում (ջրում, պարարտացում, քարից մաքրում են) մնացած արօտները, որի հետ միասին աւելանում է ամեն մի օրավար արօտի տուած խոտը, ճիշտ է, որ վարելահողերը բացի հացից տալիս են անասունների համար և յարգ (համարեա նախկին բնական խոտհարքից ստացուած խոտի չափով) և որ խիտ երկիրներում հացահատիկների մի մասը տրւում է և անասուններին: Բայց, այնուամենայնիւ, ժողովրդի բազմանալու հետ միասին անասունների թիւը շատանում է:

աւելի պակաս չափով և ամեն մի 100 անձնաւորութեան վրայ տարէցտարի դալիս է աւելի պակաս թուով ապրանք: Պաշտօնական անասնապրութիւններին նայած, եւրոպական Ռուսաստանում 1857-ից մինչև 1883-ը *), օրինակ, ամեն մի 100 անձնաւորութեան վրայ անասունների թիւը իջնում է այս չափով.

	1857-ից,	1883-ը՝
Զիւրի	263-ից	228-ի կամ 135 ⁰ / ₀
Մեծատաւարի	371 »	301 » » 19 »
Ոչխարի	721 »	594 » » 176 »
Խոզի	153 »	120 » » 220 »

Ռուսաստանի վեց ներքին նահանգներում, ուր զեմսովոնքը մանրամասն հետազօտած են անասնապահութիւնը, 1858-ից մինչև 80-ական թուերը ընդհանուր առմամբ ձիւրի թիւը աւելացած է 204⁰/₀, թէև ամեն մի 100 անձնաւորութեան վրայ 1858 թուին այդ ժամանակներում հաշւում էր 432.

Իսկ 1880-ին՝ 344 ձի:

Պ. Ծօպլէնի **) ասելով 30-ական թուականներին ամեն տեսակ անասուններ հաշւում էր հայկական շրջանում 534 հազ. Նոր-Բայազէթի գաւառում 83 հազ., կամ ամեն 100 անձի վրայ 325 և 360 հատ: 1884—85 թուականներին, երբ ազգաբնակչութիւնն աւելացած էր՝ հայկական շրջանում 232⁰/₀ (164-ից մինչև 534 հազ.), Նոր-Բայազէթի գաւառում 354⁰/₀ (228 հազարից 1036-ի), պետական հողերի վրայ ապրող գիւղացիների անասունների թիւը հաւասար էր (հաշւում և Ալեքսանդր. գաւ.) ընդամենը՝ Երև. նահ. 1182 հազ., Նոր-Բայազ. գաւ. 267 հազ., կամ ամեն 100 անձին 292 316 հատ:

Այսինքն, այն ժամանակ, երբ 55 տարուայ ընթացքում ազգաբնակչութիւնը աւելանում է 3¹/₂ և 4¹/₂ անգամ, անասունների թիւը աւելանում է աւելի պակաս չափով, ուստի և ամեն մի 100 անձնաւորութեան վրայ հիմա 33 և 44 ապրանքով (10—12⁰/₀-ով) աւելի պակաս է հաշւում, քան էր կէս դար առաջ: Ազգաբնակչութեան բաղմանալով և խտանալով բազատրւում է և այն, որ 100 հոգու վրայ հաշւում է անասուններ («մեծատաւարի» վերածած):

Խիտ Երևանի (443 մարդ քառ. վերստի վրայ) և Քութայի (357) նահանգներում... 124 և 53, իսկ աւելի նոսր Կարսի (189) և Թիֆլիսի (232) նահանգներում 146 և 197 մեծատաւար:

*) А. Фортунатовъ. с. х. статистика. Москва, 1893 г.

**) Историческій Помятникъ Армянской Области, СПб. 1852 г.

Նոյն հանգամանքով բացատրւում է և այն հանգամանքը, որ զանազան խտութիւն ունեցող երկրներում 100 անձի վրայ համարւում է ընդամենը անասուն (սեռատաւար)՝

Կիսաամայի հարաւ, Սիբիրիայում. (26 խտութ.)	253—527
Միջակ խտութ. ունեցող Ռուս. և Անգլի. (223— 255)	73—70
Խիս միջին Եւրոպայում	(633— 914) 54—58
Շաս խիս Անգլիա և Բելգիա	(192—242) 36—37

Սակայն միակողմանի կը լինէր միայն ազգաբնակչութեան խտութեամբ բացատրել զանազան երկրների անասունների քանակութիւնը: Մեծ դեր են խաղում այստեղ նաև այլ և այլ շրջանների բնական պայմանները, ինչպէս և նոյն երկրներում ապրող ազգերի կուլտուրական բարձրութիւնը:

Շուէյիա և Նորվեգիա, օրինակ, պահւում է նոյնքան ապրանք, ինչքան և Դանիա, Իրլանդիա և Շոտլանդիա, թէև վերջիններս 6—8 անգամ աւելի խիտ բնակութիւն ունեն, քան Սկանդինաւեան թերակղզին: Պատճառն այստեղ այդ երկրների ժողովուրդների կուլտուրական տարբերութեան մէջ է, այլ նրանում, որ ճահիճները, ժայռերը, անտառները Շուէյիա-Նորվեգիայում այնքան շատ են, որ շատ քիչ տեղ են թողնում մշակութեան ու արօճների համար: Երկրի մակերեսով թի 1000 մասից *), յիշուած երկրներում զանազան կարգի հողերը կազմում են.

Ինչ տեսակ հողեր.	Նորվեգիա	Շվեդիա.	Մեծ Բրիտան.	Դանիա.
Մշակութեան համար անպէտք .	711	402	246	178
Անտառի տակ	240	477	39	71
Արօտ և մարգագետին	23	36	441	309
Վարելու և այլ մշակուող հողեր	21	85	174	442

Արօտներն ու վարելահողերը, այսինքն այն հողերը, որով աննդւում են անասունները, երկրի 1000 մասից կազմում են.

Շուէդիա և Նորվեգիա	44—121
Իսկ Անգլիա և Դանիա	615—751

Այդ պատճառով, ամեն մի անձի վրայ՝ ինչպէս խիտ Բրիտանիա ու Դանիա, նոյնպէս և արձակ Շուէյիա Նորվեգիա, գալիս է համարեա հաւասար տարածութիւն արօտի և մշակ-

*) Сравнит. стат. данныя важнѣйшихъ государствъ. „Русскій Календарь“ Суворина за 1901 г.

ուող հողի, որ և հարկադրում է համարեա հաւասար թուով մնուցանել կենդանիներ:

Տաք, արօտներով աղքատ այգեգործական Փորթուգալիա և Իտալիա 100 հոգուն «մեծատաւար» հաշոււմ է.

Խիտ (1052) Իտալիա	23
Աւելի ազատ (508) Փորթուգալիա	36

Այն ինչ, նոյնպէս երկու անգամ Փորթուգալիայից խիտ Գերմանիան (914) տալիս է համարեա երկու անգամ աւելի անասուն (58) և դա չնորհիւ, ի հարկէ, իր փարթամ մարգագետիններէ: Նոյնն է և մշուշով պատած լեռնային Շօտլանդիան, որ երկու անգամ Փորթուգալիայից աւելի ապրանք է մնուցանում (57), չընայած որ աղգաբնակութեան խտութեամբ «փորթուգալի» հայրենիքից չի տարբերուում (56):

Բացի անասունների քանակութեան պակասելուց, ամեն մի երկրի աղգաբնակութեան խտանալու հետ միասին փոխուում է և անասնապահութեան ձևը, փոփոխութեան է ենթարկուում, այսպէս ասուած՝ մնուելիք անասունների ռակիւքիւնը: Երևանեան նահանգի թափառականները ընդհանրապէս 2 անգամ աւելի ապրանք մնուցանելով մշտակեայներից (260 հարիւրին 124-ի տեղ) անասունների առանձին տեսակներից պահում են.

Մեծատաւարը հաւասար թուով	(88—78-ի տեղ)
Ոչխար այծը 4 անգամ աւել	(735—177 »)
Զի, աւանակ, ուղտ 2 ¹ / ₂ անգամ աւել	(26— 10) »)

Հարկաւ, սրա պատճառը այն է, որ չնորհիւ հողերի սակաւութեան, չնորհիւ հողագործների կապուած լինելուն այս կամ այն վայրի հետ, չնորհիւ ձմեռուայ համեմատական մեծ պաշարի, մշտակեաց աղգերին աւելի ձեռնտու է մեծատաւար, ձի աւանակ պահելը, քան ոչխար, այծ: Միւս կողմից երկրագործ ժողովուրդների աղգաբնակութեան խտանալու հետ միասին աւելի ձեռնտու է լինում աւելացնել մեծատաւարի, մանաւանդ կթանի, խոզի (և թռչունների) քանակութիւնը, պակասեցնելով կամայ-կամաց մանրատաւարի թիւը:

Եթէ Երևանեան նահանգի Ալեքսանդրապոլի գաւառում ամեն 100 հոգուն գալիս է 1¹/₂ անգամ աւելի մեծատաւար, քան համարեա նոյն զօտիում գտնուած Նոր-Բայազէթի գաւառում (127 և 81) այն ժամանակ, երբ ոչխարի թիւը այդ գաւառներում հաւասար է (224 և 226). դրա գլխաւոր պատճառը այն է, որ Ալեքսանդրապոլի գաւառը երկու անգամ աւելի խիտ է, քան Նոր-Բայազէթի գաւառը (46 և 23):

Ալեքսանդրապոլի գաւառի սակաւահող ժողովրդին հողագործական աշխատանքները բաւարար կերպով կատարելու համար աւելի նպատակայարմար է աւելի ոյժ տալ մեծատաւարին, քան ոչխարին: Նոյն պատճառից զրդուած Կովկասի խիտ ազգաբնակութիւն ունեցող մասերի ազգաբնակութիւնը (Իմերէթ, Կախէթ, Արարատեան դաշտ) պահում է գլխաւորապէս մեծատաւար և չատ տեղեր նոյն իսկ միայն լծկան և կթան: Սա էլ բաւական չէ. կան տեղեր, ուր նոյն իսկ այս լծկան ու կթանը մնույանում է ոչ թէ իր տեղում, այլ դնում հողով և արօտով աւելի առատ չրջաններում (Արդահան, Ախալքալաք, Նոր-Բայազէթ, Սիսիան և այլն):

Նոյն բանը նկատում է և Եւրոպայում:

Համեմատած բոլոր անասունների ընդհանուր թուին (վերածած «մեծատաւարի»), մեծատաւարի քանակութիւնը կազմում է.

Կիսաամայի Սիբիրիայի Տոմսկի նահանգում (26 խտ.)	40 ² / ₀
Նոսր բնակութեամբ ևւրոպ. Ռուսաստ. (233 »)	45 ³ / _»
Խիտ { Ֆրանսիա, Գերմանիա, Աւստր. (71 ⁵ / _{»,} 91 ⁴ / _{»,} 63 ³ / _»)	54, 67, 62 »
{ Ամերիկայի Միացեալ-Նահանգ. (87 խտութ.)	50 »
Ամենախիտ Հօլլանդ., Անգլ., Բելգիա (138 ³ / _{»,} 192, 242)	82, 53, 70 »

Հարաւային երկրներից.

Միջակ խտութ. ունեցող Սպանիա, Յունաստան (346, 336)	34 ⁰ / ₀
Խիտ Իտալիայում (105 ² / _» խտութ.)	57 »

Նոյնն է և խոզի վերաբերմամբ: Ժողովրդի խտանալու հետ միասին նոյն չափով և նոյն իսկ աւելի արագ կերպով, շատանում է և խոզերի թիւը: Դրան ապացոյց են ոչ միայն Կովկասի զանազան խտութիւն ունեցող չրջանների համեմատութիւնը, այլ և ամբողջ Եւրոպայի թուերը: Շնորհիւ իր յատկութիւնների, խոզը պատկանում է այն տեսակ կենդանիներին, որոնք յարմարւում են ամեն տեսակ պայմանների, կերակրւում են ամեն ինչով: Դրա պատճառով խոզ պահելը ամենաձեռնտուն է լինում ամենախիտ վայրերում, ուր համեմատաբար դժուար է կերակրել միւս կենդանիներին: Եւ եթէ մեր Կովկասում խոզերի թիւը համեմատաբար պակաս է, դա վերագրելու է միմիայն նրան, որ մահմեդականները ֆիզիկական և բարոյական ճնշում են գործ դրած քրիստոնեաների վրայ: Երկրի շահը պահանջում է որ այդ ազդեցութիւնը կարելիին չափ չուտ թուլանայ և ոչնչանայ, որի հետ միասին կ'աւելանայ և ժողովրդի եկամուտը, մանաւանդ Իմերէթ, Կախէթ, Երևանեան դաշտում, ուր բացի ժողո-

վըրդի խտութիւնից և բնական պայմանները նպաստում են այդ կենդանու շատանալուն:

Բնական պայմաններից ու ազգաբնակութեան խտութիւնից յետոյ ամենամեծ նշանակութիւնը անասնապահութեան համար ունի ամեն մի երկրի ազգի տեխնիկայի զարգացումը և կուլտուրական բարձրութիւնը: Երևանեան նահանգի թափառաչըրջիկ քրդերը, ինչպէս յայտնի է, ապրում են նոյն չրջանում ու պայմաններում, ինչ պայմաններում ապրում են և հայերը ու միւս խաղաղ ազգերը: Քրդերը 3—4 անգամ աւելի հող ունեն հայերից, բայց չը նայած դրան նրանց ամեն մի 100 հոգուն հաշւում է 260 անասուն (միծատաւարի հաշուով), իսկ մշտակեացներին — 124: Երեք-չորս անգամ հայերից աւելի հող ունեցող քրդերը միայն երկու անգամ աւելի ապրանք ունեն:

Դրա պատճառը ի հարկէ նա է, որ քրդերը թափառականներ են, մշտակեացներից կուլտուրապէս ցած: Նոյն բանը մենք տեսնում ենք Խրիզների շրջանում, ուր չը նայած ազգաբնակութեան սակաւութեան (10 անգամ կովկասից պակաս), անասունների քանակութիւնը միայն երկու անգամ կովկասից աւել է:

Անդրկովկասը ընդհանրապէս, եւրոպ. Ռուսաստանը, միջին Եւրոպան և Ամերիկայի Միացեալ-Նահանգները գտնւում են մօտաւորապէս միևնոյն բարեխառն գօտիում ու պայմաններում, բնակուած են ընդհանրապէս խաղաղ ազգերով, բայց միմեանցից զգալի կերպով տարբերւում են իրանց ժողովրդի կուլտուրական բարձրութեամբ:

Ամեն մի 1,000 մասից այդ երկրներում զանազան կարգի հողերը բոնում են.

Ինչ կարգի հողեր	Անդր-կովկաս	Եւրոպ. Ռուս.	Աւստր. Ունգար.	Գերման.	Ֆրանս.	Ամեր. Մ.-Նահ.
Անպէտք զիւղատն. համար.	29	191	61	91	143	33
Անտառի տակ .	212	388	326	258	158	103
Արօտ և մարգագետին .	330	159	238	163	105	711
Վարելահող և այլ մշակուող	192	262	375	488	594	153
Արօտ և մշակուող .	522	421	613	651	699	864

Աղիւսակից պարզ է որ միևնոյն տարածութեան վրայ միջին Եւրոպան $1\frac{1}{2}$ անգամ աւելի բնական միջոցներ (արօտ, մշակուող հող) ունի անասնապահութեան համար, քան եւրոպ. Ռուսաստանը, իսկ Ամերիկայի Միացեալ-Նահանգները $1\frac{1}{2}$ անգամ Եւրոպայից և երկու անգամ Ռուսաստանից աւել:

Ի նկատի ունենալով այդ հանգամանքը, ամեն երկրի անասնապահութեան չափը որոշելիս, մենք պարտական ենք հաշ-

ուի առնել այն հողի տարածութիւնը, որ կարող է ծառայել անասնապահութեան համար. և հարկ եղած հաշիւները անելուց յետ մենք կը ստանանք հետեւեալ թուերը.

Ո՛ր երկրում.	100 անձի վրայ հաշոււմ է.				100 դեա.
	Ազգաբն. չորս-թիւն:	Հող. ընդհան-րապէս:	Արօտ և վարե-լահող:	Անասուն մեծատ.	արօտ վա-րելահողին հաշ-ւած ծառաւոր:
Անդրկովկաս . . .	25 ₅	408	213	69 ₅	32 ₆
Եւրոպ. Ռուսաստան .	22 ₃	470	196	75	38 ₃
Աւստրիա . . .	63 ₃	160	98	58	59 ₂
Գերմանիա . . .	91 ₄	110	72	58	80 ₁
Ֆրանսիա . . .	71 ₅	140	98	54	51 ₁
Ամերիկ. Միաց.-Նահ.	87 ₀	115	99	104	105 ₀

Անդրկովկասից ու եւրոպական Ռուսաստանից 3—4 անգամ աւելի խիտ ազգաբնակութիւն ունեցող Եւրոպան ունի միայն 2 անգամ պակաս անասնապահութեան համար պէտքուկան հող և միմիայն 1½—2 անգամ սակաւ անասուններ:

Աւելի նպաստաւոր դրութեան մէջ է Ամերիկայի Միացեալ-Նահանգները: Անասունների կերի համար անհրաժեշտ հողի տարածութիւնը այդ երկրում նոյնն է, ինչ որ Եւրոպա և 2 անգամ պակաս Ռուսաստանից ու Կովկասից: Զը նայած դրան, միջակ «ամերիկացի քաղաքացին» 2 անգամ եւրոպացուց և 3 անգամ ռուսաստանցուց ու կովկասցուց աւելի կենդանի ապրանք է սնուցանում: Ամեն մի 100 դեա. անասուններ մենդող արօտ վարելահողի վրայ «մեծատաւար» պահում են.

Յետ մնացած Ռուսաստանն ու Կովկասը . . . 38₃, 32₆

Կիսաարիւստօկրատ թէ և կրթուած միջին Եւրոպ. 51₁, 59₂, 80₁

Առաջագիմութեան առաջնակարգ շարքերում

կանգնած Արիմուտքի դեմօկրատիկական

Մեծ Հանրապետութիւնը 105

Կամայ. աւստրալ մարդ ընկնում է մտատանջութեան մէջ, թէ ինչ տնտեսական նշանակութիւն ունի այս երևոյթը, ինչ է նրա պատճառը, ինչ միջոցների պէտք է զիմենք մենք, որպէս զի դուրս գանք ներկայ անմխիթար վիճակից:

Ս. ԶԱԽԱՐԵԱՆ

(Վերջը յաջորդ համարում)

ՆԵՐՏՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կովկասի կառավարչապետի շրջաբերականը Կովկասի նահանգապետներին:

Ի կատարումն Բարձրագոյն հրամանների, որոնք տեղի են ունեցել 1901 թուի փետրուարի 1-ին և յուլիսի 26-ին՝ այն թիւրքահպատակ հայ փախստականների գրութիւնը կարգաւորելու հարցի մասին, որոնք զանազան ժամանակ, սկսած 1893 թուից, գաղթել են մեր սահմանները, առաջարկում եմ ձեր գերազանցութեան յայտնել ձեզ յանձնուած նահանգի (շրջանի) սահմաններում գտնուող հայ փախստականներին հետեւեալը.

ա) Զանազան ժամանակներով, սկսած 1893 թուից, Կովկասեան երկրի սահմանները իրանց կամքով եկած թիւրքահպատակ հայերին, որոնք ցանկանում են կամաւորապէս իրանց հաշւով հետանալ կայսրութիւնից, համապատասխան աջակցութիւն ցոյց կը տրուի այդ բանի համար:

բ) Մնացած այն բոլոր հայ-փախստականներին, որոնք չեն ցանկանայ գաղթել արտասահման, թոյլ է տրւում մնալ իրանց այժմեան բնակած տեղում և գրուել դիւղական համայնքների վրայ, եթէ այդ բանին կը համաձայնուեն վերջինները (141—146 յօդ. IX հ. առանձին յաւելուածի), հակառակ դէպքում, 1899 թուի հրատարակութեան IX հատորի 564-րդ յօդուածի 9-րդ պարագրաֆի զօրութեամբ, նրանց թոյլ է տրւում գրուել մէջնանների (քաղաքային) հասարակութիւնների վրայ: Մի և նոյն ժամանակ վերոյիշեալ անձերից նրանք, որոնք կը ցանկանային բնակութիւն հաստատել ներքին նահանգներում, թոյլ է տրւում: Ռուսաստանի հստակութիւն ընդունելուց յետոյ, ճանապարհ ընկնել իրանց հաշուով երկաթուղիների էփանցրած սակագնով, իրանց ընտրած տեղերը, Կովկասեան երկրի դուրս, և այդպիսի անձանց առանց արգելքի կը տրուեն պատշաճաւոր անցադրեր:

գ) Թէ Կովկասեան երկրի սահմաններում մնացող և թէ ներքին նահանգները գնալ ցանկացող հայ-փախստականները

պարտաւոր են ոռոսաց հպատակութիւնը ընդունել, իսկ ոռոսաց հպատակութիւն ընդունել չը ցանկացողները պարտաւոր են անյապաղ հեռանալ ոռոսական կայսրութեան սահմաններից: Մի և նոյն ժամանակ հայ-փախստականներին իրաւունք է տրուում այժմ և եթ Ռուսաստանի հպատակութեան մէջ մտնել, իբրի բայառութիւն 1899 թ. հրատ. 837 և 839 յօդուածների:

դ) Հայ-փախստականները 1901 թուից ենթակայ են զինուորագործութեան կայսրութեան մնացած ազգաբնակչութեան նման:

ե) Գիւղացիներին հողային բարեկարգութեան ժամանակ Կովկասում, բ. կէտում յիշած անձանց, եթէ նրանք կը վերաբնակուեն արդէն եղած գիւղերում, որոնք զեռ բարեկարգութիւն չունեն, իրաւունք չէ տրուում հողաբաժին ստանալ:

զ) Քաղաքներից դուրս անշարժ գոյքեր ձեռք բերելու իրաւունքը Կովկասում թոյլ է տրուում գաղթական հայերին կամ նրանց սերունդներին ոչ վաղ, քան նրանց ոռոսաց հպատակութիւն ընդունելուց քսան տարի անցնելուց յետոյ:

և է) Վերս բերած կանոնները տարածւում են այն վախճատական հայերի վրայ, որոնք եկել են Կովկասի սահմանները մինչև 1901 թուի փետրուարի 1-ը, իսկ վերոյիշեալ ժամանակամիջոցից յետոյ եկածները դուրս են ուղարկուելու կայսրութիւնից:

Վերոյիշեալին կցում եմ, որ Բարձրագոյն հրամանը ի կատար ածելու կարգի մասին, հայ-փախստականների դրութիւնը կարգաւորելու հարցի վերաբերմամբ, ես առանձին յուշմունքներ կը տամ ի ղեկավարութիւն Ստորագրեց՝ Սենատօր, գեներալ-ազիւտանտ իշխան Գօլիցին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ֆրանսիան գոհացած սուլթանից. — Մեզ էլ, մեզ էլ. — Անգլիական զլահակիրներ Պարսից ծոցում. — Աֆղանիստանի նոր էմիրը. — Լի-Խունգ-Չանգի մահը. — Ի՞նչ վերանորոգումներ աւելի մօտ են չինացիների սրտին. — Պաշարման զրույթին Վապի գաղութում. — Վին գրող Օլիվա Շրէյների բանտարկութիւնը. — Վեհանձնութիւն և կեղծ ամօթ. — Մի օրինակ ազգայնական խաղաղ յարաբերութիւնների Աւստրալում:

Ինչպէս և պէտք էր սպասել, թիւրքական ջրերը ուղարկուած ֆրանսիական զրահակիրները իսկոյն յետ կանչուեցին, երբ սուլթանը համաձայնուեց կատարել Ֆրանսիայի բոլոր պահանջները, բայց, ի հարկէ, հայկական նահանգներում խոստացած վերանորոգումներ մտցնելը: Սուլթանը քսան տարիների ընթացքում շատ լաւ հասկացաւ, որ «հայկական հարցը» լոկ մի սպառնական կոչ է եւրոպական պետութիւնների համար: Նա գիտէ որ պարտաւոր է կատարել միմիայն այն պահանջները, որոնք անմիջապէս այդ պետութիւնների շահերի հետ կապ ունեն, իսկ «հայկական հարցը», երևի, միշտ մնալու է պատրուակ: Աւստրիան, Իտալիան, Հ. Ամեր. Միաց.-Նահանգները հէնց որ տեսան Ֆրանսիային արած զիջումները, իսկոյն շտապեցին ձեռք մեկնել և «մեզ էլ, մեզ էլ մի բան» բղաւկել... Եւ ամեն մէկին մի բան հասաւ, ինչպէս հասել էր առաջ Գերմանիային, Անգլիային ևայլն: Դիմագրել եւրոպացիների պահանջներին հեռատեսութիւն չի համարում Արդիւ Համիդը, երբ այդ պահանջների յետևից երևում են զինուած բռնույթներ: Առհասարակ տարօրինակ բարեկամութիւն է տիրում թիւրքի և եւրոպական պետութիւնների մէջ...

Քիչ մնաց որ այդ բարեկամութիւնը խանգարուի նաև Անգլիայի հետ Պարսկական ծոցում: Այդ ջրերի հիւսիս-արևմտեան ափին, համարեա պարսկական Բենդէր-Բուշիրի հանդէպ, Եփրատի և Տիգրիսի միացումից առաջացած Շատէլ-Աւրաբի վրայ գտնուող թիւրքական Բասրա քաղաքից մօտ 120 վերստ հարաւ, գտնուում է մի ծովահանգիստ, որի անունը մինչև այժմ հազիւ թէ յայտնի լինէր շատերին, թէև նրանով Բաղդադի երկաթուղին վերջանալու է Պարսից ծոցում: Այդ ծովափնայ քաղաքը կոչւում է Կովէյթ և պատկանում է արաբական շէյխ

Մուրարէքին Այդ բռնակալը լոկ անուանական կախում ունի սուլթանից, իսկ *de facto* կոյր գործիք է Անգլիայի ձեռքում, որից ստանում է լաւ թոշակ, զէնքեր, իսկ հարկ եղած դէպքում նաև նրա զրահակիրների պաշտպանութիւնը, ինչպէս ցոյց տուեցին վերջին անցքերը: Վստահ լինելով Անգլիայի հովանաւորութեան, չէյի Մուրարէքը այս գարնան արշաւանք գործեց իր հարեանի, Նէդլի էմիր Բին Ռաշիդի վրայ, բայց Բասրայի թիւրք զօրքը չուտով օգնութեան հասաւ այդ իր հաւատարիմ վասալին, և ինքնավստահ Մուրարէքն պարտութիւն կրելով ստիպուած եղաւ յետ նահանջել Կովէյթ: Ռաշիդը և օսմանեան բանակը կը վերցնէին և Կովէյթը, եթէ Անգլիան չուղարկէր իր 2 զրահակիր նաւերը պաշտպանելու համար իր հաւատարիմ շէյխին: Թիւրքիան նոյն իսկ մի զրահակիր ուղարկեց պարսից ջրերը, բայց Անգլիան այնպիսի վճռականութիւն ցոյց տուեց, որ սուլթանին մնում էր *volens-nolens* հաշտուել Կովէյթում անգլիական զերիչխանութեան հետ:

Անգլիայի համար նպատաւոր ձև ստացաւ և Աֆղանստանի էմիր Արդուրահմանի մահից յետոյ սպառնող բարդութիւնը: Սովորական կռիւներ գահի համար տեղի չունեցան էմիրի որդիների մէջ, և հօր տեղը բռնեց նրա մեծ որդի Հաբիբուլլան, որ բարեկամ է Անգլիային և պիտի շարունակի այդ բարեկամութեան փոխարէն ստանալ, իր հօր նման, առատ թոշակ հարուստ «ինգլիզից»: Անգլիան լաւ գիտէ, որ արեւելեան երկրներում միշտ տիրել է բռնակալների՝ *L'état c'est moi* սկզբունքը. հետևաբար մի ամբողջ երկրի ազգաբնակչութեան զգացմունքի մասին հարկ չը կայ մտատանջուել. բաւական է առատ պարգևներով զրաւել միայն բռնակալների սիրտը...

Առհասարակ յոյս ունենալ լուրջ բէֆօրմների մասին այդ երկրներում նշանակում է չը ճանաչել Արեւելքը: Մեծ Չինաստանը, օրինակ, ցոյց տուեց թէ ճրքան թոյլ է այնտեղ հիմնական բէֆօրմների կուսակցութիւնը, թէկուզ նրա գլուխը անցած լինէր ինքը թագաւորը: Յայտնի է Գուան-Սիւ կայսրի և իր ամենամօտ խորհրդական Կուան-Իւ-Վէյի անաջողութիւնը: Մայր-կայսրուհի Յէ-Շիւն մի գրչի հարուածով սնչացրեց իր որդու բոլոր ծրագիրները...

Աւելի գործնական էր նոր վախճանուած Լի-Սունգ-Չանգի բէֆօրմների ծրագիրը: Այդ «չինական Բիսմարկը» երկար տարիների ընթացքում միակ չինական ղեկավարն էր, որ գիտէր Եւրոպայի հետ զիւանագիտական խաղեր անել: Եւրոպական կուլտուրայից նա ուզում էր փոխ վերցնել միայն զինուորական տեխնիկան, ուստի մեծ ջանքեր էր գործ դնում ստեղծել

Ձինաստանում եւրոպականաձէ մի հզօր զօրք։ Լի-Սունգ-Չանգը համարւում էր աւելի ուսասէր, քան անգլիասէր, և Մանջուրիայում ուսաց քաղաքականութեան աջողութիւնները մասամբ կապ ունէին Լի-Սունգ-Չանգից։ Այդպէս ուրեմն վերջին քաղաքական անցքերը Արեւելքում նոր աննպաստ դրութիւն չը ստեղծեցին Անգլիայի համար։

Սակայն այդ թեթեւ աջողութիւնները չեն կարող ներկայումս գրադեցնել անգլիացիներին, որոնք քանի գնում աւելի յոռետես են դառնում հարաւ-աֆրիկական պատերազմի շուտափոյթ վախճանի նկատմամբ։ Կիտչենէրի խստութիւնները չը թուլացրին բօէրների յամառութիւնը։ Ո՛չ նրանց երեխաներին ու կանանց պաշարուած բանակներում պահելը, ո՛չ նրանց զոյքի յարբունիս գրաւելը, ոչ էլ յաւիտենական աքաղորի սպառնալիքը կարողացան խորտակել ազատութեան այդ անվահեր զաւակներին։ Այդքան անարդարութիւնների կուտակումը միայն այն հետեանքը ունեցաւ, որ Կապի ազգաբնակութիւնը աւելի ակընյայտնի և եռանդուն աջակցութիւն սկսեց ցոյց տալ բօէրներին։ Բանը հասաւ այնտեղ, որ անգլիական կառավարութիւնը ստիպուած եղաւ պաշարման դրութիւն յայտարարել նաև Աֆրիկայի իր սեփական գաղութում։

Ազատասէր Անգլիան այնքան հեռու զնաց իր նոր կուրսի մէջ, որ հնարաւոր համարեց կալանաւորել կին գրող Օլիւիա Շրէյներին, Հարաւ-Աֆրիկայի այդ միակ նշանաւոր վիպասան-հրապարակախօսին, որ դեռ պատերազմից առաջ իր սրբազան պարտքն էր համարում կանգնեցնել եղբայրասպան կոլուները, իսկ պատերազմի ժամանակ շարունակում էր բողոքել անգլիացիների անարդարութեան դէմ։ Եւ Անգլիան ուրիշ միջոց չը գտաւ վերականգնելու ճշմարտութիւնը, քան բանտ նստեցնել այդ կին գրողին...

Այդպէս ահա երրորդ տարին է, որ շարունակուում է երկու կողմից արիւն թափուել և չը կայ մի հզօր ձայն, որ կանգնեցնէ այդ անվերջ մարդասպանութիւնները։ Այդպէս չէր քսան տարի առաջ, երբ Մաջուրի պարտութիւնից յետոյ կառավարութեան ղեկը անցաւ մեծ Գլադստօնին. նա հայրենիքի կեղծ ամօթից ազատ լինելով՝ վեհանձնութիւն ցոյց տուեց և հեռագրեց Կապի նահանգապետին. «Մենք մեղաւոր ենք բօէրների առաջ. խաղաղութիւն կապէք»։

Խոստովանել իր անարդարութիւնը ամօթ է համարւում ոչ-Գլադստօնների համար, ուստի շարունակուում է կռիւը, մինչև որ, երևի, բնաջինջ կը լինի հզօրի անարդարութեան դէմ բողոքող այդ փոքրիկ, բայց անվահեր ազգը։ Իսկ քանի որ ազգերի

փոխադարձ յարաբերութիւնների մէջ ոյժը և ոչ արդարութիւնը, մէկի գերիշխանութիւնը, իսկ միւսի ենթակայութիւնը դեր կը խաղան—երբէք չի տիրիլ խաղաղութիւն, թէկուզ դադարի գէնքով պատերազմն անգամ...

Իրլանդիան միթէ հաշտուեց Անգլիայի հետ և չէիւր գերմանացու հետ։ Երբ մէկը ուզում է գերիշխել միւսի վրայ, դժբախտով նա վիրաւորում է մարդկային ամենասուրբ, ամենավեհ զգացմունքը, ուստի միայն բարոյապէս ստոր անհատականութիւնները կարող են տանել այդպիսի վիրաւորանք...

Ծայրայեղ գերմանացի ազգայնականը, Աւստրիացում, իր կողմից ռոմանթիկութիւններով միայն կարող է չեխի մէջ յարուցանել նոյնպէս ծայրայեղ ընդդիմադրութիւն։ Եւ այդպիսի յարաբերութիւնների մէջ նոյն իսկ կեօրբէրից աւելի ճարպիկ միւսիստր-նախադահ էլ չի կարող ոչինչ անել։ Նա երկու կրակի մէջ կը լինի։ Այդ ատելութիւնների կրակը հանգցնելու համար բաւական չէ խորամանկութիւն, այլ պահանջւում է վէճերի արդար լուծում։ Նոյն Աւստրիայում օրինակ, վերջերումս կայացաւ աւստրիական բազմացեղ սօցիալ-դէմօկրատների համաժողով։ Այդ ժողովներում չեխը, գերմանացին, ունգարացին, լեհը ևայլն կողք-կողքի նստած խաղաղ զբաղւած էին աշխատանքի և կապիտալի յարաբերութիւնները կանոնաւորելու մեծ խնդրով, թէն վիճաբանութիւնները և զեկուցումները գերմաներէն լեզուով էին տեղի ունենում։ Եւ, չը նայած դրան, չեխերը լեզուի հարց չէին յարուցանում, որովհետեւ ակնյայտնի էր որ գերմաներէնը գործադրւում է ոչ թէ վիրաւորանք հասցնելու համար չեխին կամ ունգարացուն կամ՝ չեխելու համար գերմանական լեզուի գերիշխանութիւնը, այլ լոկ իբրեւ գործնական միջոց, որովհետեւ բոլոր մասնակցողները հասկանում են այդ լեզուն, մինչդեռ չեխերէնը յայտնի էր միայն չեխ ներկայացուցիչներին։ Միջադրային յարաբերութիւնների համար գործ էր ածւում այն լեզուն, որ հասկանալի էր բոլորին. չէ որ մարդիկ եկել էին իրար կարծիքեր լսելու, իրար հասկանալու։ Բնականաբար, ոչ ոք չէր արգելում չեխ կամ գերմանացի սօցիալ-դէմօկրատներին իրանց առանձին ժողովներում պահպանել իրանց մայրենի լեզուն։ Եւ երբ խնդիրը դրուած է ահա այնպէս որ վիրաւորելու, գերիշխելու տենդենցիա չը կայ, այլ գործնական անհրաժեշտութեան մի պահանջ—այն ժամանակ չեն էլ բորբոքւում կրքերը, չի էլ լսւում ատամների կրճատց, ճնշուածի անէծք, յաղթողի քրքիջ...

Լ. Ս.

† Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Նոյեմբերի 9-ին, Վենետիկի ս. Ղազար կղզում, վախճանուեց Հ. Ղևոնդ Ալիշանը, հայոյ գրականութեան ութսունամեայ Նահապետը: Աշխարհիս ամեն ծայրերում շրջաւած հայ ժողովրդի կողմից արտայայտուած խոր վիշտը ամենալաւ ապացոյց է թէ որքան թանգ էր և հարազատ Ղևոնդ Ալիշանը հայի սրտին: Իբրև բանաստեղծ և անխոնջ գիտնական Ալիշանը իր անձի մէջ ամբիփոխ էր Մխիթարեան միաբանութեան ամենալեւն ձգտումները. նա իր գրութեանցով բնորոշուած էր Մխիթարի հիմնած ուխտի ամբողջ աշխարհայեցողութիւնը: Ղևոնդ Ալիշանը սկեպտիցիզմով զինուած մի գիտնական չէր, այլ իր առարկան իղէալականացնող մի բանաստեղծ: Նրա հոգին սաւառնում էր աւելի Հայաստանի անցեալում, քան հետաքրքրւում ներկայ իրականութեամբ, նրա տխրամած ոգևորութիւնը լքցնւում էր Հին Հայաստանի փառաւոր աւերակների և հայ քաջազունների պանծալի գործերի նկարագրութեամբ: Ալիշանը մի անջատուած սիրահար էր «Հայաստան աշխարհի», որի կարօտը նրա գրած ամեն մի տողից է լսւում: Այդ հեռու Հայրենիքը նա սիրում էր իր հաւատացող հոգու ամբողջ կարողութեամբ մինչև իր կեանքի վերջին շունչը: Ալիշանի սիրոյ մեծութիւնը կարելի է չափել այն հսկայական, հոյակապ աշխատութիւններով, որ իբրև ժառանգութիւն թողնում է այդ հանճարեղ զաւակը իրան ծնող ազգին:

Հայութեան այդ մեծ կորուստի առիթով «Մուրճի» խմբագրութիւնը ժամանակին իր խոր ցաւակցութիւնը հեռագրով յայտնեց Մխիթարեան միաբանութեան: Մեր խմբագրութիւնը յաջորդ համարներից մէկում, կը նուիրի Հ. Ղևոնդ Ալիշանին առանձին ուսումնասիրութիւն:

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏՍՍՈ ՀՄԱՆԻՑ

Ն Ա Մ Ա Կ Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն Ի Ց

Քաւրիզ, Հոկտ. 1, 1901 թ.

Ընդհանրապէս պարսկահայերի, մասնաւորապէս քաւրիզցիների համար շատ դիւրին է ընկերութիւն կազմակերպելը: Երբեք նա կրթական-հասարակական քե առեւտրական. հենց այժմ Քաւրիզում, ի հարկէ, միայն հայերի մեջ 20—25 ընկերութիւններ կան: Ընկերութիւնները մեկը միւսի յետեւից սունկի նման բուսնում, երեւան են գալիս, բայց արդեօք հասնո՞ւմ են իրանց ծրագրած նպատակին եւ ի՞նչ շաւղով. դա շատերի վերաբերմամբ հարց էլ մնում է:

Ինչպէս յազիր հրասարակելը արեւմտեան հայերի համար մի տեսակ վարակիչ ճիւղանքութիւն է դառել, նոյնպէս եւ պարսկահայերի համար ընկերութիւններ ճիւղնալը: Բաւական է որ գտնուեցին մի քանի համամիտ եւ նոյն հայեացքների տէր մարդիկ եւ ընկերութիւնն արդէն պատրաստ է:

Ընկերութիւնը ունի՞ արդեօք որոշ դրամագլուխ, կարո՞ղ են աջող կերպով առաջ տանել գործը, այդ շատ քիչ է զբաղեցնում ընկերութեան ձեռնարկողներին: Հենց երեկ պատերին կպցրած յայտարարութիւնները կարդում ենք. «Այսօրուանից արհեստաւորաց «խնայողական» ընկերութիւնը սկսում է իր գործունեութիւնը»: Նոյն պատի վրայ, հենց վերել յիշուած յայտարարութեան կողքին կպցրած ազդի մեջ կարդում ենք. «Աղփասախնամ ընկերութիւնը այսօրուանից լուծուած պէտք է համարել»:

Եւրբ է կազմուել այս ընկերութիւնը, ի՞նչ գործունեութիւն է ունեցել, ի՞նչ աղփասների է օգնել եւ վերջապէս ո՞վքեր էին այս ընկերութեան ղեկավարները, ի՞նչ վարչութիւն է այդ, որ ստորագրել է յայտարարութեան տակը, ոչ ոքի յայտնի չէ: Ահա՛ այսպէս է. մի կողմից ծլում, միւս կողմից չորանում են, ի հարկէ, ոչինչ չարած:

Առհասարակ այն ընկերութիւնները արդիւնաւէս չեն լինում եւ ցանկալի գործունեութիւն չեն ունենում ու իսկոյն խափանւում են, որոնց ձեռնարկողները հաւաս չեն ունենում դեպի իրանց ձեռնարկած գործը եւ դրանց քաջալերողը, առաջ միողը ոչ թէ ժողովրդի կարծիքներն են լինում կամ այդ ընկերութեան անհրաժեշտութիւնը, այլ իրանց եսի հանութիւնը։ Եւ այդպիսի հիմքերի վրայ դրուած ընկերութիւնները երբեք ժողովրդի եւ ընդհանրութեան կողմից համակրանք չեն վայելում։ Բայց դրանց դեմ կան կանգնած ընկերութիւններ բոլորովին գերծ վերոյիշեալ պահասութիւններից եւ զուտ հասարակական ու կրթական բնաւորութիւն են կրում։

Այս վերջին տեսակի ընկերութիւններից ամենապատկառելին եւ համակրելին Թաւրիգի «Լսարանական» ընկերութիւնն է, որի երեք ամիսայ արդիւնաւէս գործունեութիւնը այս տարի լրացաւ. սա հաստատուած է 1898 թ. մարտ ամսին։ Աշխատեմք ծանօթացնել ընթերցողին այդ ընկերութեան հետ։

Ընթերցողը մի փոքր յետոյ կը տեսնի, որ այս ընկերութիւնը շատ աննշան ծախս դնելով, չալիս է հասարակութեան շատ զգալի եւ ամենփոքր համար անուրանալի օգուտներ։

«Շաբաթը մի անգամ հերթով եւ պարբերաբար թէ՛ Ղալայի եւ թէ Լիլալայի դպրոցների սրահում հայ հասարակութեան շալ ձրի դասախօսութիւններ զանազան հետաքրքիր, շահեկան եւ օգտակար նիւթերի մասին, ինչպէս, գիտական, գրական, առողջապահական, պատմական, մանկավարժական եւայլն։ Նիւթերը դասախօսութիւնից յետոյ կ'ենթարկուեն հասարակական վիճաբանութեան» *)։

Ահա՛ «Լսարանական» ընկերութեան գործունեութեան համես եւ միեւնոյն ժամանակ պատկառելի նպատակը։

Ընկերութեանը մասնակցում է ամեն մի հայ, ինչ սեռի եւ կրօնի պատկանելիս լինի նա։ Այստեղ էլ գործի ծանրութիւնը խեղճ հայ ուսուցիչների վրայ է ընկած, որոնք առանց այդ էլ ծանրաբեռնուած են։ Բայց նրանք քանակում են այդ լուծը առանց տրտման եւ դժգոհութիւն յայտնելու. նրանք մխիթարուած են համարում իրանց, որովհետեւ տեսնում են, որ իրանց ջանքը ապարդիւն չէ անցնում. դրանց մեջ գտնուում են եւ այնպիսիները, որոնք թեւ իրանց մասնակցութեամբ կարող են օգտակար լինել, բայց շատ հեռու են փախչում. եւ դա, մէր կարծիքով, նրանց կողմից առնուազը յանցանք է։

«Լսարանը այնպիսի մի հիմնարկութիւն է, որ ամեն մի

*) Տե՛ս 1898—1899 տարեշրջանի տեղեկագիրը. 1 էրես, Նպատակը։

անհաս, լինի նա երիսասարդ, քե՛ ծեր, կին քե՛ օրիորդ, ուսուցիչ քե՛ արհեստաւոր, նա շատ ու շատ բաներ ունի սովորելու: Այնտեղ, «Լասարանում», դասախօսութիւնների միջոցով քննուում են տեղական բարձրը եւ խիստ կերպով յարձակում են տեղական անմիջ սովորութիւնների վրայ: Այնտեղ, «Լասարանում», ունենդիրը սովորում է քե ինչպէս պէտք է վարուել վարակիչ հիւանդութիւնների դէպքում եւ ի՞նչ միջոցներ ձեռք պէտք է առնել դիմադրելու համար: Այնտեղ սովորում են քե ի՞նչպէս պէտք է դաստիարակել, կրթել փոքրերին, իմանում են մի շարք տեղեկութիւններ երկրագնդի մասին, իմանում են, քե ինչպէս, ինչ աստիճաններով երկրագունքը, հասել է ներկայ վիճակին եւ այլն:

Որպէս զի բնօրինակը աւելի ամփոփ հասկացողութիւն ունենայ դասախօսուած նիւթերի մասին, եւ աւելորդ չեմ համարում այստեղ առաջ բերել երեւ շարուայ բնօրինակում տեղի ունեցած դասախօսութիւնների զանկը:

«Օդը առողջապահական տեսակէից. Մանկանց կրթութիւնը. Պարսկահայոց անցեալը. Միսր առողջապահական տեսակէից. Հրաբուխներ եւ երկրաշարժ. Անձնասպանութիւն. Կիւր եւ նրա ազդեցութիւնը. Նանսէնի հանապարհօրդութիւնը. Գինեմուլութիւն. Սնունդ. Լեզուների ծագումը. Ընկերական խնդիրներ. Ասրպասականի տեսական դրութիւնը. Հասարակական վարք ու բարք. Փալաֆական տեսութիւն. Հայոց հին գրականութիւնը. Անհատի պարտականութիւնները հանրային գործերում. Հագուստները պատմական եւ առողջապահական տեսակէից. Կովկասի հայոց նորագոյն գրականութիւնը. Տիեզերք. Ներքի կազմութիւնը. Փուն եւ երազ. Մանկանց Զիգիկական, մտաւոր եւ բարոյական կրթութիւնը. Քաւրոնի ծագումը, նպասակը եւ օգուտը բնօրինակային եւ հայկական քաւրոնը ճանկասանում, Ռուսաստանում եւ Պարսկաստանում մասնաւորապէս. Ռուսահայ գիւղացիներ եւ ժողովրդական գրողներ. Կամփի զարգացման պատմանները. Մտքի ուժասպառութիւն. Ալկոլականութեան վտանգները *):

«Պարսկահայերի մասին. առաջին եւ երկրորդ մանկութեան առողջապահութիւնը. Արեւելեան հայոց 60-ական տարեկանների կեանքից. Միսրաւեան միաբանութիւնները. Շնչառութիւն. Մեր երիսասարդ մայրերը. Քրիստոնէութեան դերը եւ դիրքը քաղաքակրթութեան մէջ. Հանճար եւ խելագարութիւն. Կեանք եւ տիեզերք. Քիմիական մի դաս, փորձերի վրայ հիմնուած. Հայկական նախապաշարումներ. Հոգեբանութիւն փորձերի վրայ

*) Տե՛ս 1898—1899 տարեշրջանի տեղեկագիրը. էրես 13.

հիմնուած. Անասունների խելք. Քիմիական սարքերի յարաբերութիւնը եւ միաւորութիւնը. Տեղական աւելորդ սովորութիւններ եւ ծախքեր *):

«Աֆրիկայի ժողովուրդների մասին. Բարոյագիտութիւնից. Երեխաների բնաւորութիւնը. Նախնական մարդի կեանքից. XIX դարը գիտութեան տեսակէտից. XIX դարի եվոլիւցիան հայկական կեանքում. Ֆրանս. մեծ յեղափոխութեան պատճառները. Փահանայական խնդիր. Պատերազմ թէ խաղաղութիւն. Կալուածատիրութիւնը եւ հարկերը Ասրպասականում. Ասրպասականում զաւառացի հայերը եւ նրանց կրթական վիճակը. Ժողովուրդի կրթական գործը Եւրոպայում.—Եվոլիւցիան Ս. Գրքի համեմատ. Վեներական ախտեր. Կրօնի եւ գիտութեան յարաբերութիւնը անգլո-սափսոն ցեղերի մէջ. Ընտանեկան դաստիարակութիւն. Քրդերի մասին. Ամուսնական խնդրի գիմաց. Մագնիսականութեան մասին» **):

Ընթերցողը, ինչպէս տեսնում է, դասախօսութիւնների նիւքերը շատ ընտրովի են եղել, ուրեմն զրանց հասցրած օգուտները անվիճելի պէտք է համարել: Ի հարկէ, պատահում էին մեկ-մեկ դասախօսութիւններ, որ ժողովրդին այնքան էլ մասշէլի չէին եւ անցնում էին համարեա ապարդիւն. այդ իր ժամանակին զգում էր եւ վարչութեան ստեղծ մի անդամը: Այդ առաջ էր գալիս առհասարակ նրանից, որ կամ դասախօսը չէր տիրապետել նիւքին եւ կամ մասշէլի դարձնելու, ժողովրդականացնելու անընդունակ էր: Այժմ դասախօսութիւնները շատ մեծ պահանջ են դարձել բարիքների համար:

Դասախօսութիւնների վերաբերմամբ հետեւեալ կարգապահական կանոններն են հիմնուած.

1) Դասախօսութիւնից յետոյ ամեն ունկնդիր ազատ է խօսուած նիւքի մասին իր դիտողութիւնները եւ բացատրութիւնները յայտնել, նախագահի հաւանութիւնը ստանալուց յետոյ:

2) Վիշաբանութիւնների միջոցին արգելում է խնդրից շեղուել եւ անձնական նկատողութիւններ արել:

3) Դասախօսութեան միջոցում արգելում է խօսակցել եւ տրտնուած ծխելը:

4) «Լսարանը» նախագահի յանձնարարութեամբ փակուելուց յետոյ միայն ունկնդիրները կարող են մեկնել:

5) Քաղաքավարական պատշաճի օրինաց համաձայն իւրաքանչիւր ունկնդիր պարտաւոր է առաջին տեղը զաւթել կանանց:

*) Տե՛ս 1899—1900 տարեշրջանի տեղեկագիրը. էրես 9.

**) Տե՛ս 1900—1901 տարեշրջանի տեղեկագիրը. էրես 26.

6) Ներելի չէ ֆաղափական հանգամանք ունեցող հարցեր առաջարկել եւ կամ վիճել այդ կարգի խնդիրների մասին:

7) Սոյն կարգապահական կանոններին չը համապատասխանող անձը նախագահի կողմից նկատողութեան կ'ենթարկուի:

8) Նախագահի դասախօսած եւ նրա բացակայութեան ժամանակ, փոխ-նախագահը կը նախագահէ «Լսարանին»:

9) Լսարանում ցաւալի եւ կարգը խանգարող դեպքերի կրկնութեան տեղի չը սալու համար, վարչութիւնը կը դիմէ բարձր հեղինակութիւն ունեցող մարմինների միջամտութեան *):

Այս միանգամայն համակրելի ձեռնարկութեան համար ել բաւրիզցիները պարտական են դօկ. Կ. Փաշայեանին **), որի տոկուն աշխատանքը եւ հաստատ հաւատն էին, որ պահպանեցին ընկերութեան գոյութիւնը, առաջին տարից գործի ծանրութեան մեծ մասը համարեալ նրա վրայ է քողնուած եղել. դասախօսները համեմատաբար քիչ էին, յանախորդները շատ աննշան թիւ էին կազմում, շատ խորք եւ անսովոր բան էր բաւրիզցիների համար, բայց դօկտօրը տարաւ այդ բոլորը, դիմադրեց բոլոր արգելքներին եւ իր ձեռնարկած օգտակար ընկերութիւնը հասցրեց ներկայ նախանձելի եւ ծաղկած վիճակին: Այս հիմնարկութիւնը, որ միանգամայն արժանի է համակրանքի եւ ֆաշայեանութեան, շատ լայն սկզբունքներ ունի: Սա նեղ կուսակցական հիմնարկութիւն չէ. ժողովրդին չալ օգտակար, կենսական եւ ժողովրդին մասշէլի դասախօսութիւններ, ահա՛ ամենագլխաւորը. իսկ ո՞վ է դասախօսողը, ի՞նչ «տական» է նա, շատ քիչ նշանակութիւն ունի այդ, մանաւանդ ուր դասախօսութիւնը ընդհանուրի կողմից ենթարկուում է քննութեան:

Լսարանը լինելով գիտութեան տանար, ժողովրդական համալսարան, բարձր է կանգնած միւս բոլոր հասարակական, կրօնական հիմնարկութիւններից: Սա անողոք կերպով քննադատում, ուղղորդումներ, խորհուրդներ է տալիս այս եւ այն հիմնարկութեան. եւ այդ միտք էլ լինում է անաչառ եւ նիւթ: Շատ հասկանալի է այդ, նախ՝ որ դրան մասնակցում է Թաւրիզի ամենաընթիւր եւ զարգացած մասը եւ երկրորդ՝ կազմուած է զանազան կուսակիցներից: Օրինակ, անցեալ տարի, մի դասախօսութեան ժամանակ մանրամասն խօսուեց տեղիս կանանց Բարեգ.

*) 86-ս 1898—1899 տարեշրջանի տեղեկագիրը, էրես 19. Կարգապահական կանոններ:

**) Դօկ. Կ. Փաշայեանի ջանքերով ահա երկու տարի է, որ հիմնուել է հակալիկոսական ընկերութիւն, որ ալժմ բաւական տարածուել է համակրութիւն է ձեռք բերել. ունի Պարսկաստանի ամեն կողմերում մասնաճիւղեր:

Ընկ. արհեստանոցների մասին եւ բոլոր եկան այն համոզմունքին, որ Ընկերութիւնը աւելի ուշադրութիւն պէժ է դարձնի օրիորդների կրթութեան եւ զարգացման ոչ միայն կար ու ձեռին ոյժ տալ, մի բան, որ որոշ չափով անցնում են դպրոցում: Ընդհանուրի կարծիքով ընկերութիւնները աւելի օգուտ տուած կը լինէին կանանց սեռին եւ ժողովրդի փողերը իզուր չէր ծախսուի, եթէ արհեստանոցներին կից ունենային երկու կամ մէկ բաժանմունք, որ լինէր դպրոցի անմիջական շարունակութիւնը: այդ բաժանմունքում պէժ է աւանդել ընդհանուր զարգացման նպատակով առարկաներ: Դասախօսութեանը ներկայ էին եւ ընկերութիւնների վարիչներից. առաջարկը որոշ չափով իրագործուեց: Ղալայի արհեստանոցում սկսեցին շաբաթական երեք դաս՝ հայոց լեզուից եւ քուաբանութիւնից պարապել, իսկ Լիլավայի արհեստանոցում միմիայն քուաբանութիւնից, այն էլ շաբաթական երկու դաս: Դրանք, ի հարկէ, այնպիսի առարկաներն էին, որ շատ անձեան չափով կարող են նպաստել ընդհանուր զարգացման, ուրիշ խօսքով արհեստաւորները էլի նոյն անձախանձելի դրութեան մէջ էին:

Կրթիչ եւ զարգացման նպատակով դասախօսութիւնները շատ անհրաժեշտ են եւ կանանց համար, որովհետեւ դպրոցից նրանց ստացածը շատ ողորմելի բան է: Առաջին երկու տարիները կին յանախորդները շատ անձեան քիւ էին կազմում. եւ դա շատ հասկանալի է. համեմատական փակ դրութիւնը դեռ շատ կողմերով սիրում է. նրանց համար շատ անխոհեմ բան է մարդկանց հետ միասին նստել, խօսակցել, բայց այժմ պարզ նկատւում է, որ կանայք հասկացել են, թէ դրանք միանգամայն աւելորդութիւններ եւ յիմարութիւններ են, եւ այս տարի անհամեմատ ստուար բուով են յանախում: Այստեղ արժէ արձանագրել եւ մի ուրիշ փաստ:

Կանանց բար. ընկերութիւնները անցեալ տարի վնասել էին իրանց սանուհիներին տանել դասախօսութիւններին, նրանց հետ լինում էին եւ վարժուհիներ: Բայց, յանկարծ, դեռ մի քանի շաբաթ չանցած, Աստղաստեանի ընկ. վարչութիւնը դադարեցրեց բերելը. թէ ինչո՞ւ. այդ մինչեւ այժմ գաղտնի է մնացել, իսկ մի երկու ամսից յետոյ Լիլավայի Հայունեաց Ընկ. վարժուհին չը բարեհաճեց յանախել. օրի պատճառով զրկուեցին եւ աշակերտուհիները...

Աշակերտուհիներից մի քանիսը, որ արդէն հասել էին այն գիտակցութեան թէ Լսարանը շատ աւելի օգուտներ է տալիս քան արհեստանոցը, դիմում են վարժուհուն եւ խնդրում, որ բացատրի արգելելու պատճառները:

—Ո՛չ մի պատճառ. ես այդպէս եմ ուզում. ով համաձայն

չէ, քող հեկց այժմեանից հեռանայ, կտուկ կերպով հրամայում է վարժունքին եւ դնում իր վեճօն:

Վարժունու հետ միանում է եւ վարչութիւնը եւ պատճառ լինում այդ աղջիկների հեռանալուն:

Լսարանական ընկերութիւնն էլ դպրոցների հետ սկսում է զաղարեցնում է իր տարեկան գործունեութիւնը եւ այդ ժամանակում ունենում 20—24 դասախօսութիւն:

1898—1899 տարեշրջանում մուտք ունեցել է՝ անդամավարներից եւ կամաւոր նուէրներից 817 դ., ելք 506 դոան: 1899—1900-ին մուտք 668 դ., ելք 312 դ. իսկ 1900—1901 տարեշրջանում ունեցել է մուտք 985 դ., ելք 695 դ.:

Դասախօսութիւնները հետաքրքիր եւ բազմակողմանի դարձնելու համար վարչութիւնը ոչ մի միջոց չէ խնայում: Որովհետեւ շատ դժուար է այստեղ դասախօսութեան հոտար աղբիւրներ հարկել, վարչութիւնը վնաս է բերել՝ իսկ զանազան գիտական եւ հասարակական զրգեր, եւ դնել դասախօսների տրամադրութեան տակ: Կարող եւ ձեռնհաս մարդիկ քող օգնեն այս համակրելի ընկերութեան զանազան հետաքրքիր զրգեր ուղարկելով *):

Ներկայ վարչութիւնը անհրաժեշտ համարեց ունենալ իւրաքանչիւր դասախօսութեան համառօտութիւնը, այդ բանը գրում էր հեկց ինքը դասախօսը ընկերութեան կնիքով դրօշմուած քրդքերի վրայ, բայց որպէս զի իմացուի թէ այս կամ այն ինչ դասախօսութեան ժամանակ ի՞նչ խնդիրներ են հետաքրքրել ունկընդիրներին, ի՞նչ տեսակի կարծիքներ են պատշաճանուել եւ այլն, արձանագրւում էր եւ եղած կարելու վիճաբանութիւնները եւ եզրակացութիւնները:

Ահա՛ լսարանական ընկերութեան երեքամեայ բեղմնաւոր գործունեութիւնը: Թո՛ղ սուրի այդ համակրելի հիմնարկութիւնը եւ յարատեւ ու բեղմնաւոր գործունեութիւն ունենայ:

ԵՐ. ՖՐԱՆԳԵԱՆ

*) Լսարանական ընկերութեան հասցէն. Salle de Conférence arménienne. Tavriss (Perse).

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Բաղմավէպօ, հոկտեմբեր և նոյեմբեր» Անրնդհատ բարեփոխում է ս. Ղազարի ամսագիրը, չոր մասնադիտականից դառնալով զուտ գրական-գեղարուեստական: Խմբագրութիւնը յայտարարում է որ թողել է մի քանի անհատների (մասնագէտների) համար ամսագիր հրատարակելու միտքը և ուզում է ժողովրդական ընթերցանութեան օրդան դառնալ: Աջողութիւն ենք ցանկանում: Մի զուտ գեղարուեստական թերթի անհրաժեշտութիւնը մեզանում շատ նկատելի է: Ամեն ինչ ցոյց է տալիս որ Միթարեանները կարող են լաւարարութիւն տալ այդ պահանջին. պէտք է ցանկալ որ «Բաղմավէպօ» շատ տարածուի, որպէս զի խմբագրութիւնը կարողանայ իրագործել իր միտքը: Գրական յօդուածներից ուշադրութիւն են գրաւում շատլանդացի հռչակատուր երգիչ Օստիանի «Փինգալի» թարգմանութիւնը, ինչի «Armenia» գրքից կտորներ, Դանտէի «Աստուածալին կատակերգութիւնը» Նոյեմբերի համարում վերջանում է Հայր Ալիշանի վերջին աշխատութիւնը—«Արշալոյս և Արեւելք լուսաւորութեան Հայոց», որի մէջ պատմւում է քրիստոնէութեան մուտքը Հայաստան: Սկսուել է և գիտական յօդուածների շարքը. առ այժմ տպուած են «Աշխարհածնութիւն» և «Ալլասերումն»: Խմբագրական յօդուածներից ուշադրութեան արժանի է Նոյեմբերի համարում տպածը—«Մենք մեր թշնամին»: Այդտեղ

ցոյց է տուած որ հայի առաջին և ամենաոխերիմ թշնամին հայն է: Դա նոր միտք չէ, յայտնուել է շատ անգամ այն օրից, երբ մեր մէջ սկսուեց խակական, քննադատող հրատարակախօսութիւնը: Բայց մտքեր կան, որոնց պէտք է շարունակ կրկնել և «Բաղմավէպօ» կրկնում է մի դառնութեամբ ու խնստութեամբ, որ պատիւ է բերում նրա խմբագրին: Այդպիսի մարմինը լափող անճոռնի պալարների դէմ չը կայ մի այլ միջոց, բացի անխնայ մերկացումներից, խիստ ազդող, այրող բուժական դեղերից: Ուրախալի է, որ համարձակ քննադատական խօսքը տեղ է գտնում և մեր վանական գրականութեան մէջ: Բայց չենք կարող չը նկատել որ «Բաղմավէպի» խմբագիրը բաւական անփորձ և զիրարհաւան է: Այսպէս, հոկտեմբերի համարում Մունդուկեանցի, տ. Հրաչեայի հետ զետեղուած է Սարգսեանցի պատկերը և մի փառաբանական կենսագրութիւն, որ առնուազն բէկլամի տպաւորութիւն է թողնում: Գնահատութեան մի յայտնի չափ է հարկաւոր. երբ գնահատութիւնը սանձարձակ ներբողի ձև է առանում, այն ժամոնակ նա կարող է միայն չարիք ստեղծել, որոհեան տալիս միջակութիւններին շքեղ տխրոսների արժանայնելը ոչ միայն սրբապղծութիւն է, այլ և չարիք: Մենք չենք մեղադրում «Բաղմավէպի» խմբագրին, որ Վենետիկից չէ կարող իմանալ թէ ով

ինչ է մեզանում: Դատապարտելին այն աղբիւրն է, որ այնքան մանրամասն կենսագրական տեղեկութիւններ է ուղարկել նրան, ի չարը գործ զննելով խմբագրութեան հատուր: Sapiienti sat! Երկու խօսք էլ Սկրաիչ Էմիլի կենսագրութեան մասին, որ տպուած է նոյեմբերի համարում: Ինչպէս յայտնի է, Էմիլը իր հետազոտութիւնների մեծ մասը գրել է ռուսերէն լեզուով: «Բազմափէպի» յօդուածադիրը, իրատացի նկատելով որ այդ լեզուն ազգի մեծամասնութեան անմատչելի է, ցանկութիւն է յայտնում որ այդ հետազոտութիւնները հայերէն թարգմանուեն: Շատ լաւ միտք է: Բայց սխալը այն է, որ յօդուածադիրը այդ բանը սպասում է «Մուրճից»: Էմիլի և Պատկանեանի հետազոտութիւնները այնքան շատ են, վաղուց լոյս հանած, որ ոչ մի ամսագիր, որքան էլ «ստուար կազմ» ունենայ չէ կարող նրանց թարգմանութիւնը տալ: «Մուրճը» ունի իր ծրագիրը, և նրա ընթերցողները չեն կարող դո՛ւ լինել այդ տեսակ թարգմանութիւններից: Աւելի լաւ չէ՞ր լինի, եթէ թարգմանութիւնները կատարուէին անկախ ամսագրերից: Էմիլը թողել է մի գումար, որով հրատարակուել են նրա գրուածքները: Թող այժմ էլ այդ գումարով թարգմանութիւններ տան: Ահա այս պահանջը թէ՛ բնական կը լինի, թէ՛ արդարացի:

«Հանդէս Ամսօրեայ», սեպտեմբեր, հոկտեմբեր-նոյեմբեր: Սեպտեմբերի համարը նուիրուած է Միթիթարեանների երկու հարիւր ամեայ յօրեւանին. մի շքեղ պատկերազարդ հրատարակութիւն է դա՛ Վիեննայի Միթիթարեան վանքի տեսարաններով և այն հանդիսատար թափօրի պատկերներով, որ կատարուել է Վիեննայում յօրեւանի օրը: Միաբանութեան նշանաւոր տարե-նոյեմբեր, 1901.

դարձը, ի միջի ալուց, շնորհատրել են Յրանց-Յովսէփ կայսրը, պապը, Վիեննայի քաղաքապետ Նուէգէր, Տրանսիլվանիայի հայ զաղթակա-նութիւնները: Յօրեւանի առիթով պիտի հրատարակուի «Ուսումնական հայ լեզուի» անունով մի մեծ աշխատութիւն, որ հեղինակել է Միաբանութեան վարձանուած անդամներից մէկը, Հ. Սպինեան: Այդ գործը 50 տարուայ ուսումնա-թիրութիւնների արդիւնք է և պիտի ներկայացնէ հայոց լեզուի մանրամասն պատմութիւնը: Բաղմաթիւ յաւելումներով և ծանօթութիւններով այդ գործը հարստացրել է Հ. Յ. Տաշեան, որ յայտնի է բաղմաթիւ ուսումնական հեղինակութիւններով: — Հոկտեմբեր-նոյեմբեր միացած համարի մէջ ուշագրութեան արժանի են. «Սոսի վանքը», ուր գտնում ենք գերմանացի դօկտոր Բօրբախի յօդուածից մի կտոր, որ գեղեցիկ կերպով նկարագրում է մեր Ռուբինեան թաղատութեան ժամանակ այնքան կարևոր դեր կատարած Հռովման: «Երբայտը ա. Գրոց մէջ» յօդուածը, հեղինակութիւն դր. Ս. Վեբէրի, նորից մեզ տանում է Ուրարտեան շրջանը և ծանօթացնում է այն՝ շատ հետաքրքրական հարցի հետ թէ որտեղից եկան հայերը, ինչպէս գրաւեցին Հայաստանի բարձրաւանդակները և ինչ եղան երկրի բնիկները, որոնք կոչւում են Խալդէ: Ետն այս համարում տըր-ուած են Վիեննայի գեղեցիկ տեսարանները, որոնք նկարագրուած են առանձին յօդուածի մէջ:

«Առաջ», գրական հանդէս, սեպտեմբեր, երկրորդ գիրք: «Գրական» անուանել այս հանդէսը, որ հրատարակում է Թիֆլիսում Գիւտ ա. քահանայ Աղանեանը, շատ սխալ է: Պէտք է անուանել նրան նախ և առաջ «կղերական»: Մի զուտ գրական հանդէս հրատարակելու համար

հարկաւոր են յատկութիւններ, որոնցից զուրկ է հրատարակիչ քահանան Այսպէս, տարրական հասկացողութիւն է որ գրականութեան մէջ տեղ չը պիտի ունենայ պատկիլը, մինչդեռ Գիտ քահանան ամենից շատ աչդ ճիշդն է սիրում և նրան է տեղ տալիս իր ժողովածուի մէջ: Պակաս չէ և տէրտէրական հրապարակախօսութիւնը, տողորուած, ի հարկէ, ամենաթունդ կղերամոլութեամբ: Թէ ինչ հասկացողութիւն ունի ժողովածուի հրատարակիչը գրական հարցերի, ազատ քննադատութեան մասին, աչդ ցոյց է տալիս ներկայ գրքում տպուած մի յօդուած: «Մուրճի» անցեալ համարներից մէկում մի մատենախօսական յօդուած էր տպուած «Պարարի քարոզների» աւիթով. աչդ տեղ այն միտքն էր յատնուած թէ ամէլորդ էր աչդ գրքի թարգմանութիւնը: Նկատողութիւնը կատարութիւն պատճառեց նախ էջմիածնի «Արարատին», աչժմ էլ նոյն վայնասունը բարձրացնում է նրա alter ego «Լուսան»: Սակայն ի՞նչ են ասում վայնասուն բարձրացնողները: Այն միայն, որ «Պարարի քարոզները» թարգմանիչը պ. Ս. Մանդինեանցն է: Այսքանը բաւական է «երեւելի մանկավարժի» կողմէրկրպագուների համար, որ նրա թարգմանութեան մասին միայն վառարանութիւններ գրուեն: Ուրիշ տեսակ վերաբերմունք չեն թույլ տալիս մեր կղերականները: Քայց ղենք թէ պ. Մանդինեանը իսկ որ «երեւելի մանկավարժ» է. ի՞նչ առնչութիւն ունի այս ահագին մեծութիւնը մի թարգմանութեան հետ, որ մանկավարժութեան չէ վերաբերում, որ մի քարոզադիրք է միայն և ուրիշ ոչինչ: Մի՞թէ լանցանք է աղատ քննադատութիւնը: Մի՞թէ ինկվիզիցիալի կրակներին պէտք է մատնել ամեն մի կարծիք, որ կղերականների այս կամ այն

կուռքի մեծութեան չէ համապատասխանում: Շատ տարօրինակ «գրական գործիչներ» են մեր տէրտէրներն ու վարդապետները: Ուրանք վառարանում են, իրանց մարդուն երկինք են բարձրացնում և կատարում են, երբ մի ուրիշը համարձակում է իր առանձին, անկախ կարծիքն ունենալ: Դա կղերականութեան հին մեղքն է, և աչժմեան ժամանակ, երբ ջարդուել, ոչնչացել են կղերականութեան եղջիրները, վերին աստիճանի ողորմելի, գերեզմանական է երևում նրա բարձրացրած հարահրցը: Մենք կ'արհամարհենք աչդ օրհասական աղմուկները: Այստեղ միայն արձանագրում ենք մի տղեղ վաստ, որ անպատուութիւն է մանստանդ այն մարդկանց համար, որոնք հրապարակներում և տանիքների վրայ իրանց անուանում են Գրիստոսի աշակերտներ: «Մուրճի» մատենախօսական յօդուածը գրական մի յօդուած է, նկատի ունի միայն և միմիայն զիրքը: «Արարատը» և «Լուսան» զուրս եկան գրական վայելչութեան կանոններից, հարցը անձնական դարձրին և սկսեցին ամենայն կոտորուղով զրադուել յօդուածագրի անձնատրութեամբ: Աչդ կողմից չափ ու ոահման անցու մանաւանդ «Լուսայի» հրատարակիչը: Նա թույլ է տուել աչսպիսի տողեր. «Հայ ժողովրդի նիւթական բարիքը միայն քարոզող մի աչ Լ. կամ ո' գիտէ նոյն Լին, 900 ռուբլու հաշիւ ունի տալու մի աղքատիկ վարժարանի»: Յօդուածը անստորագիր է և պատասխանատուութիւնը ընկնում է Գիտ քահանայի վրայ: Ուստի մենք էլ հրախրում ենք նրան պատասխանի. պահանջում ենք յայտնել թէ ի՞նչ են նշանակում աչդ խօսքերը:

«Кавказсiй Вѣстникъ», նոյեմբերի Վերջանում է պ. Բոմանովսկու

ելով վկայոր ուսումնարանական դործի զարգացումը XIX դարում և լոգոսա-
ծը և Այդտեղ հայոց զարդոցների
պատմութիւնը ներկայացրած է հե-
տեւեւ կերպով Դոստոյով առաջը ե-
կեղեցական զարդոցների մասին, նա
ստում է. «Յաճենալս ղէպս ժողով-
րդական լուսաւորութեան և օր-
թօգօքս հոգեւոր իշխանութեան ներ-
կայացուցիչների մէջ ժողովրդա-
կան զարդի վրայ ունենալիք ազ-
դեցութեան շրջանը որոշելու հար-
ցը լուծում ստացաւ, դոնէ արտա-
քուստ, խաղաղ կերպով Բոլորովին
այդքան խաղաղ կերպով չէր որ
վճռուեց հայ-լուսաւորչական դա-
ւանութեան պատկանած եկեղեցա-
կան-ծխական զարդոցների հարցը
Մինչև 80-ական թուականներին ա-
ռաջին կէտը հայոց եկեղեցական
զարդոցները նոյնպէս ընդհանուր
կերպով ենթարկուած էին Վովկասի
ուսումնարանական շրջանի հոգա-
րարձուին, բայց այդ բանը օրէն-
քով որոշուած էր շատ անորոշ և
անճիշտ, իսկ իրապէս ոչ մի հակո-
ղութիւն ուսումնարանական շրջանի
կողմից գոյութիւն չունէր. հայ հո-
գեւորականութիւնը համարեա կա-
տարեալ անկախութիւն էր վայե-
լում 1884 թուականի սկզբում այդ
զարդոցների համար հրատարակուե-
ցան նոր կանոններ, որոնք Բար-
ձրագոյն հաստատութեան արժանա-
ցան 1884-ի փետրուարի 16-ին.
այդ կանոններով թէև հայոց զար-
դոցներին թողնուած էր նոյնը
նախկին անկախութիւնը այն մըտ-
քով, որ նրանք պիտի պահպանէին
և անմիջապէս ղեկավարուէին հայ
հոգեւորականութեան ձեռքով, բայց
մի քանի կողմից այդ անկախու-
թիւնը սահմանափակուեց նրանով,
որ այդ զարդոցների կեանքի և գոր-
ծուէնութեան մէջ իրաւունք ունէին
խառնուել Վովկասի բարձր ուսում-
նարանական և նոյն իսկ ընդհա-
նուր քաղաքացիական իշխանու-

Թիւնները Սյապխի սահմանափակումների թիւն էին պատկանում ուսումնարանական իշխանութեան իրաւունքը հակելու դպրոցներում աւանդուող բոլոր առարկաների աւանդման, բացի կրօնից, իրաւունք պահանջելու պարտաւորական ուսուցումը ուսաց լեզուի և Ռուսաստանի պատմութեան և աշխարհագրութեան, ուր այդ առարկաները կալին, նոյնպէս անպատճառ ուսեւերէն լեզուով և այն ձեռնարկների վրայ, որոնք հաւանութիւն են գտած մինիստրութեան կամ գոնէ շրջանի հոգաբարձուի կողմից, վերջապէս ուսումնարանական շրջանի հոգաբարձուի և Կովկասի կառավարչապետի իրաւունքը այդ զբաղրոցների պաշտօնատար անձանց ընդունելու և արձակելու գործի մէջ։ Եւ որովհետեւ հայ-հոգեւորականութիւնը չը համակրեց այդ րէֆորմներին, ուստի այն ժամանակ գոյութիւն ունեցող բոլոր հայոց եկեղեցական դպրոցները, որոնց թիւը հասնում էր 200-ի, չալտարաւուցին փակուած։ 1886 թուից հայոց հոգեւորականութիւնը սկսում է նորից բաց անել այդ դպրոցները, որոնք 1885-ին ըսրորովին հանուցին ուսումնարանական շրջանի տարրական դպրոցների ցուցակից։ 1887-ին այդ դպրոցներին թիւը հասաւ 116-ի, իսկ 9 տարուց չեռալ, ալսինքն 1896-ին, այդ թիւը արդէն 240 էր։ 1896 թուին Կովկասի պ. կառավարչապետը կարգադրեց, որ այդ բոլոր դպրոցները չանձնուեն Կովկասեան շրջանի ժողովրդական դպրոցների զիրեկցիաւներին։ Եւ որովհետեւ հայ հոգեւորականութիւնը հրաժարուեց կատարել այդ կարգադրութիւնը, ուստի զբաղրոցները նորից փակուած չալտարաւուցին և նրանց թիւը 240-ից իջաւ 28-ի։ 1897 թուականին յունիսի 2-ին տեղի ունեցաւ նոր Բարձրագոյն հրաման, որ առանց բացառութեան չէր թողնում Կովկասեան շրջանի դպրոցները փակուած չալտարաւուցին։

նութեան բոլոր հայ եկեղեցական-
ծխական զպրոցները չանձնուեն
ժողովրդական զպրոցների դիրեկ-
ցիաներին, և նոյն տարին մնացին
ընդամենը 5 եկեղեցական-ծխական
զպրոցներ, իսկ մնացածները չը
վերանորոգեցին իրանց գործունէու-
թիւնը: 1898-ին նրանց թիւը աւե-
լացաւ, բայց առ աշտմ նրանց ընդ-
հանուր քանակութիւնը դեռ էլի մեծ
չէ, ոչ աւել քան 36 զպրոց:

Մխթարեանների յօրելեանի ա-
ռիթով ամսագիրը սկսել էր տպա-
գրել Վիկտոր Լանգլուայի 'Վենե-
տիկի ս. Ղազարի կղզու վանքը և
Հայաստանի ու նրա գրականութեան
համառօտ տեսութիւնը, որ թարգ-
մանել է պ. Միպեազին: Այդ յօդ-
ուածը տպուեց ամսագրի երկու
նախընթաց համարներում և վեր-
ջանում է այս գրքում: Հանգուցեալ
անուանի հայագէտ Լանգլուան պատ-
մում է Մխթարի կեանքը, Միա-
բանութեան պատմութիւնը և վեր-
ջում մի համառօտ ակնարկ գցելով
հայ ազգի անցեալի վրայ, բերում
է մեր հին մատնագիրների բաւա-
կան մանրամասն ցուցակը, հին մա-
տենագիրներից անմիջապէս անց-
նում է Մխթարեաններին, ծանօ-
թացնում է նրանց գրականութեան
քանազան ճիւղերի հետ և մի քանի
խօսքով չիշատակում է նաև այն
գրական գործունէութիւնը, որ տե-
ղի է ունեցել Վենետիկից դուրս,
ուրիշ հայկական կենտրոններում:
Լանգլուան ոչինչ չէ խօսում մեր
նորագոյն, աշխարհիկ գրականու-
թեան մասին. նա ի նկատի ունի
միայն հին մատենագրութիւնը և
նոր գրական գործերից միայն նոյն-
պիսիները, որոնք վերաբերում են
հին գրականութեան: Ինքն ըստ ին-
քեան հասկանալի է, որ Փրանսիա-
ցի գիտնականը մեծ համակրու-
թեամբ է խօսում Մխթարեաննե-
րի մասին, որոնց գրական գործու-
նէութեան ահագին նշանակութիւն

է տալիս: Վատ չէր լինի, եթէ Վ.
Պօլսի և ռուսահայ նեղախոս հայ
կղերամայները, որոնք Փանատիկո-
սութիւնից կուրացած ոչնչացնում
են Մխթարեանների արած ծա-
ռալութիւնները, մի քիչ օրինակ
վերցնէին օտարազգի գիտնակա-
նից:

„Журналъ для всѣхъ“, նոյեմ-
բեր: Հոկտեմբերին անգլո-արմա-
վալեան պատերազմը մտաւ երրորդ
տարուայ մէջ: Այս առիթով ամ-
սագիրը ներկայ անօրինակ պատե-
րազմի համառօտ պատմութիւնն է
տալիս: Այդ, անօրինակ պատերազմ:
Մի բուն երկրագործ ժողովուրդ ե-
րեք տարի դիմադրում է աշխարհի
վիթխարի պետութեան դէմ մի հե-
րոսութեամբ, որի նմանը շատ և
շատ հազուագիւտ է համաշխարհային
պատմութեան մէջ: Դա սովորական
հերոսութիւն չէ. հին Սպարտան
անգամ գունատում է բօէր ժողո-
վրդի առաջ, որի հերոսութիւնը,
որի հայրենասիրութիւնը ուղղակի
առասպելական, անհաստատելի բնա-
տրութիւն ունի: Արդէն չոգնել է
Անգլիան, արդէն 1000 միլիօն ռուբ-
լուց աւել մի ահռելի գումար է
ծախսել այդ փոքրիկ երկրագործ
ժողովուրդը նուաճելու համար: Չեն
չոգնել միայն բէօրները. նրանք
դեռ կուում են, կուում են մի զար-
մանալի անձնուրացութեամբ և աշա-
սօր էլ դեռ նոյնքան տոկուն ու
յամառ են, ինչպէս մի տարի ա-
ռաջ: Չը կայ մի բան, որ թուա-
ցնէ հրացանը կրծքին սեղմած բօէ-
րի բազուկը: Անգլիացիները քարու-
քանդ են արել նրա երկիրը, կրա-
կում են նրա ազարակները. բայց
բօէր զինուորի կրծքում չէ մա-
րում կոտուելու, անվերջ, մինչև վեր-
ջին շունչը, մինչև արեան վերջին
կաթիլը կոտուելու կրակոտ ցանկու-
թիւնը: Անգլիացիները բօէր կանանց
և երեխաներին քշել են, հաւաքել

բանականներում. այդտեղ հիանդութիւնները հնձում են անսպաշտպան կանանց ու երեխաներին, բայց նրանց ամուսինները, նրանց հայրերը ցած չեն դնում ղէնքը, չեն ընկճում, չեն յուսահատում: Մարդու արտի այնքան հզօր հրամանատարն անգամ—ծնողական, ամուսնական սէրը խոնարհուած է հայրենիքի, ազատութեան սիրոյ առաջ, նրա զոհն է: Մեր մերկանալի, կծծի, շահամուլ ժամանակներում ո՞րտեղից չանկարծ երևան եկաւ մի այդպիսի հրաշալի ժողովուրդ: Նա չէ սաղում մեր ժամանակներին, հէնց այդ պատճառով էլ մենակ ու անօգնական է մնացել. ոչ ոք մատը մատին չէ դիպցնում՝ այդ ժողովրդի դատը պաշտպանելու համար: Սիրում են միայն ակնատես լինել նրա քաջութիւններին և հիանալ: Այո՛, բռէրը հին, հերոսական ժամանակների մի բեկորն է, ինչ-որ հրաշքով մնացած մեր աշխարհի վրայ: Նրան վայել

էր ապրել Հոմերոսի ժամանակ, դառնալ հերոսական վիպասանութիւնների նիւթ: Այժմեան ժամանակ ոչ ոք չէ ոգևորում այդպիսի խենթ, անզուսպ հայրենասիրական հերոսութիւններով, այժմ հերոսութիւնը բօրանելում տիրելն է, ուրիշի տեղիականութիւնը խլելը, առատական արկածախնդրութիւնները: Կարո՞ղ է աղքատ, երկրագործ բռէրը դատ փաստակել իր բարձր, անօրինակ հայրենասիրութեամբ: Երեք տարուայ կռիւ Ռ՝լ գիտէ, գուցէ աշխարհը ականատես լինի և աւելի մեծ հրաշքի. գուցէ այդ երեք տարին կրկնապատկուի, բայց և այնպէս, ումի՞ն ինչ՝ որ Յֆրիկայի երկնքի տակ այդպիսի հրաշքներ են տեղի ունենում: Փոքր ազգերը նոյն իսկ այսպիսի մեծագործութիւններով չեն արժանանում մեծերի ուշադրութեան և օգնութեան, ի՞նչ պիտի լինի այնպիսիների՝ դրութիւնը, որոնց չէ տուած բռէրական հերոսութիւնը...

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

Ծրեւան. Բ. Վ.—Անկարող եղանք տպել:
 Մոսկուա. Ա. Ծ.—Վարդացէ՛ք վերեւի պատասխանը:
 Դորքառ. Հալ ու սանաղ.—Զրի ոչ ոքի «Մուրճ» չենք ուղարկում:
 Հայդելբերգ. Հայոց գրադ.—Վարդացէ՛ք վերեւի պատասխանը:
 Սիլիստրի. Հայոց գրադարան.—Ստացանք 50 ֆր., որից 20 ֆր. չանձնեցինք «Մշակին», 10 ֆր. «Ազգ. Հանդ.» խմբ.:
 Ռուսչուկ. Ստ. Ստ.—«Մուրճի» այս թուի №№ 1 և 2 վաղուց սպառուած են:
 Յիլիպպոպոլ. Գր. ընկ. վարչ.—բաժանորդագիրն չենք ստացած:
 Բալախանի. Պ. Մար.—№№ 6 և 7 ստանալու համար պէտք է ուղարկէք 2 ռ. 40 կոպ.:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

«Մուրճի» հոկտեմբերի համարում մտել է ի միջի այլոց հետևեալ վրիպակները.

երես տող	սպուած է	պէտք է լինի
44 8	խղճալի	խճճալի
" 17	ընկենել	ընկել
45 22—23	աղբիւրից	աղբիւրներից
" 26	դաշտը	տաշտը
" 37	լեռները	արեւի. լեռները
47 6	կոկղէս	կոճղէս
" 15	ներկարարներ	ներկարաններ
" 2	դանդաճիկ	դանդաճեկ
" 21	քետաններ	քատաններ
48 22	ապարանցու	ապարանցուն
" 27	բոլոր	բոլորովին
49 8	արեւելեան եփրատ	արեւելեան Տիգրիս (Մոք)
51 15	գիւղապետը	գիւղապետերը
53 20	փայլին	փայեն

ԼԻՍՎԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ ՌՈՒՍԵՐԷՆԻՑ-ՀԱՅԵՐԷՆ

(Полный Русско-Армянский Словарь)

Կ ա զ մ ե ց

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԱՂԲԱՇԵԱՆ

Մօտ 100 տպագրական թերթ (1,600 եր.), շեշտերով,
բաղմամբիւս առուերէն օրինակներով և քերականական
ցուցումներով:

Բացում է բաժանորդագրութիւն: Բաժանորդագրին է 5 ա. 50 կոպ.: Ցանկացողը կարող է սկզբում
(մինչև առաջին պրակի լոյս աեսնելը) միայն 3 ա. վճարել:
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ "Гуттенбергъ"
(Лорисъ-Меликовская ул., № 11.

1—1

Съ разрѣшенія главнаго управленія по дѣламъ печати,

ПОНИЖЕНА ПОДПИСНАЯ ПЛАТА

НА

ежедневную полит. и литер. газету

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

Какъ для городскихъ, такъ и для иногородныхъ подписчиковъ
подписная плата: за годъ—7 р., за полгода—4 р., 3 мѣс.—2 р.
50 к., 2 мѣс.—2 р., 1 мѣс.—1 р., отдѣльный № въ Тифлисѣ—
3 коп., въ Тифлисѣ—5 коп.

Допускается разсрочка платежа: къ 1-му января—4 р.,
къ 1-му іюня—3 р.

Для сельскихъ учителей, народныхъ и школьныхъ библіотекъ
и благотворительныхъ учреждений сдѣлана скидка: годъ плата для
иногородныхъ—6 руб., для городскихъ—5 руб.

Программа газеты, сотрудники и другія условія изданія оста-
нутся прежнія.

Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа
каждаго мѣсяца. Подписка принимается въ **Тифлисѣ, въ конторѣ
газеты, Барятинская ул., д. № 8.**

Ред. Г. Тумановъ.

Изд. К. Тумановъ.

3—1

«ՄՈՒՐՃ» ամսագրի հետեւեալ թուականների ամփոփ համարները կարելի է ձեռք բերել, վճարելով՝

1899	թուի համար 1	ս. 50	կոպ.	Դ ի ճ ե լ՝	Тифлисъ, Вельяминов-
1890	»	»	1 » 50	»	ская, № 24, Ф. Я. Варта-
1891	»	»	5 » —	»	тазарянцу.
1892	»	»	5 » —	»	Ճանապարհածախսը գնողի
1893	»	»	5 » —	»	վրայ է:

4—1

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Հ Ի Ն Ց Ա Ի

(Հրապարակախօսական խոհեր)

Գինն է 30 կոպեկ

Ծախում է թիֆլիսում «Մուրճի» խմբագրատանը:
Օտարաքաղաքացիները դիմում են. Тифлисъ, Централь-
ная Книжная Торговля.

ՄԱՅՐԵՆԻ ԻՕՍՔ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՋԵՌՆԱՐԿ

կրսեւ դասարանների համար

համառօտ բառգրքով:

Կազմեցին

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆ և Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

Գինն է 70 կոպ.

Դիմել՝ թիֆլիս, Կենտրոնական և «Գուտատենքերդ»
դրավաճառանոցները:

19.	ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Յրանտիան գոհացած սուլթանից.—Պեզ էլ, մեզ էլ.—Անգլիական զրահակիրներ Պարսից ծոցում.—Աֆղանիստանի նոր էմիրը.—Լի-Պուն-Չանգի մահը.—Խնչ վերանորոգումներ ամելի մօտ են չինացիների արտին.—Պաշարման դրութիւն Վապի գաղութում.—Կին գրող Օլիվա Շրէյների բանտարկութիւնը.—Վեհանձնութիւն և կեղծ ամօթ.—Մի օրինակ աղղայնական խաղաղ լարաբերութիւնների Աստրիաում, Լ. Ս.	248
20.	† Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՅԱՆ	252
21.	ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ, եր. Ֆրանգեան	253
22.	ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	260
23.	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	266
24.	ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.	267
25.	ՅԱԻՆՆՈՒԱԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ», վէպ Լ. Տօլստոյի, թարգ. Տ. Յովհաննիսեանի	337—384

ԲԱՅՈՒԱԾ Է 1902 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

Խմբագրության անդամներն են՝ պ.պ. ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ և ԼԷՕ

«ՄՈՒՐՃ» ամսագիրն ունենալու է հետևեալ բաժինները.

1. Վէպեր, պատմածքներ, դրամա. 2. Բանաստեղծութիւններ. 3. Գրական-պատմական և հրապարակախօսական յօդուածներ. 4. Քննադատութիւն և Մատենախօսութիւն. 5. Նորութիւններ առասպ և արտասահմանեան գրականութիւնից. 6. Գիտութեան, գեղարուեստի և տեխնիկայի խորհրդից. 7. Ցրն-տեսական հարցեր. 8. Ներքին տեսութիւն. 9. Գաղափարական կեանք. 10. Արտաքին տեսութիւն. 11. Նամակներ արտասահմանից. 12. Պարբերական հրատարակութիւններ. 13. Յարտարարութիւններ ամէն լիզրով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆ

Ռուսաստանում տարեկան 10 ռուբ. Արաստահինում՝ 12 ռուբ.

կէս տարին 6 " " " 7 "

1 ամսուան 1 " " " 1 " 20 Կ.

«Մուրճ» ամսագրին հարելի է գրուել Թիֆլիսում—խմբագրատանը (Գանձակալա փողոց, № 21 ա. Ջանջուղաղովի):

Խայտառկեան այլ տեղից պէտք է ղիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала „Мурчъ“.

Արաստահինից՝ Tiflis, Rédaction de la revue „Mourtech“.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 Կ.

«Մուրճում» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ զետեղելու համար պէտք է վճարել՝

Մի երես ընտղ լադաարարութեան համար . 15 ա.

1/2 " " " " . 8 "

1/4 " " " " . 4 "

ԱՊԱՌԻԷԷ Կամ ԶՐԻ ոչ ոքի չէ ուղարկում «Մուրճ»:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը խնդրում է յօդուածագիրներից՝ զրել պարզ, մանաւանդ թուերը, չատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ:

2. Զընդոնուած մեծ յօդուածները պահում են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադարձնում: Զեռագիրը չեւտ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է Խմբագրութիւնը:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրճի» համարը չը ստացուելու դէպքում պէտք է Խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչև լաջորդ համարի լոյս տեսնելու: Այդ տեղեկութեան անհրաժեշտ է կցել տեղական պոստալին գրասենեակի հաստատագիրը (удостоверение), որ ամսագրի համարը չի յանձնուած զանգատաւորին: